ՎԱՀԱՆ

ԹԵՔԵՅԱՆ

•

ԵՐԿԵՐ

31677

891.99
55 Թեքեյան Վ.
[illegible]

5ռ.754.

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ





ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ

891.99
Թ-55
ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

# ԵՐԿԵՐ

А 27957 / 31677

Հայպետհրատ

ԵՐԵՎԱՆ 1958

Կազմեցին և խմբագրեցին՝

ՎԱՂԱՐՇԱԿ ՆՈՐԵՆՑ ԵՎ ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՈՆՑԻ

Նկարիչ՝

Ռ. ԲԵԴՐՈՍՅԱՆ

ВАГАН МИГРАНОВИЧ ТЕКЭЯН

СОЧИНЕНИЯ

(На армянском языке)

Армянское государственное издательство
(Айпетрат),
Ереван, 1958 г.

# ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ

1

Արևմտահայ նշանավոր բանաստեղծների մեջ Վահան Թեքեյանին պատկանում է առաջին տեղերից մեկը։ Իբրև ինքնատիպ հեղինակ, նա իր ստեղծագործության և՛ ներքին բնույթով, և՛ արտահայտչական ձևերով մի ուրույն երանգ է մտցնում արևմտահայ բանաստեղծության հարուստ աշխարհը։ Նա անցել է բարդ, որոնումներով հարուստ ստեղծագործական 50-ամյա ճանապարհ։ Գրական ասպարեզ իջնելով Սիամանթոյի և նրա ժամանակակիցների հետ, Թեքեյանն ընթանում է իր ուրույն ճանապարհով և հարստացնում մայրենի գրականությունը։

Թեքեյանի ստեղծագործության առանցքը մարդն է իր լայն ու խոր ներաշխարհով. և այդ մարդն էլ հայ մարդն է, ճնշված ու կեղեքված. հալածական, անհայրենիք ու աստանդական, օտար երկնքի տակ գոյության համար մաքառող և հայրենիքի կարոտով ու երազներով ապրող արևմտահայը, սփյուռքի բնազուրկ հայ մարդը։

2

Վահան Թեքեյանը ծնվել է 1878 թվականի հունվարի 21-ին (հին տոմար), Կ. Պոլսի Օրթագյուղ արվարձանում, Կեսարիայից գաղթած առևտրական ընտանիքում։ Սկզբնական կրթությունն ստացել է ծննդավայրում. Ներսիսյան և Պերպերյան վարժարաններում։ Գրել սկսել է պատանեկան հասակից՝ 1893 թվականից, գրական ասպարեզ է իջել 1895-ին՝ աշխատակցելով «Հայրենիք» օրաթերթին և Զոպանյանի «Ծաղիկ» հանդեսին 1896 թվականին Թեքեյանը մեկնում է Եվրոպա, և ապա, այնտեղից գալով, հաստատվում է Եգիպտոսում։ Այստեղից նա աշխատակցում է «Անահիտ»-ին և այլ պարբերականների։ 1905 թվականին Միքայել Կյուրչյանի

նա հիմնում է «Շիրակ» պարբերականը, որի շուրջ համախմբում է ժամանակի շատ հայ գրողների։

Մինչև իր մահը Թեքեյանը խմբագրում էր «Արև» օրաթերթը։ 1935 թվականին սփյուռքի հայ աշխատավորությունը մեծ շուքով տոնել է բանաստեղծի գրական գործունեության 40-ամյակը։

Թեքեյանը մահացել է 1945 թ. ապրիլի 4-ին Կահիրեում, և, համաձայն իր ցանկության, թաղվել է Կահիրեի հայկական գերեզմանատանը, Արփ. Արփիարյանի և Երվ. Օտյանի աճյունների մոտ։

Թեքեյանը բեղմնավոր և բազմաժանր հեղինակ է. թողել է գրական հարուստ ժառանգություն. մի քանի հատոր բանաստեղծություններ, «Եթե տերը կամենա» վեպը, «Մարր Յուրթունի արկածները» վիպակը, պատմվածքներ, թատերական գործեր, չափածո և արձակ երգիծություններ, թարգմանություններ, հուշեր, ճանապարհորդական նոթեր, հասարակական խնդիրներին նվիրված բազմաթիվ հոդվածներ և գրական արժեքավոր նամակներ։

3

Վահան Թեքեյանը իրականությունից, իր սոցիալական միջավայրից խորապես դժգոհ բանաստեղծ է։ Նա տեսնում է իրեն շրջապատող ազգային և սոցիալական ճնշումներն ու անարդարությունները, ապրում է կյանքի բոլոր դառնությունները, ալեկոծվում, խորհում, փիլիսոփայում, ուղիներ որոնում դուրս գալու համար այդ աշխարհից։ Սակայն այդ միայն բանաստեղծական պատրանք է, և Թեքեյանը չի գտնում այն իրական ուժը, որ տանելու է դեպի ազատություն։ Նա մերթ ձգտում է դեպի բնություն, դեպի գյուղական անդորրը։

Նա մերթ իրեն պատկերացնում է, անտերի աշխարհի փիլիսոփայի վիճակի մեջ. «Սոկրատի պես վճիռ հաղված իմաստասերի» նման շրջապատված սակավ ընտիր աշակերտներով, հիանում է նրանցով, «որոնք՝ աղբյուր մշտանորոգ, տենչերի թարմությունն են»։ Մերթ էլ արբեցած Հրազդանի աղմուկով, «Մասիսի հին երկինքով» և հայրենի այլ քաղցրություններով, նրան թվում է, թե Հրազդանի

...ջրվիժող ալյաց տակ անձնատացած է ներկան.
Պատմության մեջ, պապերուդ հետ կ՚ապրեմ...

Որքան նա ձգտում է կտրվել իրականությունից, այդ անհրապույր իրականությունը նրան քաշում է իր հորձանապտույտի մեջ։

Հայկական կյանքի ծանր կենսապայմանները հազար ու մի թելերով, հազար ու մի ձևերով արձագանք են գտել բանաստեղծի ապրումների, խոհերի և մտածումների մեջ ու բյուրեղացել նրա ընտիր բանաստեղծություններում։ Մեր ժողովրդի ծանր գոյավիճակը մինչև 1915-ի համազգային

ողբը շատ է զբաղեցրել բանաստեղծի մուսային, սակայն մեծ ողբից հետո նրա ամբողջ հոգեկան աշխարհը լցված է ժողովրդի ողբերգությամբ և հույսերով։

Մեր ժողովրդի արևմտյան հատվածի և ապա սփյուռքի տառապանքի երգը Թեքեյանի մոտ երբեմն ընդունում է նացիոնալիստական բնույթ։ Մի շարք բանաստեղծություններում գերագնահատված է կրոնի, եկեղեցու դերը մեր ժողովրդի պատմության մեջ։ Երբեմն նա ընկնում է միստիցիզմի մեջ և փրկություն հայցում ինչ-որ աստվածային ուժից։ Մեզ համար դրանք Թեքեյանի ստեղծագործության մերժելի կողմերն են։

Վահան Թեքեյանի ստեղծագործության մեջ աչքի ընկնող տեղ են գրավում մեր ժողովրդի պատմությունից և ավանդություններից քաղված դրվագների մշակումները, հայ բնաշխարհի հին ու նոր գեղեցկություններին նվիրված երգերը։ Այդ հանգամանքը հիմք է տվել Վալերի Բրյուսովին՝ ընդգծելու, որ Թեքեյանն իր ընդգրկած թեմաներով ու ստեղծագործության մի քանի այլ կողմերով ավելի է մոտենում արևելահայ բանաստեղծական դպրոցին, քան թե որևէ մեկ ուրիշ արևմտահայ բանաստեղծներից։

4

«Հրաշալի հարություն» հատորով՝ Վահան Թեքեյանը 1915 թ. արդեն արևմտահայ խոշոր բանաստեղծներից մեկն էր, արժանավոր ժամանակակիցը Սիամանթոյի և Վարուժանի, Մեծարենցի և Սևակի։ Երջանիկ պատահականությունը Թեքեյանին ազատեց մեծ եղեռնից. նա ապրեց ևս 30 տարի, տվեց նորանոր գործեր, դարձավ սփյուռքի հայության ամենաճանաչված բանաստեղծը, նրա դառն օրերի և հույսերի երգիչը և մահացավ իբրև հայրենասեր մտավորական՝ հոգով ու սրտով իրեն կապված զգալով Սովետական Հայաստանին։

Վահան Թեքեյանը հայրենաշունչ բանաստեղծ է իր ամբողջ էությամբ և միաժամանակ զգայուն մարդասեր։ Նրա «Հայերգություն»-ը մեր ժողովրդի ճակատագրի ամենաուշագրավ մատյաններից մեկն է և միաժամանակ մեր ժողովրդի լայնախոհության և մարդասիրական ոգու հայելին։ Թեքեյանն իր բանաստեղծություններում անեծքով նշավակեց առաջին համաշխարհային պատերազմը, որ խորտակեց մարդկության սերը, եղբայրության քաղցր երազը։ Նա անիծեց այդ պատերազմն այն ժամանակ, երբ շատ ու շատ կարճամիտ «ազգային գործիչներ» դրա մեջ տեսնում էին մեր ժողովրդի ազգային ազատագրության հույսը։ Նա նշավակեց մարդկային այդ սպանդը ոչ միայն նրա համար, որ այն ողբալի հետևանքներ պիտի ունենար մեր ժողովրդի համար, այլև, որ «օտար ազգեր, օտար շահու փառքի մը համար» ամբողջ մարդկության խաղաղությունը սպանեցին՝

Խոշտանգված, խողխողված՝ խեղճ փոքր ճայու մը նման։

*Սփյուռքի հայության գոյավիճակը, հայրենիքից ու հողից պոկված աստանդականությունը, նրա քայքայումը, ապազգայնացումն ու դանդաղ մահացումը բանաստեղծի մեծագույն ցավն է։ Նա զգում է ամբողջական մի ծառի գոյությունը, սակայն օրգանապես խախտված է կենսական կապը նրա հետ։*

Ծառէն ու միշտ զիս կապված կզգամ անոր, բայց այնպէս,
Ինչպէս կոտրած ու բունէն վար կախված ճյուղն իր ծառին...
Երբեմն հույսի թռչուններն հոն դեռ կուգան կթառին,
Սակայն վերջէն ավելի կչորնա ճյուղը կարծես...

*Այդ զգացումն է, որ բանաստեղծին թելադրում է ասել՝ «Մենք կմեռնինք ամեն օր»։*

*Այս այն շրջանն է, որ ինքը՝ բանաստեղծն անվանել է «քայքայումի և անզոր մոլույցի շրջան»։ «Մութ ժամեր» շարքից մի քանի բանաստեղծությունների մեջ Թեքեյանը պատկերում է ցաքուցրիվ Սփյուռքը, որ «ինկած է անդունդի մեջ», վերածվել է «փոշի ազգի» և տեսնում է Սփյուռքի հավաքականությունը ինչ-որ անորոշ տեղում, ինչ-որ ոչ իրական ուժով, սակայն այն, ինչ որ մշուշային և անորոշ էր բանաստեղծի համար, հետագայում 30-ական թվականներին նա տեսնում է, որ իրականացել, մարմնավորվել է Սովետական Հայաստանում, և բանաստեղծը անվերապահ համակրանքի ջերմ տողեր է նվիրում մայր հայրենիքին։ Թեքեյանը չէր լինի մեր ժողովրդի իսկական բանաստեղծներից մեկը, եթե չզգար և չտեսներ այն լուսավոր հորիզոնները, որ բացվել էին հայ ժողովրդի համար մայր հայրենիքում, հավերժական Արարատի դիմաց։*

Հոն հեռուն, ահա,
Մասիսի կողէն
Քու ակդ նորէն
Բխած կուրա...

*1925 թ. նոյեմբերին Լ. Զ. Սյուրմելյանին ուղղված մի նամակում Թեքեյանը գրում է. «Պետք է անկեղծորեն ըսեմ ես ալ քեզի՝ թե տեսակ մը քոմյունիսթ ալ ես եմ, բոլորովին քեզի նման, միայն այս տարբերությամբ, որ զանգվածին օգնելու ուժը կամ պատրանքը չունիմ այլևս, և իրավունք կուտամ զանգվածին, որ զիս արհամարհե իմ տկարության համար։ Բայց իր ճնշված ուժեն կպատկառիմ և գիտնալով թե որքան թշվառութենե ու ցավե կազմված է անիկա՝ կսիրեմ զայն կխորհիմ, հետո, թե իր թիվին մեծության մեջ համեմատաբար որքան շատ գեղեցկություն կա պահված, և այդ պատճառով ալ՝ զարմանքով և հիացմամբ կնայիմ իր վրա...»։*

*Թեքեյանն արդեն համոզված էր, որ՝*

Երբ օրը գա վերջապես և ըլլա մարդը մարդուն
Վայելքի մեջ, ի հարկին՝ զրկանքի ալ հավասար...

Հայ ժողովրդի ածած փինթակը» վերջնականապես կշտկվի և մեղուները նորից կլեցվեն իրենց բջիջների մեջ։

Թեքեյանն երազում էր ժողովուրդների համար արդարություն և խաղաղություն և այդ էր համարում իր սփյուռքյան ժողովրդի բարօրության կենսական պայմաններից մեկը։

Թող սասանին ու փշրին բարձր բերդերն անառիկ,
Եվ իյնան վար պատնեշներն զրահապատ եռուցյանց,
Ամեն մարդու հավասար թող բաժնըվի ամեն գանձ,
Թող պարտեզները բացվին և թող խուժեն հոն մարդիկ,
Բայց չկտրեն ո՛չ մեկ ծառ, չճզմեն ո՛չ մեկ ծաղիկ...

## 5

Վահան Թեքեյանի ստեղծագործության մեջ նշանակալից էջեր են գրավում սիրո մոտիվները։ Այստեղ էլ նա տառապող և երջանկության չհասած մարդու ներաշխարհն է բաց անում ընթերցողի առաջ։ Նա երազում, հիշում է իր երիտասարդական օրերի վաղանցուկ սերը և այդ է նրա միակ քաղցրությունը։

Աղվորն անոնք են միայն, որ տենչանքիդ ընդմեջեն
Անցան, գացին ու հիմա քեզ հեռուեն կկանչեն...

Նրա երիտասարդական օրերի սերն անգամ գրեթե չունի քմայքներ ու խենթություններ, այլ ներքին, հոգեկան վայելքի քաղցրություն միայն։

«Լավագույն սերն այն է, որ լռության մեջ կանցնի», ասում է բանաստեղծը։ Նա ավելի շատ ապրում է անցած սիրո քաղցրությամբ։ Սիրած էակը միայն հեռանալուց հետո, ի բացակայության է «ներկում» իր ամբողջ գեղեցկությամբ ու հմայքով և բանաստեղծի ներաշխարհը լցնում կյանքով ու սիրով։

Գեղեցկությունդ վերջեն ծնավ մտքիս մեջ՝ կարծես,
Ինչպես հողին մեջ թաղված հունտեն բույսը կծլի,
Մնավ, մեծցավ, ու հիմա պարտեզ մըն է սխրալի՝
Մտածումես բարձրացած, շատրվանված աչքերես...

Հոգեհարազատ մի էակ մոտն ունենալու կարոտը, հասկացվելու, սիրվելու անկատար մնացած մի իղձ, իբրև կենդանի շունչ, անցնում է Թեքե-

յանի բանաստեղծությունների միջով ու համակում ընթերցողին, թեև պետք է նշել, որ նա երբեմն տուրք է տալիս մարմնական սիրուն, մանավանդ առաջին շրջանի մի քանի բանաստեղծությունների մեջ։

## 6

Վահան Թեքեյանի ստեղծագործության ամենաբնորոշ հատկանիշներից մեկն այն է, որ խոհն ու հույզը, միտքն ու զգացումը զուգահեռ են ընթանում այնտեղ, իրար ձուլված, իրար լրացնող։ Զգացմունքը վաղանցուկ չէ և միշտ իմաստավորված է մի խոր մտածողությամբ, ընթերցողը հուզվելով հակվում է խորհելու և մտածելու. իսկ իմաստասիրական խոհը ջերմացված է զգացմունքով և հասնում է ընթերցողի ոչ միայն մտքին, այլև սրտին։

Թեքեյանն իր բանաստեղծություններում շատ քիչ է դիմում հռետորության, անգամ հասարակական ամենահրատապ նյութերը նա մատուցում է շատ հակիրճ, հուզիչ ու տպավորիչ պատկերներով ու խոհերով։

Թեքեյանի պատկերներն ու համեմատությունները տրամաբանական են ու կենդանի, օրգանապես առնչվող բանաստեղծության թեմային, նյութին. ահա, օրինակ, ինչպես է նա պատկերում սիրով հմայված ու լցված հոգին.

Աչքերս երկու լույս բաժակներ են կարծես՝
Մինչև բերան քո տեսիլքովդ լեցուն...

Նկարագրում է գարունն անտառում, ուր կա «ձոր մը պզտիկ» և ահա ձորակը.

Մանուկ գարնան ան օրօրոցն է հոն կարծես...
Երկու նկուն ուռենիներ՝ մեն մի ծայրին
Թեթև հովին տակ կերերան երբ համրապես՝
Ժանեկապատ ձորակն օրրել հոն կըբվին...

Որքա՜ն բնական, որքա՜ն կենդանի, որքա՜ն անգին են «Մանուկ գարնան» համար այդ ձոր-օրորոցը իր ժանյակ-ծաղիկներով, նրան օրորող ուռենիներով։

Երբեմն մեկ բառով ընթերցողի մտքի մեջ ստեղծում է մի ամբողջական պատկեր և դրանով ավելի տպավորիչ ու անմոռաց դարձնում մատուցվող թեման։ Օրինակի համար հիշենք նրա սքանչելի «Հանրիմ»-ից մի տող.

Ժանեկազարդ բևեն դուրս կըխի ձեռք մը պզտիկ...

Այդ մի հատիկ «կըխի»-ն մի՞թե սքանչելի պատրանքը չի ստեղծում մի մաքուր աղբյուրի, որից դուրս է ցայտում անապական ջուրը սպիտակ

փիփուրով («ժանեկազարդ»). և այդ որքա՜ն հատկանշական է ամենա-«տույց, քողածածկ, հոյաձև» հանըմի փոքրիկ ձեռքի համար։

Եվ այդպես նրա ամբողջ ստեղծագործությունը։ Նրա պատկերները, համեմատությունները ու արվեստի այլ հնարները միշտ հիացնում են ու մնում հիշողության մեջ։ Վերին աստիճանի ժուժկալ է մակդիրների ընտրության մեջ։ Երկարաբանություններ չի սիրում, բանաստեղծությունները կարճ են և միշտ ամբողջացած. մտքերն ամփոփ են, զգացմունքները խոր ու վարակիչ։

Նա կատարելության է հասցրել իր բանաստեղծությունների կառույցը։ Վալերի Բրյուսովի նման վարպետն անգամ Թեքեյանի բանաստեղծական ձևը համարում էր «բարձր կատարելության հասած»։ Զգերապանցված վարպետն է սոնետի։ Բանաստեղծական այդ խիստ, հակիրճ ու ժլատ ձևը շատ համապատասխան է Թեքեյանի իմաստալից և ամփոփ ստեղծագործություններին։

Բանաստեղծի լեզուն հստակության ու պարզության հետ միաժամանակ հարուստ է. այդ պատճառով էլ նրա ընտրած մակդիրները միշտ տեղին են, բառերը բարեհնչյուն, հանգերը բազմազան ու թարմ։

Թեքեյանի ստեղծագործությունը հարստացնում է մեր մայրենի գրականությունը և հանդիսանում է նոր որակ արևմտահայ պոեզիայի մեջ։

Վ. ՆՈՐԵՆՑ
Ս. ՏԱՐՈՆՑԻ

# Հ Ո Գ Ե Ր

## ԱՍՈՒՊՆԵՐ

Աչքերըս լեցուն են ասուպներով.
Ամառ գիշերներ ժողվեցի զանոնք,
Երբ որ երկնքէն կիյնային սիրով,
Ինչպես քնի մեջ՝ լույս աչքե՞ր անհող։

Ժողվեցի զանոնք, ամառ գիշերներ,
Աչվրներուս մեջ, երբ որ երկնքէն
Կիյնային՝ չինկած հողին վրա դեռ,
Ջինջ սերե՞ր ծնած և մեռած արդեն։

Հիմա իմ հոգիս լուսավոր է միշտ.
Աչքերս գոհարի տուփեր են մեյմեկ.
Եվ օրը երբ որ շատ ճնշե իմ վիշտ,

Շատ աղքատ մնամ և մռայլ ու մեգ
Շրջապատե զիս,— աստղեր կկազմեմ
Այն ասուպներեն և, լո՞ւռ, կդիտեմ։

## ԿԱՆԹԵՂ

Իմ սրտիս մեջ բյուրեղ կանթեղ,
Նշուլեցավ բոցը սիրույդ,
Եվ կանթեղին մեջ, յուղի տեղ,
Հոսեցուցի կյանքըս պուտ-պուտ

Հոն, խորանին մեջ հոգիիս,
Ժամանակն ի վեր անհուշ,
Գամված է քու, ո՛վ պաշտելիս,
Քու ոսկեգիծ պատկերն անուշ։

Այդ պատկերին առջև ահա,
Որ հրեշտակի ունի անուն,
Սիրույս կանթեղը կմխա
Բոցով մը փոքր ու պլպլուն։

Իմ մարմինիս թաց սղունգեն
Քամված կյանքը երբ որ ցամքի՝
Սիրույս կանթեղն ալ այն ատեն,
Լոկ այն ատեն մարի՜ պիտի։

***

Ավազին մեջ ես կխրիմ ամեն օր
Եվ որչափ վար իջնեմ, այնչափ միտս մեջ
Կզգամ խայթվածքը տենչերու նորանոր,
Այնչա՜փ կայրե ծխոտ սիրտըս սերդ անշեջ։

Գիշերին մեջ ես կցատկեմ անկողնես
Եվ փարվելով ճերմակ բարձիս, կարտասվեմ,
Կաղաղատիմ ունենալու համար քեզ
Վերմակին տակ, փայփայանքով, կուրծքիս դեմ։

Եվ կդողդղամ, ա՛լ անկարող ննջելու...
Հիմա անզիղջ մեղավորն եմ ես՝ հլու
Ծանրությանը տակ մեղքին և ա՛լ ոչինչ

Պիտի բանա կույր այս աչքերը լույսին.
Կըռկռացող հիվանդ գորտն եմ ճահիճին,
Որ կանարգե աղբյուրներուն ջուրը ջինջ։

## ՈՒԽՏ ՄԸ

Իմ պարտեզիս մեջ ճերմակ պատերով
Փոթորիկի խիստ օրե մը հետո,
Ուխտ մը տնկեցի Անպահանջ Սիրո,
Դողացող երկար իր նուրբ ցողունով։

Եվ ոռոգեցի զայն ջերմ արցունքով.
Ամեն առավոտ, ամեն երեկո
Հակեցա ծաղկանցն իր վրա անդուլ,
Եվ շատ գիշերներ լուսացուցի իր քով...

Գիշեր մը, լուսնեն երազ մը իջավ
Եվ, հովհարելով, իմ աչվըներուս
Չորցուց արցունքը, նայվածքըս կորույս

Արթնությունը իր և երբ որ անբավ
Ժպտով արթնցա՝ Ուխտըս չորցած էր.
Սև ու ճարճատուն, ինչպես ճյուղ մը ծեր...

## ԵՐԱԶ

*Այս գիշեր ըքեզ ես երազեցի*
*Եվ կփնտըրեմ այսօր ամեն տեղ*
*Մազերըդ՝ խավար, նայվածքըդ՝ կանթեղ,*
*Ակռաներդ՝ մարգրիտ, ականջըդ՝ խեցի։*

*Այս գիշեր ըքեզ ես երազեցի*
*Եվ բերնիս վրա շրթունքիդ հյութեղ*
*Վերադարձավ համն ու դողաց այնտեղ։*
*Քայլերուդ առաջ լայնորեն բացի*

*Ժանգոտած հոգիս և եկար, անդե՛տ,*
*Ծամփորդութենե մը ինչպես երկար*
*Բազուկներուս մեջ՝ որբ քու մարմինեդ։*

*Օ՛հ, նստե հիմա և ա՛լ մի՛ երթար,*
*Հիմա՛, մեղքըցիր և եթե կրնաս*
*Զիս քիչ մը սիրե՛, ո՜վ բարի տղաս...*

## ԺԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Դողացող լույսին տակ լապտերներուն,
Սառած մայթին վրա, կքալե խոհուն։

Աչքը կվառի երբ որ հեռուեն,
Կտեսնի մեկն, որ կուգա դեպ իրեն։

Կանցնի՛ այն մարդն ալ. գլուխը կիյնա
Ավելի տխուր, իր կուրծքին վրա։

...Ուսին վրայեն մեկուն կնայի,
Կժպտի անոր ժպիտ մ՚հիվանդի։

Թևը կերկնցնե մեջքի մը անտես,
Շրթներ կնետեն համբույր հրակեզ։

Կդիտե հեռուն, պահ մը կխոկա
Ու կմրմնջա՝ «գիտեմ, չպիտի գա»։

Դողացող լույսին տակ լապտերներուն,
Սառած մայթին վրա, կքալե խոհուն։

## ԿԱՐԱՎԱՆԸ

*Հորիզոնին կարավանը կփրթի,*
*Ու կսպասեմ։ Վետվետումներն ուղտերուն*
*Կգծագրվին ու կմեծնան, օրորուն*
*Կմոտենան, շողացնելով արծաթի*

*Սանձերն իրենց... Ու կսպասեմ։ Անջրդի*
*Անապատի ծարավ մըն է անանուն,*
*Զոր հոգվույս մեջ այդ քայլողներն կը լընուն...*
*Մինչ արևն ալ դաշտին հետևն կանհետի։*

*Ես կլսեմ, վետվետող ծովը մութին,*
*Բոժոժներուն ղողանջը դաշն ու տրտում,*
*Մանուկներուն, կիներուն սիրտ ի խնդում*

*Ավետավոր ճիչերն ու երգ... բայց մթին*
*Կուլան աչքերս, երբ անոնց մեջ չեն ճանչնար*
*Ինչ որ գնաց չդառնալու ա՛լ համար...*

## ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

*Օգնելու համար ինկած հոգիս*
*Վեր կանգնել նորեն, ո՞վ իմ անծանոթ,*
*Ո՞վ իմ բարձրաշուք, ո՞վ իմ քաղցրահոտ*
*Տղաս, մոտեցո՛ւր հոգիդ հոգիս։*

*Այսպես երազ մը. քովըդ ամեն օր,*
*Ամեն օր քիչ մը ավելի խոնարհ,*
*Մինչև որ այլևս հետքը չմնար*
*Անցյալ կսկիծես, վերքերուն անոր։*

*Ով հոժարակամ Զրկանքին ճամփան*
*Առաջնորդող դուռ մը, որ կբանան*
*Իմ հիացքներուս բալլիքներն ոսկի…*

*Սրահներու մեջ շրջվելու համար*
*Ամբողջ սյունազարդ ու ամբողջ մարմար,*
*Ուր Հանդարտությո՛ւնը կբնակի…*

## ՄՈՒԹԻՆ ՄԷՋ

(Ռոնդո)

*Մութին մէջ կուզեմ որ կյանքըս անցնի,*
*Երազի մը պէս մեղմ ու կարճատեւ,*
*Անձայն, անշշուկ, ամենին գաղտնի*
*Լայն ճամփուն մէջէն քայլով մը թեթեւ,*
*Առանց ստվերիս շղթային բռնի։*

*Չեմ ուզեր տեսնել աստղերը երկնի,*
*Որոնք կբացվին հոն՝ ժպիտ իբրեւ,*
*Իբրեւ ժպիտներ մարդոց ծերունի*
*Մութին մէջ։*

*Ինչպէս որ ցցված վիզե մը ծխանի*
*Մութը ելլելով կերթա համրաքեւ*
*Ցնդիլ օդին մէջ ու իրեն հետեւ*
*Չի թողուր ո՛չ մեկ հետք հիշատակի,*
*Այնպե՜ս թող իմ կյանքն հալի՜, տարտղնի՜*
*Մութին մէջ։*

## ԱՆՑԱՎ ԳՆԱՑ

Տ. Ա.-ԻՆ

*Անցավ գնաց ու կսպասեմ իր դարձին,*
*Ինչպես մոմ մը՝ հովին դեմը դողալով.*
*Անցորդները պատրանքով զիս խոցեցին*
*Եվ ինչպես մոմ, որուն վրա փչեր հով,*

*Ես կհալիմ՝ սպասելով իր դարձին։*
*Ու կխորհիմ. «Ինչպես երկա՜ր, ձանձրացող*
*Թ՝արթիչներու տակ աչքերով՝ առանձին*
*Կերթա, քայլվածքն գետնի փոշին հմայող։*

*Որքա՜ն անուշ պիտի ըլլար իր քովեն*
*Քալել, հուշիկ, ճամփու մը մեջ ծաղկաշեն,*
*Շնչելով լո՜ւս վարդերուն սիրտն անձնվեր.*

*Մինչ կպատե խավարին ցանցն ալ զմեզ։*
*Ի՜նչ երջանիկ պիտի ըլլար, զոլի պես,*
*Ամեն-ամեն նայիլ սիրով ուն ի վեր...»։*

# ՀՐԱՇԱԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԿԱՆՁՐԵՎԵ, ՏՂԱ՛Ս

*Կանձրևե, տղա՛ս... Աշունը թաց է,*
*Թաց աչքերուն պես խեղճ խաբված սիրույն...։*
*Պատուհանին ու դուռը գնա գոցե*
*Եվ դեմըս եկուր նստիլ վեհագույն*

*Լռության մը մեջ...։ Կանձրևե, տղա՛ս...։*
*Կանձրևե՞ երբեմն հոգիիդ մեջ ալ,*
*Կմըսի՞ սիրտըդ, և կդողըղա՞ս՝*
*Խորհելով պայծառ արևին անցյալ,*

*Դռան մը ներքև գո՞ց ճամփատագրին...։*
*Բայց կուլաս, տըղա՛ս... Մութին մեջ հանկարծ*
*Ծանր արցունքներ աչքեդ կգլորին...։*

*Լա՛ց անմեղության արցունքը անդարձ,*
*Լա՛ց չգիտնալով, խեղճ, անգե՛տ տղաս,*
*Խե՜ղճ որսը կյանքին, ա՜հ, լա՛ց, որ մեծնաս...։*

## ԳԱՅԸԳԸ

*Կմտածեմ ես հաճախ այն գայըգին սպիտակ.*
*Նուրբ, զարդարուն, անթերի,*
*Մեծ յալըի մը քովի նավակայքին շուքին տակ.*
*Մեկ խորշին մեջ Վոսփորի...*

*Երկար ժամեր, ցերեկին, գայըգն անշարժ կմնա,*
*Եվ անցորդները ծովին՝*
*«Ո՞ր աքսորյալ մեծ փաշան շինել տվավ ասիկա...»*
*Զմայլագին կհարցնեին։*

*Հետաքրքիր ուրիշներ՝ «Իր ո՞ր կնոջը համար,*
*Ծփանքներու վրա ծովուն*
*Օրորվելու հետն անոր—Լեյլա, Նազլը կամ Նիկյար.*
*Ան կազմեց բույնն այս շարժուն...»։*

*Կըսեն, կանցնին՝ ջուրին մեջ թիակի թույլ ճողփներով...*
*Բայց երբ կըլլա իրիկուն,*
*Վերջալուսային հրդեհեն երբ կվառին ամպ ու ծով*
*Եվ նավակայքն ալ խոհուն,*

*Երբ որ լուսինն ալ կելլե, վերթ դաշտերուն մեջ երկնի*
*Հովիվ աստեղց մեծ հոտին,*

Եվ կաղոտի ու տակավ կանրջանա, կ՚ալի
Շրջագիծը ցամաքին...

Գիտեմ, կուգա յալըն մերթ պատանի մը այնտեղ
Երաւլաքայլ, երկյուղած,
Գայլըգին քով կ՚ահի, ղայն կղրկե սիրաղեղ,
Եվ հանելով պայն՛ի բաց՝

Կերթա մինակ, նավելով լուռ հմայքի մը միջեն,
Ալյաց վրա տարուբեր,
Գլուխը բաց և շրջած... մինչդեռ կիյնան երկինքեն
Աչքերուն մեջ աստղներ։

***

Նմանեի՛ն քերթվածներս այդ գայլըգին սպիտակ,
Պատանիի մը հոգին
Մերթ գար մտնել անոնց մեջ և հուղումի հովին տակ
Մեկներ հեռու՝ սարսռագին...։

## ՈՂԲ

*Հոգիիս մեջ միշտ այս կսկիծն հետամնաց,*
*Երկինքն ի վեր թռիչներու հևին տակ՝*
*Միշտ այս շղթան կապված կյանքին տափարակ։*

*Դեռ գրկիս մեջ տաքցող անցյալըս մեռած,*
*Դեռ ներկայեն փախցող աչքերըս հիվանդ,*
*Թրջըված դեռ արցունքներեն հնավանդ,*

*Եվ կլսեմ երգի մը վերջը անվերջ,*
*Հին սերերու ողբն ինձի միշտ կհասնի,*
*Կուզեմ քալել միշտ ճառագայթ մը լուսնի։*

*Եվ այս ճերմակ կարապը սև լիճին մեջ,*
*Նավող անխոնջ հավիտյանե հավիտյան,*
*Ի խնդիր միշտ իր մեկ քրոջ գթության,*

*Դեռ մինչև ե՞րբ պիտի հածի արտմորեն,*
*Եվ մինչ շատեր խորասուզված են շատոնց*
*Հիշեցընե պիտի ինձի մահն անոնց։*

*Եվ ի՞նչ է այս լույսը հառնող խավարեն,*
*Գահ մը կուլող և շուտ մ'արդեն հաղթըված...*
*Հոգիիս մեջ ի՞նչ այս կսկիծն հետամնաց...*

## ՈՂՋՈ՜ՒՅՆ

*Ամեն անոնց, որոնք երբեք չգիտցան*
*Իրենց համար իմ սրտիս մեջ բարձրացած*
*Սեղանին վրա ծխվող խունկը սրբազան…*
*Ամեն անոնց, որոնք իբրև առեղծված*

*Մը գիս տեսան, աչքիս բոցով և լեզվիս*
*Ջռությունով, և քայլերովըս փախչող…*
*Որոնք գտան իրենց ճամփուն վրա զիս՝*
*Պարտցնող սեր մը անձայն ու անշող…*

*Անո՛նց, անուշ էակներուն, այժմ ողջո՜ւյն*
*Իմ անցյալիս գեղեցկության մեջ անմահ,*
*Անոնց ողջույն՝ այս բառերով դողդոջուն…։*

*Իրենցմե բան չիմ ուզեր ես ալ հիմա,*
*Չի՛ ստացա, ինչ որ ինձ տալ կրնային,*
*Չի՛ իրենցմով հիմա շեն է ամային…։*

## Ե՞Ր ԵՐԲԵՄՆ

Ե՞ր երբեմն գեղեցկության ու արևի,
    Սիրտ՝ այց մը, ատեն-ատեն,
Պատկառազդու հոգիս մեջ կընդունեի,
    Կողողեր հոգիս հիմեն,
Եվ աչքերս մտից դուռներն էին անոր,
    Որոնք մեղմիկ կգոցվեին
Անցքեն հետո Այցելուին ճաճանչավոր,
    Բարի-եկած Այցելուին…։

Կնվաղեր սիրտս հեշտիվ ամեն վայրկյան,
    Ինչպես հովեն տարվող մ'ակակ.
Կթրջեին արցունքներով ուրախության
    Աչքերս արբշիռ, սիրաթաթախ.
Եվ կերթայի, սերը գրկած կուրծքիս վրա,
    Ս՛որ մը նման զվարթաքայլ,
Ձայն տվողին հեռու, բայց միշտ դեմքս ներկա
    Զգալով դեմքն իր լուսափայլ…։

Ե՞ր երբեմն…։ Մինչ այս գիշեր ինքզինքս անշարժ
    Այստեղ օտար, լքված կզգամ,
Որ երանի կուտամ վարեն սա ալ խարխափ
    Գացող մուրիկ կույրին անգամ.
Ան կհուսա իրեն օգնող սիրտ մը գթած,
    Եվ ես, ավա՜ղ, բան չեմ հուսար.
Միայն անոր պես իմ շրթունքս ալ վարժված
    Կմրմնջեն այս երգը հար…։

## ՔՈՒ ՀԻՇԱՏԱԿԴ ԱՅՍ ԳԻՇԵՐ

*Քու հիշատակդ, այս գիշեր, զիս լալու չափ կհուզե.*
*Կարծես մեկնած էր սրտեն, և գաղտնաբար այս գիշեր*
*Նա կդառնա, ու հին տեղն ու հին գգվանքը կուզե,*
*Կսեղմըվի գրկիս մեջ, կբարձրանա կուրծքս ի վեր։*

*Քու պատկերդ աչքիս մեջ և քու ձայնըդ ականջիս,*
*Կթրթըռան այս գիշեր, երակներուս մեջ կարծես*
*Քաղցրահոտ շունչդ է լեցված, որ կգգվեն, կօրրե զիս,*
*Մինչ երեսես ալ կանցնին կարծես մատներըդ անտես։*

*Նա կդառնան մի առ մի մեր հին ժամերն անկորուստ,*
*Կարավանին հետ աստեղց անոնք կուգան վերստին,*
*Հովիս փարախն է բացվող ընդդեմ իր քաղցր հոտին։*

*Հիշատակովդ, այս գիշեր, կըզգամ անչափ զիս հարուստ,*
*Այնչափ բարի, երջանիկ... որ գթությամբ մը անհուն*
*Կմտածեմ զայն բաժնել երկրի բոլո՛ր խեղճերուն...։*

## ՕՐՀՆԵՐԳ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

*Իրիկուն էր...: Վերադարձին*
*Ամայացած ճամփաներեն՝*
*Մեր շրթները լուռ մնացին.*
*Ըսինք՝ «Բառերն ա՛լ անզօր են,*

*Երբ հոգիները կխօսին...»:*
*Եվ կխօսեր իրաք հոգին,*
*Եվ հոգիս ալ, ու միասին*
*Կհոսեին՝ ականակիտ*

*Ինչպես վտակ մը խոխոջուն...:*
*Տակավ արևը կմարեր,*
*Կլռեին ճպուռ, թռչուն,*
*Եվ սաղարթները աներեր*

*Կսպասեին լուսնկային...:*
*Կքաղեի աչքերուս դող՝*
*Որպեսզի ջինջ դեռ շողային*
*Հոգիիս մեջ աչքերդ բոց...:*

*Օդեն, խոտեն և մարմինեդ*
*Կծավալեր բուրում մ՚անդայտ...*
*Կարծես քալած էի քեզ հետ*
*Ժամանակե մ՚ի վեր անհայտ...:*

Հետո, երկնից մեջ մի առ մի
Տեսա ծագիլը աստղերուն,
Ինչպես աչքեր բարեկամի
Իմ նսեհիս վրա քթթուն...։

Երբ որ լուսինն ալ բարձրացավ
Հորիզոնեն բոցակարմիր,
Եվ լսվեցավ թրթռուն ու թավ,
Հեռուներեն խորհրդակիր

Համանըվագը գորտերուն,
Ես չկրցա զսպել այլևս
Հոգիս ցնցող սարսուռն անհուն,
Եվ գաղտնաբար նետեցի թև

Մութին մեջեն ուսերուդ շուրջ,
Ու անսահման գորովանքով,
Շատ երջանիկ ու շատ ալ լուրջ,
Քաշեցի դեմքըդ դեմքիս քով...։

Համբույրն ինչպես թե կբախեր
Բերնիս վրա, թռչնո մը պես,
Սիրտս ինչպես կբաբախեր՝
Բանտըված խենթ մ'ըլլար կարծես։

Եվ առաջին համբույրը լուռ,
Որուն աստղերն եղան վկա,
Ինչպես բացավ դեմս զերթ դուռ
Երկինքն, ուր ներս հանկարծ մտա...։

...Գիշեր էր երբ վերադարձին
Հրեշտակներու քաղցր ճամփեն,
Շրթունքս քեզ համբուրեցին,
Ու այն ճամփան հիմա կօրհնեն...։

## ԱՐԵՎԸ

Արևն ուրկե՞, երբ ամեն իրկուն աժգույն վար կիջնե,
Ուրկե՞ նորեն կստանա իր փայլն ու բոցը վաղվան.
Կարծես ըլլար մեկ հատիկ վիթխարի դույլ մ՚ոսկիե՝
Այգեհորի մը անհայտ խորքեն լցվող հավիտյան։

Նորեն, երեկ իրիկուն, հորիզոնին վրա պայծառ
Թափեց, պարպեց ան հուսկ շիթն իր մրուրին ծիրանի,
Մինչ այս առտու լեփ-լեցուն հուր հեղուկով մ՚անսպառ՝
Հանդիպակաց երկնքին վրա փառոք կերևի։

Եվ քիչ առ քիչ կելլե վեր...։ Եվ շլացած, երկյուղած,
Մտիկ կընեմ ճռընչյանն ամբողջ երկնի անիվին,
Որ ծանրորեն, մինչև լույս, այս մեծ դույլն է վեր հանած։

Խոր ճռընչյուն, ձայներ, որ ամեն կողմե կլսվին,
Աքլորներուն՝ իր շղթան... կովերուն՝ ձայն ճարճատման,
Եվ անտառին՝ համր աղմուկ թավալումին անսահման...։

# ՏԱՐԻՔԸ

Նուրբ, ինչպես ձող մը սաթի և ինչպես մուշկը՝ բուրյան,
Մարմինն ամբողջ հոգի էր և աչվըներն՝ ամբողջ շունչ.
Կտեսնեի իր տարիքը ղերթ թռչում մ՚ուսին վրան,
Մյուռոնաղօծ դեռ այտեր և սրբողորկ ուներ դունչ։

Ես խենթ էի ու տգետ վաղորդայնին տրտմության...
Չէի գիտեր ժամանակն, որ կհընձե անշշունչ,
Որ կսրբե ամեն գիծ, ամեն նկար ու մատյան,
Որ կխեղդե սրտին մեջ որոտագոչ ամեն հունչ։

Հոգիս ամբողջ իր ամբողջ հոգին սիրեց ցնծությամբ.
Արևուն մեջ՝ ինձի շուք, խավարին մեջ՝ էր արև,
Եվ մտածումս այն հետքն էր, զոր կթողուր իր հետև։

Հետո ինչպես արևուն վրա տակավ սեցող ամպ,
Եկավ տարիքը, ավա՜ղ. ու զայն ծածկեց աչքերես,
Եվ մանկությունն իր սիրված հիմա եղած է անտես...։

## ԱՀԱՎԱՍԻԿ ԿՈՒԶԵԻ...

*Ահավասիկ...։ Կուզեի շարունակել և ըսել,*
*«Լավագույն սերը ան է, որ լռության մեջ կանցնի·*
*Գեղեցկագույն թռչունը այն թռչունն է անընտել,*
*Որուն ճախրը կդառնա ոլորտներուն մեջ երկնի»։*

*Ահավասիկ...։ Կուզեի երազիս մեջ փայփայել*
*Գողտր գլուխ մը քումայթ և հասակ մը արքենի,*
*Մենավորիկ պտըտիլ բաղձանքներու մեջ անել*
*Եվ դառնալ ետ և գտնել սերս միշտ նույն, միշտ գաղտնի։*

*Երազս է այս, սիրական և ընտանի հի՜ն երազ,*
*Եվ միմիակ կարելին անկարելի տենչերուս,*
*Որուն մեջ, ա՜հ, թե կենար տարիքս անցնող վազն ի վազ։*

*Բայց չի՜ կենար, և դուն խեղճ, իմ խե՛ղճ հոգիս, կթողուս,*
*Որ հին ընկերըդ՝ մարմինն, կյանքի գետին մեջ տղմուտ*
*Զքեզ վարե ու տանի և քեզ զարնե խութեխութ...։*

## ԳԱՂՏՆԻՔ

*Անբարեկամ ամբոխին մեջ հանդիպում մը այսօր,*
*Տղմաթաթավ պարտեզին մեջ վարդենի մը կարծես...*
*Ո՞վ խեղդըվող աչքերուս դեմ նետած լաստը հզոր,*
*Ո՞վ աղաղակը հույսի բարձրացող ողբ ու կոծես։*

*Բայց երևույթը կանցնի. կրնար թերևս տևել.*
*Արշալույսին ծոցեն զով՝ տըվնջյան հուրը անբավ*
*Կրնար թերևս ժայթքիլ... մինչ սիրտս հիմա առավել*
*Գուցե գիտուն կամ տկար՝ ստվերին գրոհ չտվավ...*

*Երջանկությո՞ւնն էր արդյոք, աստվա՞ծ, անցնող գաղտնաբար,*
*Ճակատագրին, որուն ես մտիկ չըրի, կո՞չն էր խուլ.*
*Կամ դրախտի ծաղի՞կ մ'էր՝ բողբոջած հոս ինձ համար...*

*Եվ հավիտյան անթափանց պետք է գաղտնիքը թողուլ,*
*Եվ ապարդյուն հավիտյան՝ պետք է գիտնալ ուզել միշտ,*
*Կարոտեն ու պատրանքեն կրել միշտ նույն վերքն ու վիշտ...։*

## ԱՌԻԹՆԵՐԸ

### I

*Ո՜վ կորսուած առիթներ, իմ թռչուններս սիրելի,*
*Ճերմակ երբեմն ու հաճախ տենչանքի գոյն բոցաւառ,*
*Եթերային ու մաքուր մերթ համբոյր մը ներելի,*
*Ամբողջական՝ երբեմն ալ՝ դիրկընդխառնում մը անճառ։*

*Այնչա՛փ մօտիկ, օ՜հ, այնչափ հնարաւոր առիթնե՛ր,*
*Կարմիր-ճերմակ թռչուններ, պատուհանէ մտած ներս,*
*Սենեակիս մէջ սգաւոր դեռ չողջունած մուտքը ձեր՝*
*Փախաք նորէն, ձգելով ինծի իմ ցաւ-կարօտներս...։*

*Կկանչեմ ձեզ այս գիշեր երկինքներէն ձեր կապոյտ,*
*Եկէ՛ք նորէն, օ՛հ, եկէ՜ք, սենեակիս մէջ սգաւոր.*
*Պիտի գտնամ այս անգամ վճռական բառն ու ընդփույթ*
*Պիտի բացեմ կուրծքիս փեղկը ձեր կուրծքին դէմ աղւոր...։*

## II

Ո՜վ առիթներ, որ կուգաք արշալուսույր և կանցնիք,
Ես միշտ պատրաստ ըլլայի, ամեն րոպե պատրաստ միշտ՝
Թեթև ու ժիր վազելու ձեր հետևեն ու ձեզ ճիշտ
Որսի մը պես բռնելու և զարնելու ձեզ ժանիք…

Ո՜վ ապրելու առիթներ և առիթներ խորհուրդի,
Քանիներդ եք, որ ինծի օր մ՚երևցաք անբարբառ,
Մերթ հանճարի րոպեներ, զորըս մոռցած եմ իսպառ,
Մերթ ալ ծովե՜ր հեշտության, ուր սիրտս դեռ կընկղմի։

Ձեզ ո՞ր ոգին քայլերուս տակ կստեղծե անդադար
Եվ կթաղե անծանոթ դամբաններու մեջ ճղճիմ.
Ձենե մեկուն նորագույն սուգովը միշտ կշրջիմ,
Եվ այս մահերը պզտիկ կըլլան հոգվույս մահն երկար…։

## ԿՍԻՐԵԻ

Կսիրեի վաղանցուկ խռովքները մարմնական,
Աններելի խռովքներն, որոնց սակայն հեշտանքով
Կդիմեի աղբյուրին, ինչպես հոտերը կուգան
Գինովնալով, համրաբար, օշինդրի բարկ թուփին քով։

Կսիրեի ձևերուդ ընտանությունը աղվոր,
Սավերին մեջ դիմացես հնչող տաք ձայներդ արտամած,
Եվ նուրբ հասակըդ ճկուն և աչքերըդ լուսավոր,
Որ վառելով կիջնեին հոգիիս մեջ մթամած։

Ու կիյնար մութը, ինչպես օրհնություն մը մեր գլխուն,
Կուգար քանդել մեր մեջտեղ թումբը լույսին, քար առ քար,
Մինչ մազերուդ բերնիս տակ զգլխիչ բույրը անհուն
Խունկե հոգիդ էր կարծես, որ դեպի ինձ կամբառնար...։

Ո՜վ սիրական, երբեմնի խռովքներեն վաղանցուկ
Չմընաց բան մը հիմա, ո՛չ ցավ, ո՛չ խինդ, ո՛չ նախանձ,
Մինչդեռ հոգիդ, զոր ճանչցա՝ կրնակի հիս ծածուկ,
Ան իմ սուրբս է, և անոր՝ խոհերըս տոնն են անանց...։

## ՓՈԹՈՐԻԿ

*Փոթորիկ կա օդին մեջ...։ Երկնքի չինչ պատառներ*
*Կլափվին սև, ուրված, համայնակեր ամպերեն.*
*Առաջընթաց զոլություն մ'այս ամպերը կծորեն,*
*Պաղ քրտինքին զովությունը զայրույթին փրփրահեր։*

*Փոթորիկ կա օդին մեջ...։ Այս ժամերուն է, գիտե՞ս,*
*Որ ճշտությամբ մը լլկող՝ պատկերըդ շեշտ կզարթնու,*
*Ամբողջ պատկերը մարմնույդ, զոր աչվներս գաղտնատես*
*Կմերկացնեն՝ լինալու համար վրան և տալու*

*Անոր համբույր մը, նման համբույրներուս երբեմնի...*
*Կկարծեի ես՝ հիմար, մոռցած ըլլալ համն անոնց,*
*Թե տենչանքին ալ մարած էր շշող բոցը շատոնց,*

*Թե արցունքներն՝ անվրդով հիմա հիշել կրնայի...։*
*Օ՜հ, փոթորկի ժամն է այս... և երբ երկինք կգոռա՝*
*Կարծե՛ս ճիշն է անցյալիս՝ տախտապարող գետնին վրա...*

## ՏԱՂ ԱՌ ԱՐՑՈՒՆՔՆԵՐ

*Բեռ ծանրատար՝ հպարտությունըս մեկդի*
*Նետած այս գիշեր,*
*Կկանչեմ ձեզ՝ աղու մը պես անոթի,*
*Անո՜ւշ արցունքներ։*

*Եկե՛ք ինձի ձեր երկնային աղբյուրեն,*
*Քույրեր անձրևի.*
*Կենդանարար ձեր ավազանը նորեն*
*Թող վրաս բացվի։*

*Արգիլեցի աչքերուս դուռը ձեզի*
*Ու կյանքըս չորցավ.*
*Թրջեցե՛ք կյանքս, ըլլալ կակուղ որպեսզի,*
*Իբր արձանիս՝ կավ։*

*Ո՜վ կայլակներ գինվո, քամված խաղողեն*
*Սիրո, բարության,*
*Կժայթքիք դուք՝ վիշտերը երբ կկոխեն*
*Մեր հոգին՝ հնձան։*

*Կարբեցընեք հեծող սիրտերն հոգնաբեկ*
*Ձեր վազքովն անդորր.*
*Անոնց նախնի կուսությունն եք, և երբեք*
*Դուք չելաք պղտոր։*

Դուք թարմությունն եք մանուկին և կնոջ,
Գետե՛ր ընդերկրյա.
Մորըս հոգին համբուրեցի ես դողդոջ
Ձեր ափանց վրա։

Եվ հոսեցաք դուք սիրելույս աչքերեն
Մեկնումին պահուն,
Եվ կարծեցի տեսնել՝ բացվող քաղցրորեն,
Մերկությունն հոգվույն...

Ու ան իսպառ հեռացած էր՝ երբ հանկարծ
Բխեցաք աչքես,
Եվ իբրև համն իր շրթունքին, գլուխս ի բարձ՝
Ճաշակեցի ձեզ...։

Ակընթարթնե՛ր այգի, շողե՛ր իրիկվան,
Ա՛լ չեք ծագիր հիս.
Կոռոգեիք երբեմն իբրև շատրվան՝
Պարտեզն հոգիիս...։

...Բե՛ռ ծանրատար՝ հպարտությունըս մեկդի
Նետած այս գիշեր,
Կկանչեմ ձեզ՝ տղու մը պես անոթի,
Անո՛ւշ արցունքներ...։

## ԵՂԵՐԵՐԳ

Տղու մը վրա, որ սիրո համար
անձնասպան եղավ:

*Չսպասեցիր քնանալ հասկերուն մեջ ցորենի,*
*Երբ ցերեկվան արևին կծածանին դեղինփառ.*
*Առավոտուն ուզեցիր, որ հասակդ պարմանի*
*Ծաղկանց վրա երկննա, իբր իր ստվերն՝ անբարբառ...։*

*Երազներուդ հույլին տակ աչքերդ իսպառ փակեցիր.*
*Ի՜նչ միամիտ, ի՜նչ սիրուն՝ մինչև մահվան եզերքն այ,*
*Երբ պատրանքի մը շիջմամբ մթընցավ կյանքըդ անծիր,*
*Եվ տենչացիր դեպի մեծ, գերագույն մութը երթալ...։*

*Ո՞վ կըսե թե՝ երջանիկ չեղար այդպես, հե՜գ տղա։*
*Մարմինդ որդերը կերան, բայց սերդ անշուշտ ապրեցավ...*
*Թերևս սա ճաճանչն է, որ գետնին վրա կխաղա,*

*Թերևս հիմա կվազե հովերուն մեջ խոլարշավ,*
*Կամ սա դեմի բլուրեն հեծող սրինգն է հիմա,*
*Եվ կամ, թերևս ներշնչումս, որ այս գիշեր քեզ կուլա...։*

## ԿԱՐԱՊՆԵՐԸ ՀԱՄՊՈՒՐԿԻ ԼԻՃԻՆ ՄԵՋ

*Տերևաթափ ծառերուն տակ իրիկո՜ւն...*
*Աշնան օրվան արևի մը՝ մայրական*
*Մեկնումն անվերջ, ու փափկաքայլ ու խոհուն,*
*Զերթ սենյակե մ'ուր քնացավ իր տղան...։*

*Եվ լիճին մեջ մութը տակավ կկախվի՝*
*Ինչպես վրան հայելիի մ'արծաթե*
*Ծռած ինքզինք կդիտե սև թագուհի*
*Մ'որ իր շունչով մետաղը մերթ կաղոտե...։*

*Կնետե հոն երկինք զարդերն իր փառաց,*
*Ափունքներեն լույսե ծոպեր կիյնան վար,*
*Եվ կնավեն կարապները մեղմավար,*

*Կարծես ճերմակ մեծ խորհուրդներն անմոռաց*
*Այդ ջուրերուն պատանեկան տարիքին,*
*Երբ լեռներեն արևախառն կիջնեին...։*

# ԽԱՎԱՐԻ ՏԱՂԵՐ

## I

*Ամռան աղվոր վերջալույսները երկար*
*Նորեն, տակավ, զգալաբար կծյուրին,*
*Տրտմաղդեցիկ հարսերու պես դողահար*
*Կընկրկեին դեմը դաժան խավարին...։*

*Դեռ չենք ուզեր, նոր մեկնողի մը ինչպես*
*Շուտով մոռնալ դեմքն ու տեղը սիրելի,*
*Լույսը վառել դող խավարին դալուն պես,*
*Եվ կթողունք, որ աննշմար ան սահի*

*Մեր փեղկեն ներս, որուն առջև, ձեռն ի ծնոտ,*
*Հիշատակին վրա նավենք մեղմավար...։*
*Ո՜վ քաղցրությունը այս ժամուն խնկահոտ.*

*Կարծես վերջին աշնանս իրիկունն ըլլար,*
*Ուր տենչերով ա՛լ խաղաղած հավիտյան՝*
*Սպասեի մահվան, վայրկյան առ վայրկյան...։*

## II

*Մաքուր ամեն տենչանքե, երբ իրիկվան մեջ խոհում,*
*Արևին խիստ լույսեն հոգիս քիչ մը մութ*
*Ծառերուն տակ կբերեմ պայծառացնել,— եկո՛ւր դուն*
*Եվ հնչեցուր նվագը մեղմ քայլերուդ...։*

*Ո՛չ մեկ տենչանք. ինքզինքիս հիմա կուզեմ արգիլել*
*Հոգնությունն իսկ երազելու քու վրադ.*
*Քանզի ճանչցա ցնորաց ծաղկե բավիղը անել,*
*Եվ թույն ունին գորովներն իսկ խանդակաթ...։*

*Միայն անցի՛ր, իրիկվան մեջ քաղցրություն մը ինչպես,*
*Ինչպես բույր մը զեփյուռներուն և թիթռանց.*
*Միայն անցիր՝ վանելու համար ստվերն հոգիես,*
*Հիշեցնելու գեղեցկությունը անանց...։*

*Խաղաղության այս պահուն՝ անցի՛ր խաղաղ քայլերով.*
*Եղի՛ր խորհուրդն և սփոփանքը մութին,*
*Եվ թող որ հոս ծառերուն մեջ վայրկյաններս անվրդով*
*Քու ձևդ առնեն և քեզի հետ ալ անցնին...։*

## III

Կնիրհեն կարծես՝ գյուղ, դաշտ և բլուր,
Լույսին տակ լուսնին.
Աստղերուն խորունկ համերգին ի լուր՝
Տերևք կքունին...։

Ո՞վ խաղաղ գիշեր, լուսնի լույսին տակ,
Գետնին վրա ցած,
Հարս մըն է կարծես պարտեզն սպիտակ՝
Սիրո մեջ մեռած։

Լուսինը՝ ծռած սկիհ մ'է կարծես,
Լեցուն ամբրոսիա,
Զոր առատորեն կհեղու անտես
Ձեռք մ'երկրի վրա։

Եվ կամ բուրվառ մ'է՝ համբորեն ճոճող
Աստուծո աջին,
Բուրվա՛ռ, ուրկե դուրս կայծեր հրաշող՝
Աստե՛ղք կթռչին...։

Եվ Ծիր-Կաթինն ալ, թերևըս, ո՞վ տեր,
Ծո՞ւխն է բուրվառին...
Կամ ծխասքողված, բարձրացած եթեր՝
Անցյալին ուղին...։

## IV

*Մեծասփյուռ գիշեր, գիշե՜ր գարնային...։*
*Հեռավոր, մթին կամարին խորեն*
*Բյուրավոր աստղեր ինձի կնային*
*Եվ գինովություն վրաս կծորեն։*

*Հեռո՜ւ, ամեն ինչ կերևա հեռու*
*Այս գիշեր ինձի...։ Կըթըվիմ մոռնալ*
*Հիշատակը հոծ անցյալ օրերու,*
*Պահ մը կմոռնամ, ո՜վ հոգիս, քեզ ալ...։*

*Կապրիմ անհունին մեջ ցայգալըվա...*
*Բայց հանկարծ սարսուռ մը շուրջըս կանցնի*
*Ծառերեն մինչև առագաստն երկնի,*

*Եվ սիրտըս անոնց մեջտեղ կհևա...*
*Ու կարծես՝ կեցած աստղերուն ի սեմ,*
*Հոգի՜ս, ձայնդ անոնց մեջեն կլսեմ...։*

## V

*Ծովուն վրա գիշեր է, և գիշերվան մեջ՝ ամառ,*
*Եվ այս գիշերը ամռան Վոսփորի վրա կերկննա*
*Շնչառությամբն իր թեթև, իր ցոլքերովը ցանցառ*
*Եվ իր ալյաց սևաթույր վետվետումովը թավշյա։*

*Պատրշգամես, որ ծովուն վրա և մեջն է կարծես,*
*Անրջախառն հնայիմ ու կընկղմիմ թովանքին*
*Մեջ, որ կիջնե երկինքեն, կելլե ջուրեն և անտես*
*Հեռուներեն, անցյալես իսկ կփչե տարփագին։*

*Թանձր շուք մը, մութին մեջ, ահա մեղմիկ կշարժի*
*Ծովուն վրա, աչքիս տակ... ուրկե՞ եկած և կամ ո՞վ*
*Այս հեշտավետ գիշերին մենության մեջ օրրելով։*

*Բայց ծովն հանկարծ կուռենա նման կուրծքի մը լայնշի.*
*Աստղերն ահա՛ կմարին... և պատշգամս թողած՝*
*Ես անձկությամբ կխորհիմ այն նավակին, որ գընաց...։*

## VI

Երբ որ գիշերն անդորր է և երկինքը աստղազարդ,
Ամառ ատեն, գյուղին մեջ, երբ նիրհած է ամեն մարդ,
Միայն գորտերն հեռուեն երբ որ կերգեն դաշնաձայն,
Եվ հազիվ մերթ կշարժին բարձր ճյուղերը միայն,
Ինչպե՜ս քերթողն ալ հոգին կզգա հստակ ու զվարթ,
Երբ որ գիշերն անդորր է ու երկինքը աստղազարդ...։

Ծաղկանց նման, որ մութին մեջ համրաբար կբացվին,
Եվ աստղերուն պես, որոնք ծաղիկներն են երկնքին,
Քերթողին սիրտն ալ այնպես հոս կբացվի ինքնիրեն.
Կյանք ու թռիչ կստանան իր հին հույզերը ամեն,
Մինչ թեթևցած խոհերն ալ կխառնվին միջոցին՝
Ծաղկանց նման, որ մութին մեջ համրաբար կբացվին։

Ո՜վ տեր, քերթողն այդ պահուն, ծփանքին մեջ գիշերվան,
Աստվածորեն կսուրա հանգրվանե հանգրվան,
Իր անցյալին, ներկային, ապագային մեջ նաև,
Քու հեռավոր լույսիդ տակ և քաոսի մը վերև.
Կերթա մինչև հուսկ հետին պահը մութին մեջ լուծման՝
Ո՜վ տեր, քերթողն այդ պահուն, ծփանքին մեջ գիշերվան...։

## VII

Այս գիշեր, տե՛ս, հին հիշատակդ նորեն,
Հողեն ինչպես կուգա բուրում մ'անձրևի,
Էութենես ու անցյալիս խորքերեն՝
Մինչև բերանս և աչվըներըս կլեցվի...։

Տե՛ս, թե ինչպես անցած գացած քայլերուդ,
Զիս չտեսած քու նայվածքիդ ալ համար
Իմ մենավոր հոգիս՝ տաճար մը զերթ մութ,
Կխնկըվի դուռնեն մինչև ի կամար...։

Մնալ մութին մեջը, ի՞նչ փույթ... միայն մերթ
Զքեզ տեսնել, Զքեզ լսել... պատահմամբ
Մերթ դեմդ գալ, և ճամփուդ վրա՝ թերթ առ թերթ

Զմայլանքիս փետտե՜լ փունջը քաղցրությամբ...
Փորձե՜լ երբեմն մոտենալ քեզ մեղմիվ,
Եվ ճանչըցվի՜լ՝ քիչ մը, կամ շատ, կամ հազիվ...։

## VIII

*Ո՛վ իմ անցյալս, այս գիշեր ինչպես վրաս կխուժես,*
*Իր ափունքին վրա խուժող մակընթացիկ ծովուն պես,*
*Որ մեկնելով հեռուեն, կուգա կոհակ առ կոհակ,*
*Տիրել նորեն իր կալվածին սպիտակ։*

*Գետնին վրա տարածվող դաշն աղմուկով մը կուգաս*
*Հորիզոնեն մանկությանս ու կնետվիս իմ վրաս*
*Եվ կողողես հոգիիս ավազադաշտն ամայի,*
*Որ լուսնին տակ անհունորեն կպառկի։*

*Ինչպես ալիքն ալիքին՝ բոլոր օրերս երբեմնի*
*Կհաջորդեն իրարու՝ մին ծառացած կքստմնի,*
*Մյուսն օրորուն՝ կօրրե զիս, մինչ ուրիշ մ՚ալ կփլչի*
*Վրաս, ինչպես հայելի մը դահլիճի։*

*Եվ ամենուն մեջ անոնց՝ կտորտվանքնե՛ր հայելու,*
*Անցելաշող կտեսնեմ նախ ինքզինքս ու հետո՝*
*Դարանակալ շուքիս մեջ սեր-մանուկը պահվտած,*
*Որուն տըվավ աղեղն այնքան ինձ հարված։*

*...Ո՜վ իմ անցյալս, այս գիշեր ինչպե՜ս վրաս կխուժես,*
*Իր ափունքին վրա խուժող մակընթացիկ ծովուն պես,*
*Որ մեկնելով հեռուեն, կուգա կոհակ առ կոհակ,*
*Տիրել նորեն իր կալվածին սպիտակ։*

## IX

Գիշերվան մեջ կպտըտիմ առանձին
Եվ առանձին տուն դառնալով ես նորեն՝
Աչքերուս մեջ կգտնեմ շող մ'աստղերեն
Եվ շողին մեջ՝ երազ մը հին, լուսածին։

Երազն անուշ, բայց անորոշ է այնքան,
Այնքան մաքուր ու գեղեցիկ ու փափուկ,
Որ կվախնամ դպիլ իրեն, և ծածուկ
Մեկ խորշին մեջ սրտիս պահել կուզեմ զայն։

Ո՜վ հեռավոր, անկարելի, քա՛ղցր երազ,
Որ կյանքիս մեջ հետևեցար միշտ ինծի,
Զոր փոթորկաց մեջեն անշեջ անցուցի,
Եվ որ հիմա կպլպըլա հազիվհազ...

Երկու հոգվով երջանկության լույս պատկեր,
Որուն իմ տունս պիտի ըլլար շրջանակ,
Եվ որ կյանքի խաղաղավետ ծովին տակ
Պիտի մեղմիկ, տարվե տարի, պղտեր...

Ո՜վ խեղճ երազ, չեկա՞վ ատենն, ուր այլևս
Աստղերեն վար պիտի քեզի հանդիպիմ,

Աստեղափայլ աչքի մը մեջ մտերիմ՝
Որ իմ վրաս ծագեր, ծածկեր զիս թերևս...։

...Գիշերվան մեջ պտըտելով առանձին
Եվ առանձին տուն դառնալով ես նորեն՝
Աչքերուս մեջ կգտնեմ շող մ'աստղերեն
Եվ շողին մեջ՝ երազը հի՜ն, լուսածին...։

X

Լուսնին ներքև, այս գիշեր, պատուհանեն սենյակիս,
Ուր, ո՜վ խոնջենքս, ինծի հետ ալ հավիտյան կընակիս,
Տեսա անցնիլն համբաքայլ իմ մանկությանըս, որուն
Ճանչցա սիլուետը փափուկ և քայլվածքը երազուն։

Ո՛վ զանգվածեղ իմ խոնջենքս, քեզ ի՜նչ եղավ, որ հանկարծ
Վերուցիր ծունկդ կուրծքես, և անցյալիս վերարծարծ
Բոցը տեսնել չուզելով՝ քովես խոլույն հեռացար,
Զիս ձգելով ողողվիլ անոր լույսովը պայծառ։

...Իմ մանկությունս է, ահա, որ համբաքայլ կշրջի
Փողոցին մեջ, առանձին, զերթ ոգի մը անուրջի,
Ունկընդրելով աստղերուն և լուսնի վարդը բացված

Հոտոտելով հովերին...։ Ա՜հ, ճիշտ ան է, և արդեն
Տեսեք ինչպե՜ս փողոցին կանհետանա անկյունեն,
Ինչպե՜ս շուտով կմեկնի, ու մեկնեցավ, ու գընաց...

## XI

Գաղջ իրիկուն՝ ձմեռվան դեռ…։ Փողոցեն՝
Ուր ստվերները կերկարին դուռնե դուռ,
Դանդաղաքայլ կանցնին մարդիկ…։ Ժամը լուռ
Լապտերներունն է, որ մութը կխոցեն։

Զեփյուռներ կարճ, ու փայփայոտ ու թեթև,
Սև թիթեռներ կարծես անտես, կփակչին
Երեսներուս.— ո՞վ պատրվակը չնչին՝
Սիրտը հոգնած վաղցընելու հևիհև։

Ո՛չ մեկ անուն քովես անցնող դեմքերուն…։
Շատ՝ աղվորներ…։ Եվ ամենուն քովն ի վեր
Կընկերանա պահ մը հոգիս՝ զմայլուն։

Կանցնին, կանցնին, ահ, ինչքա՜ն շատ, աղվորներ…
Երթալ անոնց հետ միասին… Մինչ ահա
Մութը տակավ կիջնե գլխուս, սրտիս վրա…։

## XVI

Ձմեռ գիշեր…։ Լուսինն, ինկած զենիթեն,
Փողոցներուն կօծե քարերը լույսով…
Ցանցառ ու չինչ աստղերը սառ կկաթեն…
Գայլերուն մեջ, և սիրտերուն, կիյնա սով։

Գարնան առտուն և այս գիշերն հոմվարի,
Այնքան նման, երկվորյակներ են կարծես.
Սիրտը սիրո ինքնավետմամբ կբերկրի՝
Հո՞ս ցուրտին մեջ, հո՞ն արևուն բոցակեզ։

Մարդիկ ինչ ժիր կքալեն, տե՛ս, այս գիշեր,
Երանությամբ աչքերն արդեն կժպտին.
Եվ անոնք իսկ, որ տենչանքն ալ չեն հիշեր,

Անոնք, որոնց ձյունեն գլխուն ու սրտին,
Անկողնուն մեջ կխտղըտին տարփահար՝
Ցուրտը կարծես նոր սիրուհի մը ըլլար…։

## ՀԱՆԸՄԸ

Միակտուր սև-անփայլ մետաքսն ամբողջ զինք ծածկած
Եվ քայլերուն մետաքսե խոր շրշյունովը թեթև,
Որ ակդրերուն քնարին կարծես նվագն ըլլար ցած,
Կերթա հանըմն՝ հուպելով մուշկի ալիք մ'իր հետև։

Ժանեկավարդ թևեն դուրս կբխի ձեռքը պզտիկ,
Զոր նախանձոտ սև ձեռնոց մը կպահե կիսովին,
Մինչ ուղղանկյուն ճակատեն ինկած քողն ալ լուսանցիկ
Ծանրածարիր աչքերուն կ'անթեղե հուրքը խորին։

Կամուրջին վրա հորդազեղ վերջալույսի մը ներքև,
Կերթա հանըմը այսպես, հորիզոնե հորիզոն,
Մթնցնելով Ոսկեղջյուրն ու դյութելով երեկոն...

Կերթա հանըմն՝ անմատույց, քողածածուկ, հոյաձև,
Կին կամ ոգի, պահ մ'ելած պալատներեն Պոլիսի,
Պոլսո ոգի՛ն, խուսափուկ, անքննելի՛, սխրալի՛...։

## ԽԱՄՍԻՆ

*Բա՛ց են թողեր դուռն այսօր դժոխքներուն ընդերկրյա,*
*Բոց է առեր երկնային կապույտ կայանը անհուն,*
*Եվ փոշին, որ օդին մեջ համատարած կծըփա,*
*Կարծես աճյունն է երկնից խորն հրդեհվող շենքերուն...։*

*Օդը այսօր այնքա՛ն հույլ, այնքա՛ն տաք է և ընկճող,*
*Որ սպառած տենչանքի մը վերջին հևքն է կարծես,*
*Եվ քաղաքն ալ՝ ննջարան ախտաններու անկարող,*
*Մարմնակործան գալարվող մահիճներու մեջ հրակեզ...։*

*Պղտիկ ու թույլ հովիկներ երբեմըն դեռ կկառչին,*
*Գըվանքներու ալես ամուլ, անցորդներուն համրընթաց,*
*Եվ կիյնան վար, կմեռնին՝ պարտասած կամ պղջացած...։*

*Ուղտ մը կանցնի, վեհանդորր, իբր իր տարրեն առաջին,*
*Մինչ երկընքին մեջ, հո՛ն վերն, արմավենիք աներեր*
*Շատրվաններ են կարծես՝ ավազներեն ժայթքած վեր...։*

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

Թխպոտ երկինքեն կարոտ մը սիրո
Կիջնե աչքերուս, թևերուս վրա...
Աշո՞ւնն է արդեն՝ ամառեն հետո,
Որ պարտեզիս մեջ գաղտնաբար կիյնա։

Պատերուն ներքև սպիտակ վարդեր
Կծաղկին նորեն, անբիծ ու տխուր...
Թոռմած սերերուն սրտիս առընթեր՝
Կբացվի սիրո նոր հույս մը մաքուր։

Հոգնած թիթեռնիկ մը կուգա թառիլ
Ածուին ցանցառ մարմանդին վրա...
Այս հույսին մեջ քիչ մըն ալ մահ չկա՞։

Երկնքեն կիյնա անձրևի կաթիլ
Մը՝ նախ, ծանրորեն, հետո ուրիշներ...
Մխիթարված սի՛րտս է, որ կուլա դեռ...։

## ՈՐՊԵՍԶԻ ՄՆԱ

Որպեսզի մնա հեշտությունն երկար,
Երկա՜ր, անսպա՜ռ խորը հոգիս
Եվ ձեռքերուս մեջ, և օրորե զիս,
Գգվանք մը միայն այսպես, համրաբար,

Պարանոցիդ շուրջը ոլորկ ու տաք...։
Օ՜հ, համբույրը խենթ, պատրաստ թռչելու,
Որ բերնիս վրա, երկյուղիս հըլու՝
Կսպասե աչքիդ հորիզոնին տակ։

Այսպե՛ս կսիրեմ, այսպես ավելի...
Խոսի քիչ մ՚ինձի, ու քիչ մը ժպտի,
Քիչ մը մոտեցնե՜ գլուխը ինձի,

Իր շունչն ու մազերն երեսս գգվեն,
Եվ ինչպես հովին հետ անցնող ծովեն,
Տենչերս հեռո՜ւ, համբույրեն նավեն...։

## ԱՅՍՉԱՓ ԵՏՔԸ

Այսչափ ետքը՝ հիմա նորեն, ո՜վ աստված,
Մաքուր սիրո մը հույսն ինձի նորելուդ,
Այս ճառագայթն իմ դժոխքիս մեջը մութ
Երկարելուդ համար վերեն՝ նեղ բացված

Շնորհներուդ պատուհանեն,— քեզի փա՛ռք
Եվ օրհնություն, ծունկի վրա, բազկաբաց,
Արտասվելով վերջին կաթիլը ցամքած
Արցունքներուս, և հծծելով քեզի՝ փա՜ռք,

Հիմա նորեն մեկ փափագ մը ունիմ ա՛լ,
Բարի և ճոխ իր սրտին մեջ հյուրընկալ
Ճակատաբաց առաջանալ քայլ առ քայլ...

Մե՛կ փափագ մը, մտերմության հոսանքին
Մեջը նետել սև խորհուրդներս անմեկին,
Մեջը լվալ իմ հոգիիս ժանգը հին...:

## ՄՏԱԾՈՒՄՍ

Ո՛չ, մտածումս անուշ է դեռ և տրտում...
Չե՞ս զգար զայն՝ աչվըններեդ սահող վար,
Ինչպես մարող բոցի մը փայլն անհատնում,
Ինչպես թոշնած ծաղկի թերթեր հողմավար։

Հեռուներե՜ն իմ մտածումս կիջնա վրադ,
Զերթ տատրակ մը զանգակատան բարձունքեն՝
Կիջնա վրադ՝ վիրավոր և հուսահատ
Եվ սրբաբո՜ւյր դեռ մատուռին հին խունկեն։

Տեսա՛ր ատեն մը նայվածքիս մեջ պայծառ
Սեր-ծաղիկին ծլարձակիլը բոսոր...
Կարմըրեցար և ձեռքիս տակ ծռեցար...։

Օ՛հ, ձեռքիս տակ...։ Անջրպետ մը մեզ այսօր,
Լուռ սերերին ճակատագի՛րը դժնե,
Մեզ իրարմե անվերադա՜րձ կբաժնե...։

## ՀՐԱԺԵՇՏ

*Այս իրիկուն քաղցրորեն և անխնա՝*
*Ստոյիկյան մը ինչպես*
*Երակները կբանա,*
*Սիրտս բանալ կուզամ քեզ...։*

*Ըսել կուզամ այս իրիկուն քեզի ես՝*
*Թե ոչ մեկ շիթ կմնա*
*Սրվակին մեջ գինիես,*
*Թե վառեցի, քահանա,—*

*Կնդրուկն ամբողջ բուրվառիս մեջ արծաթե...։*
*Արդ վրայես կնետեմ*
*Ամեն կեղծիք ու սքեմ*

*Եվ մարդկորեն կերթամ հոն, ուր կկաթե*
*Հեշտության պուտ մը նեկտար,*
*Խմել, Բերև՛ս, դառնաբար...*

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

*Ձյունատարափ…։ Ճերմակն առեր է չորս դին,*
*Երկինքը՝ գոց, և գոց՝ քիվերն ալ տանյաց…*
*Մենավորիկ գյուղն այս ծովին մեջ սառած,*
*Անշարժ ու լուռ՝ կմամըռա իր բախտին։*

*Հարթեր է ձյունն ամեն ճամփա խորդուբորդ…*
*Կթռչտին ճերմակ ճանճերն անհամար՝*
*Մարմարելով հողե տունե՛րը խոնարհ,*
*Կուրցընելով գյուղին գամփռնե՛րը պահնորդ։*

*Առավոտ է, բայց իրիկվան չափ թոնուտ…*
*Վերքի մը պես լույս մը հանկարծ կբացվի*
*Հեռուն, անկյուն մը ամպերուն հետև մութ։*

*Կդադրի ձյունն, և ճառագայթ մ'արևի*
*Նախանձաբեկ աչք մը կուղղե դեպի վար՝*
*Երկրի անհուն անբծության ձյունափառ,*

*Եվ կպահվի…։ Ձյունը նորեն կսկըսի…։*

## ԽՐԽԿՎԱՆ ԱՂՈԹՔ

*Համանվագ՝ խրխկվան*
*Աղբյուրներուն, ծառերուն*
*Եվ դարձող գոմը հեռուն*
*Բոժոժներուն հովվական,*

*Ինչպես ե՞րգը դաշնալուր՝*
*Ծավալիլ ու հմայել*
*Եվ անձավները անհիլ,*
*Տե՛ր, լեցընե՜լ ձայնիս տուր...*

*Զեփյուռին և մութին հետ,*
*Թավշափափուկ անոնց պես,*
*Խնկող ամեն արահետ*

*Ու փայփայող գաղտնապես,*
*Անցնող ամեն դաշտերե,*
*Տե՛ր, իմ երգերըս ըրե...։*

# ՀՈՒՍԱԽԱԲՈՒԹՅՈՒՆՔ

*Ամեն տունի խորքեն ցատկող սատանանե՛ր.*
*Ամեն ծաղկի բաժակին տակ պահված օ՛ձ.*
*Դաշտին մեջ փուշ, ճառագայթին քով ստվե՛ր.*
*Գգվանքներու ներքև հանկարծ սառած ծոց...։*

*Տանիքին վրա իջած լուսի՛նը մոտիկ,*
*Եվ սրտին վրա ծագած աչքերը պայծառ...*
*Ուրվականներ, որ մեր մեջեն միշտ կանցնիք*
*Եվ կփչեք մեր հույսերուն վրա վառ...։*

*Անցե՛ք, անցե՛ք. վախցող չկա ալ ձեզմե.*
*Ա՛լ հրճվանքին մեջ ողբ մըն է խառնված,*
*Ա՛լ ամեն սեր ունի իր մեջ իր կասկած...։*

*Հիմա՛, միայն թախծություն մ'որ կճզմե,*
*Հիմա՛, քալված դժվար ճամփուն ծայրն անել՝*
*Լո՜ւռ, անտրտո՜ւնջ, քայլերըդ ե՛տ դարձընել...։*

## ՄԱՔՈՒՐ ՍԻՐՈ ՁԱՅՆԸ

Խորշե մը դեռ՝ ան վախնալով, շշնջուն
Համոզումով, և եղանակ մը կոտրտած
Խառնած երգին, գետնամած ու բաղկատարած՝
Գմբեթին տակ կաղաղակե իր ալելուն...։

Գմբեթին տակ, ուր դևերու ուրվականներ
Խորանն ի վեր և երկայնքեն որմերուն սուրբ
Կմագլցին ու կվազեն՝ քրքիջ մը նուրբ
Ծավալելով և խշխելով հոն իբրև տեր...

Մինչ խորանին հետև ծունկի եկած ահա՝
Հավատարիմ դպիր մանո՞ւկ մ'արդյոք նախկին
Անհնազանդ նոր տերերուն սաստող կամքին՝
Շարականի կտոր մը հին կհեկեկա...։

Կպատահի նույնիսկ, որ երբ լուսամուտեն
Արևի շող մը մութ տեղվույն մեջ կերկարի,
Ձայնին շեշտերն առ ավելի հանկարծ արի
Կնետվին վեր և մյուսներուն վրա կխշխեն...։

## ԱՊՐԻԼ

Ապրիլ ամիս...։ Կմանկանան աչվըներս
Մանկության հետ տերևներում, սյուքերուն...
Օդին, հողին և հոգվույս մեջ ի՜նչ աղերս,
Խորին աղերս մը կա թրթռում, ծավալուն։

Պատուհաններ՝ պարտեզներու վրա բաց,
Արև, անդորր ու թարմություն կշնչեմ...
Թիթեռնիկ մը, օդի ծաղիկ վայրահած,
Կխոնարհի յուրաքանչյուր ծաղկի դեմ։

Երկիրն ամբողջ կախյալ պարտեզ մ'է կարծես՝
Երկինքեն վար, ճաճանչներուն արևին...
Ծղրիդներու երգով խոտերը կօրրին։

Հանկարծ ճաճանչ մ'ալ կմեկնի հոգիես,
Կեղբայրանա ծառերուն հետ ու լերանց,
Կուտա սրտիս դարունի հույս մը վաղանց...։

## ԳԵՂՋԿԱԿԱՆ

Պզտիկ տուներ հեռուն ինծի կժպտին...
Գյուղ մ՚է՝ թաղված մեծ ծառերու շուքին տակ,
Անտառախիտ լեռան մը կողը ետին
Եվ առջևեն հոսող ջուրով մը հստակ։

Եվ կխորհիմ... Ես այդ գյուղին բնակիչ,
Մենավորիկ և մոռցված հոն կապրիմ,
Հոգիս հանձնած իր անդորրին ամոքիչ,
Հովին, հողին և ծառերուն մտերիմ։

Ինչ անո՜ւշ է գիշերն այնտեղ քնանալ...
Կյանքն հոն կանուխ, արշալույսին կսկըսի.
Մշուշապատ հեռուի լեռն ու դաշտն ալ
Հորանջելով ոտքի կելլեն. մեկուսի

Առվակն այգուն կըսե աղոթք մը կարծես՝
Ալյակներուն համրիչն անվերջ քաշելեն.
Կբուրվառեն ծառի ճյուղերն, և անտես
Ծղուռներն ալ առվակին դեմ կըռնեն։

Օ՜, անոնցմե որոնք մեկ-մեկ կբանան
Արևին հետ դուռը իրենց տնակին,
Որոնց միտքը թերևս հողեն ալ խոպան՝
Սակայն հարուստ, բարի ու պարզ է հոգին։

Անոնցմէ մէկն ալ չինչ առուու մը հարկաւ
Կդարձընէ քաղցր նայվածքը ՚վրաս,
Եվ ղիպվածավ իր լույս ժպիտը անբավ
Ինձ կնետե՝ ինչպես միրգ մը նորահաս։

Անո՛ր, ո՛վ տեր, լուսաբացի այդ պահուն
Ես ալ հոգիս ի վեր ընծա կղրկեմ,
Եվ օրերուս վրա անկախ, օրորուն՝
Կտեսնեմ միշտ անոր պատկերն այգադեմ։

... Օ՜հ, այն գյուղը՝ մեծ ծառերու շուքին տակ,
Որուն, ո՛վ տեր, ես ըլլայի բնակիչ.
Ան քայլերուս ըլլար սահման բովանդակ,
Հոնկե ի մահ ընթանայի քիչ առ քիչ...։

## ԿԵՐԳԵԻ

Կերգեի ուրախ կամ տխուր, ի՞նչ փույթ,
Եվ երկինքն ըլլար մռայլ կամ կապույտ՝
Երգս ինչպես արտույտ մը կթռչեր վեր.
Երկու հոնք իրեն կըլլային թևեր
Եվ կերթար, կերթար, անխոնջ ու թեթև,
Հորիզոնն ի վար, նայվածքի մ՚ հետև...։

Կերգեի, ինչպես տղաք կկանչեն
Իրենց արձագանքը հովին մեջեն,
Ինչպես աղքատիկ տղաք կմուրան՝
Կծկած մեծ դռան մը սեմին վրան,
Ինչպես խաղացող տղաք կիյնան վար,
Ինչպես կշնչեն տղաք ոգեվար։

Կերգեի՝ նման մանուկ դյուցազանց,
Եվ երգերս էին աշխույժ ու անսանձ.
Կերգեի բաներ, որոնք չեն խոսվիր
Բառերով փափուկ, բարի, անբասիր.
Կերգեի հաճախ անգետ, ակամա,
Կերգեի, ինչպես չեմ երգեր հիմա...։

Դեռ կերգեմ հիմա, ավելի թերևս
Վարպետը երգին, մինչ, ավա՜ղ, այլևս
Ձայնս չի հնչեր իր հին թարմությամբ
Եվ սիրտըս լռած է շեշտերն իր բամբ...
Դեռ կերգեմ հիմա, մինչ կուզեի ա՛լ
Անխոս ու անշարժ՝ հանգչիլ, քնանալ...։

## ԱՆՑՅԱԼՍ ԱՆՉԱՓ ՀԵՌԱՑԱՎ

*Անցյալս անչափ հեռացավ, որ մոտ եմ զայն մոռանալու,*
*Ան աղոտած է այնչափ, որ զայն հազիվ կտեսնեմ*
*Եվ շատ անգամ դեռ երբ որ ան կկանգնի աչքիս դեմ՝*
*Զինք չեմ ճանչնար և ձայնին ալ չէ իմ սիրտս հլու...։*

*Ես չեմ ճանչնար մանավանդ տղան, որ ես եղա հոն,*
*Իմ կերպարանքս փափուկ և իմ հոգիս թրթռահույզ,*
*Ու ինչ որ զիս կթողու տրտմաթախիծ ու անհույս՝*
*Հոգին, որուն մատուցի ես պատարագ ու պաշտոն։*

*Երկար ատեն, նվիրմամբ ու այն ջերմիկ հավատքով,*
*Թե ան իմ մեջս հավետ պիտի ապրի անմոռաց...։*
*Ուրեմն բան չմնաց. ամայացած բարձիս քով*

*Ոչ իսկ գրքույկ մը կյանքիս լույս-ստվերովը գրված,*
*Զոր կարդալով, աչվներս ինքնիրեննին գոցվեին...*
*— Մոմդ մարե, դժբախտ մարդ, և նետվե վիհը քընին...։*

## ՆԵՐԿԱՆ ԱՆԱՊԱՏՆ Է

Ներկան անապատն է լուռ, ամայի,
Նախադուռ ոչ մեկ երկրի ավետյաց,
Զոր գեթ հեռուեն պիտի տեսնեի,
Անապատ մ'անծայր, ուր կամաց կամաց
Հոգնիլ կսկըսին հույսերս առույգ,
Ինչպես երազս ալ, բոցաթև նժույգ,
Կկասի՝ կարծես բանալ ուղելով
Ավազին ներքև իրեն կայք մը զով...։

Առտուները ալ բնավ մանանա
Չիջնար երկինքեն. ոչ սյուն լուսեղեն
Կերևի և ինձ ճամփա կբանա,—
Հնադետք պիտի հոն արդյոք պեղե՞ն
Եվ օր մը այս սյունն հանեն երևան,—
Ոչ մեկ ժայռի տակ կա ջուր շատրվան
Եվ աչքիս դիմաց ամեն մորենի
Եվ ամեն փափագ կայրի, կհատնի...։

Ներկան անապատն է լուռ, անխլիրտ...
Կմոռնամ, թե ո՞ր անցյալեն եկա՝
Հիշելով միայն, թե ճամփան էր բիրտ
Եվ զիս չախչախեց իր խոնչենքն հսկա.
Ապագա՞ն.— ահա դաշտ մ'ոսկերոտյաց
Եվ ե՞րբ հարության փողն երբեք գոռաց...։

## ՊԱԹՅՈՒԼԼԵՍԻ ՄԱՀԸ

*Ինչպես օդի՝ սիրո շունչի մը պակասեն*
*Հիմա մարած, մեռնելու մոտ է Պաթյուլլես...*
*Քարայրի մը մութ խոռոչին մեջը, կըսեն,*
*Ինչպես հողին դեմքին հետև՝ ինքը այնպես*
*Կպահվի, տարիներեն հալածական...*
*Զինք իր ցավին հետ հոն մոռցավ անգութ Պարկան.*

*Շա՜տ սիրվեցավ, բայց ալ ոչ ոք զինք չի սիրեր.*
*Ո՛չ մեկ քերթող զինքը չերգեր զմայլահար,*
*Եվ չի գգվեր զինք ոչ մեկ ծեր իմաստասեր,*
*Որուն համար ինք ներդաշնակ լուծումն էլլար*
*Խորհրդաքող գոյության մեծ առեղծվածին...*
*Սև թիթեռներ հիմա իր շուրջը կհածին...*

*Բայց իր խորշին մեջ կըսեն ահա հանկարծ*
*Թրթռուն ալմուկ մ'որ անտառեն իրեն կուգա...*
*Տղա մ'անշուշտ, մարմանդին վրա ընկողմանած,*
*Այդ երգն անուշ՝ անուշ հոգվով կերգե հիմա...*
*Զայն ատենոք իրեն ձոնեց Անակրեոն...*
*Եվ Պաթյուլլես արտասվելով կմեռնի հոն...*

## ՍԵՐ ՄԸ ԳԱՂՏՆԻ

Սեր մը գաղտնի՝ դանդաղորեն հասունցած,
Իրար գրկող նայվածքներով խուսափուկ,
Եվ շեշտերով, մրմունջներու մեջտեղ ցած,
Որ ակամա բացվող դուռներ են ծածուկ,

Սիրտե ի սիրտ գացող ճամփան կհորդի
Մերթ արևով, մերթ ամպերով կմթնե.
Ինչ փույթ սակայն, եթե վայրկյանը արդի
Մեզ նվաղիլ, մեռնիլ կուտա հուզումե...։

Եվ տենչանքներ, շյուղերու պես կծըլին,
Կանաչ այնպես, այնպես անձայն, աննշմար,
Սիրտե ի սիրտ գացող ճամփուն մեջ լուին...։

Օր մ'ալ այնտեղ երկու բերան դողահար
Միակ բառով մը ամեն թումբ կքանդեն
Եվ կկազմեն... օ՜հ, նույն համբույրը արդեն...։

# ԵՍ ԶԻՆՔ ԿԱՐԾԵՄ

Ես զինք կարծեմ ուրիշ անգամ տեսած եմ
Եվ այդ աչքերն՝ արդեն, արդեն կսիրեմ,
Միայն չէի ես դեռ իր ձայնը լսեր
Եվ պահեցի զայն հոգվույս մեջ գաղտնասեր...։

Սակայն նորեն հեռացավ ան, և նորեն
Իր պատկերը ընկղմեցավ քաղցրորեն
Եվ գոցվեցավ ալիքներեն անցյալի,
Ալիքներուն տակ զերթ գոհար սխրալի...։

Ա՛հ, թող երթա ու չնայիմ հետևեն,
Թո՛ղ հանդարտի սրտիս խռովքը տարտամ
Եվ աշխարհի մեջ հավիտյան զինք մոռնամ...

Միայն երբ գա մահվանս ժամն, այն ատեն
Հիշեմ իր ձայնն ու իր նայվածքը հանկարծ,
Եվ այդ դողին մեջ հեռանա շունչս անդարձ...։

## ԱՂՎՈՐՆԵՐԸ

*Աղվորն ա՛ն է հավիտյան, որ անցավ օր մը քովեդ*
*Եվ աչվըննե՛րըդ օծեց,— աստվածային այցելո՛ւ,—*
*Գեղեցկությամբ մը, որուն ա՛լ չդարձար նայելու,*
*Եվ չուզեցիր հանդիպել անոր անգամ մըն ալ գեթ...*

*Աղվորն ա՛ն է տակավին,— հավիտյանե հավիտյան,—*
*Որ նայվածքիդ արևին տակ կմեծնար համրորեն,*
*Որ զերթ ծաղիկ մ'օրորվող գարնան անուշ հովերեն,*
*Երբ մեկնեցար՝ մտքիդ մեջ մնաց միշտ թարմ, մի՜շտ բուրյան...*

*Եվ աղվո՛րը,— դուն գիտե՞ս օրհնյալ անունը անոր,—*
*Անիկա՛ է, որ կարծես պիտի կրնար քեզ սիրել,*
*Որ սերդ անշուշտ գուշակեց և սպասե՜ց ակընկոր,*

*Որուն սակայն լավ է, որ չուզեցիր սիրտը խռովել...*
*Աղվորն անոնք են միայն, որ տենչանքիդ ընդմեջեն*
*Անցան, գացի՜ն ու հիմա քեզ հեռուեն կկանչեն...։*

## ՉԷԻ ԿԱՐԾԵՐ ՔԵԶ ՍԻՐԵԼ

*Չէի կարծեր քեզ սիրել...։ Հորմեհետե բայց հեռու*
*Ենք իրարմե օրերով, ես շարունակ կտեսնեմ*
*Գողտր պատկերը դեմքիդ արևավառ աչքիս դեմ,*
*Կհիշեմ մեն մի շարժումդ և մեն մի շեշտդ ալ ալու...։*

*Գեղեցկությունդ վերջին ծնավ մտքիս մեջ կարծես,*
*Ինչպես հողին մեջ թաղված հունտեն բույսը կծլի,*
*Ծնավ, մեծցավ, ու հիմա պարտեզ մըն է սիրալի՝*
*Մտածումես բարձրացած, շատրվանված աչքերես,*

*Իր ծառերով հովանուտ և ջուրերով հորդաղեղ,*
*Որոնց մեջանց կշրջիմ ու կշնչեմ արբեցած,*
*Մերթ քաղելով հուշիկներ՝ ծաղկանց նման երփնագեղ,*

*Եվ մերթ ալ հոն մնալով շվարած ու մտահած,*
*Հարցնելով՝ այս դրախտն ո՞ր աստվածինն է արդյոք,*
*Ես ո՞ւր և ե՞րբ տեսա զայն, և կա՞ աստվածն այդ իրոք...։*

## ԱՆՈՒՆԴ

Ինչո՞ւ անունդ այստեղ չկարենամ գրել ես
Եվ աշխարհի չհայտնեմ, թե քեզ ինչպես սիրեցի...
Երկու վանկերը անոր կզրուցեմ գաղտնապես,
Եվ այն ամբողջ կթըվի սիրո մատյան մը ինձի...
Ինչո՞ւ անունդ այստեղ չկարենամ գրել ես...։

Հիմա հեռու իրարմե՝ միայն անունդ ունիմ
Բերնիս վրա, համբույրի մը պես աննյութ և անուշ...
Գիշեր ատեն, սենեկիս մենության մեջ մտերիմ
Ես զայն կըսեմ և ահա քեզ կտեսնեմ քաղցրահուշ...
Հիմա հեռու իրարմե՝ միայն անունդ ունիմ...։

Գեղեցկությունդ ու իմ սերս հորինեցին զայն կարծես...
Սիրտս իր անդուլ տրոփմամբ անընդհատ զայն կհեգե՝
Թեպետ վաղուց մտքիս մեջ քեզ ամբողջ գոց գիտեմ ես...
Քեզ չճանչցած ունեի՞ր դուն այդ անունը միթե...
Գեղեցկությունդ ու իմ սերս հորինեցին զայն կարծես...

Ո՛չ, չեմ ուզեր, չեմ կրնա՞ր ես զայն հանձնել աշխարհի.
Երկու վանկովն իր կուզեմ ինկել իմ կյանքս միայն,
Եվ երբ վերջին արևիս վերջին ճաճանչը մարի՝
Անունդ ի շուրթ դեռ կուզեմ ողջունել— այգը մահվան.
Ո՛չ, չեմ ուզեր, չեմ կրնա՞ր ես զայն հանձնել աշխարհի...։

## ՀՈԳԻԴ

Պզտիկ աղջիկ, հոգիիդ ցուցուցիր դէմքն ինծ այսօր,
Զոր ես չէի տակաւին աչքերուդ մէջ կարդացած...
Ի՜նչ հաճոյք էր թափանցել հանկարծ մութին մէջ անոր
Եւ զայն գտնել այնքան քաջ, ու վեհըղձաց, ու գթած...։

Հոգի՛դ, այո՛, աչքերուդ և հասակիդ արժանի,
Այնքան մատաղ ու այնքան արդէն հարուստ ու հասուն,
Գարնանաբույր քու հոգիդ մարմինիդ մէջ ծաղկատի,
Զոր շնչեցի հմայված՝ ինչպես հոգին վարդերուն...։

Բառով մը դուն ցուցուցիր հոգիիդ դէմքը ինծի,
Պզտիկ աղջիկ, և այդ բառն ես սրտիս մէջ պահեցի
Ու զայն հիշեմ պիտի միշտ, երբ դուն մոռցած ըլլաս զիս...

Գիտե՞ս թե ինչ կուզեմ արդ... օ՜հ, ոչ թե զիս հիշեիր,
Այլ թե որքան ալ մեծնաս ու տառապիս ու հրճվիս,
Հիշես հոգիդ այսօրվան և փափկությունն և ուժն իր...։

## ԺՊՏՈՒՆ ԱՉՔԵՐԴ

Չհասկցված բաներուն,
Բնության մեծ գաղտնիքին
Նման՝ աչքերդ ժպտուն
Հոգիիս մեջ կնային...։

Ժպտուն աչքերըդ արդյոք
Սե՞ր մը ինձի խոստացան,
Մինչ կկարդամ անձկանոք
Ես հոն վճիռըս անձայն...։

Ժպտուն աչքերդ բացի՞ն
Թե՞ գոցեցին դուռ մ'ոսկի,
Որուն դիմաց կծաղկի

Դեռ սիրույս բոցը նախկին...
Ժպտուն աչքերդ մա՞հ թե՞ հույս
Կպարզեն դեմը սիրույս...։

## ՉՈՐՑԱՎ ԱՂԲՅՈՒՐԸ ՍՐՏԻՍ

*Չորցա՛վ աղբյուրը սրտիս, քաղցրակարկաչ այս սրտին,*
*Որուն անուշ, հորդաբուխ հին ջուրերուն վազքն անգամ*
*Հիմա հազիվ կհիշեմ և հազիվ մերթ կմնամ*
*Անջրասույզ՝ թե անոնք թերևս նորեն կբխին....*

*Չորցավ աղբյուրն՝ ավելորդ զոհողության մը նման,*
*Չորցավ՝ ի տես իր ուղխին ավազներեն ծծվելուն,*
*Եվ ոչ շատոնց չբուսավ ծաղիկ մը եզրն իր ճամփուն*
*Եվ ուղևոր մը շատոնց չհակեցավ իր վրան....*

*Հիմա, ցամքած այդ ակեն կմնա լոկ մեկ ճակատ,*
*Ավազալից իր գուռով և քարերով մամռապատ,*
*Որ կպատռին օրե օր և կթափին աննշմար....*

*Չորցած աղբյուր, չէ՞ր կրնար ըլլալ սակայն, որ վերջին*
*Անգամ մըն ալ սանձարձակ ջուրերդ հանկարծ ժայթքեին*
*Եվ շենքդ ամբողջ անոնց տակ մեծաշառաչ վար իյնար....*

## ՀԱՅՐԵՆԻ ԳԱՐՆԱՆ ՀԻՇԱՏԱԿԸ

Եթե լռեր վայրկյան մը սրտիս աղմուկը անկարգ,
Եթե պահիկ մը դադրեր կիրքին խուճապը քանդիչ,
Ստվերին մեջ իրիկուն մ'եթե աչքերըս անարգ
Ջվառեին տենչանքով ու գոցվելով քիչ առ քիչ

Ձիս ամփոփվլիլ, հանդարտիլ ու սպասել Անցյալին՝
Իր գույներով, բուրումով, պայծառությամբ, թարմությամբ,
Վերադարձին հեզորեն դիս սպասել թույլ տային...
— Ինչպե՞ս ահա կբանա երկինքն իր ծոցը անամպ,

Իր կապույտովը շքեղ մայիսի ջինջ առտըվան,
Բլուրը ի՜նչ թավշաթույր կողեր ունի վետվետուն,
Ի՜նչ աղվոր է դեռ թրջած խոտերու մեջը գալ ման
Եվ երկննալ, և դիտել հեռուի լեռը ժպտուն....

Հո՛ն դարիի նորաբույս արտը շղարշ մ'է նրբին,
Որուն ներքև կշողան հարսնուկները հակնթյա,
Հոս՝ եզերքեն, բուռերով երիցուկներ կհորդին
Եվ կհոսին՝ մարգրտի զերթ հեղեղ մը ճամփուն վրա...

Քիչ մը անդին՝ հեշտացրիվ հոտը հովվին կարածի,
Գառնուկները կմայեն և կցատկեն անդադար,
Եվ ուլերը տռպրակված ծիծերուն տակ մայրենի
Կքսվըռտվին և կուզեն իրենց բաժինը արդար....

*Ինչպե՜ս ահա զեփյուռն ալ կուգա դաշտին այցելու,*
*Թիթեռնիկները կուգան թալթըլելեն, դողալեն,*
*Մինչդեռ ծառերն ալ կարծես կըսեն գաղտնիք մ'իրարու,*
*Երբ որ հովեն գլուխնին իրարու վրա կծռեն...։*

*Մատաղերամ տղոց խումբ մ'ալ կխաղա անոնց մեջ.*
*Անոնց հնչուն ծիծաղին ես կունկընդրեմ ցնծությամբ.*
*Օ՜հ, անոնց մեջ է անշուշտ իմ. ծիծաղս ալ վաղաշեջ...*
*...Ինչպե՜ս ինձի կբանա Անցյալն իր ծոցը անամպ...։*

## ԵՎ ՆՈՐԵՆ ԽՈՆՋ ԵՆ ՇՐԹՈՒՆՔՆԵՐՍ

Եվ նորեն խոնջ են շրթունքներս երգելեն,
Եվ այս սրինգն, աստվա՛ծ, ճաթա՞ծ է արդյոք.
Եվ տենչանքներն, որ մութին մեջ կայցելեն,
Որոնց ի տես կդողայի հրճվանոք՝

Մոլորեցա՞ն արդյոք ճամփան... կամ հոգիս՝
Մեհյա՛ն իրենց, աստվածներու թափառիկ,
Շատ հի՞ն գտան ու լքեցի՞ն արդյոք զիս,
Եվ պիտի մնա՞մ ա՛լ առանձին, անոքիկ...։

Շրթներըս խոնջ են երգելեն, հավիտյա՞ն.
Բոլոր հույսերըս մի առ մի կկքին,
Եվ սիրտս խոնջ է տենչալե Տենչանքին...։

Այսպե՞ս թողեք զիս վարժըվիլ լռության,
Հիշատակնե՛ր, ո՛վ դուք, որ դեռ կճչեք,
Հիշատակնե՛ր, գիտցեք մեռնիլ՝ լո՜ւռ և սեգ...։

## ՀՈԳՆԱԾ ՃԱՄՓՈՐԴԻՆ

Գիտեմ, հոգնած ես, ճամփորդ, և օրն ալ է տարաժամ.
Ես ստուգիվ քու վրադ զերթ եղբոր մը կխղճամ.
Պետք չէ՞ր հիմա խոնջենքիդ առջև գտնել դուռ մը բաց,
Պետք չէ՞ր գոնե ճամփուն մեջ ճակատագրին կարծրացած՝
Հին սիրտ մը մայրական ակոսին մեջը պառկիլ,
Երազելով երկնաբերձ սանդուղ և ցուպ ծաղկածիլ...։

Գիտեմ, ճամփո՛րդ, որ կուգաս մշուշասքող այն երկրեն,
Որուն ամուր շղթաները դեռ հոգիդ կգերեն,
Որմե աղվորը չկա, որուն չկա նմանն ալ,
Զուր կուզեիր, բայց երբեք ալ չես կրնար դուն մոռնալ։

Լա՛վ, մի՛ մոռնար զանիկա, բայց մի՛ ուզեր դառնալ ետ.
Անցյալն անթիվ դուռներ են՝ իրարու վրա գոց հավետ.
Անցյալը մութ բավիղն է, որուն թելը առաջնորդ
Չտրվեցավ ոչ մեկուն, զոր կողողեն միայն հորդ
Արտասուքներ, արյուններ, և հոնկե միշտ ու միայն
Մա՛հը կանցնի ու անվերջ կամայացնե, կավլե զայն...։

## ԽԱԲԵՈՒԹՅՈՒՆ

*Ես՝ պարտըված մը կյանքեն, վիրավորված մը անկե,—*
*Մենք մեզի ենք, ո՛վ հոգիս, խոստովանինք ասիկա,—*
*Ինչպես կըլլա, կխորհիմ, որ նորեն ժամ մը կուգա,*
*Ուր սրտիս խորը հանկարծ կյանքին հաճույքը կերգե։*

*Բառ մը հաճախ կբավե հորիզոններ բանալու,*
*Ճառագայթ մը անցյալես՝ կըլլա լույսը ներկային,*
*Եվ աչքերեն, որ վայրկյան մ՚ինձ բարությամբ կնային՝*
*Ապագայիս վրա անվերջ երջանկություն կհեղու։*

*Եվ անձնատուր այս անհուն արբեցության, զոր ընդմիշտ*
*Կկարծեի անհնար, ես կմոռնամ ամեն վիշտ,*
*Ամեն կասկած ու կյանքին հետ նորեն պար կբռնեմ։*

*Հիմարությո՞ւն, ստությո՞ւն՝ կըսեմ վերջեն ինքզինքիս,*
*Երբ կմնամ ես նորեն տրտմությանս դեմառդեմ։*
*— Բայց այդ սուտին դուն ինչպե՞ս կփափագիս, ո՛վ հոգիս...։*

## ԴՈՒՆ ՉԳԻՏՑԱՐ

*Դուն չգիտցար, չեն գիտեր այդ տարիքին մեջ կանայք.*
*Թե այն ամառն ինչ սիրուն, ինչ գեղեցիկ իսկ եղար.*
*Ինչպես աչքիդ ու ձայնիդ շղթան օղակ առ օղակ*
*Շուրջս կառներ ու կըներ զիս քու գերիդ դողահար...*

*Շուքիդ մեջեն շարունակ եկող գերին քեզի հետ,*
*Զոր դուն երբեմն հազիվ զգացիր մոտդ, ու երբեք*
*Չկարծեցիր, թե ան կյանք կառներ միայն քու տեսքեդ*
*Եվ կըլլար մերթ հուսալից և մերթ նորեն սրտաբեկ...։*

*Դուն չգիտցա՞ր ասիկա... Եվ հեռուեն ալ երբ որ*
*Մտածումներըս ամեն, զերթ տատրակներ սպիտակ,*
*Գիշեր ցերեկ, անվհատ, հեշտաթռիչ, անմոլոր,*

*Կթըռեին դեպի քեզ՝ իբրև իրենց քիվին տակ,*
*Չգիտցա՞ր, թե կյանքիս ծառն էր, զոր ամբողջ՝ կտցակիր*
*Կբերեին թափել շուրջդ, որպեսզի վրա՞ն կոխեիր...։*

## ՏՂՈՒ ՄԸ

*Եթե ճիշտ է, որ զքեզ հանկարծ քայլերդ տարին*
*Դեռ նոր անշուշտ, օ՜հ, դեռ նոր խորհրդավոր ու շքեղ*
*Այն պարտեզն, ուր երազներ՝ մեծ ծառերու կատարին*
*Եվ համբույրներ՝ բաժակին վրա ծաղկանց կթառին...*

*Եթե իրոք այս ամառ միայն մտար դուն այնտեղ,*
*Հանկարծակի՝ օր մը, երբ անոր չէիր սպասեր,*
*Եվ շլացած աչքերուդ դեմ ծագեցան բյուր լույսեր,*
*Եվ չգիտցար բավական ատեն, թե սերը այս էր...*

*Եթե վերջեն, զարմանքիդ վախ մը հանկարծ հաջորդեց,*
*Խորունկ հաճույք մը գըտար տառապելուն մեջ լռիկ,*
*Մերթ հեռանալ ուզեցիր, և ծառերուն կուրծքդ հեց՝*
*Հոն մնացիր ու լացիր, ու գիտցար, թե որքա՜ն մեծ*

*Էր դյութությո՛ւնը տեղվույն... եթե իրոք, ո՛վ պզտիկ,*
*Սիրո գաղտնիքը անհուն այսօր այլևս գիտես...*
*Եկո՛ւր, եկո՛ւր, զի սրտիս դուռն չափազանց ես մոտիկ,*
*Եկո՛ւր, անցյալս ու ներկադ թող գրկըվին գաղտնապես։*

## ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ՋՈՐՅԱՆ

*Աղբյուրներ ջորյան, ո՜վ, պայծառարև՜,*
*Եվ չբխեցան ուրիշ աղբյուրներ,*
*Որոնց խուլ դռռումը հողին ներքև*
*Ամառվան միջոտեղ կլսեմ մերթ դեռ։*

*Հեղաձայն գնաց, թափեցավ ի ծով*
*Մանկությանս ջինջ, պաղպաջուն առուն,*
*Եվ պատանությունս անցավ հուսալով,*
*Ժպտելով իր լայն հորիզոններուն։*

*Կեցած եմ հիմա կյանքի կես ճամփան*
*Ջուրերն հորդաբուխ ցամքեցան բոլոր,*
*Եվ բոլոր ծաղկունք շուրջը թոռմեցան։*

*Բայց, ո՛վ տեր, անոնց հին փոսին մեջ չոր*
*Չի՞ կրնար ըլլալ, որ հետամնայ*
*Հեղեղ մը սիրո գա հոսիլ հանկարծ...։*

## ՆՈՐԵՆ, Ո՜Վ ՍԵՐ

Նորեն, ո՜վ սեր, գլխս զարկիր և թողուցիր վիրավոր...
Դանակին ծայրը սրտիս դպավ, սրտիս մեջն է արդ,
Եվ արյունիս այդ՝ վերքեն կզգամ բխումը զվարթ,
Եվ չեմ կրնար, չեմ ուզեր խլել դանակը աղվոր...։

Իմ էությունս ընդառաջ ցատկեց իսկույն այդ վերքին,
Ընդունեցի զայն, ինչպես հաղորդությունն սկիհեն,
Դանդաչեցի, բայց ինչպես կույրերը, որ կտեսնեն
Հանկարծակի, նշտրակի մը հարվածեն առաջին...։

Եվ եթե վերքս այսքան ինծի անուշ է հիմա,
Անոր համար է, որ զիս կդարձընե անցյալին,
Անոր համար, որ սրտիս իր հին արևը կուտա...

Ո՜վ քաղցրություն... Հոգիես մեծ հառաչներ կթռին,
Անրջաղոծ աչքիս մեջ մերթ արցունք կա, մերթ ժպիտ,
Եվ կտեսնեմ ամեն ինչ արցունքներուս պես վճիտ։

## ՏԵ՛Ր, Ի ՎԵՐՋՈ

Տե՛ր, ի վերջո, երբ նվաղի լույսը կյանքիս,
Վերջին շնորհ՝ պիտի ուզեմ, որ դեմս ըլլա
Անոր պատկերն այն տարիքին, ուր սիրեց զիս,
Նույն աչքերով և նույն ժպտովն ալ անուղղա...։

Թող ատիկա ըլլա իրկուն մը ամառվան,
Երկինքը թող առնե իր գույնն ամենանուրբ,
Խաղաղություն մը պարուրե թող ամեն բան,
Եվ թող մտքիս վրա իջնա ստվեր մը սուրբ...։

Որոշապես պիտի գիտնամ թե ալ կանցնիմ...
Ոչ մեկ զղջում պիտի կրծե սիրտս սակայն.
Թե այս միակ կյանքդ իսկ ըլլա, օ՛հ, աստվա՛ծ իմ,
Անոր համար շնորհակալ եմ քեզ միայն...։

Եվ այդ պահուն հանկարծ ծովե մը լուսավոր
Իմ անցյալիս օվկիանեն խաղաղադեմ,
Ինչպես կղզի մը, թող հառնե պատկերն անոր,
Ու ես հուզված և հմայված զանի դիտեմ...

Զայն ընդերկար, հավերժության երկար վայրկյան
Մը թող դիտեմ, ծաղկասպիտակ ու հեշտագիծ
Այդ փոքր կղզին, ու թարթիչներս երբ որ իյնան՝
Թող ինձ թվի, թե ճիշտ հասա իր ծոցն անբիծ...։

## ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ

*Երջանկությունն այս է լոկ... Երկու հոգի ըլլալ հոս,*
*Երիտասարդ ու հարուստ, գեղեցկադեմ, քաջառողջ,*
*Որ կունկընդրեն իրարու, երբ կմնան իսկ անխոս,*
*Եվ իրարմով են ամբողջ...։*

*Երկու հոգի մեկ տան մեջ, մեկ սենյակի մեջ մինակ՝*
*Երբ իրիկվան լամպարին կզեղու լույսն ընտանի,*
*Երբ տուն կուգա այրը որ՝ ծնած բարի աստղի տակ,*
*Կինն աստղին մեջ կտանի...։*

*Երկու հոգի, հավիտյան խորհրդակից իրարու,*
*Որ չեն պահեր և չունեն իրարմե բան մը ծածուկ,*
*Որոնց աչքին բնության առեղծվածն իսկ աճարկու*
*Կպարզըվի անշշուկ...։*

*Երկու հոգի, աստված իմ, հազարներու, բյուրից մեջ,*
*Որոնց մին ես ըլլայի, ինչպես մյուսն ալ անիկա,*
*Ա՛ն, որուն դեռ կպահեմ սրտիս մեջ հույսը անշեջ,*
*Եվ որ պիտի ա՛լ չգա...։*

## ՀԵԾԵԾԱՆՔ

Պատահի ալ երբեմն, որ ցաւս հպարտ ընէ զիս.
Ես առանձին եմ, կըսեմ, իր ճանկին մէջ գալարուող,
Եւ իր ճիչերն ալ՝ խորունկ անդունդներուն մէջ սրտիս
Կրնամ խեղդել ու մնալ լուռ, անտարբեր, մթասքող...։

Սակայն երբե՛մն, երբ կանցնի երջանկութիւն մ'ալ քովէս,
Երբ անապատն, որ հուսայ փոթորկին մէջ չիթ մ'անձրեւ,
Կտեսնեն լոկ վերհառնումն աւազներուն հրակեզ,
Ես կանիծեմ տառապանքս ու կընկճուիմ իր ներքեւ...։

«Աստուա՛ծ, աստուա՛ծ, կպռչեմ երեսանկյալ գետնին վրա,
Ահա գնաց ան, որ զիս պիտի ըներ երջանիկ
Ան, որ կերթա հավիտյան ու պիտի ալ չդառնա...

Ինձմե ի զատ ի՜նչ օրհնյալ, ի՜նչ բախտավոր են մարդիկ.
Հետին աղքատն ալ երբեմն իր պզտիկ գանձն է գտած.
Զիս անոր եւ ամենուն նման ըրե՛, ո՛վ աստված...»։

## ԱՆՀՈՒՍՈՒԹՅՈՒՆ

*Զերթ նավաստին դիտանոցեն, որ կպոռա*
*Բազմաղաղակ ամայության վերև ծովին*
*Եվ քաոսին բերնին վրա,*
*Հոգիս այնպես երկնքի կամքն ամբողջովին*
*Կազդարարե՝ պահակ արթուն և զգայուն,*
*Մտքիս, որ պետն է այդ նավուն...*

*Ծովը կոռնա և կսահի նավը հաճախ*
*Անդունդն ի վար ու կելլե վեր ալյաց ի գլուխ...*
*Հույսը բազե մըն է անվախ,*
*Թռած նավեն, որ կճեղքե ամպերը թուխ,*
*Մինչև որ դա զինքը զարնել հուր օձ մ'երկար*
*Եվ դարձդարձիկ նետվի ան վար...*

*Տե՜ր, ծերունի պահակն հոգնած է ալ հիմա*
*Իր անօգուտ, անլուր կոչերը ուղղելեն...*
*Վարն ամեն ոք կքնանա*
*Եվ խիստ է ծովն ավելի, քան ամեն ատեն...*
*Հոգիս հոգնած, տե՜ր, կխնդրե հիմա քենե,*
*Որ մեկ շանթդ ալ զի՛նքը զարնե...*

## ՄԵԿՆՈՂԻ ՄԸ

Եղա քայլ առ քայլ մեկնումիդ վկա,
Տղաս, մանկության չքնաղ պարտեզեն.
Առևանգումիդ համր, ամենօրյա,
Զքեզ անձնատուր տեսա խեղճ, անզեն...։

Ինկան՝ թառշամած՝ վարդերն այտերուդ,
Եվ աչքիս արևն օր մ'անհետացավ
Հոգիդ ելլող ամպերուն տակ մութ,
Եվ անմեղությունդ ալ թռավ տակավ։

Հիմա պարտեզին դռան մեջն ես դուն,
Վաղը՝ դուրսն արդեն, և ես միայն կամ,
Որ հոն կտեսնեմ քեզ անհոգ, ժպտուն...

Չի դուն չես գիտեր, իմ փոքր բարեկա՛մ,
Չի մեկնողը ուշ, շատ ետքը միայն
Կհիշե պարտեզն ու կափսոսա զայն...։

## ԵՐԱԶՆԵՐ

***

*Ահավասի՛կ... ալ չեմ լար և ալ ոչինչ չեմ խնդրեր*
*Կյանքեն, որ այնչափ եղավ ինձի խոժոռ ու ագահ.*
*Ես կդառնամ Երազին, որ գիս երկար տարիներ*
*Տեսավ առջին ծնրադիր, գերթ Թագուհի մը ի գահ...*

*Ես Երազին կդառնամ, անդավաճան սիրելույն,*
*Որ մերձավոր և հեռու, որ հստակ է և տարտամ,*
*Որ անշարժ է, անբարբառ, և բարությո՛ւն դերագույն*
*Կխոստանա լռությամբն ամեն ինչ, որ կցանկամ...։*

*Կյանքին վրա, կյանքեն վեր կրնակի անիկա,*
*Ան աղվոր է, ամենեն աղվորներեն ավելի,*
*Գուրգուրացված՝ զավկի պես, կնոջ նման՝ տարփալի։*

*Անկարելի չունի ան, և ամեն ժամ է ներկա,*
*Եվ ան այնքա՛ն է բարի, այնքան սիրող, հոգածու,*
*Որ քընիս մեջ իսկ կուգա իր սփոփանքն ինձ տալու...*

***

Ով իմ Երազս, երեցար ինձ այս գիշեր դուն նորէն
Անծանօթի մը դէմքով,
Ինձ երեցար ու անցար եւ պահեցի քաղցրօրէն
Այդ պատկերն ալ հոգեխռով...։

Ինձ թուեցաւ, թէ սակայն ուրիշներէ աւելի
Նման էր ան Երազիս,
Հասակ մը վեհ, դէմք մը նուրբ, աչքեր ունէր լուսով լի՝
Ողողելու համար զիս...

Եւ կարծեցի նոյնիսկ, թէ Երազ մը չէր ան միայն,
Թէ կրնայի մօտենալ,
Ժպտիլ անոր, բռնել ձեռքն ու փայփայել, դրկել զայն,
Սիրել զանի, սիրե՜լ ալ...։

Ո՛վ քաղցր Երազ, լեցուցիր այս գիշեր կեանքս քեզմով,
Ու հեռացար, մարեցար...
Նորէն մինակ եմ հիմա, ինչպէս նաւակ մը ի ծով,
Ալեատատան, հողմավար...։

***

Եվ հմայքով մը հանկարծ՝ տարիքիս բեռն ավելորդ
Կթափի վար ուսերես, խորհուրդներես ու սրտես...
Տե՛ս, տասնվեց տարեկան կըլլամ նորեն և, անցորդ,
Ճամփուս վրա վերստին գլխս հոգեզմայլ կգտնես...

Կկանչեմ քեզ դողահար, երբ որ անցած, գացած ես,
Քեզ կկանչեմ անձկագին իմ Երազես ծաղկահորդ
Պարտեզին մեջ, ուր կուգաս և ուր կօրհնեմ, կօծեմ քեզ,
Ուր կբանամ — հո՛ն միայն, քեզի իմ սիրտս անհաղորդ,

Ի՜նչ երջանիկ, ի՜նչ ուրախ կըլլամ քեզ լուռ տեսնելով,
Երբ դուն կերթաս այնչափ սեգ, այնչափ փափուկ ու ճերմակ,
Զիս ձգելով ընկճըված շնորհներուդ գանձին տակ...

Ի՜նչ երջանիկ դեռ հետո, երբ Երազին ծաղկանց քով
Կմտածեմ միշտ վրադ, քեզ կխառնեմ միշտ անոնց,
Եվ կպահեմ քեզ միշտ հոն, երբ դուն մեկնած ես շատոնց...։

## ՎԵՐԱԴԱՐՁ

*Քաղաքը իր ծաղկած վայրերն և օրն ալ,*
*Իր ոսկեզօծ ժամերն ունի՝ անմոռաց*
*Անցյալիս մեջ, ուր քու հասակդ օրհնյալ*
*Երանաշող այս աչքերուս երևաց...։*

*Դուն կանցնեիր՝ շքեղաշուք, բարձրահոն,*
*Դեռ մանկունակ, բայց վեհաքայլ ու անդորր...*
*Դուն կանցնեիր հորիզոնե հորիզոն*
*Ձմայլանքիս երկնքին մեջ հեռավոր...։*

*Ամեն քարերն անցած ճամփուդ՝ դող գիտեմ,*
*Քայլերդ ամեն դեռ սրտիս մեջ կընթանան,*
*Եվ շշուկներդ ամեն՝ կերգեն անվախճան...։*

*Այն տեղերեն հիմա կերթամ ծանրադեմ,*
*Հիմա կերթամ, և քարերուն տակ, աստվա՛ծ,*
*Անշո՛ւշտ, կըսեմ, հին արևներ կան թաղված...։*

## ՍՊԻՏԱԿ ՁԵՌՔԴ

*Սպիտակ ձեռքդ, զոր այսօր*
*Ձեռքիս մեջ զգացի,*
*Եղավ ատեն մը, որ*
*Երջանկությո՞ւն մըն էր ինձի։*

*Ես այն ատեն՝ բոլոր*
*Սրտովս անոր կտենչայի.*
*Կսպասեի անոր,*
*Ջերթ զանգակ մը՝ զանգահարի...։*

*Ի՞նչպես եղավ, որ ձեռքդ այսօր*
*Երկարեցիր ինձի,*
*Երբ անցյալիս անդունդեն խոր*

*Բռնեցի զայն և հիշեցի,*
*Թե կար ատեն մը, որ*
*Երջանկություն մ՚էր ան ինձի...։*

## ԱՄԱՌՆ ԱՆՑԱՎ

*Ամառն անցա՜վ, ու սիրտ ծարավս անհագ մնաց միշտ...*
*Դաշտերը զիս առանձին տեսան ցերեկն ու երբեք*
*Գիշերն ալ վրաս չծորեց ո՛չ հեշտություն և ո՛չ վիշտ,*
*Չնայեցա աստղերուն՝ հուսալից կամ սրտաբեկ...:*

*Անցավ ամառն առաջին՝ այս հողին վրա, ուր երբեմն*
*Այս խեղճ սիրտը խենթի պես տրոփեր էր և հյուծեր.*
*Այս գյուղն, այս ծովն, այս բլուրն եղած էին կյանքիս սեմն,*
*Ուրկե տղա բաժնված՝ կդառնայի իբրև ծեր...:*

*Կհուսայի, աստվա՛ծ իմ, և կհուսամ տակավին,*
*Որ հեռավոր, հյուրամերժ այլուրներուն մեջ հոգնած*
*Եվ շիթ առ շիթ իր արյունն իզուր վատնած այս հողին*
*Պիտի գտներ զինք այստեղ կենդանացնող ջուրն ու հաց...:*

*Այս հողին վրա, որ այնքան զիս հրճվեցուց ու լացուց,*
*Իր վրայեն լուսանցնող տեսքովը գողտր հասակին,*
*Պիտի չըլլա՞, աստվա՛ծ իմ, որ գեթ սեր մը վաղնջուց*
*Իր դամբանեն արթննա ու զիս գգվե վերստին...:*

## ՎԻՇՏ ՄԸ

Վաղուց է, որ կյանքն ինձի ամեն հրճվանք զլացավ։
Եվ վարժըված եմ ատոր.
Բայց չունենալ ոչ մեկ վիշտ, հարատևող ոչ մեկ ցավ,
Որ հոգիիս մեջ պղտոր

Հուսակությունն իր դներ և կազմեր կայն օրերուս,
Որ միայն իմըս ըլլար,
Իմ թաքստոցս, ուր հաճախ մարդոց աչքեն տալով խույս,
Պահվտեի դողահար...։

Զունենալ վիշտ մը շքեղ, տոկուն ու կարծր ինչպես վեմ,
Որուն վրա հակած միշտ.
Կյանքս աշխատեր ու կերտեր անկե անդրի մը վսեմ...
Զունենա՜լ զայն, ա՛հ, ի՜նչ վիշտ...։

# ԳԱՆՁԱՏՈՒՆԸ

*Գիտեմ հեռուն ես գանձատուն մը, որուն*
*Ոչ ոք անցավ անկոխ ճամփէն և ոչ ոք*
*Ունի անոր բանալին փակ դուռներուն.*
*Մ՛իայն պահնորդ մը խոնջ արդեն և տարվոք*

*Հոն կսպասե, ուրի՞, ինչի՞... չի՛ գիտեր.*
*Ահեղափայլ Թերևս օրվան այն շքեղ*
*Ուր նժույգովն իր քառատրոփ, իբրև տեր*
*Դիպված-Արքան պիտի դրոհ տա այնտեղ...*

*Եվ կամ Թերևս, վարանքով գա ու կանգնի*
*Պիտի իր մոտ հեզ մանկուհի մ'որ գիտե*
*Դուռներ բացող մոգական բառը գաղտնի...*

*Բայց, կխորհիմ, իմ ապագաս միգուցե*
*Ըլլա պարապ գանձատուն մը, ո՛վ աստվա՛ծ,*
*Եվ հոն խղուր հույսըս ըլլա սպասված...։*

## ԱՇՏԱՐԱԿԸ

Պաշտպանելու համար հոգիս, ա՛լ երբեք
Թույլ չտալու համար կյանքին ալյաց տակ
Ամեն օր քիչ մը կորսըվիլ,— բարձր ու սեգ
Ես աշտարակ մը կառուցի անհատակ

Ծովուն վերև ու երկնքին տակ դաժան…։
Հոն միայնակ հիմա հոգիս կբնակի,
Միտքս պահակ՝ իր դիտակեն անրաժան,
Եվ աշխարհի դեմ դուռս գոց կրկնակի։

Հովն ու ալիք թող զայն ծեծեն անխնա.
Ոչ մեկ ճամփորդ ալ կսպասեմ ես ծովեն,
Եվ ոչ ոքի ալ արդեն հոն տեղ չկա…։

Իսկ պատահի, որ փոթորկաց մեջ զարնեն
Ջուրերն անոր և նետեն բան մը անտես,
Գիտեմ թե ան խլյակ մըն է անցյալես…

## ԵՐԵՍՆԱՄՅԱԿ

*Երեսունի հրվանդանին առջևն՝*
*Ահա իմ նավի առագաստները պարզած,*
*Փրփուրին մեջ կհետևին մինչ իրեն*
*Շնաձուկի սև կլափներ լայնաբաց...:*

*Կայմին վրա կարկատաններ կան անթիվ,*
*Եվ ծակեցավ շատ անգամներ ղեկն անոր...*
*Երեսունի հրվանդանին ի պատիվ*
*Կրցածիս չափ նորոգեցի զայն այսօր...:*

*Մեծ մրրիկներ չանցուցինք մենք, բայց հավետ*
*Եկավ մեզ հետ կարծես կոհակ մ՚ընդծովյա,*
*Նավս անդուլ տատանելով ու իր հետ*
*Քայքայելով հոգիս, մարմինս անխնա...*

*Պատահեցավ, որ հույսս մերթ կտրեցի*
*Երեսունի հրվանդանին հասնելու.*
*Բան մը սակայն կազդարարեր միշտ ինձի,*
*Թե հոն իյնար պիտի կոհակն ահարկու...:*

*Եվ մենավոր, մռայլ ճամփուն վրա ջուրին՝*
*Ես ունեցա շատ մը մահեր նավուս մեջ.—*
*Մանուկ իղձերս անգղերն առին ու տարին*
*Եվ ծովամույն կորավ հավատքս վայրէջ...:*

Շատ մը սերեր՝ թևերուս մեջ մեռնելով,
Եզերքեն դուրս, կամաց մը ջուրն եմ նետած.
Շատ երազներ ինքներիննին ինկան ծով
Ու ես վերեն աղոթեցի գլխաբաց...:

Հույս մը միայն, որ մեծցուցի, սնուցի
Երկար ատեն, հոգվույս ամբողջ զորությամբ,
Որ իր տեսքին նշուլանքով առնացի
Երբ կերևեր՝ կփարատեր ամեն ամպ,

Իմ հույսըս օր մը ըլլալու անզոր չեմ,
Ըլլալու ան, որ առաջ աներ ինքզինքին՝
Հետո անհաղթ պիտի կռվեր տարերց դեմ,
Իմ այդ հույսս ալ չար ոգիները զարկին...:

Եվ նավուս մեջ պառկեցուցած եմ զանի,
Ալետատան, հեծեծելով, տքալով,
Հիվանդ այնքան, որ քիչ օրեն կմեռնի,
Մինչ կմընամ ծալաբաղուկ՝ մահճին քով...:

...Երեսունի հրվանդանին առջևեն՝
Ահա իմ նավս, ու ծովն է նույն վայրենին...
Շնաձուկեր կհետևին միշտ իրեն
Եվ կսպասեն իմ մեծ հույսիս դիակին...:

## ԿԱՍԿԱԾԸ

Հավատքս հոն ձգեցի բլիկ-բլիկ, հեռավոր
Ճամփաներուն վրա ամեն, ուր իմ սրտես ալ մասեր
Արյունլվա կմնան, և ուր ոչ մեկը կըսեր,
Թե կանցնեի ընդմեջեն մաքառումի մ'ահավոր...։

Ամեն ինչ վերք կուտար ինձ — բառ մը, նայվածք մը միայն.
Կբացվեին սրտիս մեջ սերերն հանգույն վերքերու.
Շնչելն իսկ ցավ մըն էր լոկ, կտանեի զայն սակայն,
Վասնզի հույսը հաճախ կուգար վերքերս փաթթելու...

Հույսը հոգնած հավատքիս կուտար կաղդույր և սփոփ,
Բայց զի կռիվը տևեց՝ հոգնեցավ Հույսն ալ տակավ
Եվ տեսա, որ ճամփուն վրա կհեռանար թևամփոփ...

Եվ օր մըն ալ դիմացես ելավ Կասկածն ու կեցավ
Իր կտուցով կեռածայր, մագիլներով բըկըտիչ,
Եվ տիեզերքը ամբողջ քանդեց, փշրեց քիչ առ քիչ...՝

## ԱՆՏԱՌԻՆ ՄԵՋ

Ես կճանչնամ անտառին մեջ, ուր գարուն է,
Ջոր մը սլղտիկ, ձոր մը ծաղկած, ուր երիցուկ
Եվ շուշաններ ձյուն կտեղան, ուր կարյունե
Կարմիր հարսնուկը շիթ առ շիթ վերք մը ծածուկ։

Մանուկ գարնան ան օրորոցն է հոն կարծես...
Երկու ճկուն ուռենիներ՝ մեն մի ծայրին,
Թեթև հովին տակ կերերան երբ համրապես,
Ժանեկապատ ձորակն օրրել հոն կթըվին։

Եվ հոն, տեսե՛ք, երկու մանուկ, ուրկե՞ եկած,
Անտառին ո՞ր երկու մուտքեն հանդիպակաց,
Կկամրջեն ձորը սերով մը լռակյաց։

Երկու մանուկ օրորոցին վրա գարնան
Իրենց անբիծ սերը կօրրեն...։ Օ՜հ, չճանչնա՜ն
Տերևաթափն և տրտմությունն իր անսահման...։

## ԳԱՐՆԱՆ ՀՈՒՅՍԸ

*Օրերն ի վեր՝ ձյուն, ձյուն է չորս դին,*
*Բայց ձայն մը ներսես կերգե հրճվագին....*

*— Երբ որ նոր գարուն այս տարի հասնի,*
*Սարերը հագնին և դաշտերն ըլլան*
*Ձերթ քղանցքն անոնց զգեստին հարսի,*
*Երբ որ դրախտեն ընելով թալան*
*Արևը բուռ-բուռ ծաղիկներ բերե*
*Եվ սփռե ամբողջ աշխարհի վրա,*
*Ջեփյուռը անցնի ամեն մարգերե*
*Եվ դեռափթիթ խոտին հետ խաղա,*
*Թռչուններն երգել սկսին նորեն,*
*Գառները մայեն և բյուր ճճիներ*
*Հողին վրա անվերջ երթևեկ ընեն,*
*Երբ որ վերջապես այս ձմեռը ծեր*
*Մեռնի ու թաղվի դալարի ներքև,*
*Երբ ձյունասպիտակ թիթեռներ թեթև*
*Զմռան դամբանին վրա բռնեն պար,*
*Հորդառատ առուն բարձունքներեն վար*
*Երբ հոսի հատակ ու խոխոջաձայն,*
*Փափկաթույր ամպեր կապույտ երկինքեն*
*Առագաստաբաց երբ անցնին երթան,*
*Ցորենները երբ հարություն առնեն*

Եվ մեզ կերակրել նորեն խոստանան,
Երբ շարժի, թռի, խնդա ամեն բան...

Ինչպես հոգիս ալ՝ թռած ժրաթև,
Պիտի վերըմպե հրճվանք ու արև,
Եվ իր գարունին փարած ուժգնապես՝
Պիտի վայելե զայն խենթերու պես...

## ԼՈՆԴՈՆ

Գետեզերքին կուգամ և գորշ Ուեսթմինստրեն,
Որ դորշ երկնից մեջ բարձրագլուխ կմխվի,
Հո՛ն քարացած մեծություններ կնիրհեն...
Ապրողներուն այստեղ արշավն է ծույլ։

Սթրենդին մեջ կառքի հույլեր կթռին,
Ուղիղ և խիտ, կարծես փակած իրարու.
Բոլիսմենի մը կարճ ճիպոտը լռին
Անշարժացման հմա՛յք մը մերթ կհեղու։

Օտարական և նույն առտուն դեռ եկած՝
Այդ հորձանքին մեջ բռնըված կերթամ ես.
Մինչ սրտիս մեջ սեր մը կուլա գաղտնապես։

Որքա՜ն օտար ես զիս կզգամ...։ Բայց հանկարծ
Խորհուրդ մը զիս կեղբայրացնե ամենքին,—
Ամենքն ալ, ա՜հ, պիտի սիրեն, սիրեցին...։

## ՏԱՂ ԱՌ ՊՈՏԼԵՌ

*Ինչպես տղան խավարին մեջ, որ կպոռա*
*Ձայն լեցընող ուրվականներն հալածելու*
*Եվ կանչելու համար կարծես իրեն վրա*
*Պաշտպանությունը հեռավոր հորն հոգածու՝*

*Դուն կպոռաս՝ չարտասվելու համար գուցե...*
*Ինչպես սակայն անդնդահունչ ճիչերուդ տակ*
*Մեծ բաղցրությունը հոգիիդ կթափանցե*
*Եվ կնայիս միշտ երազի մը սպիտակ...։*

*Ո՜վ բանտարկյալը ձանձրույթիդ սև պալատին՝*
*Զոր քու հոգիդ ճաճանչագեղ լուսավառեց,*
*Որուն ամեն պատուհանին մեջ կփթթին*

*Մինչ ծաղիկներ բազմաբուրյան... Ճակատդ հեց*
*Ապակիին՝ դժգույն դեմքով դուն կդիտես*
*Դարուց ամբոխն, որ անցնելով կծափե քեզ...։*

## ՎԻՇՏԻ ՄԸ

Ինծի կըսես, թե վիշտիդ չկա ոչ մեկ վիշտ նման,
Թե աչվներդ այս գիշեր պիտի նորեն չգոցվին,
Թե սենեկիդ մեջ, ուր միշտ իրմե մասեր կծըփան,
Դուն մինչև լույս վերստին պիտի հեծես սարսռագին...։

Պզտիկ աղջիկ մըն էր ան՝ քեզ սիրելու անկարող,
Որուն ի տես մանկացավ սիրտդ մարդու չափահաս.
Ո՜վ այս պատրանքը հիմա՝ քու հիվանդ սիրտդ ծածկող,
Թե սիրելով զայն միայն՝ անկե սիրվիլ ալ կրնաս...։

Ո՜վ բարեկամ, ընդունե՛ ցավդ սիրով, քաղցրությամբ,
Զայն փայփայե ու գրկե՝ իբրև տվողը անոր,
Սերդ խավարին ըլլա թող՝ միայն երազ մ'իրեն լամպ,
Եվ թող վառի ան երկար, մենիկ, լուիկ, սգավոր...

Կանցնին սերերը ամեն, և կիսատին մանավանդ.
Երազը լոկ կմընա, և տառապանքը ուրկե
Փախիլ կուզենք՝ կջամբե անոր սնունդ ու եռանդ
Արյուն-արտեն մեր սրտին, զոր ի՛նք միայն կհերկե...։

## ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ

*Հոգիներուն վշտացած, անոնց, որ սեր հուսացին*
*Եվ չգտան, և անոնց, որ շատ սիրով հյուծեցան,*
*Մեծ լռությունն իբր սփոփ ծնավ ծոցեն այդ հուրին,*
*Եվ ան կերթա աշխարհեն՝ գորովասփյո՜ւռ, սիրացա՜ն...։*

*Վիրավորված սրտերուն կմոտենա անփկա,*
*Եվ սրտերուն կարծրացած՝ իշխանաբար կբախե...*
*Եվ, ո՜վ հրաշք, վերքն անոր ներկայությամբ վարդ կըլլա,*
*Եվ, ո՜վ դյութանք, կբխին աղբյուրներ քար սրտերե...։*

*Ան ամեն տեղ կերևա, մթնոլորտին մեջ առկախ,*
*Մերթ գեղջկուհվո մը նման և մերթ հանգույն թագուհվո,*
*Ու երբ կանցնի՝ չի գիտեր մարդ տխո՞ւր է թե ուրախ,*
*Կամ տխրությամբը ուրախ՝ միշտ սփոփված է հետո։*

*Կուգա՜, կանցնի՝ հուզելով միջոցը, զոր կըլնու*
*Ամբողջ խրմով, և միջոցն ալ կպրկե զայն հեշտիվ,*
*Ձայն կտանի օրրելով մեջեն կապույտ ծուխերու,*
*Մինչև այն պահն, ուր գրկին մեջ կմեռնի ան մեղմիվ...։*

*Աշխարհներու հեռավոր հոգին իր մեջն ունի մերթ,*
*Եվ հոգիին վրա դժգոհ, Երկինքն անոնց կբանա.*
*Անոնց լերանց վետվետումն ու ծաղկանց ալ թերթ առ թերթ*
*Տեղատարափն է փափուկ, հպումներովը թավշյա...։*

Հեք մըն է ան, որ հևալ կուտա կուրծքերը իր հետ...
Որ տենդ կուտա ձեռքերուն և աչքերուն ալ արցունք...
Որ կհառնե հեթանոս խնջույքներեն տարփավետ,
Ինչպես հարկեն աստուծո, ուր կընծայվի պաշտամունք։

Սակայն անո՛նց մանավանդ, անո՛նց, որ սեր հուսացին
Եվ չգտան... Եվ անոնց, որ շատ սիրով հյուծեցան՝
Մեծ լռությունն իբր սիրտ ծնավ ծոցեն այդ հուրին
Եվ ան կերթա աշխարհեն՝ գորովասփյուռ, սիրացան...

## ԱՇՈՒՆ

Երբեմն զիս կհուզեր այս տեսարանն, երբ որ նոր
Էին աչքերս տակավին,
Զիս կհուզեր լալու չափ աշնան դալուկն ու անոր
Ողբակոծ շունչն ահագին...։

Ո՜վ բնություն, որ միշտ նույն խաղը կրկին կխաղաս.
Դուն՝ գերասան և դուն՝ բեմ,
Ալ չես խոսիր իմ սրտիս և չես ազդեր իմ վրաս,
Քեզ խոնջենքով կդիտեմ...։

Կկարծեի քեզ նման իմ անցյալիս՝ երբ գարնան
Ծաղիկներով կողողվիս.
Կկարծեի՝ երբ աշնան ալ տերևներդ կիյնան,
Սուգդ նման իմ սուգիս...։

Բայց ծաղիկներըդ բոլոր կվերածնին գարնան հետ,
Քու զեփյուռներդ վերըստին
Դրախտաշունչ կըփչեն, և թռչուններդ կուգան ետ,
Եվ առվակներդ կհոսին...

Մինչդեռ տարիքը մերին ալ երբեք ետ չի դառնար,
Մեր հրճվանքները բոլոր
Ալ չեն ծնիր երբ անգամ մը կխամրին ցրտահար...
Մենք կմեռնինք ամեն օր...։

Մենք կմեռնինք, մինչդեռ դուն, ո՜վ բնություն, կխաբես,
Թե մեր կյանքին ես նման...
Ա՜հ, որքան շատ կյանքերու տեսար անցնիլը այսպես,
Որքան սրտեր մեջդ ինկան...։

# ՀՐԱՅՐՔԻ ՊԱՀԵՐ

## I

### ԳԱԶԱՆԸ

*Ինչպես նախնիքս անդղերու և գայլերու աստուծույն*
*Ատեն-ատեն, իբրև զոհ, գեղեցկագույն գառն հոտին*
*Կընծայեին... այնպես ես՝ հոգվույս հունձքը լավագույն,*
*Իմաստության կնետեմ խարտյաշ հասկերը գետին։*

*Զի ճիվաղին կտեսնեմ սմբերը միշտ ոտքիս տակ,*
*Զայն կգտնեմ մտքիս մեջ, նայվածքիս մեջ և ձայնիս,*
*Կուրծքիս վրա կսրե ան իր ժանիքը ճերմակ,*
*Եվ վզիս շուրջ են ձեռքերն, որոնք խեղդել կուզեն զիս...։*

*Գազանն իմ մեջս է, ավա՜ղ, մշտապատրաստ, ակընդետ.*
*Տարիքիս հետ միշտ մեծցավ, զորացա՛վ ան, պահանջե՛ց,*
*Եվ գիտեմ թե հավիտյա՜ն ան պիտի գա ինձի հետ...։*

*Անմեղ հոգվույն՝ մեղավոր ան խենթ եղբայրն է երեց,*
*Ան Մարմինն է, նախնական, անզսպելի վայրենին,*
*Եվ զոհերով մերթ միայն կքնացնե զայն Հոգին...։*

II

## ՄԱՏՈՒՑՈՒՄ

*Աչքերս երկու զույգ բաժակներ են կարծես՝*
*Մինչև բերան քու տեսիլովդ լեցուն,*
*Դռան հետև բարձրամատույց և վախես*
*Դողդողագին՝ հասակիդ ներս մտնելուն*

*Սպասելով...: Մտածումներս զույգ կարգի*
*Վրա շարված, անշարժ ու լուռ կսպասեն,*
*Մինչ տենչանքս ալ՝ կոտոշներով ամեհի,*
*Դժվարազուսպ մատաղի խոյ մ'է անզեն...:*

*Կարմիր արյունը ոտքիդ տակ քիչ հետո*
*Պիտի հոսի, զգայությունս բռնկի*
*Պիտի հանկարծ, որպես խարույկ չոր փայտի.*

*Եվ շամփուրին վրա նայվածքիդ տենչանքս՝ խոյ,*
*Դանդաղորեն, հեշտանքով ու անխնա,*
*Պիտի դառնա՛ ու ճենճերի՛, ածխանա՛...:*

## III

## ԳՈՀԱՑՈՒՄ

*Տենչանքին քով գոհացումը կուզեմ արդ...*
*Պետք է գոնե տենչանքին թող տալ շարժիլ*
*Ազատորեն, աներկյուղ ու հպարտ,*
*Եվ չարգիլել, որ ան լեռնեն վար ի գիլ*

*Գա ուժգնորեն՝ ճամփաներն մերթ խոտոր,*
*Եվ ըլլա իսկ գուցե արշավն անհաշող՝*
*Թողուլ, որ սիրտն ըմպե նեկտարը պղտոր*
*Իր վայելքի հույսին, հեքին քրտնողող...*

*Գոհացումի պետք է իմ հույսըս հիմա*
*Ճաճանչ դնե սիրված աղվոր գլխուն շուրջ..*
*Սպասումիս մեջ դիմացես երբ կուգա՝*

*Պետք է գիտնա,—օ՜հ, կես-կատակ ու կես-լուրջ,—*
*Թե բերնիս տակ պիտի շրթները հալին,*
*Թե իմս ըլլան պիտի մարմինն ու հոգին....*

## IV

### ԿԵՆԴԱՆԻ ՔԵՐԹՎԱԾԸ

*Վաղվան հույսին ծանրությամբ աչքերս ահա կգոցվին,*
*Մարմնույդ հուշը մարմնույս վրա լափլիզելով կսուրա*
*Եվ փետուրի զերթ տարափ մը թափթփող գլխուս վրա՝*
*Հին գգվանքներդ նորեն ես կըմբոշխնեմ հոգեին...։*

*Դուն այն աղվոր քերթվածն ես, զոր այս գիշեր գոց կըսեմ.*
*Նախ՝ հանդիպումը մերին, ուր միշտ վախ կա և վարանք.*
*Գգվանք մ՚արդեն համարձակ, և առաջին իբրև հանգ՝*
*Համբույր մ՚երկար, տենդասպառ, մարող շրթանցըդ ի սեմ...։*

*Գիտեմ հետո, թե ինչպես իմ ընթերցումս անհամբեր,*
*Արագաթռիչ կընթանա, թե մերթ հեշտիվ կանգ կառնե*
*Զայնարկության մը վրա և ցնորած, տարուբեր՝*
*Մերթ ալ ինչպես իրարու տողերն ամբողջ կխառնե...։*

*Այդ քերթվածը, այս գիշեր կարտասանեմ հոս, մինակ.*
*Վերջաբանն է փոթորկոտ, աշխարհասասատ ալեկուն,*
*Զոր սակայն չեմ ավարտեր... և զերթ վիհե մ՚անհատակ՝*
*Կնետվիմ վեր ու կերթամ հիվանդ, հոգնած, սարսռուն...։*

V

## ՀՐԱՎԵՐ

*Քեզ արվեստով պիտի սիրեմ...: Գիտնայի՞ր*
*Երբ հմայքը իմ վարպետ ձեռքերում՝*
*Անութներում գրկող խորշերն անբասիր*
*Եվ կողերում փայփայող մորթը անդուս,*

*Երկարորեն, վախկոտորեն մինչև հոն,*
*Ուր կսարսափի, կատարյալ կիսանդրից*
*Կուրծքիս վրա, և կունկընդրեմ երգեհոն*
*Մարմնիդ հեքոտ խոր նվագին հեշտառիթ...*

*Սրունքներում ոլորկ ու պինդ սյուներում*
*Թևերս իբրև դափնեպսակ կփաթթեմ,*
*Եվ դնելով ճակատս գիրկ լանջքիդ դեմ՝*

*Կզգամ ուսիս վրա՝ ինչպես ոլորուն,*
*Աղվամազե թեթև, ճերմակ կարապի*
*Քու պարանոցդ, որ հոն հոգնած կպառկի...:*

## VI

### ԳԴՎԱՆՔՆԵՐԸ

Գդվանքներուն ես գիտությունը ուսա
Քու քովդ, հոգի՛ս... Նախ վախնալով, գաղտնաբար
Թևս թևիդ վրա դրած, և ապա՝
Քու հասկցող, քու թույլատրող, անբարբառ

Նայվածքիդ տակ համարձակիլ փորձելով...։
Շուրջը մեջքիդ և ազդրերուդ սահանքին
Վրա ձեռքերուս անկումներովը գինով,
Անկումներովն երկար, անվե՛րջ, զայրագի՛ն...։

Մինչև այն պահն, ուր վախնալով գերագույն
Գդվանքի մը մերձեցումեն, անկարո՛ղ
Դիմադրելու իր հեշտության նվաճող՝

Կհրես թևս և սարսուռով մը իսկույն
Ոտքի կելլես, ձգելով զիս, որ այստեղ
Հեծեմ մութին մեջ առանձին, սիրազեղ...։

VII

## ԿՐՆԱՅԻ

*Ո՞վ տարակույսն զմայլահար իմ մտքիս՝*
*Անկարելի անմեղությանդ վրա,*
*Դուանդ առջև կեցընելու համար զիս*
*Եվ հուսալու ներսը անոր՝ անվրկա*

*Քողամերկումն արձանացեղ քու մարմնույդ...։*
*Վերադարձի մութ ճամփուս մեջ ամայի՝*
*Դեռ կկարծեմ տեսնել աչքերդ կապույտ*
*Եվ կխորհիմ թե բերնիդ վրա կրնայի*

*Դնել համբույրը շրթներուս տարփավոր...*
*Թե կրնայի թևերուս մեջ ՝քաղցրորեն*
*Զքեզ գրկել ու փայփայել, մինչև որ*
*Գլուխդ ինկած կուրծքիս վրա, և խորեն*

*Երախտիքիդ բխած ժպտով մ՚աչքիդ մեջ,*
*Արբեցնեիր զիս շունչիդ տաք բուրումով,*
*Եվ ա՛լ հակեր տենչանքիս լույսը անշեջ*
*Հեշտավաստակ քընիդ վրա անխռով...։*

## VIII

### ԳԻՆՈՎՈՒԹՅՈՒՆ

*Ո՛վ դուն, այս գիշեր գինովնանք մեկտեղ...*
*Իմ երկչոտությունս, քո դիմադրությունդ*
*Գինվո բաժակին մեջ հակընթացեղ*
*Թող լուծվին և թող սիրո տան ծնունդ...։*

*Գինովնա՛նք...։ Ո՛վ դուն, որ գիս չես սիրեր.*
*Կիսախուփ աչքով թույլ կուտաս ահա,*
*Որ վրադ շրջին ձեռքերս հեշտասեր,*
*Որ բերանս միշտ բերնիդ վրա իյնա....*

*Կխնդա՛ս թրթռուն, հնչուն ծիծաղով,*
*Գլուխըդ ուսիդ վրա թավալված,*
*Մերթ սաստելով զիս և մերթ անկասկած*

*Զգելով վրաս մարմինդ գինով...*
*Մինչ այդ ծանրության տակ ես կսթափիմ,*
*Ու կխենթենամ նորեն, ո՛վ սերդ իմ...։*

## IX

### ԽՆՋՈՒՅՔԸ

Ես կպատմեմ դեռ անոր, այն սպիտակ, դեռատի
Եվ ողորմած էակին, որ, ա՜հ, գիտնար պիտի թե՝
Իմ էությունս ամբողջ, ծարավահյուծ ու նոթի
Ինձի տալիք անսահման իր խնջույքին կապասե...։

Պիտի գիտնա՞ր ան հարկավ...։ Տղու մը պես միամիտ
Եվ աստծու պես գիտուն, պիտի գիտնար իր ձայնին,
Շարժումներուն և աչքին բյուրեղներուն վճիտ
Մատուցակել ինձի նախ հույսի կարմիր թունդ գինին։

Հետո ինձի թույլատրեր պիտի, որ ձեռքը բռնեմ,
Որ ըմբոշխնեմ մարմինին բուրումն աղվոր ու հզոր,
Եվ արբենամ շրթներուն ժպիտներեն քաղցրածոր...։

Թույլ պիտի տար, որ հետո զինքը պահեմ կուրծքիս դեմ,
Որ զինք սեղմեմ ուժգնորեն թևերուս մեջ, բերնիս վրա,
Եվ սեղանին կործանեմա՜ մը այս խնջույքը լրանա...։

## X

### ԽՈՍՏՈՒՄ

*Քո թարմությունդ ինձի խոստացվեցավ լռելյայն,*
*Չէ՞, ո՛վ աղվոր, այս գիշեր դուն խոստացար ինձի զայն,*
*Նայվածքներուդ կրակով, որ բռնկցուց իմ հոգիս,*
*Եվ ձեռներուդ պերճախոս լեզվով, որ խենթ դարձուց զիս։*

*Ի՜նչ թարմ էիր, ի՜նչ ճերմակ, բարձրահասակ, փափկադեմ,*
*Մարմնեղ սակայն, և արդեն կբերեի աչքիս դեմ*
*Ինչ գաղտնիք, որ երջանիկ քո զգեստներդ կպահեն,*
*Շնորհ ու լույս մարմնացած, ձև ու մարմին լուսեղեն...։*

*Սակայն ինչպե՜ս, աստվա՜ծ իմ, ինչպե՜ս հիմար եղա ես,*
*Որ գոռացող տենչանքիս հետ մեկնեցա առանձին,*
*Գալարվելով մինչև լույս, դողդղալու որբի պես...*

*Այսօր հիվանդ եմ քեզմով, ու կնայիմ անձկագին*
*Ամեն վայրկյան, ամեն տեղ, անցորդներու դեմքն ի վեր,*
*Փնտըրելով զքեզ միշտ, քեզ գտնելու անհամբեր...։*

## XI

## ԴԻՊՎԱԾԸ

*Փնտըրեցի այս գիշեր հանդիպում մը դիպվածի,*
*Անոնց նման, զոր առույգ տենչանքս մերթ կունենար...*
*Սիրո բույր մը այս գիշեր գաղջ օդին մեջ կհածի,*
*Զոր շնչելով քիչ առ քիչ գացի գինով, տենդահար...։*

*Դիպվածը զիս երջանիկ կրնար ընել այս գիշեր,*
*Շնորհազուրկ աչքերուս և ձեռքերուս մեջ լքված*
*Սպասեցի, որ իջնան աստվածային ճաճանչներ,*
*Համբուրասով շրթունքիս վրա իյնա շունչ մը թաց...։*

*Թափառեցա ընդերկար վայելքին մեջ սպասման,*
*Անծանոթին երկյուղով, ընտանությամբ ծանոթին,*
*Լեցընելով մութն ամբողջ պատկերներով ցնծության...*

*Դիպվածը միշտ կուշանար, ու կերթայի սպառագին*
*Բոլոր սերերն ապրելով բոլոր մարդոց այս պահուն,*
*Եվ տուն դարձա տխեղերքը սիրելե պարտասուն...։*

## XII

### ՎԱՅՐԿՅԱՆԸ

*Ա՜հ, վայրկյանին մեջ՝ կրկին*
*Վայրկյաններ կան, իրարու*
*Դեմհանդիման, կնային*
*Զիրար առանց ճանչելու...։*

*Երկու բերան միասին*
*Եղան անոր օրհներգու՝*
*Նույն համբույրով կզատվին,*
*Եվ էր վայրկյանը երկու...։*

*Կհիշեմ զայն, բայց այնպե՞ս,*
*Ինչպես դուն ալ, ես գիտե՞մ*
*Թե անկե ի՞նչ կպահես...*

*Եվ այս խրամը դժխեմ*
*Կա սերերուն մեջ ամեն...*
*Միշտ վայրկյանները զույգ են...։*

## ԾԵՐՈՒԹՅՈՒՆ

*Կծերանամ…։ Հաճույքներեն երեկվան*
*Բերանըս ալ համ չառներ.*
*Սիրո հույսն իսկ և տեսիլն ալ հաղթության*
*Զիս կթողուն անտարբեր…։*

*Կյանքի ճաշակն արմատախիլ ո՞վ ըրավ,*
*Ո՞ր դաժան ձեռքը սրտես.*
*Հոգիիս մեջ հիմա մոխիր կա անբավ,*
*Հոն ուր առաջ կար պարտեզ։*

*Գերեզմանի ցուրտ մը դեմքիս վրա կզգամ,*
*Երբ կնայիմ ոտքիս տակ.*
*Ոչ թե այսօրն, այլ կատեմ վաղը անգամ,*
*Ու երեկն ալ բովանդակ…։*

*Չորցա՞ն, ավաղ, բյուր ծաղիկները սրտիս…*
*Ոչ մեկ փափագ, ոչ մեկ սեր…*
*Ո՞վ իմ անցյալս, դուն իսկ ինձմե կըզատվիս.*
*Ինչպես ծառեն ճյուղ մը ծեր…։*

*Բայց այս գիշեր վերջին անգամ մը թերևս,*
*Ո՞վ իմ անցյալըս, եկուր գրկենք մենք իրար,*
*Անո՞ւշ անցյալ, զոր ներկայի իմ ցավերս*
*Կդառնացնեն համրաբար…։*

Վերջին անգամ մը երևցի՛ր ինձի դուն,
Այնպես հանդարտ, այնպես փափուկ ու վճիտ,
Ինչպես գյուղ մը արշալույսին մեջ հեռուն,
Պայծառությամբը խղճիդ։

Դուն ունեցար, գիտեմ, վշտեր, որ մեռնիլ
Կուտային քեզ, և հրճվանքներ, որոնցմով
Կթոթվըվեր հոգիդ, անտառ նորածիլ,
Անտառ, որուն սերն է հով։

Գիտեմ, թե ի՜նչ մեծ հույսերու անձնատուր՝
Կվազեիր և հուսախաբ կիյնայիր,
Ինչպե՜ս մերթ ալ՝ պատկերներու դեմ տխուր
Կհևայի՜ր անհարիր։

Հետո պզտիկ քաղցրություններ, մերթ ընդ մերթ,
Քեզ օծեցին, լեցուցին քեզ... մինչ հիմա
Զերթ ծաղկե մը, որ թափեցավ թերթ առ թերթ՝
Բույրեդ ոչինչ կմնա...։

Ուրեմըն ի՞նչ, առանց սիրո և հույսի
Պիտի մնա՞մ միշտ առանձին ես այսպես,
Միշտ ու միայն լալու համար մեկուսի
Ավերակաց բուին պես...։

Ո՜վ իմ անցյալս, կմեռնիս դուն, բայց նորեն
Վերջին անգամ եկուր գրկենք մենք իրար.
Զիս թևերուդ մեջ դուն սեղմե՛ ուժգնորեն,
Եվ խեղդե՛ զիս համրաբար...։

## ԱՆԿԱՐԵԿԻՐ ՔՆԱՐԸ

*Ամենասև վայրկյաններուս կմոտենամ երբ իրեն,*
*Եվ ինք գիտե, որ ալ ոչինչ զիս իրմե զատ կսփոփե,*
*Հոգիս իրեն երբ կհանձնեմ բնազդորեն, հեզորեն,*
*Ան կփախի հիմա ինձմե և չի ճանչնար զիս, բարե՜...*

*Իզո՜ւր իրեն կցուցընեմ վերքս խորունկ, ցավս մեծ,*
*Իզուր իրեն կհիշեցնեմ, թե երբեմնի տղան եմ,*
*Որուն հաճախ աչվըներուն թեթև արցունքը սրբեց,*
*Զոր օրորեց իր երգերով և քնացուց կուրծքին դեմ։*

*— «Դաշնակության հեղեղներուդ հիմա՛ է, որ պետք ունիմ,*
*Կըսեմ իրեն, հալածելու համար ժխորը կյանքին*
*Եվ մոռնալու համար հոգվույս հոգնությո՜ւնը ահագին...»։*

*Բայց ան ինձի բառ մը չուզղեր, և ո՛չ մեկ բառ մտերիմ,*
*Զիս չի ճանչնար և կթողու զիս իմ ցավիս հետ մինակ,*
*Մինակ ու լուռ, գոտեմարտիլ և ընկճվիլ անոր տակ...։*

# ԻՆՁ ԿԹՎԻ ԹԵ ԱՊՐԱԾ ԵՄ

*Ինձ կթվի թե ապրած եմ Ելլադայի մեջ հին ատեն,*
*Սոկրատին՝ պես վճիտ հոգվով իմաստասեր մըն եմ եղած,*
*Աստվածային գաղտնիքին դեմ կեցած եմ լուռ ու երկյուղած,*
*Սքանչահար զայն դիտելու և լուծելու զայն զբաղած...։*

*Սակավընտիր աշակերտներ զիս ցերեկին կշուրջպատեն*
*Հովանավոր ծառի մը տակ, Ակրոպոլի ոտքին ներքև,*
*Զիս կունկընդրեն անհագորեն, և մերթ բառով մ'արփիաթև*
*Անջրպետին մեջ իրենց հետ կվաղեցնեն զիս հևհև...։*

*Այր չափահաս և ծանրախոհ, այդ թարմերամ խումբին մեջտեղ*
*Ես իմ հոգիս անդրադարձած անոնց աչքին մեջ կգտնեմ,*
*Քնարական ձև ու ձայնով, խաղաղավետ ու լուսադեմ*
*Անոնք կանաչ կղզիներ են՝ խորհուրդներու ծփանքին դեմ...։*

*Իմաստությո՛ւն, դուն կբխիս առատահորդ և մաքրաղեղ*
*Հորիզոնին վրա կանգնող սա հեշտագին բլուրներեն,*
*Սա երկնքեն մաքուր ու նուրբ, և այս տղոց խումբեն նորեն՝*
*Որոնք, աղբյո՛ւր մշտանորոգ, տիեզերքի թարմությունն են...*

*Ի՞նչ փույթ, թե զիս չհասկընան, դատապարտեն ալ ուրիշներ,*
*Ի՞նչ փույթ, եթե զիս քարկոծեն, ճամփուս վրա հայհուչ*
*բառնան,*

Թե՛ ի վերջո ինձ երկարեն նաև բաժակն ալ սև մահվան,
Եվ արտասվոք ինձմե պատվեն աշակերտներս անտխական...

Իմաստությո՛ւն, միշտ կծռեմ առջիդ գլո՛ւխս ալեհեր...
Կյանքս ամբողջ պաշտամունքիդ նվիրելե հետո՝ հիմա
Իր հուսկ ժպիտն ալ իմ հոգիս ահա վրադ դեռ կբանա,
Եվ այդ ժպիտը կմնա այս լեռներում, հողին վրա...։

# ՄԱՀՎԱՆ ՏԱՂԵՐ

## I

### ԵՐԿՈՒ ՄԱՀԵՐԸ

*Ես այս երկու մահերն ալ, ո՛վ տեր, սիրով կընդունիմ…*
*Կա՛մ ունենալ գյուղական խրճիթ մ'ուր սերը տիրե,*
*Շարժիլ շունչին մեջ կնոջ մ'ու գիրքերու մտերիմ*
*Եվ խրիկուն մը մարիլ շրջապատված վարդերե…*

*Եվ կա՛մ հանկարծ վրայես անցնող հովեն մարտագոռ*
*Տարվիլ դաշտերը կոլո, վրիժաբորբ, հրաշվիլ,*
*Թափելով մերկ սուսերիս ծայրեն վերքեր բյուրավոր,*
*Եվ իյնալով անոնց մեջ՝ դերթ անկողնո մը վարդի…։*

*Եվ այս երկու մահերուն կփափագիմ փոխն ի փոխ,*
*Անոնք ինձի կժպտին և կժպտիմ ես անոնց,*
*Անոնց մեջտեղ իմ հոգիս կարծես կեցած է շատոնց…։*

*Օ՜հ, եթե կյանքս եղավ պարտեզ մը, զոր ոտնակոխ*
*Ըրին դիպվածն ու ահեղ ճակատագիրը դժխեմ՝*
*Գոնե թույլ տուր, աստվա՜ծ իմ, որ ելքն անոր ես ընտրեմ։*

## II

## ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ՄԱՀՎԱՆ

*Որոտարեր ամպին տակ սարյակն ինչպես թառին վրա,*
*Գլուխը ներս կքաշե, կանշարժանա, կլըռե...*
*Ո՛վ մահ, ի տես ստվերիդ, որ ճամփուս վրա կերկննա՝*
*Ես կամփոփվիմ, կնայիմ ու կդադրիմ երգելե...։*

*Ժամանակավ, հեռուեն երբ որ տեսած եմ զքեզ՝*
*Մերթ վախցած եմ, մերթ լացած ու անիծած եմ հաճախ*
*Զքեզ, ո՛վ մահ, որ գիշերն ես օրվան մը տոթակեզ,*
*Որ մեծ, խորունկ օրրանն ես՝ այս կյանքին ծայրը առկախ։*

*Անկե ի վեր բայց անչափ ինձ մոտեցար, ուրվակա՛ն,*
*Կմախանդամ լողալով կյանքի կապույտ ծովուն վրա*
*Եվ շուրջս հանկարծ խեղդելով անոնք, որ ճանկըդ ինկան.*

*Անկե ի վեր ես անչափ քեզ նայեցա ու դըպա՝*
*Որ ա՛լ միշտ քովս ես կարծես, աներևույթ բայց միշտ գոհ,*
*Ես կսպասեմ քեզ ինչպես քընիս, ամեն երեկո...։*

## III

### ԱՌ ՄԱՀ

Կհուսայի,— իմ մանուկ հույսս անսանձ էր,—
Քեզի հասնիլ ծիրանեշող, դափնևոր...
Կյանքն ինձ դերբուկ մը ցույց կուտար, ոչ ցանցեր,
Որուն դուն ծայրն էիր կանգուն, մա՛հ աղվոր...։

Կհուսայի տակավ առ քեզ բարձրանալ
Հաստատ, հզոր և խորադրոշմ քայլերով...
Անոնց թվին վրա հավելու թիվ մըն ալ,
Որոնց դամբան՝ պատմությո՛ւնն է անխռով...։

Սպասեցի և ուղղեցի բյուր աղերս,
Որ տանեիր հոգիս փառքով փաթթըված...,
Մինչ կյանքը զայն հիմա ըրավ քրջազգած...։

Դուն կրնայիր սակայն, ո՛վ մահ, երբ թևերս
Կուղղըվեին դեպի աստղերն ոսկեթել,
Զիս այդ գիրքին, անոնց լույսին մեջ զարնել...։

## IV

## ՄԱՀ ԵՎ ԱՐԵՎ

*Շուրջըս ամեն օր տեսնելով զանի*
*Եվ մեջս զգալով զայն ամեն վայրկյան՝*
*Մահն եղած է ինձ այնչափ ընտանի,*
*Որչափ աչքերուս՝ արևը վաղվան...։*

*Մա՛հ, արև՛, այնպես խառնված միմյանց*
*Կերևին ինձի, որ մերթ կխորհիմ՝*
*Միգուցե արևն ըլլա մահ մ՚անանց,*
*Եվ մահն ալ՝ արև մ՚անդըր, քան շիրիմ...։*

*Ինչպես խաղամոլ մ՚որ լուսցուցած է*
*Կորսընցընելով իր վերջին լուման,*
*Եվ պատուհանեն աչք մը կհածե*

*Ծագող այգին վրա... այնպե՛ս ես մահվան*
*Կնայիմ հիմա, անհոգ, անտարբեր,*
*Իբրև թե նույն խեղճ օրն ինձի ծագեր...։*

## V

## ՎԵՐԱՑՈՒՄ

*Ո՛չ ընտանի անասուն, ո՛չ ալ գազան քարայրի.*
*Երբեմըն ծով և երբե՛մն հազիվ առու մը պզտիկ.*
*Հոգվույն մեջ շող մ'աստղերեն, մինչդեռ մարմինը կայրի*
*Գեհեններու կրակով... այսպես ծնաք զայն, ո՛վ դիք...*

*Իր մտափին վրա երկինք մակընթանա պիտի հար.*
*Պիտի հալեռ գալարվի արյունաբբու իր հոգին.*
*Եվ մերթ հպարտ Հերակլես, մերթ ալ գերի դողահար՝*
*Ինքը իր դեմ հավիտյան պիտի կռվի զայրագին...։*

*Շնորհեցեք այժմ; ո՜վ դիք, որ չդարձած դեռ հողին,—*
*Որուն հոգնած բայց ազնիվ մեկ կույտեն զայն կերտեցիք,—*
*Իր աչվըներն հավատքով վերջին անգամ փողփողին...։*

*Երկրե երկինք երկարող հույսի ճամփեն գեղեցիկ*
*Թողե՛ք հոգվույն, որ մեկնի սրաթըռիչ, լուսավետ,*
*Թողե՛ք երթա մահվան մեջ՝ իր մեծ սերերը իր հետ...։*

## ԻՐԻԿՎԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Սպասե՛ դեռ, և աշնան օր մ'երբ կիջնե
Արևն երկինքեն,
Ցուպդ վեր ա՛ռ և ճակատեդ քշե դժնե
Ամեն խորհուրդ։ Քեն,
Նախանձ ու ոխ ճզմե քարին վրա առջիդ,
Զերթ ոլորք մը իժ,
Հպարտությունդ ալ արյունե շիթ առ շիթ,
Եվ իբրև պատիժ
Անցյալ ամեն աններելի հեշտությանց՝
Նետե՛ խորն հովտին
Հիշատակի արկղիկը ծանր, ծանր գանձ...։
Երբ աչքիդ ետին
Նշուլե աստղ մը նոր, պայծառ, հեռավոր,
Կորե՛ վերարկու
Մը գիշերեն, և ա՛լ ՞գնա, ուխտավո՛ր,
Հոգվույդ ահարկու
Ճամփաներեն լեռնե ի լեռ, միայնակ,
Ժայռերուն անխնա
Զարնվելով և սրելով զերթ դանակ՝
Կամքդ անոնց վրա...
Հովերուն մեջ, ահեղորեն տարածվող,
Թևերդ պարզե՛
Եվ քանդումի եղիր անոնց պես կարող...
Անգղ, արծիվ, բազե

Թող սորվեցնեն իրենց խաղերը քեզի,
Թե ինչպես, զերթ սլաք,
Իրենց թիռը որսին վրա կնետվի՝
Անշեղ և արագ...
Հետո դարձո՛ւր գիշերներուն մեջ պայծառ՝
Աչքդ դեպի վեր
Եվ աստղերեն անդորրությո՛ւն անոնց առ...
Երբ ամեն ավեր
Հին ու խարխուլ շենքեն հոգվույդ մեջ լրանա,
Երբ որ հույզ մը նոր
Ոտքեդ մինչև գլուխդ անզուսպ բարձրանա,
Երբ անդնդախոր
Լսես հանկարծ ձայնը հողին հեծեծող...
Կատարներեն վար
Սա՛ ուղխերուն հետ ձյուներուն լուսաշող՝
Իջիր խոլաբար,
Մոլեգնորեն, շքեղապես, անարգել
Դաշտե՛րն ոռոգել...։

## ԳԱՅԼԻՆ ՀՍԿՈՒՄԸ

Ձյո՜ւն...։ Անդունդները լեցուցեր, և լեռներուն
Կողերն ի վար, և դաշտերուն ծածկած վրան.
Գյո՛ւղ մը, հյուղեր՝ ճամփորդներու կարծես նման,
Բլուրին ոտքը թավալած, ինկած նկուն։

Լո՜ւռ խլիկուն միապաղաղ դաշտին վըրա.
Ճերմակ ծառեր կխոնարհին մինչև գետին.
Դեպի քաղաք ճամփան անհետ կքընանա...
Վերադարձող կուսության ի՜ղձ մըն է հետին։

Հորիզոնին անփայլ լուսին մըն է փակեր...
Կյա՛նքը հանկարծ... Գյուղին վրա, կաթիլ կաթիլ,
Ինչպես արյուն՝ կարմիր լույսեր կուգան թափիլ։

Եվ կդառնան նայիլ մարդիկ բլուրն ի վեր,
— Ձյունին երեսն երկարած շուքն իր ահավոր՝
Գայլ մը, անշարժ, գյուղին վերև կհսկե կոր...։

## ՔԱՋՈՒԹՅՈՒՆ

*Մերթ ալ քաջության փայլակ մը շքեղ*
*Կանցնի հոգիես...։ Կամքըս, ինքն իր վրա*
*Կքած, կթըռի թափով մը ահեղ*
*Եվ հովին հետ, որ անզուսպ կսուրա,*

*Ինքզինք կչափե...։ Կբացվին ինքնին*
*Հորիզոնները արշավիս առջև,*
*Թ·ևերս հողին մեջ կմխըրճին*
*Եվ կբարձրացնեն երկինքը մինչև*

*Ոսկիի կույտեր...։ Կնետեմ սուրեր*
*Անթիվ, անհամար, և ամեն ձեռքի*
*Մեջ հատ մ'անոնցմե երբ որ կծագի՝*

*Կմըղեմ բանակս, ինձմով անվեհեր,*
*Սարն ի վեր դժվար հաղթանակներուն,*
*Դեպի փա՜ռք և դեպի անմահություն...։*

## ԿՌՎԻ ԵՐԹ

*Այս գիշեր նորեն կանչի, կմեծնա, կշատնա հոգիս,*
*Կռիվի գացող բանակի մը պես.*
*Ո՜վ դափնեպսակ, այս գիշեր նորեն ինձի կերևիս*
*Լեռան մը ծայրեն և զիս կփորձես...։*

*Ճամփուս վրա, հեռուն, մնացած ամբողջ հույսերս նկուն*
*Կվերադառնան մի առ մի, 'ահա',*
*Եվ խոր քընի մեջ նիրհող ուժերուս պարն այս իրիկուն*
*Նորեն հավատքով կթըռի կելլա...*

*«Ո՞ւր կերթանք այսպես, ո՞ր հաղթանակին, կամ ո՞ր փառավոր*
*Պարտության առաջ...», կհարցնեք դուք,*
*Ո՛վ իմ անհամար արշավանքներես դարձած կորակոր*
*Զինվորնե՛րս արի, զոհե՛րս անշուք...*

*Քանզի կհիշեք, թե քանի անգամ զձեզ կանչեցի*
*Երազի մը վառ դրոշին ներքև,*
*Երթալ հարձակմամբ առնելու համար նսեհին կծծի*
*Քաղաքն ու գանձերը երկնապարգև...*

*Քանզի կհիշեք նաև թե ինչպես կամքըս՝ զորապետ,*
*Որ կաշտանակեր առույգ, ուղղաբարձ,*

Կերկմտեր մեկեն ու կպաշարվեր խոհերով անպետ,
Եվ ճամփուն մեջտեղ կկենար հանկարծ...

Թե այսպես, հաճախ, չմղված մարտին տրտմությամբը լի՝
Ետ դարձաք հիվանդ ու ամոթահար,
Մինչդեռ անձնասպան ինկան ձեր մեջեն քաջեր մեկ քանի,
Եվ հեծյալն՝ անզոր՝ անոնց վրա կուլար...

Բայց այս իրիկուն բազմամբոխ հոգիս ոտքի է նորեն,
Նայվածքներուն տակաստեղց նորածագ,
Իր հին, դարավոր անցյալին անխույզ խորություններեն
Պարպելով իր հարց զինարանն համակ,

Չարին, ստության և կեղծիքներու դիմաց անհամար
Ուխտելով նետվիլ, կռվիլ անվհատ,
Թերևս հաղթելու և կամ վերստին խաբվելու համար,
Թերևս, ո՛վ մահ, իյնալու վրադ...

Զի հոգիս այսօր իր ճակատագրին կոչն է, զոր մոտեն,
Ա՛լ շատ մոտիկեն լսեց այս անգամ,
Եվ հանկարծ կեցած հորիզոնին դեմ, լուրջ ու վճռորեն
Պատասխան տվավ՝ «Ահա, տե՛ր, կուգա՜մ...»։

## ԱՌԱՎՈՏ

Խոնարհությունը գուցե անձրև մըն է զովարար
Աշխարհակալ ու անթեք հոգիներուն վրա չոր...
Բայց ես կուզեմ այս առտու, որ հոգիս սուր մը ըլլար
Այլոց կամքին մեջ մխվող, անզիջ, հաստ ու հզոր։

Պողպատն իր ուժն անցըներ աչքերուս մեջ ու լեզվիս
Եվ ցանկությանցըս անոնք չհարթեին երբ ճամփան,
Երկու թևերս օճառուտ գոհացընել գային զիս՝
Նվաճելով իմ սիրույս կամ զայրույթիս առարկան։

Վաղուց ի վեր ձեռքերուս մեջ սովամահ գգվանքնե՛ր
Ահա նորեն գաղտնաբար, օձանման կհառնուն,
Ետ կդառնան կորսըված սիրո բառերը անտեր

Ու փրփրացայտ բերնիս մեջ կոչերու հետ անանուն
Արյունաշաղ կտրըրվին... Ու չեմ գիտեր նույնիսկ թե
Հոգիս այսօր մա՞հ թե սեր սփռել մարդոց մեջ կուզե։

# ՄԵԾ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ

*Նշուլավառ ունիմ այգերը կյանքիս,*
*Ուր անզուսպ և փրփրերախ*
*Պատերազմիկ մ'է հոգիս՝*
*Անմիջական մարտին հույսովը ուրախ։*

*Սեմին առջև կեռա այնքա՜ն անհամբեր,*
*Ծափերու մեջ խլելու*
*Արյունաներկ դափնիներ...*
*Որ կխորհիմ թե հոգվույս մեջ կզարթնու*

*Հոգին անշուշտ իմ հին ռազմիկ մեկ պապուս։*
*Բայց մարտաշունչ հովն, ահա՛,*
*Շուրջս տակավ կնըվաղի ու կիյնա՜...*

*Եվ կխորհիմ նորեն տրտմած ու անհույս՝*
*«Այդ նախահայրս մի՛ գուցե*
*Անխղելի մեծ հաշտություն մ'ուխտած է...»։*

## ԶԱՎԱԿՍ

*Ուզեցի զքեզ սեգ ու անընտել.*
*Ուզեցի մաղերդ, օվկիանին խաժ*
*Ալիքներում պես, ձեռքիս տակ զգվել.*
*Ուզեցի բազուկըդ հզոր ու վարժ...։*

*Ուզեցի անզուսպ քեզ իբրև կորյուն՝*
*Իմ փափագներես, ցասումես ծնած,*
*Որպեսզի գոչեմ սրտես «Հաղթությո՜ւն»,*
*Երբ որ թարթափին աչքերս քնած։*

*Որպեսզի սիրեն, դողալով, զքեզ,*
*Որպեսզի ուժիդ, շնորհիդ ներքև*
*Իմ թշնամիներս՝ մարդերը՝ ընկճես...*

*Եվ մեծնա հասակդ ամբոխին վերև,*
*Եվ երգեն անունըդ միաբերան,*
*Ու ճանչնա՜ն գլխ վրադ, որդի՛ս անման...։*

## ՏԱՂ ԱՌ ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ

Ատելությո՛ւն, քեզ այսպես բացած չէի կուրծքս դեռ…
Սեր ունեի, կամ գոնե կներեի շատերուն.
Կդառնային միշտ աչքերս երկինքն ի վեր լուսահեռ՝
Միշտ լեցվելու, լեցվելու աստեղց ժպտովը քթթուն…

Բայց ի՞նչ տգեղ են մարդիկ, հետզհետե ի՞նչ տգեղ,
Եվ անդադար մութին մեջ ինձի ինչպես կդավեն…
Եվ կուզեք, որ տակավին ատելությունը շքեղ
Չսըրե՞ սուրն իր ժանգոտ՝ պիղծ օրերուն անխիլեն…։

Թերև՞ըս քաղցր էր ապրիլ հանդարտորեն, բարությամբ,
Ժպտիլ երբեմն ու հաճախ խորհրդածել անայլայլ…
Սրինգը քաղցր էր թերևս՝ քան շեփորին երգը բամբ…

Կուզեմ նետել ես հիմա, զերթ ծեր սատան մը շռայլ,
Ատելությանս հուրը բորբ չորս անկյուններն աշխարհի…
Եվ ի՞նչ փույթ, թե այդ հուրեն իմ էությո՛ւնս ալ այրի…։

## ՎՐԵԺԻ ԳԻՆԻՆ

*Ուրա՜խ եմ այսօր... Քամված է գինին,*
*Զոր սրտի խմեմ կաթիլ առ կաթիլ՝*
*Մաքրելու համար սրտիս ժանգը հին...*
*Կուզեմ ամբոխին մեջ սուրալ, նետվիլ՝*

*Զերթ վայրի երինջ մը անտառին մեջ,*
*Կոտրելով ճամփուս վրա թումբեր անթիվ...*
*Կուզեմ, որ ըլլա վրեժըս անշեջ,*
*Իբրև մորենին այրի ցայգ և տիվ...։*

*Կուզեմ զգլխի՜լ մտածմամբ ուժիս,*
*Որ իրեն արգելք չի ճանչնար բնավ...*
*Լի եմ քանդումի մրրիկովն անբավ...։*

*Եվ եթե, ո՛վ դուք, վաղը գտնեք զիս*
*Ավերակներու ներքև գանգըս բաց,*
*Գիտցե՛ք, հրճվանքով իմ շունչս եմ տված...։*

## ՏԱՂ ԱՌ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ

Ինչպե՞ս կուզես որ սիրեմ, հարգեմ զքեզ ու լսեմ
Ատամնաթափ այդ բերնեդ ականջս ի վար ձայնով ցած
Փսփսացված խոսքերում, որոնք բարի ու խոհեմ,
Որոնք բարվույս համար են, գիտեմ, խորհված ու ըսված...

Ինչպե՞ս կրնամ հանդուրժել քեզի առանց զայրույթի
Եվ տարփողել կրնամ քեզ, երբ քու տեսքիդ մեջ արդեն
Ես թառամած կգտնեմ հույսերս ամեն ծաղկատի,
Երբ ձայնիդ մեջ իմ ամբողջ հին երազներս կհեծեն...

Հիմա գիտում, իմաստում և շատ լուրջ եմ, աստվա՛ծ իմ.
Փորձառությո՛ւն, ալ հիմա դուն հավիտյան իմ մեջս ես
Ինչպես որդը պտուղին, և ես քեզմով կփըտիմ...։

Դուն կցայտես աչքերես, շարժումներես, խոհերես,
Եվ ամեն օր, որ կանցնի՝ կըլնե քեզմով զիս հասուն,
Եվ ամեն օր ավելի՝ քեզմով կըլլամ աղազուն...։

## ՀԱՎԱՏԱՓՈԽԸ

### Ա.

*Դեռ շատ պզտիկ՝ կհառեր իր աչվըները հաճախ*
*Տեղափոխվող իրերուն, անցնող ձևին, գույնին վրա,*
*Իր մտածումը կաճեր խոտին հետ, որ կմեծնա.*
*Կթոթվըվեր իր հոգին թիթեռին հետ թևաբախ...։*

*Դեռ պատանի՝ կխորհեր ամեն արդյանց պատճառին,*
*Կանշարժանար շարժման դեմ, և կթըվեր իրեն, թե*
*Ինչպես ալիքը մոտի՝ ուրիշ ալյաց ծնունդ է,*
*Այնպես իր կյանքն ալ կուգա կենաց ծովե մը լուին...։*

*Եվ կվախնար՝ գտնելով զինք խորհուրդով մը լեցուն,*
*Ճակատագրին խաղալիք, անծանոթին սահմանված,*
*Շղթայակիրկ՝ մերթ գերի, արարչագործ՝ մերթ աստված։*

*Եվ կմեծնար՝ մառնված իր հետ մեծցող վախերուն,*
*Եվ երբ աստվածը իր մեջ հաղթահարված ալ զգաց՝*
*Ան վանք մտավ և եղավ սև ստվեր մը սրբասաց...։*

## Բ

Կարծես լարված և հիմա թրթռաձայն ու անվերջ
Քակվող պղտիկ զսպանակ մը լռանիստ խուցին մեջ,
Վանականին շրթունքեն բառերն իր հին աղոթքին
Կթափթըփին մենակերպ, խռովահույզ, անձկագին...։

Գուցե՝ դուրսի աշխարհեն եկավ խորհուրդ մ՚այցելել
Հանպատրաստից իր հոգին...։ Գուցե բավիղը անել
Հավատալյացը խրթին՝ մոլորեցուց միտքն հանկարծ...
Կամ իր անցյալն էր գուցե, որ վառեցավ ինքնարծարծ...։

Նայվածքն ահա քիչ առ քիչ կսևեռի սարսափով...
Երկինք շրջած է, ահա՛, և եղած վիհ մը իր քով.
Սև ագռավներ գլխուն շուրջ կթռչըտին անդադար
Եվ իր հոգին վիհին մեջ կփըսորեն կտցահար...։

Եվ աղոթողն երբ կզգա, որ սուրբ բառերը փցուն
Դեռ խռովքին մրուրով կթողուն սիրտը լեցուն,
Դանդաչելեն կքալե դեպի լուսանցքն իր խուցին,
Եվ աչքերեն արցունքի երկու ուղխեր կհոսին...։

Գ

Լուսամուտին առջև նստած է ան հիմա,
Աչքը դաշտին և լեռներուն փոփոխակի,
Որոնց հետև դիտե, թե մեծ քաղաքը կա
Եվ հոն մարդոց հոտը անթիվ կմակաղի...։

Նայվածքին մեջ կայծեր կանցնին արեգակեն
Եվ մտքին մեջ մեծ փայլակներ, որ անդադար
Կյանքի մթին անտառը հոծ կփեռեկտեն
Եվ կցուցնեն հոնկե անցնող գետերն երկար...։

Լուսամուտին առջև նստած կդողա ան...
Մութ է իր խուցն և մութ աշխարհն ալ իր առաջ...
Ջնջվա՜ծ ըլլար ճաճանչն այս գիտության,
Որ կխաղա երեսն հոգվույն լալահառաչ...։

Սակայն ոտքի կելլե հանկարծ, և վճռորեն
Կսրբե աչքն, ուր կփայլի բոց մը գաղտնի,
Եվ խլելով խաչելությունն իր սնարեն,
Զինվորվա՛ծ անձ, հետը կառնե ու կմեկնի...։

# ԿԵՍ ԳԻՇԵՐԵՆ
# ՄԻՆՉԵՎ ԱՐՇԱԼՈՒՅՍ

## ԵՍ ՍԻՐԵՑԻ

*Ես սիրեցի, բայց ոչ ոք*
*Սիրածներես գիտցավ թե՝*
*Զինքը որքա՜ն սիրեցի...*
*Ո՞վ կարդալ սիրտը գիտե։*

*Ամենեն մեծ հրճվանքիս,*
*Ամենեն սուր վիշտերուս*
*Ներշնչողները, ավա՜ղ,*
*Զիս չեն ճանչնար այս պահուս։*

*Սերըս կարծես այն գետն էր,*
*Որ իր հոսանքը անբավ*
*Առավ լեռան ձյուներեն*
*Ու լեռը զայն չտեսավ։*

*Սերս այն դուռն էր կարծես,*
*Ուրկե ոչ ոք մտավ ներս.*
*Ծաղիկներով ծածկըված՝*
*Գաղտնի պարտեզ մըն էր սերս։*

Ու եթե սերըս ոմանք
Երկինքին վրա՝ անսահմա՛ն
Տեսան ծուխի մը նման,
Կրակն անոր չտեսան...։

. . . . . . .

Ես սիրեցի, բայց ոչ ոք
Սիրածներես գիտցավ թե՝
Զինքը որքա՛ն սիրեցի,
Ո՞վ կարդալ սիրտը գիտե...։

## ՓԱՓԱԳ

*Անուշ հոգի մը ըլլա՜ր,*
*Ես այն հոգվույն սիրահար,*
*Ան իմ երկինքըս ըլլար։*

*Ես այդ հոգին պաշտեի*
*Ինչպես երկինքը ծավի,*
*Զայն հեռուե՜ն պաշտեի։*

*Ան ցոլանա՜ր սրտիս մեջ*
*Իր լույսերովը անշեջ,*
*Ես սուզվեի՜ անոր մեջ։*

*Անուշ հոգի՜ մը միայն,*
*Ու գրկեի՜ ես անձայն*
*Զայն հոգիիս մեջ միայն...։*

## ԱՅՍ ԻՐԻԿՈՒՆ ՎԵՐՍՏԻՆ

*Այս իրիկուն վերստին ես սաստկորեն զգացի*
*Անբուժելի թշվառությունը կյանքիս.*
*Ա՛հ, չէ թշվառ ինձի չափ ա՛ն որ կարոտ է հացի,*
*Զի ավելի ի՛մ անոթի է հոգիս։*

*Այս իրիկուն վերստին... Սակայն ի՞նչ պետք և ի՞նչ սիրտ*
*Կրնա հոգիս դեռ ունենալ ու պատմել*
*Ինչ որ կյանքին առօրյա իրեն տված վերքըն է բիրտ,*
*Որուն կարծես եղած է ինքն ալ ընտել...*

*Գեղեցկության նոր դեմքին, սիրո հույսի մը դեմ նոր՝*
*Իմ էությանս ընդոստ ոստնումը հանկարծ.*
*Երջանկության նոր տեսիլք, իր կոչը խոր ու հզոր,*
*Եվ վաղընդփույթ անոր փախուստը անդարձ...*

*Հույսին փախուստն՝ ինքնիրմեն իսկ սարսափած, դողահար,*
*Ճակատագրին դուռը առանց բախելու,*
*Զսպանելով որ սիրված ձեռքը թերևս զայն բանար,*
*Եվ կամ փակվե՞ր ան գուցե խորն աչքերու...*

*Երջանկության տեսիլքեն պահել պատկեր մը միայն,*
*Ինչպես դիակ մը նորածին զավակի,*
*Կուրծքիդ վրա զայն սեղմել և աշխատիլ ընդունայն,*
*Որ քո շունչեդ ան շունչ առնե և ապրի...*

*Միշտ ըսպասել և հուսալ, հուսա՜լ, ինչպես հուսացի,*
*Եվ հավիտյան նորեն մինակ գտնել զիս...*
*Ա՛հ, չէ թշվառ ինձի չափ ա՛ն որ կարոտ է հացի,*
*Զի ավելի ի՛մ անոթի է հոգիս...։*

## ԳԻՇԵՐ

Գիշերեն ինծի դեմ մագիլներ կերկարին
Եվ հոգիս հոգվույս դեմ կզինվի խելագար.
Երկինքի լույսերն ալ մի առ մի կմարին.
Գիրքիս մեջ, զերթ ծովուն, կնետվի՜մ գլխիվար...

Ո՜վ, ի՜նչ բան զիս ըրավ կյանքին դեմ զինաթափ,
Վիրավոր ամեն մեկ նայվածքե ու շեշտե,
Վիհին մեջ տենչերուս երթալով առ խարխափ,
Մինչ մութքիս մեջ արդեն կծյուծե՜, կցրտե՜...

Գիրքիս մեջ, զերթ ծովուն, խեղդըվի՜լ կցանկամ,
Ա՛հ, չզգա՜լ, չխորհի՜լ, չտեսնե՜լ վերջապես...
Հուսափայլ ո՛վ անցյալ, չհիշե՜լ քեզ անգամ...

Կործանման աղմուկներ կլսեմ հոգիես...
Կխեղդե զիս փոշին... Ավերա՜կ, ավերա՜կ...
Ո՜վ աչքեր, բարձիս վրա մնացե՛ք վաղը փակ...։

## ԵՍ ԵՐԱԶԻՍ ՏԻՐԵՑԻ

*Ինչպես տիրեց Շամիրամ իրմե փախչող Արային,*
*Ես երազիս տիրեցի՝ մեռցընելով զանիկա,*
*Եվ տարփավառ թագուհվույն պես, որ լացավ դառնագին՝*
*Իր դիակին վրա ինկած կհեծեծեմ ես հիմա...*

*Ամենուրեք, աղոտած մահադաշտին վրա մտքիս՝*
*Կուլեն հետո խենթի պես փնտըրեցի զայն երկա՜ր.*
*Գտա զքեզ հետքերեն վարդ արյունիդ, սիրելի՛ս,*
*Զարդուղենիդ մեջ պառկած և ճիշտ սրտիդ նետահար...*

*Համբույրներովս հիմա ո՞ւր կենդանացնել կուզեմ քեզ*
*Եվ կկանչեմ հուշերուս հնօրյա գունդն հարալեզ*
*Լիզել վերքերըդ անբույժ.— դուն այդ մեռա՛ծ ես իսպառ..*

*Բայց, ո՜վ Երազ, զոր կուտեն արդեն որդերը քանդիչ,*
*Կուզեմ խաբել ես աշխարհն, ինչպես ինքզինքս ալ մի քիչ,*
*Թե դուն կապրիս՝ մի՜շտ ավելի, հոգիիս մեջ՝ մի՜շտ*
*պայծառ...։*

## ՎԵՐՋԻՆ ՀԱՆԳՐՎԱՆ

*Անոր համար որ կյանքեն այլևս ոչինչ չեմ հուսար՝*
*Ես քաղցրությամբ կխորհիմ մեծ նորությանը մահվան,*
*Կմտածեմ ես անոր՝ վերջին հանգիստ հանգրվա՛ն*
*Ճամփորդության մ՚որ չեղավ բնավ հույսիս հավասար։*

*Անոր խորհուրդը հիմա, որպես բուրում մը սավար,*
*Կլեցընե տխուր և ցայգ հոգիս՝ ծածուկ պահարան,*
*Ու խորհուրդներըս ամեն օծում ու փայլ կստանան,*
*Իբրև թե ան նուրբ ու գաղջ ամռան անձրև մը ըլլար։*

*Անոր հետ հաշտ եմ հիմա՝ զերթ կյանքին հետ ատենոք…*
*Մ՚ինչ չի կապեր աշխարհի զիս ոչ մեկ բան և ոչ ոք՝*
*Զիս կթողե մթասքող մահվան ժպիտը խաղաղ։*

*Եվ ի՞նչ ափսոս է խորհիլ, թե այս ժպիտը երբեք*
*Պիտի զմեզ չխաբե, ու մեր մարմինն հոգնաբեկ*
*Պիտի ընդմի՛շտ խտղըտա իր թևերուն մեջ չքնաղ…*

## ՁԱՎԱԿՍ

Ձավակի մը շնորհն անգամ, ո՛վ տեր, զլացար
Ինծի ընդմիշտ, և այդ մասունքը սիրույս
Արգիլեցիր փականքներու տակ անհույս,
Եվ զիս իմ մեջս սպանեցի՞ր. չարաչար...

Երբ ես ծերիմ՝ ան բարձրանար քովս ի վեր,
Իմ սպառած կյանքիս հյութովն աճեցուկ.
Ե՛ս հովանի անոր և ա՛ն ինծ նեցուկ,
Ու նո՞ր արև՝ աչքին մեջ աչքերս գոցվե՞ր...

Մինչդեռ հիմա դռնե ի դուռ, մինչև վերջ,
Քիչ մը գորով պաղատելով՝ պիտի գամ
Օտար տղոց քով թափառիկի հարաժամ...

Օտար տղոց աչվըներուն, հոգվույն մեջ
Դողդղագին պիտի տղա՞ս որոնեմ,
Եվ անծանոթ՝ պիտի մեռնի՞մ անոնց դեմ...

# ՀԻՆԳ ԶԳԱՅԱՐԱՆՔՆԵՐԸ

## ՆԱԽԱԲԱՆ

*Մինչև վերջին օրս ինձի հավատարիմ եղաք դուք,*
*Եղաք արթուն ու թրթռուն, օրհնյալ, օժտյալ, կատարյալ.*
*Տիեզերքի կանգնեցաք ճամփաներու վրա բանուկ.*
*Կարավանները հարուստ թողուցիք զիս մոտենալ*

*Եվ փափկորեն անոնցմե կողոպտեցիք, խլեցիք*
*— Իրենք ոչինչ չգիտցած, իրենցմե բան չպակսած —*
*Ու բերիք մեջս լցնուլ, ո՜վ իմ ճորտերս ճարպիկ,*
*Ամեն ինչ որ միջոցին վրա սփռած էր աստված...*

*Իրերախառն այս պահուս, ձայներ, բույրեր, պատկերներ*
*Եվ հպումներ և համեր մարմնույս մեջ պար կդառնան*
*Եվ խեղճուկ անձս կընեն անհունության պահարան...*

*Ո՜վ արմատներ, որոնցմե հոգիս իր հյութը կառներ,*
*Փոխադրեցիք դուք իմ մեջս աստուծո լույսը անգամ,*
*Եվ ձեզ ամենքդ հիմա անոր հանձնել ես կերթամ...։*

## ՏԵՍԱՆԵԼԻՔ

Ո՜վ իմ մանկիկ աչվըներս, որ միշտ մանկիկ լույսին հետ
Համբուրվեցաք նախապես, խառնըվեցաք իրարու,
Որ չընայած իսկ տեսաք գունդն սպիտակ ու աղո՜ւ
Շրթունքներուս մոտեցող՝ մորըս կուրծքին կենսավետ...

Աչքե՛ր, որ հին այդ օրեն ի վեր անվերջ ճոխացաք
Երկրի, երկնի գանձերով՝ ձեր ցանցերուն մեջ ինկած,
Ճոխացնելո՜վ հոգիիս մուսեոնն ալ մթամած...
Որ գինովցաք վարդերուն արեգակին նորածագ,

Որ դողացիք, ա՜հ, ի՜նչպես, ուրիշ աչաց բախումեն,
Որ սուզվեցաք անոնց մեջ՝ վերթ շոգենավ մը ծովուն...
Որ մորթին գույնն ու մարմնին տեսաք ձևերը փխրուն,

Որ խենթեցաք ու լացիք անոնց վրա... որ ամեն
Նորոգ հույսի շողացիք, և կլեցվիք արդ մութով...
Ա՛լ բավական է, աչքե՛ր, ա՛լ մնացեք անխռով...։

## ԼՍԵԼԻՔ

Ի՜նչպես վեհ է լռությունն, որ տակավ մեջըս կիջնե՝
Նման ամպի խավերու իրիկնային երկինքեն.
Ու լռության մեջ այդ սուրբ, կարծես ամեն մեկ դուռնե
Ելլող պայծառ մանուկներ, որ աղոթքի կդիմեն՝

Մտքիս ամեն մեկ խորշեն հաջորդաբար ինձ կուգան
Անուշ ձայներն երբեմնի,— եկեղեցվո կոչնակին,
Ու ժամկոչին այգաձայն, ու կաղանդի գիշերվան,
Ու հոտերուն արածվող, ու սրինգին հեշտագին...։

Կլեցընե գլխս ծովուն անհուն աղմուկն սպիտակ,
Ու գորշ ժխորն անձրևին... Ահա՛ կայլակ առ կայլակ
Ժայթքող դայլայլը թռչնոց... և մորըս ձա՜յնը ահա՛,

Ու քըրոջս ալ՝ ա՜յնքան ցած... Ու ամենեն վերջ հիմա,
Հին մրմունջները սիրո՝ որոնցմով, ո՛վ ականջներս,
Դուք լեցուն եք ու լեցո՜ւն կերթաք մահվան դուռնեն ներս...

## ՀՈՏՈՏՆԻԿ

*Եվ դուք, ռնգո՛ւնք, որ ինձի ամենեն նուրբ ու հզոր*
*Գինովությունը տվիք, որ բուրումները հողին՝*
*Անտառներուն, մարգերուն դանդաղ հոգին թևավոր՝*
*Փոխադրեցիք հոգվույս մեջ, ինչպես խորին ու մթին*

*Տաճարներուն ալ հոգին՝ խունկին վրա բարձրացող.*
*Որ ինձ շնչել և զգալ, երակներուս մեջ առնել,*
*Պահել տվիք սիրելույս էության մասը դողդող,*
*Որ սուրացիք առջևս՝ բարակնե՛ր քաղցր ու ընտել.*

*Եվ ինձ բերիք հեռավոր կյանքի ձորին մեջ ի պահ*
*Թևթևուրեն վաղվըղող որսերն անթիվ ու անտես...*
*Դուք, ո՛վ ռնգունք, հանգչեցե՛ք, ա՛լ հանգչեցե՛ք խորապես...*

*Մեկ պահիկին միասին ահա՛ կանցնինք մենք ի մահ,*
*Կօրհնե՛մ ըզձեզ. ինձ կուտաք նախավայելքն ալ մահվան՝*
*Փտության մեղկ բույրերով, որ մարմինես ինձ կուգան...։*

## ՃԱՇԱԿԵԼԻՔ

*Կարծրացած ես, ո՛վ իմ քիմքս, ու թանձրացած՝ ո՛վ լեզուս.*
*Դուն, ո՛վ շրթունքս, վարագո՛ւյր առագաստին՝ թրթըռուն,*
*Կամ՝ մանկլավիկ ոռկրամոլ, որ ոչինչ ներս կթողուս*
*Մինչև հոտոտ ցոփ լեզուն և քիմքը՝ ծեր հասառուն՝*

*Առանց բաժինըդ կանխավ ու փափկորեն առնելու,*
*Դո՛ւն՝ պահապա՛ն անձավին ծածկաստվեր, դաղջ ու խոնավ,*
*Դո՛ւն ալ, հոգնած ու թուլցած, երբեմնի ձյուն սյուներու՝*
*Հիմա կոտրած, տապալած (երկրաշարժի պատճառավ)*

*Տարքին առջև, այժմ անձև, անգույն, անո՛ւժ կդողաս...։*
*Քի՛մքս ու լեզո՛ւս ու շրթո՛ւնքս, շնորհակա՛լ եմ ձեզմե,*
*Կշտացուցիք զիս անշուշտ, արբեցուցիք լիհարկե.*

*Պտուղներու, միսերու, գինիներու՝ մաս առ մաս՝*
*Հոգին ինձի ջամբեցիք ու համբույրին հա՜մն անմահ...*
*Գացե՛ք, գացե՛ք դուք հողին, ան ալ ձեզմո՛վ կշտանա...։*

## ՇՈՇԱՓԵԼԻՔ

Աշխարհի ծովը ամբողջ՝ լայնաթավալ իր ալյոք,
Մարգրիտներով, տիղմերով՝ եկավ անցավ ձեր մեջեն,
Ու դուք ոչի՞նչ պահեցիք. ձեռքեր հիմար ու խելոք.
— Ու ձեզ որդե՛րը վաղիվ պիտի լեցնե՞ն, հատցընե՞ն։

Նոր հուզումով մը այսօր ես կնայիմ ձեր վրա՝
Իբրև երկու փոքր ու ժիր ծառաներու, քով ի վեր,
Որ միշտ եկան ինձի հետ, աշխատեցան անխնա.
Եվ վախերնին կդողան՝ չի այսօր, ծեր, չե՞ն գործեր...

Երկարեցաք դուք տալու և առնելու ալ համար,
Դուք աղոթքի բացվեցաք եկեղեցին, հորըս քով.
Երջանիկներուն տիրեցիք, դալարվեցա՞ք տենդահար...

Փայփայեցիք, գրկեցիք, կհիշե՞ք, ի՞նչ հեշտանքով...
Ի՞նչ ցնծություն. բայց ի՞նչպես եղաք երբեմն անխոհեմ...
Թողե՛ք, թողե՛ք, ո՛վ ձեռքեր, ձեզ արդ շնչե՛մ, համբուրե՛մ...։

## ՎԵՐՋԱԲԱՆ

Ինչպե՞ս կրնամ քեզ մոռնալ, զգայարանք վեցերորդ,
Ամենեն ուշ արթնացող, ամենեն շուտ քնացող,
Որ քու բոլոր հույզերուդ կրնես մյուս հինգը հաղորդ,
Կուտաս ուժեղ անոնց ուժ և դողերեդ՝ անոնց դող...

Աչքին, բերնին, ռնգունքին և ականջին և ձեռքին՝
Երիվարներ խելոքիկ, խենթեցնողն եղար դուն.
Եղար փարոս մը ճերմակ՝ կյանքի ծովին վրա մթին,
Նավերը քեզ կանչելով, բաշխեցիր լույսդ ամենուն...

Ո՛վ դուն, ո՛վ դուն, ամեն բան միայն քու մեջդ էր պահված,
Ամեն փափագ, ամեն հույս, ամեն հրճվանք ու վայելք,
Արքայության դուռ կամուրջ, անմահության վրա ելք...

Հոգնած, պառկած ես հիմա, ու կխոսիմ քեզի ցած
Քու փառքի հին օրերեդ, նախճիրներեդ, զոհերեդ,
Եվ երբ կանցնիմ աշխարհես, սա սփոփանքն ունիմ գեթ՝

Թե հարության օրը քեզ ալ պիտի կյանք տա աստված...

# Ս Ե Ր

## ՀԱՅ ԱԶԳԻՆ

(Ձոն)

*Գիտնալով, լա՛վ գիտնալով, որ պետք չունիս դուն անոր,*
*Ահա նորեն ես իմ անձս հոս էջերով քեզ տվի.*
*Ներողություն նվերին համար անպետ, անշնորհ.*
*Ոտանավորն ի՞նչ ընել, «ոտանավորը կուտվի՞...»։*

*Պատանիին թույլ կուտաս. երիտասարդն՝ ինչևէ.*
*Բայց չափահաս, բայց մեծցած մարդն համառի՜ տակավին։*
*Տողեր քաշել ու հանգեր դամել հետև հետևե*
*Ու կախել վար անոնցմե մութ կանթեղներն իր սրտին։*

*Ո՛չ, գիտեմ, չե՛ս ըսպասեր, չսպասեցի՛ր դուն երբեք*
*Ուրիշ բանի, բայց եթե զավակներուդ քեզ համար*
*Տառապանքին, հեծության, գալարումին վշտաբեկ։*

*Ա՛ռ և նետե՛, մարդակե՛ր, մոռացումի վիհն ի վար*
*Այս մասնիկներն ալ սրտի, որ ամեն օր հյուծվեցավ*
*Քեզ և ինքզինքն իր վրա ծանրակրելո՜ւն պատճառավ...։*

## ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

(Զոն)

Հոգիս իմս է և որքան թիլիմ հանձնել զայն այստեղ
Անցորդներուն անծանոթ, յուրաքանչյուր էջի վրա,
Հոգիս ի՛մս է և ոչ ոք պիտի ամբողջ զայն ճանչնա
Իր լույսերովը պայծառ, իր մթությամբը ահեղ։

Հոգիս հանքի մը նման — ոսկի՞, ածո՞ւխ թե կապար,
Որուն հազիվ հեղեղներ քրքրեցին խավը վերին,
Մերթ հրճվանքի ու հաճախ սև հեղեղները ցավին,
Մինչ հրաբուխ մը խորունկ անոր ներքև կգոռար։

Հոգիս այդ հանքն է հիմա, զոր բացած եմ ու պահած,
Եվ ո՞վ գիտե դեռ որքա՜ն այսուհետև նոր վիշտեր
Պիտի պեղեն ու փորեն զանի հարված առ հարված։

Հոգիս ի՛մս է և այսօր կմտածեմ թե հա՞րկ էր
Զայն այս չափով ալ միայն անցորդներուն ճանչցընել,
Մինչ կուզեի քիչերո՛ւն ամբողջովի՜ն զայն հանձնել...։

## ԵՐԵՔ ԿՈՉԵՐԸ

Առտուն կանուխ՝ ո՞վ է որ
Դուռըս այսպես կզարնե...
Դո՞ւն, սպիտակ ու աղվոր
Երա՛զ... կուգա՛մ, սպասե՛,
Աշխարհի ծայրը մինչև,
Մինչև լուսին ու արև՝
Ո՛վ սպիտակ, վետիվետ
Երա՛զ, կուգա՞մ հետևեդ...

Ցերեկ ատեն՝ ո՞վ է որ
Կբախե դուռըս այսպես,
Ընդհատ-ընդհատ, զորավոր...
Ա՛հ, այո՛, դուն, դուն Պարտքն ես՝
Հրամայող, խոստացող,
Ո՛վ պարտք, որուն դող ի դող
Կհետևիմ ես ահա
Բացած դժնե ճամփուն վրա...

Իրիկվան մեջ՝ ո՞վ է որ
Կցնցե դուռըս մեղմիվ...
Այս ի՞նչ ձայն է՝ դաշն ու խոր,
Զոր կըլսեմ ես հազիվ...
Մա՛հ գեղեցիկ, Մա՛հ վսեմ,
Կսպասեի քեզի ես
Ու հետդ ահա կքալեմ՝
Խելոք ու լուռ, զավկի՞դ պես...

## ԽԱՌՆՈՒՐԴ

Չեմ ըմբռներ թե ի՛նչպես ոմանք կապրին երջանիկ
Թշվառության մեջ այսչափ. կապրին անփույթ խորհուրդին
Դեմ այս խորունկ չարության, տխմարության այս մոտիկ՝
Կապրին խաղաղ, իբրև թե լոկ հայելի ըլլային...։

Ես՝ գթության մերթ արցունք կըլլամ ամբողջ հոգիով,
Մերթ՝ կծկլտած մութին մեջ, կըլլամ ամբողջ որոնում.
Ծաղրն ու ծիծաղը կընեմ երբեմն բերդս ապահով,
Զայրույթն ալ փոս մը երբեմն, ուրկե դժոխքը ես կ'ոստնում։

Ա՛հ, գոնե զո՛ւտ մնային տարրերն այս խոր տանջանքիս...
Մինչդեռ հիմա, խառնըված թշվառության՝ կտեսնեմ
Օձասողուն չարություն, տխմարությունը դժխեմ՝

Բարությունով ջրտած, և կտեսնեմ նաև զիս
Տիեզերքի ու կյանքի մեծ խորհուրդին դեմ կանգուն,
Լույսով մը փոքր, որուն վրա կիրքերըս շուք կթողուն...։

## ՏԿԱՐՈՒԹՅՈՒՆ

*Դո՛ւն, գթասիրտ ու գթացված տկարություն,*
*Քեզ զորության վերածելու համար որքա՜ն*
*Պետք է արցունք թափել տա մարդը մարդերուն*
*Եվ իր աչքեն որքա՜ն արցունք պետք չէ իյնան։*

*Որքա՜ն հավատք, մացառներուն վրա շուրջի*
*— Հավատք ու սեր՝ կաթնափրփուր գե՛զմ սպիտակ—*
*Պետք է խուզվի իր հոգիեն ու հոն կառչի*
*Ու ծփծփա՜ զերթ պարտության երկար դրոշակ։*

*Ճամփան՝ շիտա՛կ այնուհետև կերթա առաջ,*
*Կբարձրանա՜ կըսեն՝ ճամփան, ու անոր վրա*
*Հաստատաքայլ գացող այս մարդն որ կերևա,*
*Եվ կերթա ո՞ւր... մարդն է՝ կըսեն, զորեղ ու քաջ։*

*Ո՛վ դուն, մանո՛ւկ Տկարություն, ընել ի՞նչպես,*
*Որ անունովդ ու հոգիովըդ դուն հաղթես...։*

# ՀՈՒՐ ՍՏԵՂԾԻՉ

Անուն չունի, հունան ի՛նչ է, չեմ գիտեր,
Բայց կշարժի, բայց կաշխատի մութին մեջ.
Հողն անոր շուրջ կզգա հպարտ սարսուռներ.
Ինկե՞ր է սաղմն իր մեջ կյանքի մը անվերջ։

Սկզբնական, ստեղծագործ խորհուրդին
Ան մտքիս մեջ նետված չնչին մեկ հյուլեն,
Ան բորբոքած, բոցավառած մեկ փոշին,
Որ հունավորն եկավ վառել անհունեն։

... Ո՛վ հոծությունն ու խորությունը կյանքի,
Զոր իմ մտքիս հիմա բառերն այս կուտան
Եվ բառերուն՝ կուտա Հողին բնությամբ։

Կճանչընամ զինք... և այժմ ինձի կըթըվի,
Որ տիեզերքն ամեն ատեն, ամեն ժամ
Վերըստեղծող Մտքի՛ն ես մաս կդառնամ...։

## ԽԱՎԱՐՈՒՄ

*Կանդրադառնամ. խարազանն հիմա կիյնա ձեռքես վար,*
*Մինչդեռ առաջ՝ շաչելով օդին մեջ ծակ կբանար,*
*Ուր կերթային կորսըվիլ մարդերն, իրերն այն ամեն,*
*Որ սիրտս իրենց չարությամբ, տգեղությամբ կճնշեն։*

*Կհանդուրժեմ մինչ առաջ կկանգնեին պատնեշներ*
*Հանկարծակի հոգվույս մեջ և պատնեշեն կարձակեր*
*Մերթ իմ զայրույթս հրացան, մերթ հեգնությունս իմ՝ սլաք*
*Ու կուլազաշտ կնետվեր հոնկե իմ անձըս համակ։*

*Իդեալին կմոռնամ հիմա դղյակը հաճախ.*
*Լուսատեսիլ, բարձրաբերձ դղյակը տե՛ղ մը հեռո՜ւն,*
*Եվ գոհ կըլլամ ապրելով խորը այս ցած հյուղերուն։*

*Տե՛ր, ինձ ցուցո՛ւր նորեն օրն, ուր կենսառույգ, կենսուրախ*
*Պիտի կռվիմ աննշմար անհուն գանձի մը համար՝*
*Կատաղությամբ մը խենթի, հիմարությամբ մը արդար...։*

# ԲԵԹՀՈՎԵՆԻ ՍՈՆԱՏԻ ՎՐԱ

## Ա.

### ՀՐԱԺԵՇՏ

*Մնա՜ս բարով…։ Բայց դեռ ոչ. պիտի ըսեմ քիչ հետո*
*Մնաս բարով, ու միջոցն ահագնամեծ հաստատուի,*
*Բացվի՜ պիտի մեր միջև և սկսի պիտի, օ՜հ,*
*Նոր ժամանակ մը հոսիլ՝ ամայության, կորուստի՜…։*

*Մնա՜ս բարով… Կյանքին բառը եզերքն անհունին,*
*Հսկա բրի՛չ, ու կլինան աշտարակներ, պալատներ,*
*Կլինա պարտեզ մը կախյալ ու կամուրջներ կըփըլին*
*Եվ սև փոշի մը հանկարծ կընե ամեն բան ստվեր…։*

*Կդառնամ ետ անգամ մ'ալ՝ հրելով ետ ապագան,*
*Տված կռնակս անոր, ու անցյալին կուրծքըս բաց…*
*Անցյալն ամբողջ՝ հոգիիս մեջ կլեցվի փըսորած…։*

*Մնա՜ս բարով…։ Շրթունքես բառը փըրթավ՝ վերջնական,*
*Ու ներկայեն ես փրթա ու կվազեմ խելահեղ,*
*Մինչ կվազե ինձմե շուտ ճակատագի՛րըս այնտեղ…։*

## Ի

## ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

*Անապատին վրա գիշեր...։ Կըլլա գիշերն առավոտ.*
*Երկնէրևույթ մը շքեղ կկախվի հոն՝ օդին մեջ։*
*Հետո հանկարծ կանհետի... և իրիկունը մեկոտ*
*Կիջնե նորեն, կդողան նորեն աստղերը անշեջ։*

*Բայց անապատ, անապա՜տ... Երբեմըն փույս մը չնչին*
*Նայվածքիս դեմ կնետվի. երբեմըն լույս մը նիհար*
*Ձեռքիս վրա կցայտե... Ու կհառիմ երազին,*
*Որ կշողա սրտիս մեջ ու կմարի՜ համբաբար։*

*Հոր մըն է օրն, ուրկե դուրս՝ հին հիշատակը առջիս*
*Եղներափայլ կկանգնի իր թևերով խաչաձև*
*Ու գլխս տակա՜վ կթաղե իր ծանրությանը ներքև։*

*Ան կճնշե, կշոյե ու կօրորե իմ հոգիս...*
*Բայց անապատը նորեն գլխս կտեսնե իր վրա՝*
*Իբրև ըստվեր, որ անվերջ կկարճընա, կերկըննա...։*

Գ

## ՎԵՐԱԴԱՐՁ

*Օ՜հ, զանգակնե՜ր, զանգակնե՜ր…։ Ու ծաղիկնե՜ր,*
*ծաղիկնե՜ր…*
*Երկինք կապույտ է այնքա՛ն, երկինք ա՛յնքան է թեթև,*
*Որ վայն զրկած եմ կարծես, մինչ ճամփան ալ՝ գետնեն վեր*
*Ելած կարծես՝ կրոնե՜ զիս աշխարհի ի վերև։*

*Ո՞վ կըսպասե ինձ այստեղ.— բայց ամեն ինչ, ամե՛ն ինչ․*
*Եվ է՛ն առաջ՝ ալիքներն այն ծովափի հոսանքին,*
*Եվ է՛ն առաջ՝ բլուրին վրա բացվող այգը ջինջ․*
*Եվ է՛ն առաջ՝ մեր տան դեմ ծաղկող ճերմակ նշենին։*

*Հետո, գիտե՞ք, առաջին գարնանային փոսուռան՝*
*Մութը հազիվ թե կոխած, հասմիկներու պատին վրա.*
*Հետո զեփյուռը համեղ և խնկահո՜տ լուսընկան։*

*Ու թեև մեն մի քայլիս գյուղը տակավ կնեղնա,*
*Բայց չափ չունի, չունի՜ սիրտս, ու կզարնե սիրտըս ծափ,*
*Վարար գետի մը վրա սիրտըս կերթա՜ ափե ափ…։*

## ԴՈՒՆ ՀԵՌԱՎՈՐ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

*Ահ, եթե դուն չճանչնաս՝ ալ ո՞վ կրնա ճանչնալ զիս,*
*Դո՛ւն, հեռավոր մանկություն՝ որմե եկա համբաքար*
*Եվ որ հիմա անցյալին վրա պառկած կերևիս՝*
*Երազավայլ ու դացած կարծես աշխարհ մը օտար։*

*Բայց կարթըննաս դուն երբեմն ու զիս երկար կդիտես՝*
*Մինչ գրկաբաց կսպասեմ քեզի հուզմամբ, անձկությամբ.*
*Աչքերըս խունկ են ամբողջ ու կմխան դորովնս.*
*Կցոլանա աչքիս մեջ աչքիդ երկինքը անամպ։*

*Բայց կթվի թե վախցար ու հոգվույս մեջ վերստին*
*Խորշե ի խորշ կփախչիս ու պահվըտիլ կերթաս դուն՝*
*Զիս ձգելով ավելի հիմա տրտում ու նկուն։*

*Կհասկնա՞մ, չես ճանչնար դուն այս հոգնած ծերունին,*
*Զոր պահ մը հայրդ հուսացիր և որ եղբայրդ է միայն,*
*Քեզմե հեռու չարաչար մեծցած եղբա՛յրդ անարժան...։*

## ԶԱՎԱԿՍ

Բայց դուն, անհուն զավկի սեր, ինչպե՞ս իմ մեջըս ինկար։
Անապատին մեջ ինկած ազնիվ հունտի մը նման,
Որ կռծեցավ ծլելուն սպասելով ընդ երկար,
Իր հույզն իզուր ուղղելով երկրի հույզին միության։

Մանկութենես, կհիշեմ, նախքան ուրիշ ամեն սեր,
Քան ծնողքի, քան քրոջ, ես կզգայի՝ իբրև հայր,
Զավկիս համար ապագա, զավկիս համար, որ մեջս էր՝
Սեր, որ ինձմե դեպի ինձ կըներ շրջան մը անծայր։

Կտեսնեի զայն այնպես, ինչպես եղբայր մը պզտիկ,
Կտեսնեի զայն հոգի, կտեսնեի զայն մարմին
Եվ մերթ՝ իջած զայն կարծես վրան աղու մը դեմքին։

Ա՛հ, իմ տղա՛ս, որ կապրեր ատեն մ'այնքան ինձ մոտիկ,
Հիմա մեկնե՞ր է խապառ, ու ամպերուն մեջ երբեմն,
Անցնող ճերմակ ամպերուն, ես զինքը դեռ կգտնեմ...։

## ԽՍ ԱՅՍ ԳԻՇԵՐ

Ես այս գիշեր կծախեմ հիշատակներըս ամեն...
Կես գիշերի լուսնին տակ կուզե՞ս, որ մենք սակարկենք.
Ինչպե՞ս, չունի՞ս դուն ինծի բան մը տալիք փոխարեն.
Բայց միայն շուքըդ, տղա՛ս, հասակիդ շուքը աննենգ...։

Սուրբ քաղաքին անհամար խորաններուն վրա կերդնում
Ահա քեզի, որ սիրով պիտի զանոնք հանձնեմ ես,—
Առ տա՛ր ամենքն, իմ ամբո՛ղջ այս գիտությունըս տրտում,
Անցյալս անվերջ կրելե զիս ազատե՜ վերջապես...

Եվ տո՛ւր ստվերըդ ինծի...։ Անապատին մեջ երբ որ
Երթամ մինակըս նորեն, մերկ՝ հոգիով ու մտքով,
Ընկերանա թող ինծի օրորուն շուքըդ աղվոր՝

Իբրև ինծմե իսկ ծնած թեթև հոգի՝ հոգվույս քով,
Իբրև իմ իսկ պաշտամունքս հողին վրա երկարած,
Հողեն ելած ու հողին տվող համբո՜ւյր երկյուղած...

## ՄԵԿ ՀԱՏԻԿԸՍ

Իմ մեկ հատի՛կըս հիմա, որ կդիտես գիս վհատ,
Հայելիին ջրհորեն,
Քեզի նման ու քեզմով կնայիմ ես ալ վրադ
Երկարորեն, ծանրորեն...։

Ե՞ս արդյոք քեզ, թե դուն գիս կմեղքընանք ավելի,
Երբ գիրար լուռ կդիտենք...
Քովըդ եղբայրդ է մնացած, քու հին ընկե՛րդ լույսի,
Զոր դեռ այսօր կողբանք մենք։

Նոր զարնըված էր երբ որ, գիշեր երազըս տեսա՝
Թե մութին մեջ, հեւհեւ,
Կքաշեի կարասի փոխադրող կառք մը հսկա՝
Քովըս շուքի մը հետ սև,

Որուն հաճախ կըսեի անձկությունով ու վախով.
«Ընկե՛ր, լավ չեմ տեսներ ես,
Դուն կտեսնե՞ս...», և թեև կքալեինք քովե քով,
Բայց ձայն չկա՞ր ընկերես։

Չէի գիտեր թե արդեն մեռած էր եղբայրն այդ պահուն.
Այնուհետև չարթնցա՞վ,
Չխոսեցավ ան երբեք. վերջին տեսար գինքը դուն.
Ան չտեսա՞վ քեզ բնավ...։

Հայելիին ջրհորեն մինչ կնայիս դուն ինձի,
Ու կնայիմ ես իր մեջ,
Կնշմարեմ ջրամույն որպես գլուխ մը սուրբի,
Անոր ծփա՜լը անվերջ։

Իմ մեկ հատի՛կս... օհ, ինչպե՜ս սիրտըս վրադ կդողա,
Երբ կտեսնեմ քեզմով քեզ·
Քու արցունքո՛վդ քեզի կպաղատիմ ես հիմա,
Որ դուն ալ զիս չլքես...։

## ԱՊԱԳԱՆ

Ապագա՛ն ահա կժպտի նորեն՝
Ծեծ կերած, լացող տղու մը նման,
Որ կնշմարե փողոցին խորեն
Կապիկն ու իր տերն, որ կմոտենան։

Կժպտի՜ ինձի ապագան, որ սև
Քող մը երեսին՝ այրի մըն էր լուռ.
Կժպտի՜, և իմ նայվածքիս առջև
Կբացվին, կարծես, դուռներ ոսկեհուռ։

Ապագա՛ն՝ թեև չըլլա անսահման
Ինչպես առենով — անսահմա՛ն հույսեր,
Սերեր, հրճվանքներ, երբ անմահության

Արևին ներքև ինձի կներևեր —
Սակայն կժպտի՜ ու կխոսի ալ,
Տես, հոգի՛ս, դեմքովն ու ձայնովն անցյալ...

## ԳԻՐՔԵՐ

*Գիրքերու մեջ կան ի՜նչ վեհ զգացումներ, խորհուրդներ...*
*Ինչ որ ունի լավագույն՝*
*Մարդը խլեր է իրմե, ծալեր, ի պահ է դրեր*
*Կողքերու տակ գույնզգույն։*

*Եվ հպարտ է անոնցմով...։ Օր մը երբ որ Հրատեն*
*Այցելուներ գան երկիր՝*
*Իր գիրքերուն մեջ պետք է մարդը գտնեն ու դատեն,*
*Մարդը՝ վսե՜մ գրագիր...։*

*Աստվածը ինքն է գտած, գտած՝ գիրքի մեջ գամած,*
*Երբ անոր պետք ունենա*
*Ընդդեմ մեկուն կամ մյուսին,— իր բանտերեն մթամած*
*Կերթա հանել զանիկա...։*

*«Մի՛ սպաներ — ի՛նք ըսած է աստուծո որ ըսե —*
*Քանզի ամենքդ եք եղբայր...»*
*Եվ զինվորին ի՛նք կանգնած է մարմարե, պղինձե*
*Հուշարձաններ անհամար...։*

*Բայց գիրքն ուրիշ, կյանքն ուրիշ. գիրքը տղոց, ծերերուն,*
*Խենթերո՜ւն պետք է միայն,*
*Տկարներո՛ւն՝ վերջապես. մարդը ուժեղ ու բեղուն*
*Չի՛ գրեր, չի՛ կարդար զայն.*

Զորավոր մարդը կարդի՜ մոռցած գիրքերը բոլոր
Եվ գիրքերուն հակառակ,
Կստեղծե նոր ճամփաներ՝ հող չէ թե ծուռ ու մոլոր...
Միայն աստված է շիտակ...

Արդարությո՛ւն, բարությո՛ւն, մարդը ձեզ լավ կճանչնա՝
Ինչպես աստղերն երկինքին.
Ձեզ կճանչնա հեռուեն. կհիանա ձեր վրա,
Ձեզ կքննե վերստին

Եվ ձեր շքեղ պատկերին կհավելու միշտ նոր գիծ,
Միշտ նոր գույն մը հմայիչ...
Տկարին-ձեռք կուտան հոն՝ մինչ կյանքի մեջ կուտան կից.
Կյանքը տարբե՞ր է... մի քիչ։

***

Գիրքե՛ր՝ ամոթը մարդուն, կուղն ու վերքերը անոր
Ծածկող շքեղ քղամի՛դ.
Բզկըտեի ես զքեզ ու երևնար մարդը նոր,
Մարդը հին և ճշմարիտ...

Գիրքե՛ր, մեռած սրբությանց, գեղեցկությանց դամբարան,
Ձեր շեղջակույտը մթին
Օդն հանեի, որ թերևս հոգիին մեջ մարդկության
Ծագեր շող մը վերստին...

Գիրքե՛ր, միակ սփոփանքն, հացն ու հաճույք իմ սրտիս,
Փչացնել ձեզ կուզեմ,
Որպեսզի ա՛լ չխաբեք ու չխաբեմ ես ալ զիս,
Ձգնա՜մ միշտ ձեր սուտին դեմ...

*Գիրքե՛ր, գիրքե՛ր կեղծպարիշտ, ես կուզեի միմիակ*
*Մեծ գրատան մը մեջ ձեզ*
*Ամբողջովին հավաքել, ձեռքովըս տալ ձեզ կրակ,*
*Եվ ձեր փոշին հրակեզ*
*Ցրվե՜լ չորս ծագն աշխարհի, տա՜լ երկնքին անհատակ...*

## ԱՂՈԹՔ ՎԱՂՎԱՆ ՍԵՄԻՆ ԱՌՋԵՎ

Դաշտերուն մեջ, դիտեցե՛ք, նոր-նոր ծիլեր կհառնեն,
Որոնք փո՛ւշ են թե ցորեն՝ դեռ չեմ գիտեր. չե՛մ գիտեր.
Թերևս փո՛ւշ են անոնց ստամոքսին, որ, կուշտե՛ր,
Նաշի՞ը չեն տար այլոց, մինչ նոթիին՝ են ցորեն։

Ժամանակին մեջ հնչող խուլ աղմուկներ կլսվին՝
Հարվածներու, բախումի՛, փլուզումի ազդարար,
Ոտքի վրա սկսած հոգեվարքի՛ մը երկար
Եվ դրոշի, որ հեռո՜ւն կվարանի տակավին։

Ամենուրեք, ճնշված մեծ հոգիները բոլոր
Գալերու պես կպայթին... ճակատները արյան՝
Գետնին երես չորցած, կարմիր բոցեր կդառնան.
Ջուր քրտինքները ամեն կըլլան հեղեղ մը պղտոր

Ու կսարսեն, կքշե՛ն ժայռեր, թումբեր դարավոր...

***

Տե՛ր, բարությո՛ւնդ այսօր, իմաստությունդ հիմա՛
Պետք է դրկես աշխարհի՝ այս հյուլեին տանջակոծ.
Թեև մոռցան անոնք քեզ, բայց հիմար հոտը մարդոց
Միմիայն դուն կեցընել կրնաս վիհին ճամփուն վրա։

Մտքի պատրույգը եթե մարդերուն մեջ վառեցիր
Ու կյանքն ըրիր անոր յուղ,— տե՛ր, մի՛ թողուր, որ հանկարծ
Շրջեն կանթեղը անոնք. ըրե զայն միշտ լուսարծարծ
Եվ փնտրել տո՛ւր անով ճշմարտությո՛ւնըդ անծիր։

Կյանքին համար բովանդակ՝ կաթեցուր սեր սրտին մեջ
Զորավորին այսօրվան, զորավորին ալ վաղվան,
Սրտերն անոնց չխըցվի՜ն, այլ պարպըվի՜ն ու լենա՜ն
Իրարո՛ւ մեջ, իրարմո՛վ՝ հաղորդությամբ մը անվերջ։

Գթա՛ գոնե տղայոց և ծերերուն. մի՛ թողուր
Տղաքն առանց գորովի, ծերերն առանց նեցուկի...
Թո՛ղ ընդհարումն ըլլա կարճ և թո՛ղ շուտով հաստատվի
Խաղաղությունը արդար՝ կռվողներուն մեջ տխուր։

Թո՛ղ սասանին ու փշրին բարձր բերդերն անառիկ,
Եվ իյնան վար պատնեշներն զրահապատ եսության.
Ամեն մարդու հավասար թող բաժնըվի ամեն գանձ.
Թո՛ղ պարտեզները բացվին և թող խուժեն հոն մարդիկ,

Բայց չկոտրե՜ն ոչ մեկ ծառ, չճզմե՜ն ո՛չ մեկ ծաղիկ...։

## ԾԻԾԱՂ

Խնդալ պետք է, լոկ խնդալ — տղաս խորհուրդ կուտա ինձ —
Մարդոց վրա, որ ատոր են միմիայն արժանի.
Ուրիշ ամեն բան ժանգ է հոգվույն համար, որ պղինձ՝
Ծիծաղին խիստ շփումով կմաքրվի, կփայլի։

Եվ իմ տղաս իրավո՛ւնք ունի անշուշտ... բայց ուրկե՝
Գիտե այդ բանն անիկա. ան ե՞րբ չափից այդքան խոր՝
Հիմարությունը մարդոց, որպեսզի լաստն իր նետե
Վստահորեն ու երթա անհոգ՝ ծովուն վրա անոր։

Քեզ, ո՛վ Ծիծաղ, ատենով երբ այնքան ալ դեռ չէի
Քեզի կարոտ, գրկեցի զերթ կատու մը կուրծքիս վրա,
Քեզ գգվեցի, գրգռեցի և ճանկարայց, սխրալի՝
Երեսն ի վեր շատերուն արձակեցի՜ անխնա։

Բայց հիմա քիչ, օ՜հ, շատ քիչ, կրնամ այլևս խնդալ.
Հիմա հոգիս ինքնիրմով բզկտված է այնքան,
Այնքան ցավոտ, վիրավոր, որ իր ծիծաղն ու ծաղրն ալ,
Ի՛ն առաջ զինք կարյունեն ու իր վրա՜ կմնան...

Կյա՛նք, խնայե իմ տղուս օր մը ըլլալ ինձ նման...։

# ՆԵՂՈՍ

Նեղո՛ս սրբազան, ո՜վ ծիրանավոր,
Վետ ի վետ մինչև ոտքերըդ իջնող
Վառ պատմուճանով, զոր եկան բոլոր
Իշխանք համբուրել, շարժել դող ի դող։

Տիտանյան Նեղո՛ս. որ դարերն ի վար
Կսահիս կերթաս առանց անցնելու,
Օղակներուն մեջ շղթայիդ երկար
Սեղմած պահելով կյանքը քեզ հլու։

Նեղո՛ս հեշտության, Նեղո՛ս պաշտամանց,
Դուն՝ խորհո՛ւրդ բեղուն և դուն՝ լուռ դաշնե՛րգ,
Շուրջըդ ամեն բույս, անասուն ու անձ
Շունչեդ շունչ մըն է, ընդերքեդ՝ ընդերք։

Ալքդ՝ արմավենին կհանե երկինք,
Ու՛ կծավալե ցանված դաշտերը ղա՛յն.
Քե՜ղ ավազը թև, բուրգերն են ստինք,
Բամբակը կաթիդ փրփուրն է միայն։

Ուղտերը քեզմե՛ անապատին մեջ
Կսորվին քալել վեհընթաց ու լուռ.
Քեզմով լի սափոր՝ կանայք ուղղամեջ
Իրենց շուրջը քեզ կթափեն բուռ-բուռ։

Եվ ըսել, ըսե՜լ, հայր ու մայր Նեղոս,
Որ ժամանակին մեջ թաղված անթիվ
Քուրմեր ու մոգեր քեզ գիտել են հոս,
Քեզ երգեր, պաշտե՜ր երկյուղիվ, հեշտիվ։

Ըսե՜լ թե կարծեր են քեզ նույն հավետ,
Երբ շիթ մը չունիս կեցող մեկ վայրկյան,
Երբ, հավետ մանուկ, կբերես քեզ հետ
Հեռուեն հույզեր միշտ նո՛ր զորության։

Ըսե՜լ, շինարա՛ր, թե լեռ ահավոր,
Լեռ քեզ ծնող, կքանդես անվերջ
Եվ կերթաս խելառ՝ գանձերը անոր
Տարածել, ցրվել օվկիանին մեջ։

Ըսե՜լ թե խորհուրդ և ուժըդ անհուն՝
Միայն վազք, վատնում, կորուստ է միայն.
Թե մահը լեռան՝ կյանքն է դաշտերուն,
Թե մահն ու կյանքը բառեր են ունայն

Եվ թե կա միայն գոյություն, աստված,
Ըսե՜լ, ո՛վ Նեղո՛ս, թե անկե կուգան
Ալիքդ ու խոհերն այս թափառահած,
Ըսե՜լ ա՛յս միայն, Նեղո՛ս սրբազան,

Նեղո՛ս, ալևոր ու ծիրանավոր,
Նեղոս ներուսման, ներդաշնավորման,
Լուսեղ հավատքի ո՛վ աղբյուր պղտոր,
Ո՛վ գետ անսահման, գետի՛ն գիտության...։

## «ՀՈԳԻՍ»

Կերթաս ճամփե մը, որուն վերջը ծանոթ է քեզի,
Հասակիդ չափ ու լայնքիդ փոս մը, որուն կլընուն
Իսկույն բացվածքն ու զքեզ առանց օդի և լույսի
Կձըգեն հոն առանձին, կեր և ընկեր որդերուն։

Միայն ոսկոր կմնաս... մինչև որ օր մ՚ալ անոնք
Տարանջատվին իրարմե ու դառնան հող համրապես...
Ինչ որ քու դեմքդ էր այստեղ—ճակատ ու այտ, աչք ու հոնք—
Արդեն վաղուց է լափված ու սրբըվա՜ծ աշխարհես...

Սակայն կապրի՜, կխորհիս, հոգի՛դ, որ սիրտ և ուղեղ,
Միայն ուղեղ է թերևս, զոր կըմբռնես ուղեղով
Եվ զայն հազի՜վ երազել կրնաս իբրև քիչ մը հով։

Հոգի՛դ՝ հոգվույն աստուծո գացած մոտիկ վերն, այնտե՜ղ...
Բայց ո՞ւր է վերն... և «հոգիս» կըսես միայն դուն հիմա
Ուրիշ մարմնո, որ պիտի քու մարմնույդ պես չքանա...։

## ԵՐԲ ԿԽՈՐՀԻՄ

Երբ կխորհիմ, թե ականջներս օր մը պիտի չլսեն ա՛լ.
Ա՛լ չշարժին, ա՛լ չբռնեն պիտի մատներս. ծաղկերակի
Սա կապույտ թելս՝ օր մը չըլլա պիտի այսպես առաձգյալ,
Լեցուն, տրոփուն, այլ փտորած որդի մը պես պիտի թափի,

Երբ կխորհիմ, թե ո՛չ մեկ սեր, ո՛չ մեկ տենչանք մարմինիս
մեջ
Չխլըրտի պիտի այլևս. թե ոսկրատուփը ձեռքիս տակ,
Որ գլուխս է, որ ես եմ, ե՛ս ամբողջովին՝ գալիք անվերջ
Դարերուն մեջ, պիտի մնա հողով լեցուն, ինձմե դատարկ,

Սոսկում մը նախ գլխս կպատե ու կկարծեմ թե կիյնամ վար,
Ծնած օրես մինչև այսօր ինկա՞ծ եմ միշտ ու դեռ կիյնամ
Վիհի մը մեջ, որուն հատակն ոչնչություն է ու խավար։

Հետո, սակայն, կխաղաղիմ, կզգամ նույնիսկ հույս մը
տարտամ,
Իյնալու տեղ կելլե՞մ թերևս, ու իր բանտեն ազատ հոգիս՝
Գրկեդ մեկնած, թերևս, ո՛վ տեր, պիտի գրկիդ մեջ
ընդունիս...

## ԳԱՂԱՓԱՐԱՑ ԳԵՏԻՆԸ

*Ինչպես նաւու մը վրա փոթորիկի միջոցին՝*
*Ես ոտքս ամուր կկոխեմ, բայց կսահիմ, կնետվիմ*
*Մեկ կողմեն մյուսը, ավա՜ղ, գաղափարաց գետինին*
*Եվ կխորհիմ, թե կյանքին վերև ան շա՜տ է ճղճիմ։*

*Չսայթաքելու համար դեռ — ինչպես նաւու մը վրա*
*Փոթորիկի միջոցին — կշափշփեմ շարունակ*
*Գաղափարաց գետինին լայնքն ու երկայնքը հիմա,*
*Մինչ ան անվերջ կծըռի ու կփախչի՜ քայլիս տակ։*

*Եվ միշտ, ինչպես աջ ու ձախ, և վեր ու վար տատանող*
*Կամրջակի մը վրա՝ հորիզոնները մտքիս*
*Մերթ գլխես վեր կցցվին, մերթ կանհետի՜ն մթասքող։*

*Գետինն այսքան անհաստատ՝ երբեմն անշուշտ կընկնե՛ զիս.*
*Բայց կսփոփվիմ խորհելով... թե մեկ օրվան թե մե՛կ անձ՝*
*Ես դարերո՜ւ, շատերո՜ւ կապրիմ խորհուրդը մեկանց...։*

## ԵՐԱԶԻՆ ԾՆՈՒՆԴԸ

Երեկ գիշեր ես տեսա, ես տեսա՜ քունն իմ վրաս…
Անկողնիս շուրջ կհածեր, կուզեր մարմինս ու հոգիս,
Թևերն անվերջ կշարժեր և միջոցեն մաս առ մաս
Ամեն սնունդ վանելով՝ կուզեր հյուծել, մարե՜լ զիս։

Կկարդայի ու աչքերս ու միտքըս բաց էին դեռ…
Տարտամորեն՝ մերթ ընդ մերթ՝ ներկայությունը անոր
Կգտնեի տողերուն մեջ ստվերով ծանրաբեռ,
Բայց իսկույն դուրս կլնեի և կառնեի շունչ մը նոր։

Օ՜հ… դավաճանը հանկարծ զարկա՜վ աչքիս կոպերուն.
Հիմա կռիվ մը վրաս, սիրո կռիվ մը անձայն,
Որուն մահիճն էի ես, կռի՛վ, ծփուն, ծփծփուն,
Կատաղորեն կմղվեր ընդմեջ քընին, արթնության…

Ու զգացի ես ահա՛, բոպեափայլ լույսի մեջ,
Քունը հաղթող արթնության, զայն վայելող հևիհև.
Մինչ՝ լրացած այդ կռվին պիտի ծներ պահ մը վերջ,
Երազը՝ փոքր խառնածին, երազը՝ քո՜ւն արթնաթև…։

## ՄՈՒՍԵՈՆ ԱԹԵՆՔԻ

Քարեր միայն, քարե՜ր անթիվ, իբրև սյուն,
Իբրև արձան, կյանք առած սուրբ քարեր։
Հողը զանոնք նորեն իր ծոցն էր առեր,
Անոնք հողեն առին նորե՛ն հարություն։

Մարդոց ծնունդ, բայց մարդերեն շատ առաջ,
Արդարադույն անոնց սերունդը իբրև,
Անմեղությո՜ւն, գեղեցկությո՜ւն մշտատև,
Վերերևցան անոնք այստեղ՝ ջինջ ու քաջ։

Եվ հարուցյալ պայծառ ամբոխ մը հիմա,
Լուսաասպիտակ, անդրանշույլ, կնայի
Հին աշխարհեն մեր աշխարհին ամայի։

Աստվածահույլ մը բանտարկյալ՝ ցույց կուտա
Այստեղ ճամփան այն մյուս ու մեծ աշխարհին,
Ուր Գեղ և Ուժ իրերահաշտ կընակին...։

## ԲԱՑ ԾՈՎՈՒՆ ՄԵՋ

*Ես պզտիկ ու մեծ շատ մը սերերու*
*— Արշիպեղագո՜ս — նավելով մեջեն,*
*Առանց ոչ մեկուն քով խարըսխելու*
*— Ի՜նչ խենթ, խե՜նթ էի — հասած եմ բաց ծով։*

*Բաց ծո՛վն եմ հիմա՝ անհունության դեմ*
*Լո՜ւռ հորիզոնին, զո՜ւր հորիզոնին...*
*Կղզիներն հեռուն նորեն կտեսնեմ,*
*Անոնք, մի առ մի, նորե՜ն կանհետին։*

*Ո՛չ մեկ նավ հիմա, ո՛չ իսկ ապառաժ,*
*Որուն շուրջ դառնա իմ նավըս գոնե*
*Կամ ալիք մը վիս հոն տանի, զարնե։*

*Օվկիա՜ն անծայր՝ մերթ մռայլ, մերթ խաժ,*
*Ու մի՜շտ ամայի... Եվ վերեն՝ միայն*
*Ամպեր, լո՜ւռ ամպեր կսահին կերթան...*

## ՔԱՌԱՍՆԱՄՅԱԿ

### Ա

*Քառասունին՝ կըսենք ա՛լ.— կհեռանաս մենե, կյա՛նք.*
*Զգալապես՝ երեկեն ավելի մութ է այսօր.*
*Մինչև երեկ լեռն ի վեր ելած էինք, արդ կիջնանք,*
*Կիջնա մեզ հետ ապագա՞ն ալ հույսերուն հետ բոլոր։*

*Կկարծեինք, դեռ երեկ, ըլլալ սկիզբը ճամփուն.*
*Այսօր հանկարծ կխորհինք, թե կեսն անցած ենք արդեն,*
*Լավագույն կեսը անշուշտ, և դանդաղուն, մոլորուն՝*
*Պիտի երթանք ա՛լ հավետ հալածվելով այս ցավեն։*

*Ցա՛վը՝ ամբողջ անցյալի, գեղեցկության, ճոխության,*
*Երբ կրնայինք՝ չկրցանք լընուլ մեր կյանքն անոնցմով,*
*Հա՛ց մեր այժմու նոթության, թշվառության դիմաց դա՛նձ։*

*Քառասունին՝ կկենանք փլատակաց դեզին քով.*
*Նոր պալատնե՞ր կերազենք, որքա՞ն շքեղ ավելի.*
*Բայց մեզ ոչ ոք չի հավտար ու չենք հավտա՞ր մենք մեզի...։*

## Բ

Քառասունին, բայց կըզգա՛նք երեկվընն ավելի
Թե քաղցր պահը իր մեջ մեծ քաղցրություն մը ունի.
Լույսի մը դեմ չենք կենար այլևս երկար, տեսլահար,
Այլ վերլուծել կջանանք իր երանգներն անհամար։

Քառասունին՝ երեկի հոգնութենեն այս առտու
Երբ կգտնենք մեզ հանգչած ու դեռ պատրաստ քալելու,
Հպարտություն մը հանկարծ կկրկնե ուժը մերին
Եվ կկարծենք թե երբեք վերջ չունենա՞ր այս ուղին։

Քառասունին՝ հափափված հաճույքներուն տեղ բոլոր,
Կվայելենք հեշտանքներ ավելի խոր, միմիայն
Մեկ բաժակի ումպ առ ումպ ըմբոշխնումին մեջ երկայն։

Եվ այն օրերն՝ ուր ոչինչ մեզ կջամբե կյանքը չոր,
Ո՛չ իսկ կաթիլ մը գորով, ո՛չ հույս և ո՛չ իսկ պատրանք,
Իմաստության մրուրով մենք քիչ մը դեռ կարբենանք...։

Գ

Բայց ի՜նչ արագ, ի՜նչ արագ՝ քառասունեն վերջ հիմա
Կթավալին տարիներն՝ իրենց կառքին մեզ կապած,
Մեզ զարնելով քարե քար, մինչև որ մահն ողորմած
Ճամփան կանգնի ու փոկին սուրի հարվածը իր տա։

Այսքա՜ն արագ՝ կառքն անշուշտ կգլորի՜ լեռն ի վար,
Այսքա՜ն արագ՝ կքաշե անշուշտ զայն ձոր մը խորունկ,
Եվ փոսին մեջ, ուր կաճին տժգունատիպ մեծ ծաղկունք,
Մեզ կսպասե՜, կխորհինք, քընի հանգիստը երկար։

Քառասունեն վերջ՝ այսօր, մերթ կսոսկանք այդ քընեն,
Եվ մերթ անոր կցանկանք մեր հոգնությամբըն ավելցող՝
Փափագելով հարդարել մեր անկողինը արդեն։

Քառասունեն վերջ, ո՛վ տեր, կապավինինք փոխնիփոխ
Զմեռելու դեռ հույսին և հույսին շուտ մեռնելու,
Ընդ մեջ հոգվույն և մարմնույն բախումներուն ահարկու...։

# ՆՈՐ ՍԵՆՅԱԿ

*Իմ նոր սենյա՛կըս ահա՝ չորսի վրա հինգ կանգուն.*
*Իր տեսարանը ի՜նչ փույթ, կարասիները ի՜նչ փույթ,*
*Այս միջոցին մեջ ամեն առտու, ամեն իրիկուն*
*Պատմություններ ինձ պատմե պիտի իմ մատըս ճկույթ։*

*Եվ մինչդեռ ան կմնջե՝ ահա հանկարծ, գաղտնորեն*
*Պիտի խոսի՜ հոս ականջս ու ընդհատե պիտի զայն.*
*Աչքըս պաղի՜ պիտի հոս իր սպասմանը խորեն*
*Եվ պիտի սիրտըս խաղա ու փոթորկի լռելյայն։*

*Սպասատանին և պարեն պիտի անթիվ պարիկներ*
*Իմ շուրջըս, հոս՝ անանուն, ծփծփուն պար մը ծածուկ,*
*Մինչև որ գա ու վանե զիրենք պառավ մի ջադուկ։*

*Եվ հոս, և հո՛ս տակավին, ամենօրյա խեղճ պատկեր՝*
*Քառասուն մանուկ բարեպաշտ, հուրի, սառի մեջ ձգված,*
*Պիտի անվերջ ավայտին՝ աղոթելով առ աստված...։*

# ԱՆԿԱՐԵԼԻՆ

Կուզեմ մեկը—ուզելու վարժությունն իսկ կորուսեր,
Կարծես մոռցե՞ր եմ հիմա —
Որ փույթ չէ թե ինձ համար չզգա ոչ տենչ ու ոչ սեր՝
Բայց որ իմ սերըս գիտնա։

Գիտնա՝ դառնուկը ինչպես զինքը սիրողը գիտե,
Գիտե թռչունն ալ ինչպես,
Եվ կորոշե զայն իսկույն ուրիշ ամեն մարդերե,
Անոր հետ քաղցր է ու հեզ։

Զսիրելով հանդերձ զիս՝ երախտագետ ինձ ըլլա
Զինք սիրելուս համար շատ.
Սիրե՞ սիրվիլը ինձմե ու դնե վիզն ուսիս վրա՝
Վստահությամբ մը ազատ։

Իմ բառերուս փոխարեն, որոնք մանկան մը ըսված
Անուշ բառեր պիտ ըլլան,
Ան մերթ ինձի ձեռքն իր տա և մերթ հուզված, երկյուղած՝
Երկար նայվածք մը միայն։

Աղվոր չըլլա, բայց ըլլա դեռահասակ ու մաքուր,
Մաքո՞ւր սրտով ու մարմնով.
Ըլլա հաճախ ան ուրախ, բայց և երբե՛մըն տխուր,
Լույս և ստվեր քովե քով։

Փափուկ ու տաք մատներով հալի՜ երբե՛մըն հոգվույս՝
　　　　Նման վերքի մը ցավոտ.
Զիս ափոփել կամենա, ինձ ներշնչե՜ քիչ մը հույս,
　　　　Գիշերս ընե՜ առավոտ։

Այսքանը բա՛վ է ինձի, կուզեմ այսքան միմիայն,
　　　　Եվ գիտեմ թե չունենա՜մ
Պիտի այս քիչն ալ հիմա ...ու մոռցե՜ր եմ ահա զայն.
　　　　Մոռցե՜ր՝ ուզելը անգամ...։

## ՊՈԼԻՍ

*Անգամ մըն ալ դուն սեցա՞ր աչքիս առջև, հին պատկե՛ր*
*Բլուրներու մեջտեղեն անցնող ծովուն դարձդարձիկ,*
*Որուն կապույտը կառնե մերթ զմրուխտի երանգներ*
*Ու կօրրե մերթ սպիտակ ամպը իր մեջ ցոլացիկ։*

*Օ՛հ, գարնան հովն՝ այս ջուրին հոտով ամբողջ թաթավուն,*
*Ինչպես թեթև կթըռի ամենուրեք՝ ափերո՛ւն*
*Վրա անոր և բարձանց վրա ցամաքին և ամեն*
*Կածաններուն մեջ՝ կայթող իր ոտքերուն հպումեն։*

*... Բայց դուն, տեսի՛լք ընտանի, հիմա այնչափ հեռացած,*
*Ըսե՛, իրա՞վ է որ ա՛լ պիտի երբեք չբացվիս*
*Դիմացն զքեզ փնտըրող իմ անսահման կարոտիս։*

*Դուն որ եղեր, ո՛վ Պոլիս, լույսն աչքերուս նորաբաց,*
*Ճի՞շտ է, ըսե՛, որ ա՛լ մենք օտարնե՞ր ենք իրարու*
*Եվ իրավունք չունի՞մ ես քու հողիդ մեջ թաղվելու...։*

## ԱՂՈԹՔ ՀԻՎԱՆԴ ՏՂՈՒ ՄԸ ՀԱՄԱՐ

*Հիվանդ, հիվա՜նդ է տղաս... Այս մըտածումն, ամեն հեղ,*
*Զիս կնետե երկընքի դեմ զայրույթով մը ուժգին,*
*Մինչ երկվայրկյան մը հետո՝ իմ անկումիս մեջ ահեղ*
*Ես կմնամ շնչասպառ, սեղմած իմ վերքը վերքին։*

*Տղաս հիվա՜նդ...։ Տե՛ր, ներե՛։ Միայն աղոթք, աղաչանք,*
*Արտասվախառն, հոգեբուխ աղոթք ունիմ քու առջիդ,*
*Միայն աղոթք, ո՛չ բողոք, որ շնորհես իրեն կյանք,*
*Որ առնե կյանքն ալ իրմե շնորհ ու փայլ ու ժպիտ։*

*Իրավ է թե խղճը մեր ու կամքը քուկդ է, աստվա՛ծ,*
*Դուն չես գործեր մեր մեղքով, սակայն ներե՜, օ՜հ, ներե՛,*
*Որ հիշեցնեմ, թե որքա՛ն անցնելով մեծ մութերե*

*Եկած հասած էր այստեղ, արևին տակ էր ելած,*
*Թե իր հոգին ու իր միտքն ի՜նչպես ճոխ են ու փարթամ*
*Եվ թե ի՜նչպես հեռուեն ես իր վրա կդողամ...։*

## ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐ

*Հաշվեհարդար. ի՞նչ մնաց. կյանքեն ինձի ի՞նչ մնաց.*
*Ինչ որ տվի ուրիշին, տարօրինա՜կ, ա՛յն միայն.*
*Խանդաղատանք մը ծածուկ, օրհնություններ անիմաց,*
*Երբեմն հատնումը սրտիս ու մերթ արցունք մը անձայն։*

*Ինչ որ գնաց ուրիշին՝ վերադարձավ անուշցած*
*Ու զորացած՝ հոգիիս մեջ մնալու հավիտյան.*
*Ինչ որ տարավ սերն ինձմե՝ չկորսընցուց զայն աստված,*
*Տվավ ինձ ետ ու ըրավ կյանքըս անով միշտ բուրյան։*

*Եվ այժմ, ո՛վ տեր, հակառակ իմ տանջանքիս, հակառակ*
*Ինձի համար սա չորցած երջանկության աղբյուրին,*
*Հին գինիով հորդաբուխ ես կարբենա՞մ տակավին։*

*Ու չեմ ըսեր «ի՞նչ մընաց...»։ Ի՞նչ կըմնա հողին տակ*
*Եղեգներեն դյուրաբեկ, կաղնիներեն հաստաբուն.*
*Արևն ըմպած ըլլալու մխիթարանքը անհուն։*

## ԵՐԵԿ ԳԻՇԵՐ

Երեկ գիշեր—չեմ գիտեր երե՞կ էր ան, թե երազ —
Սիրո մոտեն ես անցա, եղա ա՛յնքան մոտ, ա՛յնքան,
Որ, ա՛հ, դըպա՜ իսկ անոր ու ան փախավ հազիվհազ
Եվ դեռ մատներըս կարծես գլխու պտույտ կունենան։

Երեկ գիշեր՝ անսահման ուրախության ի հաշիվ
Ես ժողվեցի կրակյան, անմահակա՜ն փշրանքներ,
Որոնց վրա մտածումս, զգայարանքըս հեշտի՜վ
Կմնան այժըմ առկախ՝ ջահերու պես տարուբեր։

Երեկ գիշեր երջանի՜կ եղա միայն այդքանով,
Երազն ու կյանքը մութին մեջտեղ եկան քովե քով,
Կյանքս երազո՜վ հորդեցավ, ինչպես երազս ալ կյանքով։

Եվ այսօր բեռ մը կարծես հոգիիս մեջ կտանիմ,
Հոգիիս մեջ ու մարմնո՛ւս՝ բեռ մը գաղտնի, մտերիմ,
Որուն տակ մերթ կհևամ և մերթ անո՜վ կթըռիմ...։

## ԱՅՍ ԵՐԱԶԸ

Պիտի քալե՛մ հավիտյան այս երազին հետևեն,
Ո՛ւր որ ըլլամ, ո՛ր աստղին կամ ո՛ր ամպին ալ ներքև,
Սիրտըս ուրախ թե տըխուր, քայլերըս ծանր կամ թեթև,
Շուրջըս ամպրոպը գոռա թե զեփյուռները թևեն։

Այս երազին հետևեն պիտի քալե՛մ հավիտյան,
Հիմա, ավա՜ղ, գիտնալով, թե զայն պիտի չըռնեմ,
Բայց տենչալով այդ տեսիլքն իմ անցյալիս քաղցրադեմ
Հետըս հավետ ունենալ, անով երթալ գերեզման։

Անով անցյալն ինծի հետ, իմ առջևես կընթանա
Ու կըլլա միշտ ապագա ու զայն կընե ցանկալի.
Անոր սառին վրա իբրև շողն արևի կփայլի։

Այդ երազին հետևեն այս րոպեին ալ ահա՛
Կհևա սիրտըս ա՛յնքան, որ զայն գրկա՜ծ եմ կարծես,
Որ կխորհիմ թե արդեն ես սիրվա՜ծ եմ իմ սերես...։

## ԱՆՈՒՆՔ

Մեկո՛ւն հոգին տեսա ես
Ու սիրեցի՝ ձևերեն
Ու քայլերեն, որ կնըլլեն
Կարծես միշտ վե՛ր աշխարհես։

Մեկն իր ձայնին նվագով
Ձիս քնացուց, արթնցուց,
Ձա՛յն ջուրերու հինավուրց,
Հեղամրմունջ, թարմ ու զով։

Հետո մազերը մեկուն
Խենթեցուցին պահ մը զիս՝
Բռնած իրենց մեջ հոգիս…

Բայց ուրիշի մը ժպտուն
Աչքերն այնքան քաղցր էին,
Որ հիվա՛նդ եմ տակավին…։

## ՈՉ ՈՔ

*Ոչ ո՞ք նորեն այս գիշեր,*
*Ոչ ո՞ք որ զիս լսեր գեթ,*
*Որ քիչ մը զիս գուշակեր,*
*Որ, ո՛վ գիշեր, հմայքեդ*

*Ինքն ալ ինձ պես բռնըված՝*
*Ըլլար տավիղ մը թրթռուն*
*Եվ իմ տենչանքս երկյուղած*
*Ըլլար հո՛վն իր լարերուն։*

*Ո՛չ ոք...։ Իզո՛ւր կհեղուս*
*Անհուն գիշեր, քու խորունկ*
*Սիրո սափորըդ գլխուս։*

*Իզո՜ւր, ո՛վ սիրտս, իբրև խունկ*
*Կհամաաիս հոս դուն ալ*
*Ամայության մեջ մխալ...։*

## ՄԵՆՈՒԹՅՈՒՆ

Ո՛չ մեկ բարեկամ… Ու սիրտս ա՛յնչափ բան
Ունի ըսելիք՝ ծանըր ու թեթև,
Այնչափ բան, որոնք բերնի վրա կուգան
Երբ լսող մը կա, ներո՜ղ մը նաև։

Հոգվույս մեջ ամեն զգացում, խորհուրդ,
Չպարզըվելով կփտի՜ կարծես…
Չխոսող հոգին ա՜յնքան կըլլա ցուրտ,
Դառնացած՝ սառեն՝ նարինջի մը պես։

Ո՛չ մեկ բարեկամ… և սակայն գիտե՜մ,
Թե կան շուրջըս, հոս, անհամար ցավեր՝
Սրտերու մեջ լուռ, նման ու տարբեր։

Չճանչնա՜լ իրար… միշտ գա՜լ դեմառդեմ
Եվ անցնի՜լ՝ առանց երբեք իրարու
Քիչ մը սփոփ, նեցուկ կամ հույս ըլլալու…։

## ԱՏԵՆՈՔ

*Ատենոք հունտ մը հույսի՝ հոգիիս մեջ կբանար*
*Ուրախության ծառ մը մեծ...։ Լուսածաղիկ, լուսավառ*
*Աչք մը՝ սուզված աչքիս մեջ, ձեռք մը ձեռքիս մեջ թողված,*
*Կվաղցըներ հևիհև սանձակոտոր սիրտս հանկարծ։*

*Բայց խենթ սրտին հետևեն կհասներ միտքը խելոք,*
*Միտքը խելո՛ք, խելացի՛, և ինչպես Ջևսն ատենոք*
*Պըրոմեթեն ապստամբ՝ զայն կզարներ շղթայի*
*Ու կձգեր զայն մինակ, իր ժայռին հետ ամայի։*

*... Կհիշե՞ս ձեռքդ այն գիշեր, այնտե՛ղ, դարձին այգիեն,*
*Մեջքիդ վրա, ձեռքիս տակ թռչունի պես դողացող...*
*Եվ կհիշե՞ս խավարին մեջ շիթ առ շիթ լուսաշող*
*Ինկող բառերը մերին, ու հառա՛չդ ալ տարօրեն։*

*Այդ փափուկ պահը կյանքիս մեջ կմնա տակավին,*
*Մեռած կյանքիս մեջ մեռած աղավնիի մը նման,*
*Ու կմնչե ընդմեջեն իր կիսաբաց կտուցին՝*
*Իր բացակա ընկերոջ շա՛տ անուշ բան մը... ի՞նչ բան...։*

## ՀԻՄԱՐԻ ՊԵՍ

Ահավասիկ որ կխորհիմ հիմարի՛ պես,
Մեղսակցությամբն այս գիշերին կախարդական,
Թե դուն կրնաս, թե դուն թերև՛ս պիտի ուզես
Ինձի իջնել՝ ինչպես հորին մեջ լուսընկան։

Աչքերդ աչքիս մեջ բարությամբ պիտի լընուս,
Պիտի թողո՛ւս ձեռքըդ ձեռքիս, ծունկըդ ծունկիս,
Պիտի գիտնա՛ս թռամիլն ամեն իմ իղձերուս
Եվ անոնց վրա դուն իբրև ցող պիտի սահի՛ս։

Ի՛նչ խենթ երազ, ի՛նչքան անգամ սուսերահար
Զոր նայվածքն ու շարժումն, շեշտն հատու,
Մի՛շտ վիրածնող, դատապարտված մի՛շտ մեռնելու։

Թույլ տո՛ւր սակայն, որ ան մեծնա քեզ ալ համար,
Հասակեդ՝ հասկ, գեղեցկություն առնե դեղեդ
Եվ պատկերիդ շքեղությա՛մբը մեռնի դեթ...։

## ՀԱՃՈՒՅՔ

*Խեղճ պզտիկ հաճո՛ւյք, ահա վերջացար,*
*Եվ ուզեցի ե՛ս, որ շուտ վերջանաս...*
*Նրա՛զս էր զքեզ հեշտիվ, համրաբար,*
*Հազվագյուտ խորտի՛կ խորել՝ մաս առ մաս...*

*Մինչ՝ հալածական գազանը ինչպես*
*Իր որսն անտառին կտանի մեջտեղ*
*Եվ կհափափե զայն արագ, անտես՝*
*Այնպես լափեցի քեզ, թռչնի՛կ համեղ...*

*— Եթե ոչ անմեղ — քեզ լո՛ր կամ կաքա՛վ,*
*Քեզ, պզտիկ հաճո՛ւյք, հատցուցի՜ ահա...*
*Եվ խաղաղություն մը կիջնե հիմա*

*Մարմնույս մեջ՝ ինչպես միտքիս ալ տակավ...*
*Միայն սիրտս, ինչո՞ւ, քաշվեր է մեկդի՝*
*Նման քեն ըրած տղո՛ւ մ՚անոթի...։*

## ԵԳԻՊՏՈՒՀԻ

Իմ թուխ հրեշտա՛կըս աղվոր, իմ սպիտակ, լուսափայլ
Հրեշտակներես վերջ այնքան... զերթ ջահ մը սև հասպիսե
Դուն կշողաս և լույսիդ մեջ կմնամ հոգեզմայլ՝
Գիշերագնաց զերթ ճամփորդ, որ շուրջն հանկարծ կտեսնե...

Այդքա՜ն անուշ ջերմություն նայվածքիդ մեջ ու ժպտիդ,
Ու հասակիդ մեջ այդքա՜ն լեցուն, ճկուն ճոխություն,
Մորթիդ խավար բուրումին, ձայնիդ շեշտին հետ վճիտ՝
Զիս կխեղդեն հեշտության ավազներու տակ ծփուն...

Շաքարեղեգ մը ինչպես գետեզերքեն կտրված,
Քեզ կտանիմ՝ դալարած, դաշնավորվա՜ծ ալ քեզմով,
Քեզ՝ քաղցր անոր պես ներքեն, անոր պես կա՛րծըր ու զով...

Եվ կխորհիմ.— Թերևս հին աստվածուհի ու աստված՝
Ճապուկ եղնիկ մը ճերմակ, սևուլիկ ցուլ մը ուժեղ,
Միացած են ու եղած նախածնողքըդ այստեղ.

Զի կենդանվո մը պես սուրբ քեզ կպաշտե՜մ երկյուղած...

## ԻՄ ԳՅՈՒՂՍ

*Իմ գյուղըս, մի՜շտ, իր լայն ու լույս երկինքով,*
*Իր արտերում հղությունովը հանդարտ,*
*Մանկությունովն աղբյուրներում իր թոթով*
*Եվ լեռներում լրջությունովը զվարթ,*

*Ուր որ երթամ՝ կդառնա՜ շուրջը մտքիս,*
*Ծովահայաց ճամփաներում մեջ իրեն*
*Մերթ կքոնե հոգնած աչքերս ու հոգիս,*
*Մերթ կփչե՜ երեսիս հով մ'իր հովեն...*

*Իր տղոցմով գյուղըս կաճեր ու կերգեր,*
*Կսարսըռա՜ր իր սերերով ծաղկավետ,*
*Կօրհնաձայնե՜ր իր ծերերում շրթանց հետ...*

*Իմ գյուղըս, տե՛ր, արդյոք ի՛նչ զով զեփյուռներ,*
*Հով արևներ, ծով ստվերներ կտեղա*
*Իմ հոն թողած, իմ հոն թաղվա՜ծ սրտիս վրա։*

## ԾԱՌԻ ԾԱՂԻԿՆԵՐ

Ծառի փափուկ ծաղիկնե՛ր, ես ավելի փափկորեն
Սիրած եմ ձեզ, սկսյալ մանկությանս հին օրերեն,
Քան ձեր քույրերը գետնի՝ ածուներու մեջ ծաղկող,
Թաղարներու մեջ բացված, շարված կարգով, տող առ տող,
Որոնցմե փունջ կկազմեն, որոնց բույրով կարբենան...

Կհիշեմ, ո՛վ բարեկամ, ձեր պարտեզին, որ մեր տան
Կվերջանար ճիշտ դիմաց, նշենիները երեք,
Բարձըր պատին հետևեն — որ մերթ կլինար հոգնաբեկ,
Ծանրությենեն թաց հողին, որուն ինքն էր ամբարտակ —
Փետրվարի վերջն արդեն, անոնցմե մին սպիտակ
Եվ մյուս երկուքը կարմիր, ծիրանագույն աչուկներ՝
Զոր ոստերուն երևեն կբանային անհամբեր...
Այնուհետև ինչպես շուտ կավելնային ծաղիկներն
Ու երկնքի լուսափայլ նուրբ կապույտին մեջ՝ հոն վե՛րն,
Կմնային այդ ծառերն՝ երեք ծաղկած նշենի,
Մեկը ճերմակ ծուխի պես և մյուս երկուքը՝ բոցի։

Ծառի թեթև ծաղիկնե՛ր՝ սալորենվո՛, նշենվո,
Նման էիք դուք սիրույս ծաղիկներուն, որ հանկարծ
Կբացվեին երազի երկնքին մեջ ու հետո
Կթափեին մի առ մի, վերեն՝ գետնին վրա ցած...։

## ՀԻՍՆԱՄՅԱԿ

*Կը մոտենա հիսունն ալ, հսկայաքայլ՝ առջևեն*
*Ձգած իր շուքը տգեղ, ծաղրանկա՛րը անոր,*
*Զոր իմ հույսիս և հուշիս պատերը դեռ կպահեն*
*Բանտարկըված իրենց մեջ, ծնած, չիշխա՜ծ թագավոր։*

*Հիսունն ահա՝ ահագին ծառի մը պես կկանգնի*
*Ու կգոցե ա՛լ ամբողջ իմ հորիզոնս իր հետև...*
*Բունն է փորված, պարպըված. կբնակի հոն գաղտնի*
*Թռչուն մը, որ արծվի աչք և չղջիկի ունի թև։*

*Հիսունն հիմա՝ լուսարար։ Պատարագեն վերջ ի՞նչ փույթ,*
*Թե կմընան ժամուն մեջ քանի մը կին ու տղա.*
*Ան՝ լռաքայլ՝ մի առ մի մարել ջահերը կուգա...*

*Բացի մեկեն, լուսարա՛ր. թող զայն՝ ի սեր արևուդ.*
*Ժամերգությունն իրիկվան ի՞նչպես ընել, ա՛հ, թո՛ղ զայն.*
*Ի՞նչպես առանց այդ լույսին մտնել բավիղը մահվան...։*

## ՋՈՒՐԵՐՈՒՆ ՎՐԱ ՍՏՎԵՐՆԵՐ

*Ջուրերուն վրա ստվերներ դանդաղորեն կհառնեն,*
*Մեկնումեն ետք արևին, ջուրերուն մութ հատակեն...։*

*Հեռուն՝ ծովերն ու լիճերն ու հոս՝ գետերը բոլոր,*
*Պարտեզներու մեջ փռված ավազաններն իսկ կլոր*
*Իրենց վերև կը տեսնեն՝ զերթ մշուշի մը ծփուն*
*Պատառիկները թեթև կամ զերթ շուքերն ամպերուն*
*Անցնող արտին երեսեն՝ անթի՜վ, անվե՜րջ ստվերներ,*
*Որոնց ամեն մեկն ահա՛ իր շարժումովը տարբեր*
*Կմատնե մյուսին, կծփի վար և հազիվ*
*Միայն բառ մը ասկայն՝ կթոթովե և մեղմիվ*
*Կհեռանա, կանհետի՜...։*
*Ոսկեվառ լուրջ այդ պահուն*
*Կներգե՜ն ջուրերը կարծես, անլսելի և անհուն*
*Ե՛րգ, որ իրենց ներքևեն կբարձրանա համրաբար,*
*Կարոտի ե՛րգ մը ծառին, ծաղկին, խոտին ալ համար,*
*Որոնք, անշունչ և անշարժ, մոտիկ կըլլեն անձկագին՝*
*Ջուրերու մեջ խեղդամահ հոգիներու այդ երգին...։*

## ԹԻԹԵՌՆԻԿ

Քերթված մըն ալ, ճիշտ հիմա,
Թիթեռնիկի մը նման,
Պիտի ծակե ու դուրս գա
Առագաստեն զգացման...

Իր խըլըրտումը կզգամ,
Կտեսնեմ շուքը ներսեն,
Եվ ճիշտ ժամուն, լույս ժա՛մ,
Ան օդին մեջ է արդեն։

Աղվո՜ր թիթեռ, խե՜ղճ խողակ,
Որուն մետաքսն՝ է խլված...
Խորհուրդը մութ ու հստակ
Պղծեցիր դո՛ւն, ո՛վ քերթված...

Գոնե թիթեռն այս ապրե՜ր.
Բայց կմեռնի քիչ հետո...
Երնե՜կ թողուր ան սերմեր
Սիրտերու մեջ նո՜ր սիրո...։

## ՄԵՆՈՒԹՅՈՒՆ

Ո՛չ մեկ բարեկամ... Ու սիրտս ա՜յնչափ բան
Ունի ըսելիք՝ ծանըր ու թեթև,
Այնչափ բան, որոնք բերնի վրա կուգան
Երբ լսող մը կա, ներո՜ղ մը նաև։

Հոգվույս մեջ ամեն ըղձացում, խորհուրդ,
Չպարպըվելով կփտի՜ կարծես...
Չխոսող հոգին ա՜յնքան կըլլա ցուրտ,
Դառնացած՝ սառեն՝ նարինջի մը պես։

Ո՛չ մեկ բարեկամ... և սակայն դիտե՜մ,
Թե կան շուրջըս, հոս, անհամար ցավեր՝
Սրտերու մեջ լուռ, նման ու տարբեր։

Չճանչնա՜լ իրար... միշտ գա՜լ դեմառդեմ
Եվ անցնի՜լ՝ առանց երբեք իրարու
Քիչ մը սփոփ, նեցուկ կամ հույս ըլլալու...։

## ՇՎԱՐՈՒՄ

### Ա

Աստվա՛ծ իմ, եթե կարելի չէր որ
Ամենքն ըլլային սափոր օրհնըված՝
Լեցուն բարության գինիով հզոր,
Ընեիր ամենքն իրարու դիմաց

Պողպատյա վահան, և թույլ չտայիր,
Որ տկարը միշտ, ա՛ն ալ քու որդիդ,
Ինա՜ և արյան իր քողով կարմիր
Ծածկե ամչըցող մարմինն իր վտիտ...։

Բայց չըրի՜ր այդպես... Կըլլան ոտնակոխ
Ուժովեն՝ նվաղ ուժովներն ամեն,
Եվ կզարնըվի՜ եղբայրն եղբորմեն...։

Ի՜նչ խորհուրդ է այս. երբ մարդու ոսոխ
Եվ դուն հավիտյան տկարին ընդդեմ...
Աստվա՛ծ իմ, ինչպե՞ս զքեզ ըմբռնեմ...։

## Բ

Կլսեմ, ի՞նչ ձայն մեղմ ու խիստ նաև,
— «Բայց դուն, գոնե դուն կըրնաս ըլլալ այն
Զոր անհունաթիվ ու պայծառաթև
Քու շուրջըդ գտնել կցանկաս միայն։

Բայց գիտցիր. որքան ամեն մեկդ ըլլաք
Կատարյալին մոտ՝ անկատարն այլոց
Պիտի քիչ տեսնեք. ավելի արագ՝
Մութին ու ցուրտին ըլլաք լույս ու բոց։

Չի՞ բավեր քեզի, որ երկրի վրա
Միայն մարդն, ամեն արարածներեն,
Ունենա իր մեջ կայծ մը իմ սերեն։

Եվ այդ կայծը փոքր իրեն միջոց տա
Այդտեղ իսկ արդեն այնպես ապրելու՝
Ինչպես բույլքը հոս ջինջ հոգիներու...»։

Գ.

*Բայց ես վերստին կհամարձակիմ՝*
*Իմ սրտիս խորեն ու մտքիս լեզվով՝*
*Պատասխանել քեզ ու ըսել. «Տե՜ր իմ,*
*Ըրիր ավելի ցիս հիմա խռով...*

*Դեռ որքա՞ն ատեն հոգին կենդանի*
*Պետք է մարմնույն մեջ շնչե խեղճորեն...*
*Մարդը իր կիրքե՞րն ոտքին տակ ունի՝*
*Թե ոչ այն շնորհն, որ տվիր իրեն...*

*Ել եթե այսօր, այսքան դար հետո,*
*Միայն Զարիքի ու Թշվառության*
*Գումարն է շատցած, եթե կվխտան*

*Գործերը Մահու՝ խոսքին դեմ Սիրո,*
*Ուրեմն սպառված է հոգին մարդուն,*
*Եվ ինչպե՞ս անոր դեռ վարկ կուտաս դուն...»։*

## ՊԱՐՈՂ ԴԵՐՎԻՇՆԵՐԸ

Վանդակորմին առջև հոն, կիսաբոլոր, քովե քով,
Գլանաձև թաղիքե գլխանոցներ մեղրագույն
Եվ մութ կապույտ կրկնոցներ,— անշարժ, գետին նայելով,
Շարված են լուռ դերվիշներն, անդրիշարքի մը հանդույն։

Խորունկ ու տաք՝ կբխի, կծավալի, կապույտ
Սրինգին գետը վերեն՝ կարծես լեռնե մ'այցելված,
Իր հորձանքին մեջ կոճղեր թավալելով իր վրա,
Ոլորվելով՝ հասնելու համար քեզի, ծո՛վ աստված։

Եվ կմեկնին սրինգին հետ դերվիշները մեկ-մեկ,
Հատիկ-հատիկ քայլերով, ոտքերով մերկ ու թեթև,
Շեյխին առջև բարևի գալով երբեմն ու երբեք
Չնայելով իրենց շուրջ,— աղոթապիշ, քրմաձև։

Երկար, երկա՜ր կքալեն, մինչև սրինգը տակավ
Կերագե չափը իրեն, կըլլա ուղող, պահանջող,—
Եվ կթափին կրկնոցներն ու քալողները կարգավ
Անջատվելով թափորեն, շապիկ ճերմակ ու փաղփող՝

Կուգան մեջտեղը բակին և բոլորապ կդառնան
Առագաստներ՝ բռնըված փոթորիկե մը ներքին,
Պտուտքելով ամեն մեկն իր առանցքին վրա միայն
Ու ջանալով բոցըվիլ, թռիլ, հասնի՜լ երկինքին։

Խաչյալներու պես շարժուն՝ դե՛մք շրջըված, ա՛չք անթարթ,
Անոնք երկար կդառնան ու կհևան ծանրորեն...
Կհևա սրինգն ալ տակավ... կըլլա հառաչ մը հանդարտ...
Եվ կանհետին ճամփորդներն, որ ինկա՜ծ են երկինքեն...։

# ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԻՂՁ ՄԸ

*Ի՜նչպես այս իղձն էր ծներ,— կուզեի սուրբ ըլլալ ես,*
*Բայց ճշմարիտ, իրական, սրբոց շարքին մեջ դասված.*
*Սուրբի կյանքով մը ապրած, Նահատակված սուրբի պես,*
*Սուրբ մը՝ գացող ու տեսնող արքայության մեջ աստված։*

*Եվ կըսեի, թե միակ մեղք մ'արգիլեր պիտի զիս*
*Սուրբ ըլլալե, և այդ մեղքն էի գործած ես գուցե՝*
*Այն ատեն ութ տարեկան... Ու գոցած ձեռքս երեսիս՝*
*Օր մը, դասի միջոցին, լացի՜ վախե ու ցավե։*

*Եվ ուրիշ օր մը մինչդեռ կույր մուրացիկ մը՝ հացի*
*Տոպրակը կախ իր ուսեն՝ մեր տան դիմացն էր կեցեր,*
*Գացի շիտակ իր վրա, քաշեցի ձեռքն ու պագի։*

*Կաղոթեի հորս հետ ամեն առտու և գիշեր.*
*Կխորհեի ամեն տեղ գալիք կյանքիս, մահվանս ալ...*
*Տղա էի, կուզեի ես այն ատեն սուրբ ըլլալ...*

## Ի՞ՆՉ ԿԸՆԵՍ, ՔԵՐԹՈՂ

Ի՞նչ կընես, քերթո՛ղ, Հոգիին համար,
Ջերմությո՛ւն ու լույս, որ վերեն իջած՝
Հոգիիդ կրակ ու ճաճանչ կըլլար...
Որքա՜ն արգելքներ դուն անոր դիմաց,
Պատեր, պատնեշներ կանգներ ես հիմա,
Որպեսզի ան քեզ հասնիլ չկրնա։

Օ՜հ, ավելի գեշ, երբ մեջդ է ան,
Երբ օրերով կգործես այնպես,
Ինչպես հոգեզուրկ լարված մեքենան,
Երբ ճանչնալով զայն կբանտարկես
Եվ չես թողուր, որ քու կյանքիդ վրա
Ան իբրև աղբյուր մը հորդի, մնա։

Քերթո՛ղ, մոտեցիր ու ըսեմ քեզի
Գաղտուկ, ականջիդ, քեզ համար միայն,
Թե իրոք դուն ես, դուն անհուն հոգի՝
Նյութին դեմ անհուն, և քու գործդ է զայն
Թափանցել քեզմով, և այս պատճառավ
Պետք է մնաս Հոգվույն հաղորդիչը լավ...։

## ՏԱՂ ԳԻՏՆՈՑ

*Ո՛վ քիմիկոս, ո՛վ ֆիզիկոս, թույլ տվեք,*
*Որ ձեզ պըվետ մը ողջունե հուզումով*
*Եվ իր ճակտեն, զոր կբռնե բարձր ու սեգ,*
*Կաղմե փառքին ձեր պատվանդանն ապահով...*

*Ո՛վ դուք լուծող և վերլուծող անընդհատ,*
*Դուք ամեն նյութ միացընող և բաժնող,*
*Բանտարկյալ ուժն ընող լույս մը ազատ,*
*Հետո վարող զայն իբրև հուր, իբրև շող.*

*Իբր երիվար, իբրև կայծակ, իբրև գիր...*
*Հրաշագործ հազար անգամ ավելի*
*Քան հին դարուց մոգն ամենեն անվանի...*

*Ո՛վ ֆիզիկոս, ո՛վ քիմիկոս, ծնրադիր*
*Ձեզ կաղերսեմ. ըրեք նոր գյուտ մը հիմա,*
*Հոգին՝ Մտքին, Միտքը Հոգվույն միանա...*

***

Ձմեռ հիմա՝ իր ցուրտով
Ու կարճությամբն օրերուն,
Տաքին, լույսի՜ն ենք անհուն։

Ճամփաներ գոց... Սառ և սով...
Ու ալ բնավ ո՛չ գարուն,
Ո՛չ ամառ այս աչքերուն։

Օրացույցին հակառակ՝
Գարուն, ամա՜ռ էր երեկ,
Սրտին, մարմնույն հոգնաբեկ։

Բայց ան կատակ էր, կատա՜կ,
Հիմա՝ ձմեռ, երեկո՜,
Ու մեծ գիշե՜ր քիչ հետո...

## ՄՈՌՆԱԼ

*Մոռնա՛լ, մոռնա՛լ... Մեկը մյուսին հետևեն՝*
*Մոռնալ բոլոր ճամփաներն,*
*Ուրկե անցար և կամ չանցար... ու մոռնա՛լ*
*Եղածը հոն, չեղածն ալ...*

*Ա՛լ չտանիլ, չքաշքշել քեզի հետ*
*Անցյալըդ՝ լուռ առհավետ,*
*Եվ քեզ այնտեղ՝ քեզմե շքեղ, քեզմե մեծ,*
*Զոր կյանքն ըլլալ չներեց...*

*Թողնել աշխարհն՝ իր ծանրությամբ կապարի*
*Նստած մտքիդ, սրտիդ վրա...*
*Դիտել արևն, որ քիչ առ քիչ կմարի,*

*Եվ սպասել նոր Առտըվան, որ շողա*
*Թերևս, փակված աչքերուդ...*
*— Մա՛հ, բարի-լույս քեզի և կամ՝ բարի-մութ...*

## ՏԱՂ ԱՐԵՎԻՆ

*Քեզ գիշերին մեջեն կոչեմ, մեծ Արև՛,*
*Որ ամեն բան կընես ինքզինքը քեզմով,*
*Որ աստուծո դեմքն ես կարծես մեր վերև՝*
*Անոր նման մենե հեռու և մեր քով...*

*Քեզ գիշերին մեջեն կոչեմ, Արև հին,*
*Դուն գիշերին ալ հեղինակը միակ,*
*Ինչպես աստված է ստեղծիչն ալ չարին,*
*Երբ դուն՝ աշխարհն, ու ան զմեզ կմոռնաք...*

*Սակայն կոչեմ, կոչեմ զքեզ, Արև՛ նոր,*
*Խոր գիշերին մեջեն, որ արդ պաշարեր*
*Է իմ հոգիս և անհամար հոգիներ...*

*Ու կաղաչեմ, ժողված ուժերըս բոլոր,*
*Որ այս անհուն դաժան խավարը ճեղքես*
*Ել բարձրանա նորեն բոց մ՚ալ իմ սրտես...*

## ՏԱՂ ԱՌ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ

*Ինչպես ծոցեն գիշերվան մը խոր խավար, կույր ու ձյութ,*
*Որ կպատե դաշտն անծայր, մարդը գացող այդ դաշտին*
*Վրա մինակ, մոլորած՝ կհիշե հույսն ահագին,*
*Այնպես զքեզ կհիշեմ, ուրախությո՜ւն անստգյուտ...*

*Ուրախություն՝ լեցընող երկինքն, երկիրը ամբողջ,*
*Քեզի կուղղեմ, ո՜վ միակ զտիչ, մաքրիչ, ստեղծիչ,*
*Տխրությենեն իմ հոգվույս տաղն այս քամված քիչ առ քիչ,*
*Այս վարդենին՝ սև հողեն բուսած բողբոջ առ բողբոջ...*

*Ինչքան հեռու ալ ըլլաս ետին մռայլ ամպերու,*
*Հաղթական երգդ ինչքան ըլլա թաղված, խեղդըված*
*Ժխորին մեջ որոտման, հեծեծանքի, փլուզմանց,—*

*Ուրախությո՛ւն, բայց կաս դուն և հուրը, որ կվերու*
*Այսօր բոլոր դժոխքի բերաններեն երկրի վրա՝*
*Լոկ շքախումբ մ՚է կարմիր, որ ընդ առաջ քեզ կուգա...։*

## ԿԱՅՄԵՐ

Տուներուն վրա կայմեր, կայմեր, կայմեր ահա…
Անառագաստ կճամփորդեն տուներն հիմա՝
Երկար ու կարճ, կարճ ու միջին ալյաց վրա,
Լոկ բարակուկ այդ կայմերով՝ տուներն հսկա…

Կճամփորդե ամեն մեկ հարկ իր ընտրանքով,
Առած իր մեջ ուղևորներ, որք ծովե ծով
Կերթան, նստած մելամաղձիկ լույսի մը քով,
Սևեռականչ՝ ալիքներուն մարտախռով…

Եվ կնայիմ, կնայիմ վեր այդ երերուն,
Դեղին կամ գորշ, շեկ կամ շիտակ ձողիկներուն,
Զոր կծեծեն ամեն վայրկյան ալիք անհուն՝

Ալի՛ք անհուն հիմարության, ալի՛ք արյան…
Եվ կղիմեմ ես ձողերուն իմաստության,
Որ… ծակելով աչքը մարդոց, զանոնք բանան…

# ՀԱՅԵՐԳՈՒԹՅՈՒՆ

# Ա ՇՐՋԱՆ. 1901—1908

## ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

*Սիրեցինք քեզ նախ՝ Դրոշակի՜ մը պես...*
*Մեզ ըսեր էին, երբ փոքր էինք դեռ,*
*Թե լերանց կատարն էիր պանծացեր,*
*Թե ծալլեր, նետեր էին հիմա քեզ,*
*Բայց թե պիտի գար այն օրն, ուր նորեն*
*Պիտի ծեծվեիր դուն լայն հովերեն*
*Եվ լուսավորեր պիտի ցոլքդ մեզ...*
*Սիրեցինք քեզ նախ՝ Դրոշակի մը պես։*

*Իբրև Ուռենի՜ մը քեզ սիրեցինք...*
*Հերարձակ գլուխդ օրրելով մեղմիվ՝*
*Կողբայիր կոտրած ճյուղերդ անթիվ...*
*Կանցնեին քովեդ ժանտադեմ անձինք՝*
*Հաստաբուն կոճղիդ զարնելով կացին...*
*Զքեզ մեր աչքերը ծով-ծով լացին,*
*Երբ այլք ոստերեդ շինեցին սրինգ...*
*Իբրև Ուռենի մը քեզ սիրեցինք։*
*Սիրեցինք զքեզ, վրիժառու Դանա՛կ...*
*Հողին տակն էիր, երբ ձեռք մը անտես*
*Քեզ մեջտեղ հանեց, շողացուց զքեզ...*

Դահիճը զգաց քեզ կոկորդին տակ
Եվ պահ մը դողաց, բայց պահ մը միայն…
Կատրեցար, ժանգոտ դանակ, նույն հետայն,
Եվ քեզ ծաղրելով թողուցին մինակ…
Սիրեցինք զքեզ, վրիժառու Դանա՛կ…։

Կսիրենք քեզ արդ, հայրենի՛ք, Շղթա՛,
Որ ըմբոստացման կմղես զմեզ…
Մեր միսերուն մեջ, մեր վզին շուրջն ես,
Եվ ամեն շարժում, զոր կընենք հիմա,
Մեզ կդալարե ցավերով անդութ…
Բայց պիտի սիրենք հետքն ալ վերքերուդ,
Երբ պիտի ըլլաս մանյակ մի ծաղկյա…
Կսիրենք քեզ արդ, հայրենի՛ք, Շղթա՛…։

## ՍՈՒՐԲ ԲԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Գառնուկներուն համբերությունը հատավ ա՛լ.
Երբե՞ն ի վեր և մինչև ե՞րբ գառնուկ ըլլալ...
Տաճարներուն աղավնիներն ալ սրբազոհ
Կորագլուխ իրենց բախտեն եղան դժգոհ...

Մասնակցեցան շուշանները անոնց քենին.
Գալարեցին մաքրասարսուռ, հեգ հասակնին...
Մանիշակներն ալ դարձուցին գլուխնին վեր
Եվ մութին մեջ տարածեցին բարկ բուրումներ...

(Ո՜վ հեղգությունը արդարոց և հին սրբոց.
Հերի՛ք, որչափ դահճին ձեռքերը պագինք մենք.
Մեր կարգին մենք ալ արդ դահիճ ըլլալ կուզենք...)։

Եվ գառնուկները գա՛յլ եղան, տատրակներն՝ օ՛ձ.
Եվ շուշանները փոխվեցան ժանտափուշի.
Եվ մոլեխինդ մանիշակաց տեղ արդ կաճի...։

# ՀԱՅՐԵՆԻ ԶՐՈՒՅՑՆԵՐՈՎ

## Ա.

## ԱՐՇԱԿ Ա.-Ի ԿՈԹՈՂԸ

*Ծովեզերքին վրա կանգուն՝ կերևի սյուն մ'ավերակ,*
*Որուն գագաթը մինչև կծփծփա ձյունափառ,*
*Կղկղմի աղտը տակավ իր անպաշտպան ոտքին տակ,*
*Մարդը հոն խուլ կնեւա և շունը՝ ժայթք անսպառ....*

*Բայց լեռներին հեռավոր կհասնի վեհ պարմանին՝*
*Թեթևաքայլ, ամբաղեն, բազուկներով օձաուտ,*
*Եվ մարմարին լուսափայլ լանջքին վրա անօգուտ՝*
*Մեկ հարվածով կմխե հանկարծ նիզակը փառքին....*

*Գիշերվան մեջ կայծակներ գլխուն ճաճանչ թող սփռեն,*
*Եվ ամբոխներ երկյուղած զայն պաշտելու թող գան միշտ...*
*Մինչև որ օր մ'ալ ահա՝ նոր ամբոխներ ամբարիշտ*
*Ալյաց ներքև գլորեն կոթողն ու փառքը իրեն....*

Բ

## ՏՐԴԱՏ Ա-Ի ԿԱՌՔԸ

*Տե՛ս, նենգավոր քու վրանիդ մուտքին առջև*
*Կառք մը, որուն անիվներն են երկու արև,*
*Երիվարներն ալ սև ամպեր... տե՛ս, ո՛վ նախկին*

*Արքաներու հզոր սերունդ, քեզ վերստին*
*Կկանչե կառքն արշալույսներու... ո՜ն, թող ճամփան*
*Քեզ առաջին տեսնե, ըլլա միշտ անխափան...։*

*Մինչև երկինք կելլե փոշին ակոսներուդ,*
*Որուն հետև ախոյաններդ կգալարվին.*
*Դուն՝ ձիերուդ վարն երամը խմբովին...։*

*Եվ թե ըլլա, որ նեղ ճամփու մը մեջ ժեռուտ*
*Քեզ նետե վար դավ կամ դիպված մը դժպատեհ,*
*Սուրա՛ և կառքդ անիվներեն իսկ կալանե...։*

Դ

## ԱՐՏԱՇԵՍ Բ -Ի ԳԵՐԵԶՄԱՆԸ

*Ահա նորեն բացվեցավ գերեզմանին հայրենի*
*Երախը լայն, ուր ինկան անթիվ քաջեր ինքնազոհ...*
*Նորոգվեցավ թարմ արյամբ պատմուճանը ծիրանի*
*Եվ սարսռացին անոր տակ ոսկորները հնածո...*

*Արքայորդի՛, միայն դուն խոժոռադեմ, սեպաձև ․*
*Կանգնած եզերքը փոսին՝ մութ խորհուրդներ կորոճաս...*
*Ընկղմի շուրջդ աշխարհ և արևը քեզի սև*
*Կերևա, ռումբ մը ինչպես կործանումի վերահաս...*

*Արքայորդի՛, օ՜ն, թոթվե՛ քու արտմությունդ նսակյան...*
*Եղերամարք թող հեծեն և թող գանձեր մեծագին*
*Թաղվին անհետ և ըլլան հաղթանշանն իր փառքին...*

*Դեռ թաց աչքեր, տե՛ս, ինչպես հուսալից քեզ կդառնան*
*Եվ կորոնեն սուրն աջիդ...։ Օ՜ն, քաշե՛ վայն և քեզ հետ՝*
*Մութ հոգիները վարե՛ դեպ հորիզոնն արփավետ...։*

Դ

## ԱՐՏԱՎԱԶԴ Բ

Սալերուն վրա կիրակնօրյա հարվածներ
Այլևս թո՛ղ չզարնըվին...։ Կեր տարեք
Մասյաց այրին առջև, որուն ներսը ծեր,
Հսկա զամփռներ կոռնան գիշեր և ցերեկ...։

Թո՛ղ պոռանան անոնք և թո՛ղ վերջապես
Կրծեն շղթան բանտարկյալին դարավոր...
Ո՛վ փրկիչներ, անթիվ աչքեր գաղտնապես
Կհրահրեն ձեր անդուլ ճիգը այսօր...

Եվ յա՛լ լուծվի թո՛ղ հորն անեծքը համառ.
Իր փոսին մեջ նետված սա՛ նոր զոհերով,
Եվ հայտնվի որդույն հասակը պայծառ
Մեր դաշտերուն վրա՝ դարձած արյան ծով։

Հայ աշխարհի հուներուն վրա անպաշտպան
Իր տեղերուն կայծակն անվերջ թո՛ղ շողա,
Թո՛ղ թշնամվույն ցանցերն իր շուրջը իյնան
Եվ թո՛ղ կանգնե հայրերուն գահն հնօրյա...։

## Ե

## ՎԱՐԱԶԴԱՏ

Ավելի սրտոտ, քան նետն աղեղին,
Ավելի աշխույժ, քան իր հույսն անսանձ,
Զոր տարիներով սնուց կաթողին
Օտար երկընքի մը տակ անթափանց
Եվ օտար ու ցուրտ աչքերու ներքև,
Հիմա, դաշտերն ու անտառներն
Կտրած և իր արշավին առջև
Կկենա՝ պատրաստ մըրրկոտ երեն...։

Գիտե, թե հեռուն դահն Արշակունյաց
Բացած է թափուր գահուկներն իրեն.
Թե իրեն նույնպես՝ պատեր լայնաբաց
Կսպասեն հեռու հայրենի երկրեն.
Կժպտին ահա Մասիսք երկուքին,
Վեհաշարժ սարիք կարծես մեծ բարև
Մը կուտան իրեն, մինչ Եփրատն անդին
Կքակե իր դեմ գոտին հրանձրև...

Ա՛հ, չո՛ւն, հիմա չո՛ւն, հայերու ատալած,
Իշխանը հայոց հացուր իր փառքին...
Բայց հանկարծ, ժայռեն սա՛ սեպաղանդված
Ժանտահոտ դեմքեր դուրս կսողոսկին
Եվ իր լուսեղեն ճամփան կկտրեն...
Կթոթվե պանոնք իր շուրջ՝ վերթ տերև
Եվ ահեղ թափով մը կոտանու գետնեն՝
Հրաշալի՞ կամուրջ Եփրատի վերև...

Գ

## ՀԱՐԱԼԵԶՆԵՐԸ

*Երբեմնական ո՞ւր մեր դաշտերը օրհնացան,*
*Բերրի դաշտե՛ր, որ աշնայնի հովին ներքև*
*Ձեր դեղնիփառ ծովն հասկերուն՝ ծածան-ծածան*
*Երկնքին տակ վետվետելով, երկնապարգև*

*Ձեր հունձքն առատ հայ աշխարհին կըբաշխեիք...*
*Դժբախտ դաշտե՛ր, իր քրտինքեն ետք, զոր սիրով*
*Գյուղացին ձեզ կընվիրեր, իր կարմըրիկ*
*Արյունը ես վազեց ձեր վրա հեղեղներով...*

*Եվ ա՛լ անծայր գերեզմանոց մը դուք դարձաք,*
*Մռայլ դաշտե՛ր... և գիշերվան շաղը չքնաղ*
*Իբրև արցունք մնաց մինչև արևածագ՝*
*Ձեզ ծածկող մեռելներուն վրա անթաղ։*

*Սակայն, դաշտե՛ր, Հայոց դաշտեր, զգացի՞ք դուք,*
*Այդ ահավոր գիշերներուն մեջ անթափանց,*
*Երբ կպատեր ձեզ խավարը մեծասուգ*
*Եվ կլռեր հոգեվարքի ճիչը մանկանց՝*

*Զգացի՞ք դուք ձեր հուներեն լայնատարած*
*Հանկարծակի խուժող ոհմակ մը խոլարշավ,*

Սև շուներու անձայն ոհմակ մը, որ սուրաց
Եվ մեր անթիվ դիակներուն մոտ կանգնեցավ։

Եվ չճանչցա՞ք հարալեզները հին Հայոց,
Որ Մասիսի կիրճերեն դուրս, հոլով-հոլով,
Դեպի վիրենք կանչող դիերը բազմախոց
Էին եկած՝ հոտոտելով ու լիզելով...

Դաշտե՛ր Հայոց, մեր զոհերուն համար պետք չեն
Ո՛չ դամբարան, ո՛չ ալ ծառեր խիր հովանի...
Հարալեզներ մենք կշինենք մեր սրտերեն
Ու օր մ՚ոտքի ամբողջ բանակը կկանգնի...

Է

## ԳՈՂԹԱՆ ԵՐԳԻՉՆԵՐ

Տավիղն առկախ իրենց ուսեն՝ կերթային
Գյուղե ի գյուղ, զվարթ, անհոգ, աներկյուղ.
Ծուղուռներեն մեղեդիներ դաշտային
Կսորվեին ու գիշերը՝ նորընձյուղ

Խոտերուն մեջ կերգեին գովքն Աստղիկին.
Առտուն նորեն ճամփա ինկած, արևով
Արդեն գինով, գյուղի մը մոտ, երբ այգին
Կտեսնեին՝ կմտնեին անոր ղով

Ցանցերուն մեջ և մեղրացած ողկույզներ
Կքաղվեին անոնց շրթանց վրա թովիչ.
Որթատունկն ալ իր ոստերով կպճներ
Անոնց գլուխն, որ կհակեր քիչ առ քիչ։

Ասպնջական դուռ մը հեռուն կբացվեր
Դեմը անոնց։ Կանանց, տղոց՝ ցնծություն...
Իր անկյունեն կօրհներ նանին ալեհեր
Եվ կխայտար, կվժար տունը համբուն։

Սեղանն առատ, ինչպես գինին ալ աշխույժ
Կգրգռեին երգիչներուն խանդն անմեռ,
Կհեծեծեր տավիղն՝ իբրև սիրտ մ'անբույժ
Եվ երգերեն միշտ սփոփանք կհոսեր...

Գողթան երգիչն ավանդապահն է ցեղին.
Վահագնի ծնունդ, Արտաշեսի հարսանիք
Դարե ի դար անոր երգին մեջ կապրին...
Մատա՜ղ ձեզի, երգիչնե՛ր, դո՛ւք ալ ապրիք...

***

Լքված ու լուռ ճամփաներե՛ն, ո՛չ տավիղ
Եվ ո՛չ քնար ունեն առկախ, այլ շեփոր
Մը բռնած վեր, Գողթան Երգչաց շառավիղ
Մ’ահա թերևս, հնչեցնելով մարտագոռ

Նշանակ մ’որ կսարսե ժայռը լերանց՝
Երազաքայլ կանցնի երգիչ մը հիմա...
Ու մինչ շատեր մայրաներու մեջ պահված
Կկապեն լոկ իրենց վերքերն արյունլըվա՝

Արի տղան շարունակող հին կավին
Նոր հոգիներ, նոր մարտիկներ կկանչե,
Ու պիտի սա՜ մինչև իր շունչը վերջին,
Որպեսզի ձայնն ամեն անկյուն թափանցե...

Ը

# Գ Ե Ղ Ո Ն

## ՍՈՍՅԱՑ ԱՆՏԱՌԻՆ

*Հայոց երկրին մեջ մի՜շտ կապրին*
*Մեծ սոսիներն արմենավանդ...*
*Եվ լռությանն ու ստվերին*
*Մեջտեղ անոնց՝ անարգավանդ*
*Օրե մը ետք քերթողն, երբ խանդ*
*Ու ներշնչում խնդրել կուգա,*
*Խռովահույզ ճյուղերն աստ-անդ*
*Կփսփսան. «Դո՞ւն ես, արքա՜...»։*

*Կանցնին, կանցնին օրն ու տարին*
*Հալածական...։ Դաշտ, դարավանդ*
*Եվ լեռներուն ալ կատարին*
*Ձյունը մաքուր զերթ ադամանդ*
*Կլրեն հետքն անոնց հիվանդ,*
*Ծանր քայլին....։ Մինչ հոս հսկա*
*Ծառերն, հույսով միշտ անվկանդ՝*
*Կփսփսան. «Դո՞ւն ես, արքա՜...»։*

*Սև աղետի մը նախօրին*
*Անտառն հուզված է մանավանդ*
*Եվ տխրությամբ սոսիք կօրրին...*

Օ՜հ, թշնամույն ստվերը ժանտ
Տուներն, ճյուղերը քարուքանդ...
— Բայց մինչ թավուտը կսգա,
Ահա ձայներ անհնազանդ
Կփսփսան. «Դո՞ւն ես, արքա՜...»։

## ԶՈՆ

Իշխա՛ն, անհայտ դեռ քու անվանդ
Հայորդիները ապագա
Ուխտած պաշտում մը մոլեռանդ՝
Կաղաղակեն. «Դո՛ւն ես, արքա...»։

## Թ

# Գ Ե Ղ Ո Ն

## ՎԱՆԱ ՏԱՌԵԽԻՆ ԵՎ ԿԱԽԵԹԻ ԳԻՆԻԻՆ

*Դրախտը անշուշտ հաստատված էր հոդ,*
*Բարեբե՛ր երկիր, դժբա՛խտ հայրենիք…*
*Հունձքդ առոք էր, մարգդ քաղցրահոտ*
*Եվ վրադ ապրող մարդոց երջանիկ՝*
*Ամեն օր տոն էր, ամեն օր հարսնիք…*
*Արյունը հողին և բերքը ծովին*
*Ճաշակելով հար՝ կորհներին նախնիք*
*Վանա տառեխն ու Կախեթի գինին…*

*Զկոխկռտված չմնաց արոտ,—*
*Ամեն անկյունե գազանը ժանիք*
*Ցուցուց և քանդեց,— և ամեն ջրոտ*
*Դաշտերը չորցան. ամեն մեկ տանիք*
*Սուգի քող կապեց. մանկուք, պատանիք*
*Երգելը մոռցան, և իրենց նանին*
*Ա՛լ մոռցավ բերել մառանեն աննիգ՝*
*Վանա տառեխն ու Կախեթի գինին…*

*Ո՛վ երջանկության աննվաճ կարոտ…*
*Լույս մը կծագի ճամփուն վրա մենիկ…*
*Ահա կդառնա հոտը հովվին մոտ*

Եվ ահա այգին՝ մանկամարդ կնիկ,
Կզգա իր ծիծերն հույզով նորեն լիք...
Եվ սեղաններուն վրա կներևին՝
Մինչդեռ օրհնությամբ, քաշե՛ր, կհիշվիք,
Վանա տառեխն ու Կախեթի գինին։

## Զ Ո Ն

Տարա՛, դեր իշխան Շիրակա, հերի՛ք
Որքան ամբարներդ պարապ հեծեցին,
Ողջունե՛ դարձյալ, երկնային բարիք՝
Վանա տառեխն ու Կախեթի գինին...

## ՎԵՐԱԴԱՐՁ

*Առավոտուն, երբ վերջին աստղն ալ կդառնա*
*Ծոցն երկնքին մեղմաբաց,*
*Զեփյուռին հետ թեթևորեն ահա ճամփա*
*Էին քայլերս ինկած...*
*Օ՜, մինչև ո՞ւր... և հոգնությունը կրկին է*
*Աննպատակ քայլողին*
*Օտարության ուղիներուն մեջը դժնե,*
*Որոնք հաճախ կողողվին*
*Կարոտի լուռ և գետնաբույս հեղեղներեն...*
*Իզուր ցավս խաբելու*
*Համար ժպտիլ լերանց, դաշտաց ես վատորեն*
*Փորձեր էի. անհլու՝*
*Անծանոթին, անոնք չէին ինծի ժպտեր...*
*Մերթ պսակներ կուզեի*
*Հյուսել ճամփուն ծաղիկներեն. հարսնուկ, պտեր,*
*Եղևոր և խնկունի*
*Ու վայրի վարդ ու երիցուկ մարգարտափայլ*
*Խառնած իրար՝ մատներուս*
*Կցանկայի ճարտարությունն ինծի ցույց տալ.*
*Անշուշտ մատներս ալ անուս*
*Անոնց բնիկ գեղեցկության՝ երբեք զիս գոհ*
*Չէին թողուր լիովին.*
*Կնետեի, իմ անհանգիստ հոգիիս զոհ՝*
*Զանոնք անցնող լայն հովին...*

Երբ ցերեկվան մեջտեղ, ծարավ ու անոթի,
Հունձքին կեսը կատարած,
Մշակն արտին մեջ, արևին տակ կնստի՝
Կապոցեն կոնտ մը չոր հաց
Կհանե դուրս և իր քաղցած հասկը հերվան
Կկազդուրե զինք հիմա,
Սափորեն ալ ջուրն իր ակին կխմե ան
Եվ հանգչելու կերկննա.
Մինչդեռ օտարն իր հագուրդին մեջը խռով
Մ'անհագ զգա պիտի միշտ
Եվ չունենա պիտի հոգին անդորր և ո՛չ
Ա՛լ սիրտը սեր մը անվիշտ...։

Պիտի անշուշտ անվերջորեն դեռ երթայի
Այսպես հեռու, մի՛շտ հեռու,
Երբ լսեցի իմ ցերեկիս մեջ ամայի
Ձայն մը դանդաղ զանգերու,
Եվ առնելով գլուխս վեր՝ տեսա հանկարծ
Քառուղիի մը վրա
Ինքզինքս հասած. քառուղի մը, որուն մեր հարց
Ճիմաքարերն հնօրյա
Զարդն ու պարծանքն էին ամբողջ...։ Ուրկե՞ այսպես
Դարձեր էի դեպի ետ,
Արյան պեղած ո՞ր ակոսեն անգիտապես
Քայլերս զիս արփավետ
Դեպի երկիրս էին բերեր... Սակայն արև
Թե գորշ ամպեր՝ նույն նվաղ
Ու տխուր լույսն ամեն տխուր իրի վերև
Կկախեին... Անսվաղ
Ամբոխ մը հոն՝ հալածական երեներու
Ջոկի մը պես կթափեր...
Եվ խանձի հոտ մը դեռ այրող իրենց երկու
Կտոր դույքեն կելլեր վեր...

Հոգիս հանկարծ թոթվըվեցավ իր խոնջենքեն,
Եվ զորացավ ալ կարծես,
Եվ զգալով, որ զոհերուն անդարձորեն
Կկազմեի մասը ես,
Ան որոշեց, անոնց համար ինչպես ինծի,
Ըլլալ բախտին նման խիստ
Եվ չունենալ՝ մինչև անիվը շրջի,
Ո՛չ նոր մեկնում, ո՛չ հանգիստ...

# Բ ՇՐՋԱՆ. 1909—1915

## Տ Ա Ղ

### ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎԻՆ

*Քե՛զ, Հայ Լեզո՛ւ, կսիրեմ մրգաստանի մը նման...*
*Մեր անցյալին թանձրախիտ ստվերներուն մեջ կարծես*
*Մեյ-մեկ պտուղ՝ քու բոլոր բառերդ ինձի կերևան,*
*Որոնց մեջեն կքալեմ ու կքաղեմ զանոնք ես։*

*Մրգաստանի մը նման կսիրեմ քեզ, Հայ Լեզո՛ւ...*
*Մեր հայրենի պալատեն, պարտեզներեն մնացորդ՝*
*Դալարագեղ դուն պուրա՛կ, որ դիմացար դարերու*
*Եվ կմընաս միշտ առույգ, հին ավիշով կենսահորդ։*

*Ծառերուդ մեջ հովանուտ կերթամ խինդով մ'անսահման,*
*Արմատներուդ, ճյուղերուդ վրա նայելով հիացիկ,*
*Զարմանալով, թե ինչպե՞ս դուն մնացիր, երբ սաստիկ*
*Քամին քու շուրջըդ փչեց և տապալեց ամեն բան։*

*Մեյ-մեկ պտուղ գույնզգույն՝ ամբողջ բառերդ ահա,*
*Հյութեղ բառերդ, զոր որքան հասունցուցին արևներ,*
*Բառե՛րդ, որոնք այս պահուս շրթանցս վրա եմ բռներ,*
*Բառե՛րդ, որ քիմքըս կօծեն և կսփոփեն սիրտս հիմա...։*

# ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻՆ ՄԵՋ

## Ա

## ՄԱՍԻՍԻՆ

*Դուն Մասի՜սն ես… և կնայիմ, կնայի՜մ քեզ*
*Անհագ աչքով, մինչ սիրտըս ալ աչք մ'է կարծես,*
*Որ ընդլայնած քեզ կգրկե ամբողջապես,*
*Քեզ կծըծե զերթ ջուրը հողն արևակեզ…*

*Կտեսնե՞ս զիս, ո՜վ մեծ վկան մեր անցյալին,*
*Եվ կզգա՞ս թե նայվածքիս մեջ որքան նայվածք*
*Եվ հոգվույս մեջ գահակործան քանի՜ աստվածք*
*Քու անսասան գահիդ առջև կկողկողին…*

*Արշալույսին մեջ ծիրանի կհագնիս դուն,*
*Ջինջ օդին մեջ կծփծըփաս, բայց չես ժպտուն,*
*Քեզ գրաված է հիշատակն հին դարերուն…*

*Եվ տխո՜ւր ես, զի իշխանաց փառապսակ*
*Հսկայաքայլ տեսար անցնիլն ոտքերուդ տակ*
*Եվ զի հույսի հորիզոններն են այժըմ փակ…*

## Բ

## ԱՎԵՐԱԿՆԵՐԸ

*Իզո՜ւր, ավա՜ղ...։ Դարերն խապառ անցեր են*
*Եվ հազիվ թե ավերակներ են թողեր,*
*Հետքեր միայն անոնց կյանքեն ու փառքեն,*
*Որ էր երբեմն հոս կապրեին իբրև տեր...*

*Սավառնաթև կա հիշատակ մը այստեղ՝*
*Մեծ տրտմությամբ մը ծանրացած, մթընցած...*
*Կնետե վար անցյալն իր շուքը՝ ահեղ՝*
*Իր օթևան սեպ սարերեն ամպամած...*

*Քանի մը քար, քանի մը բառ հոս ու հոն՝*
*Տապանագիր գերեզմանի մը անծայր,*
*Եվ մինչ ծռած՝ կուզես կախել սիրտդ ի ձոն*

*Ազատ արանց, որ հայրերուդ էին հայր,*
*Ո՜վ խեղճ ստրուկ, անցյալը չի ճանչնար քեզ,*
*Եվ ձեռքիդ մեջ սիրտդ փոշի՜ կգտնես...։*

Դ

## ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ

*Երկնի անթիվ աստղերեն մերն է միայն անիկա...*
*Ամեն գիշեր վերը, հո՛ն, Արագածի գլխուն վրա*
*Ան կշողա առանձին, այնքան անջատ մյուսներեն,*
*Որ ուրիշ ձեռք մը կարծես զանի վառեց գաղտնորեն։*

*Զանի վառեց ու կախեց հո՛ն, մեզ համար, հավիտյան...*
*Ան կանթեղն է՝ լույս առած Լուսավորչեն Հայության,*
*Անկե լցված, անոր ջինջ արտասուքեն՝ յուղի տեղ,*
*Պլպլացող քաղցրությամբ, պլպլալիք միշտ կանթեղ...*

*Այդպես հավտաց ու այդպես դեռ կհավտա հայ հոգին,*
*Որ միշտ դարձավ, նայեցավ և հառեցավ անձկագին*
*Աստուն ձյունոտ Մասիսին և գիշերներն ալ անոր...*

*Այդպես և ե՛ս, ո՛վ մեծ սուրբ, հավատարծարծ կանթեղիդ*
*Զգացի, որ հոգվույս մեջ կծագեր շողը վճիտ*
*Եվ կմեծնա՜ր, կմեծնա՜ր, մինչև կըլլա՜ր Այգ մը նոր...*

## Դ

## ՀՐԱԶԴԱՆ

*Հոն Հրազդանն է հիմա... Եվ իր դոռումը ահեղ*
*Կլեցընե տարածությունը շուրջի.*
*Ո՞վ խուլ ժխոր, որ օդին մաքրության մեջ լուսահեղ՝*
*Ջերթ բզզյուն մը մեղվանոցի կթռչի։*

*Կմոտենաս և տակավ կհամակե ձայնը քեզ,*
*Կմտնե ներս ականջներեդ և սրտեդ...*
*Մինչ դաշտին մեջ ալ կարծես կծովանա փրփրադեզ*
*Եվ կընթանա քեզ վարելով իրեն հետ։*

*Իջած է մութը հիմա Մասիսի հին երկինքեն,*
*Ուրկե այնքա՞ն արևներ ալ բարձրացան.*
*Իջա՞ծ է լուռ ու հանդարտ, փոշիի պես ձյունեղեն,*
*Կամ անցյալի իբրև աճյո՞ւն սրբազան...*

*Երբ կամուրջեն անցնելով ա՛լ կհասնիս Երևան՝*
*Գետին ալմուկն արբեցուցած է զքեզ...*
*Իր ջրվեժող ալյաց տակ անհետացած է ներկան,*
*Պատմության մեջ, պապերուդ հետ կքալես...*

*Եվ ի՞նչ հմայք քիչ հետո, երբ հովվատունը Հայոց,*
*Ուր կմտնես իբրև զավակդ հայրենի,*

Բերդի մը պես կկենա գետին վերև ցասմնակոծ
Եվ այդ անվերջ մռընչյունով կօրորվի...

Գիշերվան մեջ կմնաս պատշգամին վրա անոր...
Ցերեկվընե Մասիսն աչքիդ մեջ է դեռ...
Եվ կխորհիս. «Հայության Մասիս իրանն է հըզոր,
Եվ Հրազդան՝ իր աղաղակը անմեռ...»։

## Ե

## ԶՎԱՐԹՆՈՑ ՏԱՃԱՐԻՆ ՄԵՋ

*Այս տաճարին մեջ, ո՛վ տեր, աղոթեցին անոնք, որ*
*Իրենց ցավի ծուխին խառն՝ հրճվանքի բոց մ'ունեին...*
*Իրենց մաքուր քրտինքին հետ արյան ուղխ մ'ալ բոսոր*
*Շաղախած էր այս հիմերն ու բուրումին հետ խունկին*

*Կբարձրանար անոնց հոտն ու կսփոփեր միշտ զիրենք...*
*Խաղաղություն ամենուն հոգիին մեջ կտիրեր,*
*Եվ հավատքով մը ամուր ու շրթներով ալ աննենգ՝*
*Մարդիկ քեզ, տե՛ր, կօրհնեին, զի կօրհնեի՛ր զիրենք, տե՛ր...*

*Հիմա այստեղ ծածկըվա՛ծ են դարերու փոշիով*
*Անոնք, որոնք հայրերուս եղան հայրերը ազատ,*
*Անոնք, որ հոս ատենոք ծնրադրեցին քովե քով,*
*Խոնարհեցան, բայց նաև ուղղվեցա՛ն անընդհատ...*

*Մինչդեռ այսօր՝ այս փլած տաճարին շուրջ կտեսնեմ*
*Տարածասփյուռ ամեն կողմ, մինչև հեռուն, շա՛տ հեռուն,*
*Անոնց սերունդը ամբողջ, միշտ ծնրադիր, թախծադեմ...*
*Տե՛ր, արձակե ալ զանոնք ի սեր իրենց պապերուն...։*

# ԴՈՒՆ ՄԵՐԻՆՆ ԵՍ

*Եվ արդ նորեն ես քեզի՝ իբր առտըվան մեջ կյանքիս,*
*Կմտածեմ ուժգնությամբ և ուժովցած կզգամ զիս...*
*Դուն մերի՜նն ես... կբավե այսքանը լոկ, միայն Դո՛ւն,*
*Դո՛ւն մերինն ես.— և ահա անջրպետեն դարերուն*

*Կզգամ դառնալը ինձի և միանալը Քեզմով*
*Իմ պապերուս հողին, որ համակ ուժ ու գորով,*
*Ու փափկություն ու լույս էր, շինված Քեզմե, քու հողեդ,*
*Քու ջինջ օդեդ ու ջուրեդ, հոգի՛ն, որմե շիթ մը գեթ*

*Երակներուս մեջ կապրեր, գաղտնածածուկ կապրե՜ր դեռ*
*Եվ զքեզ գալ գրկելու զիս արժանի դեռ կըներ...*
*Դուն մերի՜նն ես.— թեև քեզ մենե խլած ըլլային,*
*Քեզ կոխկռտած ու քամած և ա՛լ կմախք ցավագին՝*

*Քու մերկ լեռներդ ու դաշտերդ ըլլային լոկ մեզ թողած...*
*Բայց Դուն մերի՜նն ես կըսեմ ու կկրկնեմ երկյուղած,*
*Եվ զերթ տըղա մը հիշող իր նշանածն հեռավոր՝*
*Հրճվանք մ'ու դող մը հանկարծ կլեցընեն սիրտս այսօր...*

## ՎԱՂԸ

Ո՛չ թե Այսօրն երկարելու համար — ո՛չ —
Տգեղ Այսօրն իր տրտմությամբը անհուն՝
Կդալարե հոգիս և ձեռքս դողդոջ
Կվազե վրան քնարիս հին լարերուն...

Ո՛չ, ո՜վ իմ Ազգս, և թե վճիռն այդ ըլլար,
Զոր գիրքին մեջ կանխագրած է աստված,
Ես ուզեի պիտի լալո՜վ, բայց հոժար,
Տեսնել անունդ երկրես իսպառ սրբըված...

Այլ՝ լոկ Վաղվան մտածելով և անոր
Կենդանարար արևներովը թևե՜ս
Հասնելիք նոր հոգիներուն, Ազգին նոր
Երազելով է, որ հիմա ես թևերս

Մութին մեջեն մոլեգնորեն կերկարեմ
Դեպի հեռուն՝ մութ հորիզոնը հղի,
Քնարիս հետ, որուն դեռ երգն է դժխեմ,
Բայց որ կարծես ինքն ալ երկունք մը կապրի,

Ո՜հ, այդ Վաղվան լույսի առատ աղբյուրին,
Որ մեզ ամբողջ պիտի լվար, ողողեր.
Ա՜հ, ուշացած այդ կաթին, որ հայ հոգին
Պիտի նորոգ սնուցաներ, որ, ո՜վ տեր,

Աշխարհին վրա պիտի ներեր մեզի ալ,
Պզտիկ թեպետ սակայն այլոց հավասար՝
Բարձրագլուխ և ինքնիշխան ընթանալ,
Որ հայրենիքը մերին մե՛զ պիտի տար...

Ե՛ս, այդ Վաղվան լույսին, հովին, անձրևին
Եվ անոնց մեջ բացվելիք նոր վարդերուն
Դեռ կերազեմ և կցանկամ հոգևին՝
Որ ազգերու մեջ, ո՜վ իմ Ազգս, ապրիս դուն...

Ի՜նչ քաղցրություն, երջանկություն վերջապես,
Երբ Վաղն առտու երկինք լուսնա մեր վրա...
Եվ օ՜հ, արդե՜ն, մինչ խավարեն կերգեմ ես՝
Քնարիս վրա, տեսե՛ք, ճաճանչ մը կիյնա...։

## ԳԱՐՆԱՆ ԳԻՇԵՐ

Օդը գաղջ է այս գիշեր՝ առագաստի մը նման.
Կարծես հանկարծ երկինքին մեջ աստվածները ոսկի
Եղբայրացած ըլլային... ու ծաղիկներն ոտնակոխ
Մեղմիկ հողի առնեին... և կույսերուն՝ ավետման

Երկնային հրեշտակներ, մեծ շուշաններ ի ձեռին...
Օդն այս գիշեր այնպե՜ս գաղջ, այնպե՜ս քաղցր է ու խաղաղ,
Որ աշխարհի վրա կարծես միայն սերեր կան չքնաղ
Ու շուրթե շուրթ համբույրներ միայն կարծես կթըռին։

Օդը քաղցր է... Եվ ահա՛ այս քաղցրության մեջ անճառ,
Օղակ-օղակ, երկինքեն իջնող օձի մը հանգույն՝
Կիջնա վրաս մտածումն Արհավիրքին գերագույն.

Հո՛ն միլիոններ այս պահուս, կատաղությամբ անսպառ,
Մահ կտեղան միմյանց դեմ... Անթիվ մայրեր հոն կուլան.
Հո՛ն հայ աշխարհը լռիկ կըլլա դամբանն Հայության...

Օդը քաղցր է այս գիշեր՝ առագաստի մը նման...։

## ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

*Ո՜վ իմ նախնիքս, եթե մերթ կպատահի դեռ ձեզի*
*Վերադառնալ երկրի վրա և հետևիլ քայլերուն*
*Անոնց, որոնց սրտին մեջ արյունը ձեր կհոսի,*
*Որոնք ձեզմով են հպարտ և են ձեզմո՛վ ալ նկուն...*

*Ո՜վ դուք, որ մեզ կտեսնեք օրը չեղած խրիկուն*
*Իրարու դեմ տասն անգամ բաժնված տասը մասի,*
*Եվ կտեսնեք, դուք որ այժմ աստվածորեն եք գիտուն՝*
*Թե հին հանցանքն և իր թույնն է, որ մեր մեջ կխոսի...*

*Ըսե՛ք, ո՛վ դուք, եթե չէք զզված ձենե ու մենե*
*Եվ կա աստված մը եթե քաոսին վրա մեր կյանքին,*
*Ըսեք անոր, թե հերի՛ք, ա՛լ այս պատիժն հերի՛ք է...*

*Թե այս սիրտերն, որ իրար կըրզկտեն մոլեգին,*
*Խե՜ղճ են, ո՜րբ են ու իրար սիրտիվ ու պինդ սեղմելով*
*Միայն պիտի գտնեին քիչ մ'սփոփանք ու կորով...։*

# Գ ՇՐՋԱՆ. 1915—1920

## ՊԱՏԵՐԱԶՄ

*Ո՜վ մեծ խաղը մարդուն, անգամ մըն ալ դուն այսպե՜ս*
*Կցնդիս, օդը կ'ելլես և պետք ըլլա պիտի, որ*
*Նորեն երկար տարիներ դուն թխսըվիս, կյանք առնես*
*Եվ աշխարհի վրա բանաս թևերդ աղվոր, լուսավոր...*

*Մարդոց միջև դուն Սիրո, Եղբայրության քաղցր Երա՜զ,*
*Զոր է՛ն քաղցրերը մարդոց, քաղցր հիմարները անշուշտ,*
*Երազեցին, սնուցին դարե ի դար հանապազ*
*Եվ կանգնեցին զերթ պատվար մ'Ոճիրին դեմ արյունռուշտ...*

*Մեծ ու դժբախտ դուն Երա՛զ, աստվածությունը մարդուն,*
*Որ կջանա, չի կրնա՜ր խանձարուրեն դուրս ելլալ,*
*Ինչպե՜ս տխուր է խորհիլ, թե անգամ մ'ալ մեռար դուն...*

*Խաղաղությո՜ւն արդ քեզի. սպանեցին զքեզ ալ,*
*Քե՛զ, որ հիմա կլողաս ճահիճներու մեջ արյան,*
*Խոշտանգըված, խողխողված՝ խեղճ փոքր Հայո՜ւ մը նման...։*

## ՄԱՐՏԱԴԱՇՏԻՆ ՎՐԱ

Թեպետ հեռու ըլլամ հոս կռվո կարմիր դաշտերեն,
Կռվողներեն ալ հեռու՝ երակներուս արյունով,
Թեպետ արյունն իմ ցեղիս, երբ հոսեցավ ուղխորեն,
Իր օգնության փութացող չտեսավ սիրտ մը իր քով,

Բայց խեղճ քնարըս այսօր կսարսռա ինքնիրեն,
Եվ լարերուն մեջ կզգա կարծես մահվան շունչը՝ զով՝
Կծկվի մերթ սոսկմամբ ու կընդլայնի մերթ նորեն,
Կփոթորկի ցասումեն և կհեծե գորովով...։

«Ո՞վ խենթ հոգի, կըսե միտքս, և նաև դո՛ւն, խենթ քնար,
Հանդարտեցե՛ք. ձեզ ի՞նչ փույթ, թե հոն իրար կզենուն
Օտար ազգեր՝ ձեզ օտար շահու, փառքի մը համար...։

Բայց վերջին բառը չառած՝ հոգիս քնարիս մեջ փղձկուն,
Արտասվահեղձ կմնչե. «Մարտադաշտին վրա չկա՞ն
Բյուր հոգիներ՝ Վոլթեռի և Վեռլենի ազգական...»։

## ՔԵԶ ՉՏԵՍԱ

*Քեզ չտեսա, բայց ըսին, թե կայի՛ր դուն, խորհեցա*
*Քեզի հույսով ու ցավով. իմ հոգիիս նախընծա*
*Հունձքը քեզի ղրկեցի մտածումով ու գործով,*
*Ո՜վ հայրենիք, հեռավոր ու անծանոթ սիրո ծով,*
*Որուն մեջ սիրտըս անվերջ, գետի մը պես կհոսի...*
*Բայց զի հեռու էիր դուն, ես շատ անգամ մեկուսի*
*Կասկածեցա, վիճեցա ինքզինքիս հետ առանձին՝*
*Ձիս քեզ կապող հոսանքին կենդանության մասին.*
*Քեզմե ոչինչ, վերջապես, ինծի այլևս կուգար,*
*Բացի խորունկ հեծեծման արձագանքե մը երկար,*
*Եվ կըսեին, թե ինչպե՜ս ուրիշներու համար դուն՝*
*Երբ որ էիր հայրենիքը երջանիկ ազգերուն՝*
*Չէիր միայն օվկիանն իրենց ուժերը կլլող,*
*Այլ և աղբյուրը առատ, աղբյուրն անուշ, այգաշող,*
*Որմե անոնք կխմեին, աղբյո՛ւր անհուն թարմության*
*Եվ նոր աշխույժ, նոր արյուն, հպարտություն կստանան...*
*Եվ այսպե՛ս էր, որ սիրույս հորձանքին մեջ դառնություն*
*Եվ վարդերուն մեջ հույսիս կխառնըվեր միշտ աճյուն,*
*Ու մտածելն իսկ քեզի եղած էր ա՛լ տառապանք,*
*Քե՛զ, որ հեռվանց կյանքիս շուրջ կդառնայիր զերթ կապանք...*

# ՍՈՒԵՏԻԱ

Պզտիկ գյուղե՛ր, դուք մեծցաք.
Անհունորեն մեծցաք դուք,
Երբ բնակիչ չունեցաք...։

Ու ձեր այն Լեռը մեծցավ,
Լեռն անծանոթ, մշուշոտ
Պայծառացավ, հայացա՜վ...։

Պզտիկ գյուղեր, ի՞նչ մթերք
Էր քաջության, մեծության՝
Ձեր ծոցին մեջ հավաքված...

Ո՞ր հեռավոր, լուսավոր
Աղբյուրներեն հայության
Այդ ուժը հոդ էր հոսած...։

Պզտիկ խաղաղ դուք գյուղե՛ր,
Երբ թշնամին սպառնաց՝
Եղաք հանկարծ բանակներ,

Օրհնյալ անհաղթ բանակներ,
Որոնց դիմաց թշնամին
Ճանչցավ Հայու սիրտն անհաղթ...

Օրհնյալ ձեր հողն ըլլա միշտ,
Զի Հայաստանն ալ ամբողջ
Ինքզինք ճանչցավ ձեր վրա...

## ԱԴԱՄԱՄՈՒԹ

Զմտածենք, ո՛վ հոգիս, ջանանք մոռնալ ամեն բան.
Ե՛վ անհուն հույսն երեկվան, և՛ այսօրվա մութն անհուն։
Զմտածենք, չգիտնանք թե այս դարձքեն վերջ ճամփան,
Աւղղին ճամփան՝ կցատկե անդունդին մեջ անանուն...

Հավիտենից ծովուն վրա մեր այս լքումն անվախճան,
Այս ցուրտ սկիզբն օրհասի, էջքն այս ժամուն գիրագույն՝
Թո՛ղ չըմբռնենք... և ըլլա՛ թող մեծ խավարն օգնական
Շոգենավուն արկածյալ, որ կկորչի ծովամույն։

Ջո՛ւր է եղեր ամեն ինչ, ամեն փափագ, ամեն ջանք,
Խուսափելու վճիռեն, որ մեզ դրկեր էր կանխավ,
Որ դեպի մահ կմղեր ու կքաշեր մեզ տակավ։

Այնքան երազ, այնքան ճիգ, այնքան տաժանք ու տանջանք
Ջո՞ւր են եղեր. այնպես չէ՞, ո՞վ ահավոր դուն աստված,
Որուն սակայն մենք այնքան, այնքա՞ն էինք հուսացած...։

## ՈՂԲ

Ո՞ր խորունկ ողբը երբեք պիտի կրնա արձագանք
Տալ խորտակված ու լքված մեր սրտերում խեղճության...
Այսուհետև մենք ինչպե՞ս պիտի, աստվա՜ծ իմ, կրնանք
Մտաբերել միմիայն, խորհիլ, հուսա՜լ ապագան...

Տարիներո՜վ հեռավոր, անմատչելի, ցանկալի
Մեր երազն էր եղած ան, որ խավարին ներքև լույս
Եվ անդունդին վրա երկինք և մեր աղբյուրն էր կյանքի,
Որ Այսօրվան մեջ Վաղն էր՝ միշտ գեղեցիկ և մի՜շտ լույս...

Ո՞ր դիշերին մեջ հանկարծ, անէության նման մութ,
Երբ մարեցան դժոխքի ջահերն անգամ սոսկումն,
Մարդադևեր հղացան տալ այս հարվածը անգութ,

Ո՛վ դժբախտ ազգ, այս հարվածն, որ քեզ սրտեդ կզարնե,
Որ կ՚սպանե սաղմերն իսկ ամեն հույսի, հավատքի
Եվ կթողու մեզ երկրի վրա մեռե՛լ կենդանի...։

## ԽՆԴԱՆՔ, ԵՂԲԱՅՐՆԵՐ

*Խնդա՛նք, եղբայրներ, իրենց փափագին*
*Քովն ինկած մարդոց ծիծաղով խնդանք,*
*Մեր դիակները գրկած կաթոգին՝*
*Աշխարհի վրա որքան Հայ որ կանք,*
*Խնդա՛նք աշխարհի ժահրոտ երեսին...։*

*Խնդա՛նք, եղբայրներ, կոկորդապատառ*
*Քահ-քահով մ'երկար խնդանք միասին.*
*Չէ՞ որ ա՛լ լալու չմնաց պատճառ,*
*Չէ՞ որ մեր մեծ հարցն ինքնին լուծվեցավ*
*Ու մեր հին վերքերն հոգվույն ու մսին*
*Ա՛լ մեզի երբեք պիտի չտան ցավ...։*

*Ուրեմն, եղբայրնե՛ր, խնդա՛նք միասին,*
*Խնդա՛նք աստուծո ալ ժանտ երեսին...։*

# ԵՎ ՆՈՐԵՆ ՄԻՇՏ

*Եվ նորեն՝ միշտ, հավիտյան, այս կրծըտումը սրտին՝*
*Ինչպես ջաղացք մը, որուն քարերն իզուր կդառնան.*
*Այս թալթըլումը հոգվույն խորն երկնքի մը ցրտին,*
*Գող դուռներու դեմ մտքին այս ընդհարումն անվախճան...*

*Ամեն երազ՝ բզկըտած և ամեն հույս փետրաթափ...*
*Վաղորդայնին կարկառիլ հրատոշոր շրթներով...*
*Հանգրվանի մ'ի խնդիր քալել, քալե՜լ առ. խարխափ,*
*Եվ անդունդի մը հանկարծ գտնել բացվածքն ոտքիդ քով...*

*Ա՜հ, ո՞վ պիտի վերջապես մեր հիվանդ սիրտը մեկ օր,*
*Հիվանդ տղու մը նման, անհուն սիրով դարմանե,*
*Ո՞ր անիծյալը մեզ պես, կամ ո՞ր օրհնյալն ի տյառնե...*

*Պիտի գտնե՞նք մենք արդյոք վաղը հրեշտակ մը հզոր*
*Խաղաղեցնող մեր հոգին, թե ոչ սատա՛ն մը բարի*
*Ձայն բորբոքող և ընող շա՛նթ մը գլխուն աշխարհի...։*

## ԱՀԱՎՈՐ ԲԱՆ ՄԸ ԱՅՆՏԵՂ...

*Ահավոր բան մը այնտեղ կկատարվի մութին մեջ...*
*Դժոխային դրաման այս ինչպե՞ս կրնա պատմըվիլ...*
*Ազգ մը ամբողջ, խորհեցե՛ք, երեկ կապրեր, կ'ոգորեր,*
*Միտքը լույսին կբանար և տակավ սիրտն ալ լույսին,*
*Կբարձրանար ճահիճեն, ուր խրած էր ատենոք,*
*Թևերն արդեն կթոթվեր, ինքզինք արդեն եթերին,*
*Ամպերուն մեջ կկարծեր... և ահա ճիշտ այդ պահուն*
*Ոսոխ աստված մը անշուշտ, որ դարանած կդիտեր,*
*Անոր վրա արձակեց ամբողջ չարիքն աշխարհի,*
*Ոտքի հանեց բովանդակ հրեշությունը ի քուն՝*
*Մեծ օձերու, վագրերու, շաքալներու դեմքերով,*
*Փաթթվեցավ ոտքերուն, խածատեց կուրծքն ու հասավ*
*Անոր վզին, աչքերուն և իր ժանիքը մխեց*
*Ճիշտ ուղեղին մեջ անոր, զոր արյունին հետ ահա*
*Ան կըլլե հեշտագին, ան կծծե՜ զգլխած...*

*Ահավոր բան մը այնտեղ կկատարվի մութին մեջ.*
*Կսպաննեն ազգ մը այնտեղ, որ կյանք ուներ և շնորհ,*
*Ուներ հանճարն ապրելու, նորոգելու ալ ինքզինք,*
*Գեղեցկացած էր տակավ ու թարմացած, ա՜հ, որքան.*
*Եվ այդ ազգը մերինն էր, և կսպաննեն զայն հիմա,*
*Զայն կսպաննեն... Օգնությո՜ւն, ա՛հ, օգնությո՜ւն,*
*օգնությո՜ւն...*

## ՏԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հեղեղ մը սև դեպի հարավ կքալեր՝
Ծամփան, տակավ, ավազին մեջ ցամքելով,
Ծամփան երբեմն ալ կազմելով նոր ուղխեր...
Ան կքըշեր կոճղ ու ծաղիկ քովե քով,
Եվ իր վերև՝ ճանճերն իբրև գոլորշի,
Եվ իր մեջեն՝ լաց մը իբրև դղըրդյուն,
Կուգային հետն՝ ընկե՛ր դուրսի և ներսի...
Երկնավիշապ Արևը, հո՛ւր և շողյո՛ւն,
Առավոտեն մինչև իրկուն, ամեն օր
Ջայն կծծեր, կկուրցըներ, կպառեր,
Եվ մինչև լույս, ամեն գիշեր, Մութը նոր
Կուտար անոր դժոխքի նոր սարսուռներ,
Մերթ խորշակներ, անապատեն անսահման,
Մերթ մարդկային բորենիներ չորս կողմեն,
Կխուժեին վրան այդ հեգ բազմության.
Եվ կիյնային ահա ոմանք փափկորեն
Ու գողցըված՝ կտարվեին ուրիշներ...։

Հեղեղ մը սև դեպի հարավ կքալեր,
Քշելով հետը նաև Հուր մը անհուն,
Որ թաղված խորն հիմա հյուծած սրտերուն,
Պիտի վառեր ու բորբոքեր ու այրեր
Վրեժի բոցով՝ վաղը, ամե՛ն հայ սրտեր...։

## ՀՈՒՅՍԸ

*Քու ցավիդ մռայլ երեսին վրա,—*
*Նեխած, բորբոսած լիճի մը նման,—*
*Երբ հանկարծ ճաճանչ մ'արևի կիյնա,*
*Երբ որ կփայլի Հույսը մեկ վայրկյան,*

*Ինչպե՜ս վերստին դուն կսպրդաս,*
*Դուն կմաքրըվիս, կաղվորնաս նաև,*
*Եվ ինչպե՜ս, ա՛զգ իմ, կարձակես վրաս*
*Ձիս լուսավառող կայծեր հրաթև...։*

*Եվ ես կհավտամ, ո՛վ ազգս, այդ պահուն,*
*Թե քու ծոցիդ մեջ, քու ցավիդ մռայլ*
*Երեսին ներքև, արեգակնափայլ*

*Ադամանդներու գանձեր կան անհուն,*
*Գանձեր, զոր կարծես խորքեդ անհատակ*
*Կհանեն բուռ-բուռ, Հույսը՝ մեծ սուզակ...։*

## ՊԻՏԻ ԸՍԵՆՔ ԱՍՏՈՒԾՈ

*Թե պատահի, որ այսօր անհավասար այս կռվին*
*Չկարենանք դիմանալ և ուժասպառ, ոգեվար*
*Գետին ինկած՝ չկրնա՜նք ոտքի ելլել վերստին*
*Ու հաղթե մահը կյանքի ոգորումին մեր երկար...*

*Թե լրանա՜ այս ոճիրն ու վերջին Հայը փակե*
*Վրիժավառ իր աչքերն՝ օրն հաղթության չողջունած...*
*Ա՛հ, թո՛ղ այժմեն երդվըննա յուրաքանչյուրը մենե,*
*Որ հանդերձյալ կյանքին մեջ, երբ որ գտնենք մենք զԱստված*

*Ու երբ որ ան՝ երկրային մեր մեծ ցավին փոխարեն,*
*Ուզե զմեզ սփոփել, վարձահատույց մեզ ըլլալ...*
*Իր այդ շնորհն ապաժամ մենք մերժելով ուժգնորեն՝*

*Պիտի ըսենք. «Մեզ դժո՛խք, դժո՜խք դրկե անգամ մ՚ալ,*
*Չէ՞ որ վայն լավ կճանչնանք, վայն ճանչցուցիր մե՛զ շատ լավ,*
*Եվ Թուրքերուն հատկացո՛ւր արքայությունը անբավ...»։*

## ԵՐԱԶ

Երազիս մեջ ես տեսա՝ երկինքն հանկարծ բացվեցավ,
Կապտագույն մեծ երկինքն, որ ծանրացեր էր ա՛յնքան,
Այնքա՛ն ճնշեր մեր վրա ու մեզ խեղդեր էր տակավ,
Ահա հանկարծ բացվեցա՜վ՝ կափարիչի մը նման...

Ու երկինքին մեջ տեսա առվակներու քով վճիտ
Եվ մարգերու մեջ կանաչ՝ մեր մանուկները կայտառ
Եվ մեր կույսերը շիկնոտ, որոնց դեմքին վրա ժպիտ
Եվ աչքերուն մեջ հիմա կխաղար լույս մը պայծառ...

Տեսա մայրերն անոնց մոտ՝ գորովալեզ արցունքով,
Ծերունիներն ալեփառ ու կտրիճները բոլոր,
Որ խաղաղած կօրհնեին բարիքն օրվան ապահով...

Եվ մինչ տեսա անոնց շուրջ դառնուկներու դարավոր
Հոտը հեզիկ արածող, տեսա և գայլ մը հեռուն,
Որ կորացուկ կփախեր՝ ի տես նախկին զոհերուն...։

## ՊԻՏԻ ՄՈՌՆԱՆՔ

Պիտի մոռնա՜նք մենք զմեզ, մեր վիշտն ու վերքն անհագին
Պիտի մոռնանք, այնպես չէ՞, երբ մեր երկիրը դառնանք
Ու աշխատինք ունկընդրել տակավ զարնելն իր սրտին
Եվ մենք ու ան իրարու քիչ առ քիչ ուժ տանք ու կյանք...

Պիտի մոռնա՜նք անսահման մեր կսկիծին հետ նաև
Մեր հոգիները այրող Ստեղությունն անսահման,
Ու մեր աչքերը պայծառ ու մեր քայլերը թեթև
Պիտի ըլլան վերստին՝ մեր հողին վրա մայրական...

Մարդոց չարիքը մեզի և քու չարիքդ, աստվա՛ծ իմ,
Պիտի գա՜ օր մ'ուր այլևս պիտի կրնանք չհիշել,
Պիտի կրնանք մենք նորեն երգե՜լ, սիրե՜լ անարգել...

Օ՜հ, դեռ, գիտեմ, կանուխ է, զի բախտն է դեռ ոխերիմ...
Սակայն, ո՛վ տեր, մոտեցուր այն առավոտն, ուր նորեն
Պիտի կրնանք քեզ օրհնել հոգիներուն մեր խորեն...

## ՏԱՐԱԿՈՒՅՍ

Եվ Տարակույսն հոգվույս մեջ կկանգնե գլուխն իր օձի...
Ճշմարի՞տ է այն ամենն, որուն ես ցարդ հավատացի.
Ինքնիրմեն դուրս կհորդա՞ մարդն ուրիշ մեկը երբեք,
Եղբայրությունը արդյոք չէ՞ մեծ խաբկանք մը, ըսե՛ք,
Ազատությունն ալ տարբեր բան մը, բայց թե կիրքերու,
Տխմարության, մախանքի սանձարձակում մ՚ահարկու,
Եվ իմ Ազգըս,— ինձ ներե՜, ա՛հ, ներե՛ ինձ, խեղճ Ա՛զգդ իմ,—
Բավական կյանք ունի՞ դեռ,— ներե, եթե կերկմտիմ,—
Ողջունելու Ապագան, զոր կանչեցինք անձկանոք
Եվ զոր մեզի ցույց չի տար այսօր ոչի՞նչ ու ո՛չ ոք...:

## ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Կարենալու համար ապրիլ այսուհետև,
Օդի, ջուրի, հացի նման
Մենք պետք ունինք Հպարտության,
Պետք ունինք, որ մեր անունն ալ սավառնաթև
Երկրե երկիր թռչի երթա.
Հնչեցընել կուզենք զանի
Ինչպես շեփոր մ'երկրի վրա,
Կուզենք, որ ան ծածանի
Ինչպես դրոշ մը պայծառ.
Եվ ինչպես ջա՜հ մը կուզենք՝
Որ ան ըլլա բոցավառ.
Եվ ինչպես զենք՝
Ան պատկառանք ազդե և ահ,
Եվ իբրև գործ մ'արվեստի՝
Ըլլա հանուրց պաշտելի
Եվ ըլլա՜ անմահ...։

## ՀԱՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՆՉՆ Է ԱՀԱ

Հարության շունչն է ահա, չարդակոտոր Ազգըդ իմ,
Հորիզոնեն ծայր տված, որ կփչե մարմնույդ վրա...
Ամայությո՛ւն, լռությո՛ւն... Օրորոց չէ, այլ շիրիմ
Երկիրն ամբողջ, ուր երեկ դուն զոհվեցար անխնա...

Բայց հարության շունչն է այս, ու զայն զգաս պիտի դուն
Գերեզմանիդ իսկ խորեն՝ կուրծքիդ վրա ջախջախված
Ու շուրթերուդ մսաթափ, և քու աչքերըդ ի քուն,
Մարած աչքերդ արթննա՛ն պիտի լույսին նորաբաց...

Քու արյունեդ բողբոջած խոտերը քեզ քողելով
Պիտի տան քեզ նոր կյանքի գթոտ գգվանքն առաջին,
Մինչ, կառչելով դուն անոնց, համր սակայն ապահով
Շարժմամբ ոտքի պիտ ելլես՝ թափած պատանքը հողին...

Մեղմի՛վ, մեղմի՛վ, վախնալով քեզ տալ հուզում մը սաստիկ,
Պիտի անցնին գարնային ծիծեռնակներն երկինքեն.
Մեղմի՛վ կռունկը իջնե պիտի ձեռքիդ քու մոտիկ
Եվ սոխակները հեռուն պիտի մեղմիվ դայլայլեն...

Բայց դուն արդեն մոտեցած ես առվակի մը, ահա՝
Եվ քու վերքերդ իր ջուրին մեջ խնամքով կլվաս,
Զայն կխմես, և հանկարծ իբր հայելվո մը վրա՝
Ո՛վ խռովիչ տեսարան, քիչ մ'արդուզարդ ալ կուտաս...

*Ու փլատակներըդ ահա կհարթըվին քիչ առ քիչ,*
*Մոխիրներուդ ներքևեն փոքր ածուներ կհառնեն,*
*Ամենուրեք կշարժին արոր ու բահ ու բրիչ,*
*Եվ լուսասփյուռ դաշտերուդ սա՝ կանաչ քողն է ցորեն...։*

*Ու զորացած, աղվորցած՝ հունձքի գիշեր մը երբ որ*
*Դուն կհսկես գորովով զավկըներուդ վրա կայտառ,*
*Որ արտին մեջ կնիրհեն, ահա աստղերը բոլոր,*
*Ո՛վ Հարուցյալ, գլխուդ շուրջ կըլլան պսա՜կ մը պայծառ...*

## ԸՄԲՈՍՏՈՒԹՅՈՒՆ ՍՐԲԱԶԱՆ

*Օր մը հանկարծ վառեցար...*
*Երկինքներեն հեռավոր*
*Ինկած կայծե մը կարծես՝*
*Մեր հյուղերուն ու քայլերուն մեր մեջտեղ,*
*Համայնածախ ո՛վ կրակ,*
*Ըմբոստությո՛ւն սրբազան։*

*Խորշակներեն բռնության*
*Մեր հոգիներն, որպես խոփ,*
*Ձորցեր էին ու մութին մեջ մեր բախտին*
*Հիմա լուռ-մունջ կայրեին,*
*Քեզմով փունջ-փունջ կայրեին,*
*Ըմբոստությո՛ւն սրբազան։*

*Կուպր ու կապար գիշերվան*
*Վրա ժայթքող շառափեդ*
*Սարսափեցան շղթիկներն*
*Ու վեր ու վար, աջ ու ձախ*
*Թրթռաթիռ նետվեցան.*
*Բուերն երկար վայնցին*
*Երդիքներուն մեր վերև.*
*Հին խլուրդները դարձան*
*Իրենց ծածուկ ծակերուն,*
*Եվ աղվեսները շվար*

Կծկըվեցան, պահվեցան,
Ու գայլերն իսկ կատաղի
Ընկրկեցան քու փայլեդ,
Ըմբոստությո՛ւն սրբազան։

Ծուխեդ կուրցան աչվըներ,
Ան երկինքն իսկ կծածկեր,
Կըներ աստղերն իսկ անտես...
Անչափ բոցերըդ հիմա
Իրարու ձեռք կուտային,
Մերթ գետերու պես կարմիր
Կվազեին հողին վրա,
Մերթ, շատըրվան շառագույն՝
Կժայթքեին դեպի վեր,
Եվ հորիզոնը ամբողջ, մինչև հեռուն, շատ հեռուն
Կպատըռտեր քու թռչըտուն սուրերեդ,
Ըմբոստությո՛ւն սրբազան։

Եղավ, ո՛վ հուր գեղեցիկ,
Որ պահ մը դուն հանգեցար...
Բայց քիչ անդին կսարսեր
Վերստին հողը ահա՛,
Եվ դուն, ուժգի՛ն ավելի,
Կպոռթկայիր գետնեն դուրս,
Կարծես գետնին ներքևեն
Քալած, վազած ըլլայիր,
Կարծես բոլոր քաջերուն,
Հերոսներուն, սուրբերուն
Որ հոն ինկած, թաղված են,
Աղիքներեն, գանգերեն,
Մեկեն մյուսին անցնելով,
Աճած, մեծցա՛ծ ըլլայիր,
Կարծես ամբողջ նախահարց

Սիրտը սնունդ քեզ գտնելով վառվեիր,
Ըմբոստությո՛ւն սրբազան։

Օհ, վերջացա՞վ, վերջացա՞վ...
Նայե՛, աստու է հիմա
Ու փոթորիկն ահա դադրել է արդեն...
Մոխրացել է մեծ զնդանն
Ու ժըպիտ կա սավառնող
Մեր աշխարհին ամայությանը վերև՝
Փոխան լացին, որ չորցուցիր,
Ըմբոստությո՛ւն սրբազան։

Բայց մեզի պե՛տք ես դուն դեռ.
Դուն մնացիր, բնակե՛
Մեր մտքերուն մեջ հիմա,
Ըմբոստությո՛ւն սրբազան.
Զանոնք տաքցուր; բորբոքե,
Ըրե հնոց, որուն մեջ
Մերին ժանգերը հալին,
Մեր մասնիկները բոլոր
Իրար ձուլվին, ամրանան,
Մետաղն ըլլա կարծր ու ջինջ
Եվ փայփլումն իր երգե՜ փա՛ռքդ հավիտյան,
Ըմբոստությո՛ւն սրբազան...։

# Դ ՇՐՋԱՆ. 1921 ԵՎ ՀԵՏՈ

## ՄՈՒԹ ԺԱՄԵՐ

### Ա.

*Ուրեմն իզուր էր, որ Քեզ մեր մանկության առաջին*
*Արևներեն սկսյալ մեր սրտին վրա սեղմեցինք,*
*Քեզ սնուցինք հորդառատ ուժեղ կաթովն անուրջին*
*Եվ քեզ համար դժոխքին հետ կռեցինք մենք դաշինք։*

*Դժո՛խք մեր կյանքը ըրինք, որ դուն դրախտ մը ըլլաս,*
*Ո՛վ Հայրենիք, անդունդին և երկինքին մեջ առկախ*
*Ցնորական օրրո՞ց, փառաբանյալ պատուհա՛ս,*
*Հո՛ւր՝ տաքցընող մեր հոգին, տուն՝ հավիտյան բոցածախ։*

*Քանի՜ անգամ երկինքեն անդունդ իջավ ծիածան*
*Ու անդունդեն վեր երկինք երկնցավ սյուն մը հսկա*
*Ու մենք անդուլ, անվհատ մագլցեցանք անոնց վրա։*

*Քանի՜ անգամ... և սակայն անոնք փլան ու ինկան,*
*Ու մենք անոնց փաթթըված՝ բարձունքներեն ինկանք վար*
*Ու այս մարզանքը ահեղ ըզմեզ թողուց ոգեվար...։*

Բ

Ո՛վ Հայրենիք, կ՚երազէի ես երկա՜ր
Քեզ հիշելով, հուսալով...
Հիմա նորեն քեզմով իմ սիրտս է խռով,
Բայց երազել չեմ կրնար։

Կփայլեիր, կաղվորնայիր, օ՜հ, ո՜րքան,
Արևին մեջ երազիս...
Հիմա մոտս ես ու ինձի դուն կերևիս
Լույս ու շուքովդ իրական։

Բայց ինչ ցավ է, գիտե՞ս թե ինչ խորունկ ցավ՝
Քեզի նայած միշտ ըլլալ
Իբր անթառամ աստվածատունկ ծառ օրհնյալ

Ու հանկարծ օր մը գիտակցիլ, թե բնավ
Պիտի այլևս չկրնաս
Բանալ թրթռուն կանաչ խորհո՜ւրդ իմ վրաս...։

Գ.

Ծնած օրես մինչև այժմ իմ Հայրենիքըս ինձ հետ
Տարի ամեն տեղ, ամե՜ն, աստղ մը ինչպես կտանի՝
Ջահանդական, անվախճան իր պտույտին մեջ երկնի՝
Արևային դրությունն, որուն ինք մասն է հավետ։

Նորեն ու միշտ գլխս կապված կզգամ անոր, բայց այնպես
Ինչպես կոտրած ու բունեն վար կախված ճյուղն իր ծառին...
Երբեմն հույսի թռչուններ հոն դեռ կուգան կթառին՝
Սակայն վերջեն ավելի՜ կշորնա ճյուղը կարծես։

Իմ Հայրենիքս, ա՜հ, ինչպե՜ս դավեց ինձի, խաբեց գլխս...
Կպահանջեմ մերթ իրմե հաշիվն անհուն իմ սիրույս,
Իմ կորովիս վատնըված, իմ խորտակված երազիս,

Ու մերթ՝ ձեռքերս երեսիս՝ կուլամ լացով մը անհույս,
Պաղատելով որ ապրի՜, հոգ չէ թե գլխս մեռցուց ան,
Եվ իր անուշ մանուկնե՜րը երջանիկ լոկ ըլլան...։

Դ.

Փետրվարի օր մ'է արև-արեգակ.
Հետմիջօրեն կարծես գարնա՛ն է արդեն.
Ծովը կապույտ՝ կանգնած կապույտ երկնից տակ-
Ձնփյուններ դուրս թռած լեռան ծերպերեն։

Կխաղըտա դյուղի ճամփան՝ դեռ լեցուն
Եզերքներուն վրա անկոխ ձյուներով...
Մրգածառեր կկենան մերկ, սարսուռն՝
Սպասումովն հին հրաշքին ապահով։

Ու անդրադարձ՝ կլսեմ. շունչերն այս տաքուկ
Ծառե՛ր, չըլլա որ ձեզ մատնեն շվարման
Եվ կանխահաս ձեզի ծաղիկ բանալ տան։

Դեռ չէ՞ գարուն. դեռ կան պահված ցուրտ ու բուք...—
Զարթան հույսի մեր բողբոջներն անհամբեր.
Մենք խաբվեցանք, դուք չխաբվի՛ք, ո՛վ ծառեր...»

## Ե

Նորեն դուն ես, ո՜վ Պոլիս, երկար, երկա՜ր քղանցքներ՝
Կնոջ մը շատ ցանկալի, ընկողմանած հուլաբար...
Եվ դուռիդ դեմ նորեն ե՛ս, զոր ներս անգամ չես առներ,
Զոր կպատժես՝ գուցե շա՜տ քեզ սիրելուն իսկ համար։

Ու կը նայիմ ես ծովեն՝ երազամույն աչքերով,
Բլուրներուդ կորութեան և ձորերուդ, որ հիմա
Նորեն լեցուն են, գիտեմ, մեծ օձերով՝ որոնց քով
Անհոգորեն դուն հովին բացեր ես կուրծքըդ ահա։

Դո՛ւն՝ այնքա՜ն քաղցր ու այնքա՜ն փափուկ հողեր, ծով,
երկինք,
Ի՞նչպես կրնաս հանդուրժել իր հպումին, ո՛վ Պոլիս,
Եվ դահիճին հետ կրնաս կապել սիրո նոր դաշինք։

Ա՛հ, չե՜ս հիշեր, թե ի՜նչպես վրադ դողաց իմ հոգիս,
Թե գգվեցիր դուն ալ զիս... և, տարփավառ դուն մորու,
Հիմա միայն զբաղած ես քու գոտիդ քակելու,

Կապույտ գոտի՜դ Վոսփորի, ծոցիդ տակ՝ դե՜ղ վարդերու...։

Զ

Ծով ու երկինք՝ կապտաղած, ու ես՝ վրան այդ ծովուն...
Ծովը կուզէ ոռնաձայն նետուիլ երկինքը մինչև.
Կուզէ երկինքն ալ խուժել ծովուն վրա՝ ցած ու սև
Իր ամպերով հորդաղեղ ու շանթերով շառաչուն։

Ու կհամրեմ կայծակներն՝ ինկող շուտ-շուտ ու շատ մոտ...
Անոնք անվերջ՝ հրափայլ դժոխքի դուռ մը կարծես
Մութին վրա կբանան և կգոցեն ուժգնապես,
Այս կեղծ գիշերը կընեն մերթ ընդ մերթ կեղծ առավոտ։

Ես կզգամ՝ առանձին կամրջակին վրա կեցած,
Սարսռալով բայց լեցուն ուրախությամբ ահավոր,
Գոհ՝ երկնքի ցասումեն և սրտակիցը անոր։

Շա՛խ...։ Ճարճատում ալ շանթի։ Ու կտենչամ իբր աստված
Հրամայել, որ իյնա ան աշխարհի վրա ամբողջ,
Այրե՛ բոլոր երկիրներն ու չթողուլ աղբ մը ողջ...։

## Է

Անդունդի մեջ ինկած Ազգ,
Ելար եզերքն անդունդին,
Ուր փուշ, եղինջ ու տատասկ
Բազուկներուդ կկառչին
Ու կարյունի՜ս վերստին...։

Անդունդին մեջ հեղձամահ,
Բայց օդին նոր հասած դուն,
Ահա հեղեղն ու ահա՛
Խուժումն ամեն հովերուն
Կայծիդ վրա մարմըրուն։

Ո՛վ դժբախտ Ազգ, կարծեցի՜ր,
Թե կսպասեն հառնումիդ.
Թե հոգիներ կարեկիր
Պիտի լվան շիթ առ շիթ
Սիրով, գութով քու հոգիդ։

Մինչ կը թողուն քեզ մինակ,
Մինակ՝ եզերքն անդունդին,
Տարրերուն դեմ բովանդակ,
Ոսոխներուդ դիմաց հին
Նորեն կուլի՜լ ողբագին։

Ու փուշերեն ավելի,
Ու խորշակեն ու ամեն
Գազաններեն ահռելի,
Կտառապիս այս ցավեն՝
Թե պետք չէի՜ր աշխարհի...։

## Ը

*Մարգի՛կ, ձեզի կը խորհիմ, ձմեռը ձեր երդիքին,*
*Ամառը ձեր երկինքին տակ աշխատող, երազող.*
*Ձեր աշխարհին հողեն հող, ձեր աշխարհին նման հին՝*
*Կրունեիք հոն թաղված արմատներեն դարավոր։*

*Տարածության վրա անոր ամենուրե՞ք էիք դուք՝*
*Ոսկորներովը ձեր հարց և ձեր ճակտին քրտինքով*
*Անոր կապված ու փակված...։ Ձեր հյուղերուն մեջ անշուք*
*Կողողըջար հուշերու կաթսան հույսի սանին քով։*

*Մարգի՛կ, ձեզի կը խորհիմ...։ Ձեզմե հեռու, շատ հեռու՝*
*Կապված էի ես ալ ձեզ, ձեզմով գետնի մը կարմիր...*
*Արմատախիլ հիմա դուք՝ կըգամ հյութեն դարերու*
*Իմ պարպըվելս ալ հիմա ու չե՞մ այլևս նորոգվիր...։*

## Թ

Այս ընդարձակ հողին վրա.
Կային տեղեր, որ մերն էին,
Թեև չէի՜ն. երազային՝
Ոմանց համար ու ապագա,
Այլոց՝ անցյալ կախարդական,
Որ օր մ'ըլլար պիտի դարձյալ
Եվ շատերուն, որ հոն ծնան՝
Ներկա՛, օրհնյա՜լ ու անիծյա՜լ։

Ոմանք մարմնով, ոմանք մտքով
Կշնչեին, կապրեին հոն,
Նախկին ու նոր՝ իրարու քով,
Իրարու հետ՝ ծաղիկ, կոկոն.
Բուն՝ ոստերով, ոստ ու տերև՝
Մերթ իրարու կարծես անկապ,
Բայց իրարու ներքև, վերև՝
Իսկույն, երբ հով մը կուտար թափ։

Կային տեղեր այս հողին վրա,
Որ մերն էին, թեև չէին.
Անցյա՛լ, ներկա՛ ու ապագա՛՝
Որոնց փակած էր մեր հոգին
Արմատներովն իր անհամար
Եվ որոնցմե կանցնեին մեզ,

Ներխուժումով մը համր, համառ,
Հյութեր, հույլեր, ուժեր անտես...։

Ո՛վ տեր, ինչպե՞ս հիմա հանկարծ,
Ավելի խոր հոն մեխվելե,
Հոն զգալե ետք մեզ անդարձ՝
Կխլվինք, դուրս կիյնանք հոնկե,
Մեր արմատներն հանձնած օդին
Ու ծաղիկները մեր բոլոր
Հիմա խամրած, ինկած գետին...
Շատ չէ՞, ո՛վ տեր, տանջանքն այս խոր՝
Մեր խե՜ղճ ազգին, իր խե՜ղճ սրտին...։

## ԳԵՂՈՆ ՀԱՅ ՈՐԲԻՆ

Մորըդ գիրկեն դեռ նոր իջած,
Դեռ նոր քալել կսորվեիր,
Երբ որ աշխարհ, երբ որ աստված
Քու աչքերուդ հետաքրքիր
Եվ նորազարդ մտքիդ դիմաց
Հանեցին ծո՜վ, որուն վըրա,
Կոտրած, կարմիր, մեկ քով ծռած,
Տեսար օրրոցդ, որ կլողա։

Մայրդ էր անոր ուժգին կառչեր
Եվ անոր հետ կերթա՜ր հեռու...
Մամըդ՝ դեմքին ժպիտ ուներ,
Սառած ժպիտն հիմարներու։
Քույրերդ ամբողջ՝ փետըրտըված
Վարդեր էին ջուրին վրա...
Եվ հորդ աչքերն էին դեռ բաց,
Բայց քեզ չէի՜ն տեսներ հիմա։

Դուն հոն էիր ու չէի՜ր հոն.
Քեզ իրարու հաջորդաբար
Կանցընեին սուսերահոն
Սև ճիվաղներ... Կառաջանար
Միտքըդ ամպի մը ընդմեջեն՝
Կտըրտըված փայլակներով,

Եվ կհալե՞ր մյուսոնց արդեն՝
Փոթորկին մեջ արյունահոս։

Տարիներ վերջ քեզ ժողվեցին
Ծիրանաշող այգի մը մեջ...
Ժանգովըդ նոր, փայլովըդ հին,
Խորաններուն համար անշեջ
Ջերթ կորսըված կտոր ոսկին՝
Քեզ ժողվեցին անկյուններեն...
Մաքեդ հողեր կթափեին
Ու կաճեի՞ր ամեն բույս։

Մարդիկ, սակայն, այսօր ինչո՞ւ
Կնային քեզ ու չեն հիշեր,
Թե նման չես ուրիշներու,
Թե աչքերդ են հողասուններ՝
Լեցուն անուշ գինիներով,
Որ կշարժին՝ երբ կտեսնես
Տղայք իրենց հայրերուն քով
Ու մոր գիրկե՞ր՝ հրաշքի պես։

Մարդիկ այսօր կնային քեզ
Ու կողասեն, որ շատ մեծնաս.
Դեմքդ ու հոգիդ դժոխակեզ՝
Մարդիկ մոռնա՞լ կուզեն, տղա՛ս...
Մարդիկ, այո՛... բայց անոնց դուն
Ներե՛ ու միշտ գիտցի՛ր հիմա,
Թե մենակ չես, թե օրմերուն
Կավերնա մեջդ ու կհուսա
Քեզ փաթթըված կարասադին՝
Ծնողներուդ միտն ու հոգին...
— Դուն միայն լա՞լ մեծցի՛ր, տղա՛...։

## ՈՐԲԵՐՈՒՆ ՁԵՌՔԵՐԸ

Ցոլք ճաճանչ մը կարծես այս անհամար ձեռքերեն,
Ձեռքեր՝ մեծցած մինակնին. ոչ շատ. դեռ թույլ, դեռ անմեղ.
Դեռ ոչ ոքի չխառնած կամ չխըզած վատորեն
Բախտին թելերը՝ ձեռքեր. սիրակարոտ, սիրազե՜ղ։

Ձեռքեր՝ հազիվ թե հիշող ջերմությունն հոր մը ափին,
Որ զույգն իրենց կպչեր՝ երբ որ թաթիկ էին դեռ...
Տախտակներու վրա չոր, ձեղուններու տակ ցրտին
Հիմա սառող քովե քով՝ հայ որբերու ո՛րբ ձեռքեր։

Անոնք երբեմն հանկարծ կխըլըրտին գաղտնապես,
Անոնք բռունցք կըլլան մերթ, կպարզվին իրարու,
Կըլլան դրոշակ, կբացվին հաղթանակին վաղելու։

Կխլեն գիրքը անոնք, կատաղորեն, հացի պես.
Մարդոց ոխիրը զանոնք զերթ մեյ-մեկ սուր է դարբնած.
Ա՜հ, զորացո՛ւր, կարծրացո՛ւր, մեծցո՛ւր զանոնք, կա՛րծր
աստված։

# ՍՈՒՐԻԱ

Հոսկե անցա՛ն կարավաններ… Բայց ինչի՞…
Հատ-հատ պակսող հայ կիներու, փոքրերու,
Որոնց արյունը գուցե դեռ կփակչի
Այս ավազին, այս պատանքի՛ն ահարկու…

Բզկըտված մարմնով, մտքով ու սրտով՝
Գութ հայցեցին հոս գայլերին գառնուկներ…
Արևն ալ հոս գործեց ոճիր Ոճրին քով
Չորցուց անթիվ կյանքեր իր հուրն անըմբեր…

Տարիներ վերջ հիմա կանցնիմ ես հոսկե՝
Կառքիս դանդաղ թավալումին անձնատուր.
Մինչ ան գուցե հայ ոսկորնե՛ր կճզմե…

Ավազն ունի կարծես մահու սույլ մը սուր,
Որ ծունկս ի վեր կելլե, կանցնի սրտիս մեջ,
Կսղոցե, կփորե զայն անվերջ…

## ՍՓՅՈՒՌՔ

Զանգվածն ահա՛ դեռ կերերա հեծելով,
Անտառի պես կամ ծովու,
Ծով կամ անտառ, զոր կշարժե ոչ թե հով,
Այլ երկրաշա՜րժ մ'ահարկու...

Եվ հնօրյա այս զանգվածեն մարդկային
Ահա մասեր մի առ մի
Անվերջորեն կբաժնվին, կմեկնին...
Եվ ան տակավ կպակսի...

Խլված իրենց արմատներեն ամենքն ալ՝
Մեր հին, հին ազգը ահա՛,
Որ չի կրնար իր հողերուն վրա մնալ,
Զորնալ ուրիշ տեղ կերթա...

Աստված, ես ի՞նչ աղոթք կրնամ ուղղել քեզ,
Տա՞ս անոնց կյանք մը անվիշտ,
Հանգչի՜ն, հանգչի՜ն այլևս — թե ոչ՝ վրիժակեզ
Այրին ու ե՜տ նային միշտ...

# ՓՈՇԻ — ԱԶԳ

Այդքան պզտի՛կ, պզտիկցա՛ծ՝ պէ՛տք է որ դուն տակաւին
Քու խարակէդ ըլլաս մեծ, մե՛ծ շարժումներ, կարծելով
Ըլլալ կենտրոնն աշխարհի և կարծելով թե ինքնին
Կրնաս լընուլ, խափանել, ցամքեցնել ամեն ծով։

Պզտիկ, պզտի՛կ դուն անկյո՛ւն, ո՛չ իսկ անկյուն՝ այլ կետեր
Ցրված հոս հոն և որոնց գիծերն, որմերն են ինկած,
Պե՛տք է հուսաս ապագային պալատը մեծ, զոր կերտեր
Կանգներ էր միտքըդ, ավա՛ղ, այդ փոշիով գետնամած։

Ու երբ քու շուրջըդ հիմա ամեն հին շենք վար կիյնա
Ու ձև կառնեն նոր շենքեր անոնց ինկած ավերին վրա,
Ի՞նչպես, փոշի՛, դուն կազմել նման հին շենք մը կուզես։

Մեն մի ցնցում քեզ կրնա տարանջատել վերջապես,
Աշխարհ չընե՛ր պիտի հող. հողը քեզի է. հուսա՛.
Դիտե՛. փոշին լոկ այդպես թևե՛րս հող, քար ըլլա...

## ԽՈՍՔ ՄԵՌԵԼՈՑ

*Մեր մեռելները կըսեն*
*Հողին տակեն, երեսեն՝*
*Իրենց թաղված, կիսաթաղ,*
*Խաղաղատենչ, տենչախռով*
*Ոսկորներուն խրշյունով,*
*Իբր ալելու, իբրև տաղ*
*Սրբագալին փրկության,*
*Մեր մեռելները այսպես*
*Խոր ժխորին մեջ օրվան*
*Հողեմրմունջ կըսեն մեզ...*

*— «Երկրի վրա ո՛չ մեկ բան,*
*Բացի Հույսեն, իրական*
*Ու ճշմարիտ է ու մեծ...*
*Մենք պառված մեր հողին*
*Եղավ տաճար ու բագին*
*Ու դըղըրդաց ու երգեց*
*Ու եղավ միշտ լուսավառ՝*
*Քանզի լեցուց զայն անվերջ,*
*Դուռնեն մինչև ի կամար,*
*Հույսը անլուռ և անշեջ։*

*Պետք է հուսալ տակավին.*
*Երկինքը մեջն է հողին.*
*Հողեն մեր Հույսը առինք*

Եվ դարձուցինք մենք անոր
Մեր Հույսն՝ արյան պես բոսոր,
Հույսը ճերմակ վերթ քրտինք,
Որ ողողեց մեր դաշտերն
Ու աճեցուց, բազմացուց
Հասկն՝ հատիկով ծանրաբեռն
Ջատիկն՝ օրհնյա՛լ ի հնուց»։

Մեր մեռելները կըսեն
Հողին տակեն, երեսեն.
«Պետք է որ հասկը ոսկի,
Պետք է որ հասկը հույսի
Ձեր սրտերուն մեջ, տղա՛ք,
Ամեն, ամեն երկնից տակ
Ձեզի համար ու մեզի՛
Հավիտյան պետք է բուսնի»։

## ԿԱՄՈՒՐՋ

*Մերթ ալ կուզեմ իմ ազգիս*
*Սիրույն համար ու բարվույն,*
*Ընել կամուրջ մը հոգիս,*
*Իր անցյալեն խորադույն*
*Դեպ ապագան սլացիկ*
*Կամուրջ, ուրկե մեր նախնիք*
*Եվ մեր աստվածք համբուրեն*
*Առաջանան ու բանան*
*Մութ, անծանոթ, գոց ճամփան,*
*Ցեղը կրկի՜ն հոն երկնեն...։*

*Կուզեմ նետել կամուրջն այդ*
*Խավարին մեջ ներկային՝*
*Իբրև երկար ճառագայթ,*
*Իբրև թև՛ մը լուսնային,*
*Մինչև որ իր ներքևեն*
*Ընկղմողները ամեն*
*Իրենց նայվածքն առնեն վեր*
*Ու իր լույսին մեջ հանկարծ*
*Իրենց թևերը տեսած՝*
*Ընեն կյանքի՜ շարժումներ...։*

*... Կամուրջն ահա, մութին մեջ,*
*Ամրախարիսխ, ապահով...*

Ու կքալեն անընդմեջ,
Կշռված, ծանր քայլերով,
Մեծ ստվերները բոլոր
Մեր անցյալին դարավոր...
Ի՜նչ գիտություն, աստված իմ,
Եվ ի՜նչ անհուն գթություն
Խորը անոնց աչքերուն,
Ի՜նչ կշտամբանք մտերիմ...

Տեսեք, ահա կնային
Ու կջանան ելլել վեր՝
Խարակներեն ներկային
Տժգույն ու խոնջ հոգիներ...
Հրա՛շք, անոնք կճանչնան
Հիմա այն ուժն անսահման,
Որ արյունեն նախահարց,
Անոնց սրտե՛ն ու մտքե՛ն
Մեկնած՝ իրենց էր եկած,
Եվ անոնք լո՜ւրջ են արդե՛ն...։

...Ի՛նչ փույթ թե ի՛մ կամ ուրիշի՝
Հոգի մը պետք է սակայն,
Արևաշող, աստղանիշ,
Որ հոգիին Հայության
Ըլլա ճամփա ու ճաճանչ.
Ըլլա անոր բազմատանջ·
Կյանքին, հույսին ապավեն...
Ըլլա՛ ամբարն այն, որուն
Մեջ լեցվի հունձքն հայրերուն
Եվ փրկե՜ ազգն այս սովեն...։

## ԴԱՌՆ ԱՂՈԹՔ

*Կամե՛մ հեղուկը բաշխիչ գինովության, թմբիրին*
*Եվ երազին խմբական, կամեմ սրտովս բոլոր…*
*Կուզեմ սրվակն իր կոտրել, և կաղոթեմ, որ անոր*
*Իբրև գեղթափ տաս մեզ, տե՛ր, ճշտորեն ցանցը ուժգին…*

*Զի մինչև ե՞րբ, վերջապես, ոխն ու վրեժն անկարող*
*Պիտի զգվենք ուժի տեղ, և ճանկերովը կատվի*
*— Ան ալ կոտրա՛ծ,— սպառնանք և սպասենք, որ բացվի*
*Դուռը մթին այս բանտին՝ մեր վրա մեզ նախ գոցող…*

*Աստվա՛ծ, այն անիչը տուր մեզ, որ կամփոփվի, կամբանա,*
*Որ չի ցնդիր բառերով, որ հոգին, միտքը ամբողջ*
*Իրմով տակավ կլլեկ, որ արցունքին ակամա*

*Կուտա իսկույն հաջորդել ժպիտին ճիգը առողջ.*
*Որ կմերժե ամեն հույս եկած դուրսեն, միջոցեն*
*Եվ կպայթի, երբ այլևս զինք սպառած կկարծեն…:*

## ԵՓՐԱՏ

Արաքսն իր պորտը քեզմե կտրած կերթա, կվազե
Հայ աշխարհին մեջտեղեն, լայն եզերով կլընու,
Ձայն կողողե տուրքերով, մերթ կդառնա ահարկու
Եվ մերթ ուրախ ու թեթև կցատկե վար ժայռերե...

Բայց դուն, Եփրա՛տ, որ մեր սեպ լեռներուն մեջ կծընիս,
Զմեզ հանկարծ կթողուս, և դարձդարձիկ ու երկար
Կթափառիս դաշտերու, ավազներու մեջ օտար,
Մինչև որ քեզ փաթթըվիլ կուգա քու զույգդ՝ Տիգրիս...

Ոչ ծնած տեղդ հիշեցիր, ոչ ալ անոր քեզ անվերջ
Բաշխած մարմինն ու հոգին, երբ հեռավոր վայրիդ մեջ
Առիր անթիվ Հայեր ծոցդ ու անտարբե՛ր խեղդեցիր...

Դժոխքի դե՛տն եղար դուն, եղար դժո՛խքը դուն բաց,
Եփրա՛տ՝ անոնց որ էին՝ քու պատճառովդ ալ կոչած
Իրենց երկիրը՝ Երկիր դրախտավայր, սուրբ երկիր...։

# ՆԵՐԿԱ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

## Ա.

*Ներե՛, որ քեն ըրի քեզի քիչ մը ատեն*
*— Մինչև երեկ — ու դեռ տաք չեմ բոլորովին,—*
*Բայց կխըլե շունչդ ինձմե կայծեր արդեն՝*
*Չփայլած հին ու փայլելիք բոցին հաշվին...*

*Սրտես առաջ մի՛տքս հարեցավ, փարեցավ քեզ...*
*Սիրտը ունի հիշողություն մ'ավելի խոր*
*Եվ չէր կրնար ան չհիշել Սուրբն ողջակեզ*
*Խարույկին վրա, ուրկե Փյունիկ՝ ծնար դուն նոր...*

*Ու գոհացավ միտքս քեզմով, սփոփվեցա՜վ,*
*Ուրախացավ մինչև անգամ, քեզի դիմեց*
*Ու կդիմե հիմա՝ ինչպես գանձի մը մեծ...*

*Տարբե՞ր ես դուն մեր երազեն.— ավելի՛ լավ...*
*Ավելի լա՛վ կըսեմ, այո՛, անզիջ, անգութ,*
*Զի դատակնիքն է «չեղածին» փա՛ստն «ըլլալուդ»...*

Բ

Հո՞ղ այնտեղ և հողին վրա ցեղ…
Կկոխեն ցեղը զայն, կմըխեն
Անոր մեջ կամքն ուժեղ ու անշեղ
Եվ նորեն կքաղե ուժ անկե…

Հո՞ղ այնտեղ՝ բարեկամ, բարերար.
Չփախչող ոտքին տակ. վեր բռնող
Մարդոց մեջքն, ու գլխուն մեջը հար
Վերածվող ճամփայի լուսաշող…

Հո՞ղ վստահ, ուր ամեն մարդ ու կին,
Այնտեղ նոր աչք բացող մանուկին,
Այնտեղ նոր բարձրացող հասկերուն,

Նո՞ր շենքին, նո՞ր հենքին, մտքին նո՞ր
Կնայի հրճվանքով մը սովոր,
Կլեցվի անդորրով մը անհուն…»

Գ

Երկիրը հո՛ն իր զավակինն է այլևս,
Անոր ճակտեն հոսող քրտինքը կերթա
Մեծ հայրերուն մինչև կրծոսկրը թերևս՝
Հաստատելու իր տանը հիմն անոր վրա...

Ո՛չ ոք այնտեղ ա՛լ իրեն ծուռ կնայի...
Ավերակներն անգամ ժպիտ մ՚ունին արդ,
Երբ կտեսնեն դեմը իրենց՝ ամայի
Գետնեն ելլող շինության շարքը հպարտ...

Եվ հո՛ղը, հո՛ղն իր գերության ա՛լ թոթված,
Իր ընդերքեն ոչ միայն ուժ՝ այլ և խելք
Կհայթայթե Հայուն ի մեն մի հարված...

Եվ շղթային՝ Արևմուտքեն Արևելք
Վերակապվող կյանքի ամուր շղթային՝
Կըլլա մեր պինդ աղը օղա՜կը նախկին...։

# ՐԱՖՖԻ

(Ծննդյան հարյուրամյակին առթիվ)

Կքնի՛ անունն ու կփրփրի
Ջինջ՝ արևաղան,.
Վաղուց կորսված, փախած ծոցն երկրի
Ակի մը նման...

Կողեղն տակավ իր հողը շուրջի,
Կըլլա գետ մը ան...
Իրեն մեջ աշխարհ մը արդ կփլչի,
Աստղեր կլողան...

Ո՞ւր եք, ջրանցքնե՛ր, որպեսզի հուռթի
Դաշտերը դառնան,
Ո՞ւր, թումբե՛ր, որպեսզի ժայռը փրթի
Իր ուժեն քանդման...

Ան ցամքա՞ծ է արդ... Բայց, ո՛չ, կփայլի
Իր հունին մեջ լայն
Քիչ մը ջուր, նոր հույս հին հուշով առլի,
Քիչ մը լո՜ւյս միայն...։

## ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Դուն ճպուռ մ'արդեն՝ նուրբ, եբենաշող,
Ձայները մեկ-մեկ, ձայները խումբ-խումբ
Շուրջդ ջուրերու պես բխեցընող
Եվ հանկարծ՝ անոնց առջև եղող թումբ...

Եվ ճպուռ մ'ուրիշ՝ դուն ինքդ նորեն,
Ճպուռ հրաշագործ զորության մը ձեռք,
Ճռող աջ ու ձախ, անցնող հայ երկրեն,
Կեցող արտերու, գյուղերու եզերք

Եվ գտնող, ո՞վ դուն, ի՞նչ քաղցր, ի՞նչ առատ,
Գետնին տակ պահված, հոսուն, գլգլուն,
Հայրենի Երգին ավազանն անհուն...

Շարժեցա՞վ հողը, ժայթքեց հուր, երկաթ...
Ցամքեցա՞ն, փախա՞ն ակերն ընդերկրյա
Եվ ճպուռն ընդմիշտ ճաթա՞ծ է հիմա...։

## ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱՆ

*Քեզ, Եղիա՛, կսիրեմ և կուզեի որ սիրեր*
*Ամեն տղա և աղջիկ, որուն բերնին վանդակեն*
*Լեզուն՝ թռչուն նորածին, թևասլաց անհամբեր,*
*Ջարնվելով ձողերուն, կճռվողե հայերեն...*

*Եղար դուն ալ գորշ սոխակ մ՚որուն դայլայլն ոգեղեն*
*Մեր պարտեզին մեջ կապույտ, լուսնի խաղաղ գիշերներ*
*Կպղպըջար, կհորդեր, կհոսեր վար թավուտքեն*
*Եվ ամեն թուփ ու ծաղիկ, ամեն ածու կօրօրեր...*

*Կպլտորե՞ր ձայնդ մերթ ու կդադրեր մերթ հանկարծ...*
*Պարտեզը քեզ կմոռնար, ու կրկնապես դուն խոցված՝*
*Կպահվեիր տարագիր, բարձր ճյուղի մի հետև...*

*Մինչև որ օր մ՚ալ, գուցե արգիլված ուղխը երգիդ,*
*Կամ գուցե ոստ մ՚ոլորվող քու վիզիդ շուրջը վտիտ*
*Խեղդեց զքեզ... ու ծառեն ինկավ Սավե՞րդ թեթև....*

## ՀԱՅ ՀՈԳԻԻՆ

Թոթված, ինչպես ցուրտն ու ձմեռն այսօրվան,
Ես կխորհիմ առավոտուն այն գարնան,
Ուր հին կոճղեն նոր բողբոջներ պայթեցան։

Ես կխորհիմ Թոհուբոհին գետնին տակ,
Որուն մեջեն խուժեց ավիշն համարձակ
Եվ բարձրացավ և սարսռացո՜ւց ծառն համակ։

Ես կխորհիմ ճնճղուկներու ճվոցին,
Սոխակներու գայլայլիկին ցայգային,
Որ անվհատ կոճղին զարթումն ոգեցին։

Հեղեղներո՛ւն, կայծակներուն անհամար
Ես կխորհիմ, որ իր զարթմանը համար
Արմատներուն քրքրեցին հողը խավար։

Եվ միշտ և մի՛շտ՝ իր բունին գորշ մոխիրեն
Հրափայլող այն կայծերուն ծաղկեղեն
Ես կխորհիմ, որ հոգիիս դեռ հույսն են։

Եվ այդ հույսին, այդ հույսին մեջ կտեսնեմ,
Բացված ընդդեմ ովկիանին ժանտադեմ,
Հայ Հոգիին հողմակոծ ծա՛ռը վսեմ...։

## ԱԶՆՎԱԹՈՒՂԹ

(Աստվածաշունչի թարգմանության 1500-ամյակին առթիվ)

*Կի՛ն տենդահար՝ խշտյակին վրա պառկած կհեծեր,*
*Հետո երկա՞ր կլռեր, սևեռած աչքը հեռուն՝*
*Հիշատակի և հույսի խրերախառն հուրերուն.*
*Տե՞նդը թե ցուրտը անոնց՝ կոգևորեր դեմքը ծեր...*

*Իր բաց դուռնեն, փեղկերեն և տանիքին փլփլկած՝*
*Գիշակերներ կուգային կրծել, կտցել, տանջել զայն,*
*Կայծեր ինքն ալ իր կուրծքն եղունգներովը երկայն...*
*Եվ շատ էին թափառիկ վայրենիներ զինք լլկած...*

*Աղքատ, հիվանդ, ան ինչպե՞ս այսքան ցավի կտոկար.*
*Կբխեր ո՞ր գաղտ հորեն իր ուժը՝ ջո՞ւր հրաշքի.*
*Եվ վերջապես ո՞վ էր ան, այսքան տոկուն ու համառ...*

*Բարձին տակեն՝ դղրդված ծրար մը վար կսահի...*
*Բեհեզի մեջ փաթթըված՝ աղնվաթո՛ւղթն իր ծագման,*
*Իր պապերուն թարգմանած Աստվածաշունչ Գի՛րքն է ան...:*

## ԼԵԶՈՒՆ, ՈՐՈՎ ԳՐԵՑԻ

*Լեզուն, որով գրեցի՝ երկրի երեսը քիչեր*
*Կկարդային զայն արդեն ու պակսեցան անոնք ալ…*
*Հարյուր տարի վերջ միայն, իր այս ձևով, այս սխալ*
*Կամ ճիշտ ձևով ու հնչմամբ՝ լեզուն անուշ, զոր խոսեր*

*Էին անուշ տղաքներ, գուցե խոսող չունենա,*
*Եվ քերթվածները, որոնց մեն մի բառին ու վանկին*
*Վրա ես սիրտ հատցուցի՝ գուցե անկյուն մը պառկին,*
*Առանց որ մեկը դնե իրենց բուն շեշտն անոնց վրա…*

*Տե՛ր, ցավ մ՚ալ ա՛յս է հիմա, ցավերեն ետք անհամար,*
*Որոնց մեջեն անցնելով, որոնցմե շիթ մ՚առնելով*
*Ես կազմեցի այս տաղերն ու հոս դրի քովե քով…*

*Զի եթե միշտ և միայն երգած եմ ես ինձ համար,*
*Զիս սփոփած եմ նաև՝ մտածելով, թե խոցված*
*Հոգիս կրնա իր երգով սփոփե՜լ սիրտը ոմանց…։*

# ԱՄԲՈՂՋԱԿԱՆ

# ԵՐԿԵՐԻՑ

## «ԲԱՆԱՍՏԵՂԾ»

*Բա՛ռ, քեզ հիմա աչքիս դեմ*
*Ու մտքիս դեմը բռներ՝*
*Երկարորեն կդիտեմ*
*Եվ կտեսնեմ վրադ գույներ,*
*Որ ինձի նոր կլնեն քեզ,*
*Եվ կմեծնաս դուն տակավ՝*
*Կպղտիկնամ մինչդեռ ես*
*Քու տեսիլքիդ դեմ անբավ...*

*Սակայն իրա՞վ է, որ քու*
*Եվ իմ միջև կապ մը կա,*
*Թ՚և այդ թևերդ հուժկու,*
*Որ անցյալեն ապագա,*
*Անհուն դարեր, միջոցներ*
*Արծվաթռիչ կչափեն՝*
*Ձիս ալ իրենց վրա առեր*
*Կփախցընեն ներկայեն։*

*Ու կտանին, կտանի՜ն*
*Աշխարհներ նոր ու հեռու*
*Եվ ատեններ անքընին,*
*Ուր այս հողին ծեր տղու,*
*Որ քիչ մ՚երգել գիտցավ լոկ*
*Տղոց, մարդոց մեջ անոք՝*
*Իր ցավերովը հիմա*
*Գորով ու գութ, սեր կըլլա...*

## ՄԻԱՑԵ՛Ք, ՏԱՂԵՐ...

*Միացե՛ք, տաղեր, որ աշխարհ եկաք,*
*Հեռու իրարմե ատենով, տեղով,*
*Տարբեր արևի կամ ամպերու տակ,*
*Սիրտըս մերթ սառի, մերթ մոխիրի քով...*

*Միացե՛ք, և դո՛ւք միացուցեք հոս.*
*Ձեզ ծնունդ տվող սերերն ու անոնց*
*Խանդն, որ կդյութե հիմա երեկոս,*
*Կլլնու հոգիս մշուշով մը հոծ...*

*Օ՜հ, երբ գան այստեղ միմյանց մոտ, այնքան*
*Անուշ էակներ, որոնք նոր միայն*
*Պիտի հոս իրար գտնեն ու ճանչնան,*

*Թո՛ղ ըսեն, օ՜հ, թող ըսեն իրարու*
*Գիշերն, էջե էջ, մրմունջով մ'աղու,*
*Թե սիրողն արժանի էր սիրվելու...*

## ՏՂԱ Մ'ԻՆՁԻ ԿԳՐԵ

«Տղա մ'ինձի կգրե. Ձեզ ճանչնալես շատ առաջ
Քանիներ ձեր տաղերեն գոց գիտեի ու մինակ՝
Ես կըսեի ինքզինքիս. գարնան զեփյուռ ու կարկաչ
Անոնք եղած են ինձի իմ աշխարհիս մեջը փակ...»:

Եվ· բարերար ու բարի այս տողերուն համար ես
Կուրախանամ, կհուզվիմ ու կխորհիմ տրտմորեն.
Իրա՞վ ուրեմն այսքա՛ն վերջ, պղտիկ ու խեղճ իմ երգե՛րս,
Դուք արձագանք կխըլեք տղու թրթռուն սիրտերեն...

Ինձի համար քիչ մը ուշ, բավական ո՛ւշ է հիմա.
Անոնց ոչ մին պատահմամբ օր մը երբ որ դեմս գա,
Պիտի կոչե զիս եղբայր, ոչ իսկ այսօր մեծ եղբայր:

Սակայն գացեք դուք, երգե՛ր, տեղե ի տեղ անոնց մոտ,
Որոնց հոգին դուշակման և սփոփման է կարոտ.
Ծիլ այդպես զիս ալ հիմա սփոփեցեք գաղտնաբար...

## ԳԻՏԵՄ ԳԱՂՏՆԻՔ Մ'ԱՀԱՎՈՐ

*Գիտեմ գաղտնիք մ'ահավոր.— այս աստվածն է սուտ աստված,*
*Որ խաբած է մարդը միշտ և մարդը զայն է խաբած,*
*Եվ այժմ անոնք հուսկ ուրեմն եկած կեցած դեմառդեմ,*
*Զիրար կուլի կկանչեն՝ դիմակաթափ, ծաղրադեմ...*

*Ուրիշ ոչինչ, այս միայն. և դրաման այս երկար*
*Պիտի տևե տակավին, բայց ոչ մեկ բան չի կրնար*
*Փոխել վախճանը անոր, որ չէ այլ ինչ, եթե ոչ*
*Մահն այս երկու կռվողաց ճիչով մը խառն, ահագոչ։*

*Պիտի մեռնի այս աստվածն այս մարդուն հետ գիրկընդխառն,*
*Որ բուն աստվածն՝ աքսորված սրտեն, մտքեն իր զավկին*
*Վերադառնա ու կազմե նորեն անոր նոր հոգին։*

*Պիտի մեռնի մարդը այս,— հրճվանքս է մեծ, թեև դառն,—*
*Իր գործերովը բոլոր ու պիտի նոր մարդը ծնի*
*Բանաստեղծի մը թերևս՝ երգեն սիրո, ցասումի...։*

## ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՅԱՎԻՆ ՏԱԿ...

Հավերժական ցավին տակ զգացա՞ծ եք դուք երբեք
Ամբողջ, ամբողջ աշխարհեն զձեզ հանկարծ կտրված,
Երբ քիչ առաջ ան ձեզի դեռ կժպտեր գրկաբաց։

Հուշն, ինչպես ծայր նիզակի, ձեր մտքին մեջ հոգնաբեկ
Ընդհատ-ընդհատ մխրճած ու արյունա՞ծ է զանի,
Եվ փափագա՞ծ եք մեռնիլ անկյուն մը լուռ ու գաղտնի։

Գաղտնի ու լուռ, որպեսզի մարդիկ ո՛չ իսկ եր մահու
Ցմտածեն ձեր վրա ու չկրնան խոցել ձեզ.
Ջհիշելով մահը ձեր՝ մոռնան ձեր կյանքը թերևս։

Եթե հույսի ճյուղն հանկարծ եղավ օձ մը անհարկու,
Եթե բաժակն հեշտության՝ ձեր բերնին շատ մոտեցած
Փսորեցավ ու այրեց զայն արջասպի պես հանկարծ,

Եթե արևը դարձավ ձեզ համար լույս դժոխքի,
Եթե ձեզ ալ երկինքեն նետեց անդունդը աստված,
Այս խավարշուտ տողերեն գուցե ձեզ շող մը ծագի։

## ԱՇԽԱՐՀԱԳՈՒՆԴ

*Օ՜հ, մարդկությունը ամբողջ աշխարհագունդ ինձ համար.*
*Մարդն իմ աշխարհն է հիմա, ու պատկերները անոր*
*Մինչև ձեղուն կլընուն սենյակս ու հոն անդադար*
*Ես կդառնամ տեսնելով միշտ տեսնելիք բան մը նոր։*

*Տարբեր ամենքն իրարմե, և նո՛յն ամենքը սակայն,*
*Ոմանք պզտիկ ու համեստ, ուրիշներ մեծ ու փքուն,*
*Ոմանք անշարժ, մինչ ահա ուրիշներ լուռ կդառնան,*
*Եվ կնայիմ, կքննեմ բևեռագիծն ամենուն։*

*Հոս լեռներ կան ու ձորեր ու անտառներ ու դաշտեր,*
*Ծովերն են հոն ու անոնց ափերն երկար դարձիդարձ.*
*Եվ կղզիները, որոնք մերթ ծովեն դուրս են ժայթքեր,*
*Մերթ մնացեր ցամաքին, լճերն անոնց հակադարձ...*

*Եվ ինչ որ ինք ավելցուց, սա սև կետերը անթիվ,*
*Սա քաղաքներն ու գյուղերն... Օ՛հ, աստվա՜ծ իմ, ես ինչպես*
*Աշխարհագունդն այդ հսկա իմ թևերուս մեջ՝ հեշտիվ*
*Կգրկեմ մերթ ու անով զիս մեծ ու գոհ կզգամ ես։*

## ԵՐԲ ՕՐԸ ԳԱ ՎԵՐՋԱՊԵՍ...

*Երբ օրը գա վերջապես և ըլլա մարդը մարդուն*
*Վայելքի մեջ, ի հարկին զրկանքի ալ հավասար,*
*Ուղղե միայն բնության զոհություն կամ դառնություն,*
*Նմանին ո՛չ, հագուրդին կամ նոթության իր համար...։*

*Երբ ա՛լ շղթան փոխանցման ըլլա ու ո՛չ կաշկանդման,*
*Ուժին հետ խելքն ու խելքին հետ վազե սերը նաև՝*
*Բոլոր ազգերն իրարու զոդող կապին այդ վրան*
*Ու կազմե մեկ ընտանիք մեկ աշխարհին այս վերև...։*

*Երբ հիմա մոտ, մոտեցած այդ Արշալույսը ծագի՝*
*Գիտեմ ես Ցեղ մը ցրված ամբողջ երեսը երկրի,*
*Որուն բոլոր դամբաններն ու օրրանները բոլոր*

*Պիտի հանկարծ արթննան, պիտի դողեն հրճվանքով,*
*Երդե երդիք, փոսե փոս, հայրը՝ որդույն, որդին՝ հոր,*
*Թե ա՛լ կրնա՝ մին աճիլ ու մյուսն հանգչիլ ապահով...»։*

## ԱՐԴՅՈՔ ԾՈՒ՞Ր Է...

*Արդյոք ծու՞ր է փեթակն ու կվազե՞ մեղրն արդյոք,*
*Եվ շվարած մեղուներն երկար ատեն կամ ընդմիշտ*
*Պիտի այլևս չկրնան բնազդումովն իրենց ճիշտ*
*Հարդարել տունն ու ծաղկանց վերև կախվիլ քաղցրահոգ...*

*Թե ոչ՝ շնորհդ հատուկ առած ես ետ անոնցմե,*
*Տե՛ր, ի՞նչ մեղքի համար մեծ, ու չեն այլևս գիտեր*
*Գործավորները այդ ժիր, ինչ որ գիտեր ի ծնե*
*Մեն մի անգամը ցեղին ամբողջ դարեր ու դարեր...*

*Չի մեղու չեն, այլ մարդիկ, ու շատ հին ցեղ մըն է ան,*
*Ան մեր ցեղն է օժտված տոկունությամբ մ՚աննման,*
*Որուն ուժերը ու միտքն երակներեն արդ կերթան։*

*Կհավատամ սակայն, տե՛ր, որ ցնցումով մը ուժգին*
*Պիտի փեթակը իր դիրքն ու ան իր ձիրքը նախկին*
*Գտնեն դարձյալ ու լույսով իր բջիջները լեցվին։*

## ՄԱՀԵՐԳ ՆԱՀԱՏԱԿԱՑ

*Անոնց համար, որ ինկան*
*Ջմեռ ազատ ուղելով՝*
*Սրտերը մեր քովն քով*
*Կըլլան այսօր մեկ խորան։*

*Անոնց հոգվույն պաշտամունք*
*Մեր մեն մի խոհն է հիմա,*
*Դեպի անոնց կամբանա*
*Մեր հույսն ու սերն՝ իբրև խունկ։*

*Եվ մեր ցավի սկիհեն*
*Անոնց մարմինն ու արյունն*
*Իբր անսահման սրբություն*
*Մենք կըննդունինք սրբորեն։*

## ՀՈՒՅՍԵՐ, ՄԵԾ ՀՈՒՅՍԵՐ...

*Հույսե՛ր, մեծ հույսե՛ր, մոտեցեք մեզի,*
*Թ՚և առած երկնի խորերեն կապույտ,*
*Ամենեն խորունկ խորերեն երկնի,*
*Ամենեն մաքուր, ամենեն անքույթ...*

*Հույսե՛ր, մեծ հույսե՛ր, եկեք լեցուցեք*
*Մերին նոր լուսցող աշխարհը ձեզմով,*
*Երգեցեք երգեր հրճվալից ու սեգ,*
*Մեր գլխուն վերև դարձեք անվրդով...։*

*Հույսե՛ր, մեծ հույսե՛ր... Բայց լսեցեք մեզ,*
*Դուք ուրկե՞ եկաք, ո՞ւր էիք երեկ,*
*Երբ մեր ծաղիկներն ինկան տոթակեզ,*
*Երբ մենե շատերն մեռան հողնարեկ...*

*Հույսե՛ր, դուք թեթև, ոսկեթև հույսեր,*
*Երգեցեք... Բայց ա՛հ, խնդրեմ, քիչ մը ցած,*
*Հոս դեռ սրտեր կան խոցված կարեվեր,*
*Հույսե՛ր, դուք կամաց մոտեցեք, կամաց...։*

## ՀՈՆ ՀԵՌՈՒՆ, ԱՀԱ.

*Հոն հեռուն, ահա,*
*Մասիսի կողեն*
*Քու ակդ նորեն*
*Բխած կուլա.*
*Քու առուներդ ենք,*
*Ո՛վ հորդ հայություն,*
*Կաճիս, կուլիս դուն*
*Եվ կլեցվինք մենք...*

*Մեր շուրջն անապատ,*
*Մեր դեմն են ժայռեր,*
*Բայց հավատքը մեր*
*Անապատն ապատ*
*Կընե, կհարթե*
*Ժայռն աղետալի*
*Եվ կթավալի*
*Զերթ գլան մ'երկաթե...*

*Մենք քու զավակներդ,*
*Սրտով սիրակեզ*
*Ահա կուգանք քեզ,*
*Հայաստա՛ն, որ զերթ*
*Մայր մը ճշմարիտ*
*Մեզ կկանչես արդ...*

# ՍԻՐՏՍ

*Իմ սիրտս գիս կնեղե, կցավցնե միշտ բացվող*
*Ցավի, վերքի մը նման...*
*Մերթ ձայն մ'ու ձև մ'արևոտ, դեմք մը, նայվածք մ'աստղաշող,*
*Կըլլան անոր բալասան։*

*Եվ կմոռնամ, կմոռնամ իմ կսկծանքը ամբողջ,*
*Կառնիմ սիրտս նորեն*
*Երկու ձեռքիս մեջ բռնած, իբրև բաժակ մը դողդոջ,*
*Լեցուն հույսի աղբյուրեն...*

*Սակայն հուշով մ'ալ երբեմն կուրծքիս ներքև հանկարծուստ*
*Կփորվի վիհ մը խորունկ,*
*Ուր կիյնա սիրտս կարծես,— մերթ ալ հույսով մը հարուստ,*
*Ան կընծայվի իբրև խունկ։*

*Իբրև ոսկի և զմուռս, երջանկության աստվածին...*
*Հիշատակին մեջեն նոր,*
*Մերթ կթըռի թևաբաց, և հույսին մեջ կվառին*
*Մերթ հին հուշեր սգավոր...*

*Բայց սիրտս հաճախ, շատ հաճախ՝ միմիայն ցավ մ'է ինձի,*
*Իր պատճառեն պարպված՝*
*Ցավ տարածուն, անանուն՝ վաղնջական հարվածի,*
*Զոր տված է ինձ աստված...*

*Ու այնքան հին՝ չեմ կրնար դեռ վարժվիլ ես անոր,*
*Բայց կխորհիմ նույն ատեն,*
*Թե փրկության, խնդության խենթեցընող խինդն ալ խոր*
*Ես կքաղեմ իր ծոցեն...*

## ՄԻ՛ՏՔ ԻՄ...

Դուն, որ տակավ աճեցար և կփայլիս բորբոքած՝
Աշտարակին մեջ գլխիս,
Ըսե՛լ, մի՛տք իմ, թե շուտով պիտի գա օրն, ուր աստված
Պիտի ներե, որ մարիս...

Ան, որ վառեց քեզ իրմե և յուղն իրմե կաթեցուց
Խորն ամանիդ քու հողե՝
Ինչ անողոք հեգնությամբ մը որոշած է վաղուց,
Որ պիտի քեզ անցունե։

Բայց չեմ ցավիր, որ հանգիս՝ եթե կրցար դուն, մի՛տք իմ,
Լուսավորել խորշեր մութ
Նախ իմ սրտիս և հետո սրտերու մեջ մտերիմ՝
Շողովն առույգ բոցերուդ...

Դո՛ւն, որ սիրտեն ստացար քու միակ ուժդ ու այդպես
Գացիր այլոց սիրտերուն,
Թերևս երթա՛ս պիտի դեռ, երբ որ պահված ըլլամ ես
Հողին ծոցին մեջ անհուն...։

## ԱՊՐԻ՞Լ, ԹԵ ՈՉ, ԵՐԱԶԵԼ

Ապրի՞լ թե ոչ, երազել,— չլուծեցինք հարցը դեռ.
Վայելքը ո՞ւր փնտրել, երազի՞ն մեջ թե կյանքին,
Չվճռեցինք տակավին... և մինչև ժամը վերջին
Այս մեծ խնդրին, ո՛վ հոգիս, վրադ ըլլա պիտի բեռ...

Քանզի երազն էր կյանքեն ավելի դյուր ու հեշտին
Եվ իր արշավն ալ՝ անծայր, դաշտե ի դաշտ, լեռնե լեռ,
Եվ ուներ ինքը միայն գոց դուռներուն բանալին,
Որոնց հետև լուսափյուռ կային գանձեր ակնահեռ —

Մենք սիրեցինք երազին երթալ ճամփեն ծաղկալից
Մինչև անդունդը երբեմն, մինչև բարձունքը երկնից,
Եվ, խե՛ղճ հոգիս, երկուքեն ալ սպառած ետ դարձանք։

Զի երազին վերքերուն կյանքը չեղավ բալասան,
Եվ հոգնության ալ կյանքին չեղավ երազն ապաստան.
Չառինք երազ մը կյանքեն, ու երազեն չառինք կյանք։

## ՓԱՌՔԸ

Փառքին համար ճամփա ելար
Այն հեռավոր առավոտուն՝
Խաղաղ սեմեն տունիդ խոնարհ,
Օ՛հ, կհիշե՞ս, կհիշե՞ս դուն...։

Փառքին համար, զոր մաս առ մաս
Դուն հավաքել կցանկայիր
Նախքան ծմեռը վերահաս
Իբրև ցանքիդ հունձք լիալիր։

Կտենչայիր մեծնալ քեզմով,
Ու մեծության երթալ անվերջ...
Հոգիդ՝ հնոց և միտքդ բով՝
Հալեցընել աշխարհն իր մեջ.

Նորակերտել աշխարհը հետ
Կջանայիր...։ Այսքան միայն...։
Եվ ի՞նչպես հեզ ու ինչ համեստ
Նախ ուսանիլ կուզեիր զայն։

Ճամփուդ վրա՝ դեռ նոր մեկնած,
Հանդիպեցար հոգիներու,
Հոգիք, հոգվույդ պես նորաբաց,
Ու նայեցիք պահ մ'իրարու...

Միայն, միայն նայեցաք դուք.
Եվ հեռացար, և հավիտյան
Մնաց տեսիլք մը վեհաշուք
Խոր սրտիդ ամայության...

Եվ քայլեցիր երկար, երկար
Եվ երբ ճամփան փշոտ ոտներ
Մտրակեցին քեզ վերեն վար,
Դուն չզղջացա՞ր թե փառքն այս էր...

## ԱՐՄԱՏԱԽԻՂ

Քանի՜ անգամ արմատախիլ... Եվ կուզեիր,
Որ այս դժբախտ ծառին ճյուղերը կքեին,
Ո՛վ տեր, հյութեղ պտուղներով, բայց ի՜նչ երկիր
Զինք որդեգրեց, սնուց, մեծցուց գորովագին...։

Արմատախիլ իր ծնունդեն առաջ արդեն,
Իր հայրենի տունը հեռուն լքված, ծախված,
Հիշատակներ ու կարոտներ, որ իրը չեն,
Այդ հողն անգամ չէ եղած հողն իր նախահարց։

Եվ դուն մեծնալ, սիրել, հուսալ տվիր անոր՝
Ճվարումի, շփոթության մը մեջ անհուն...
Լեռ մը՝ Մասիսն իր այրերով անդնդախոր,
Լեռ մ'Արգեոսն իր կողերուն վրա թավալուն,

Հեռուներեն անշուշտ թե զինք կկանչեին,
Սակայն բլուր մը՝ Ջամլճան ակնապարար՝
Կանգնած իր դեմ կըլլար հիացքն իր առաջին,
Զինք կդյութեր ու հորիզոնն իրեն կըլլար...։

## Ի՞ՆՉՊԵՍ ՏՂԱ ՄԸ ԿՐՆԱ

*Ի՞նչպես տղա մը կրնա տղայությունն իր պահած*
*Ու թաթախած ալ ըլլալ այնքան, այնպես ինչպես դուն.*
*Ուրկե՛ առիր դուն այդչափ աշնանահաս գիտություն՝*
*Չթափելով գարնային քու ծաղիկներդ ավլաբաց...*

*Երբ կյանքը դեմդ անապատ ճամփու մը պես կերկարի,*
*Եվ դուն զքեզ կտեսնես հեռղհեան զորավոր*
*Ու գեղեցիկ, երջանիկ՝ վաղվա մարդին վրա անոր՝*
*Ետ դարձողի մը ինչպես սիրտդ այնտեղ կփարի...*

*Եվ մոռնալով պահ մ'ամբողջ քու ապագադ՝ ներկային*
*Վրա վարդագույն ցոլացիկ, քու ջինջ աչքերդ ինչո՞ւ*
*Արցունքներով ամպոտած խավարին մեջ կնային...*

*Թող որ ես լամ՝ դողելով դեմքս ձեռքիս մեջ երկու,*
*Զի դուն հասնող գիտությունն ու գիտությունն ես վսեմ,*
*Ու ես քեզմե գիտցված ու գթացված այդ ծերն եմ...։*

## ԱՆՏՈՒՆԻ

Աստվա՛ծ, տվիր շատերուն տուն մը, հոգ չէ թե վարձու,
Որուն սեմեն սկսյալ թագավորի պես են հոն,
Կրնան դնել-վերցնել և հաշիվ չեն տար մարդու,
Որ իրենցն է առավոտն, իրենց՝ ամբողջ երեկոն։

Ինձի՝ հազիվ օտարի տան մեջ սենյակ մը օտար,
Ուր ոչինչ իմս է, ո՛չ իսկ այն անկողինն, որուն մեջ,
Երազելե, սիրելե, դալարվելե վերջ երկար՝
Կմեկնի օր մ՚ալ հոգին ճամփորդության իր անվերջ։

Ո՛չ իսկ պատին վրա անոր՝ ճառագայթներն ինձ տվիր
Ծաղած, շարված հոն մեկ-մեկ, զոր ունենալ աչքիս տակ՝
Իմ հոգիիս ու մտքիս կյանքի աղբյուրն էր միակ...։

Տուն մը անգամ, երբ կուգա ցեղե մը քիչ շատ ընտիր,
Իր մնայուն խորշն ունի. ես՝ իմ ձորձերս ու թուղթերս
Առած՝ նորե՛ն կմտնեմ այս նոր օտար խուցեն ներս...։

## ՆՈՐԵՆ ՄԻՆԱԿ...

*Նորեն մինակ, ես մինակ կդառնամ տուն այս գիշեր*
*Այնքան անցորդ տեսնելե և բղձալե վերջ այնքան,*
*Որ մեկն ալ հետըս քայլեր ու խոսակցեր իբր ընկեր,*
*Մեկն անոնցմե, որ այնքան էին աղվոր ու անցան...*

*Կդառնամ տուն, օ՛հ, ի՜նչ տուն, ոչ իսկ խրճիթ մ'որ ըլլար*
*Ինձի եկած անցյալեն ու պաշտպաներ իմ վաղս ալ,*
*Ուր չդողար հիշատակին հոն զգալով զինք օտար,*
*Կարենար հույսն ուր ապրիլ ու երգել քիչ մ' ու խնդալ...*

*Մինակ... և սիրտս ահագին շեղջ մ'է կարծես կուրծքիս տակ,*
*Հիմա թրջած անձրևեն, գլված հողեն, ծուռ դիզված*
*Շեղջ մը խոտի, որ վերեն վար կփըլի ալ հանկարծ...*

*Ա՛հ, եթե մայրս ծերուկ գիտնար թե ա՛յսքան մինակ,*
*Այսքան անտեր ու անսեր պիտի մնամ ես այստեղ,*
*Զիս չէր թողուր, կտաներ զիս իրեն հետ միատեղ...։*

## ԽՈՐՀՈՒՐԴ

Որպեսզի քեզ չպատե այդքան խորունկ տխրություն,
Այսուհետև խորհե լոկ
Մեռելներում և հետո հետդ մեծցած ողջերում,
Մոռցիր ուրիշ ամեն ոք...։

Անոնք, որ պահ մը քեզի զավկի նման մոտեցան,
Զոր դուն հոր պես սիրեցիր,
Հիմա չեղյալ համարե։ Տուր կրակին մաքրության
Ամեն նկար, ամեն գիր

Եվ մտածե, եթե պետք է անցյալին մտածես,
Մեռելներուն անփոփոխ,
Մեռելներուդ սիրալիր, որ ծանր չեն գտներ քեզ
Եվ դեմդ չեն պահեր ոխ

Տկարությունը իրենց հիշեցնելուդ համար դեռ...։
Անոնք միայն, ու հետո
Քեզի ոչինչ չպարտող քանի մը հին ընկերներ...
Ու դարձուր էջը սիրո...

## ՀԻՆ ՓԱՓԱԳ

Նորեն որքա՜ն, այս որքա՜ն դիզվեր է մեջս փափագ
Գեղեցկության և սիրո՝ իրարու վրա ցոլացած.
Եվ այդ փափագը ինչպե՜ս աչքներուս ներքև փակ
Կըլլա ճաճանչ ու կուրծքիս մեջ կըլլա հևք ու հարված...

Ինչպե՜ս կուզեմ հանդիպիլ հիմա մեկուն վերստին,
Որ ըլլա քաղցր ու ազվոր, նման անոնց, որ երբեմն
Անցան կյանքիս ընդմեջեն և զիս այնքան հուզեցին,
Որ կհիշեն զիս հազիվ, զոր ես ընդմի՜շտ կտեսնեմ...։

Եվ այս փափագը ինչպե՜ս դող կհանե իմ հոգիս,
Փափագն ազվոր էակին ձեռքը մեղմիկ բռնելու
Եվ նայելու աչքին մեջ ու թաղելու այնտեղ զիս...

Օ՜հ, այս փափագն, որ այսօր, զերթ լուսնալույս մը աղու
Գիշերիս մեջ կհոսի և ցույց կուտա ինձ նորեն
Նավ մը տանող զիս հեռու, նա՛վ մը եկած հեռուեն...։

## ՔԱՆԻ Մ'ԱՆԳԱՄ

Քանի մ'անգամ,— կպահեմ ես անոնց հուշը հավետ,—
Դիպվածը դեմս հանեց, մութեն հանեց ինձ համար
Աղվոր դեմքով ու անուշ հոգիով էակ մ'որուն հետ
Խաղաղեցման մեր տենչանքն արծարծեցինք գաղտնաբար...

Լուռ կամ խռպոտ կյանքիս մեջ՝ միայն քանի մը անգամ
Երկու նվագ, իրարմե ծնած հեռու, շատ հեռու,
— Օ՜հ, տղատ երգը անոնց, իմ եղանակս կարկամ,—
Գալով հանկարծ քովե քով, դաշնակվեցան իրարու...

Ի՜նչ փոթորիկ, աստվա՛ծ իմ, բայց և հետո ի՜նչ անդորր,
Հորձանավար ի՜նչ հեղեղ, ի՜նչ գրոհում ու բախում,
Եվ հետո ի՜նչ ծիածան՝ հորիզոնին վրա նոր...

Նման մարմնույս քրտնաթոր, կըլլար հոգիս ալ խխում,
Եվ բերքն իր այդ օրերու կըլլար առատ և առոք,
Եվ ի՜նչ ուժեղ ու պայծառ զիս կգտներ ամեն ոք...։

## ԾԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

*Ո՜վ ծերության խորհուրդներ, շատ ավելի խորությամբ*
*Եվ ճշտությամբ ա՛լ հիմա, մարդու հոգին դարմանող,*
*Եվ նախընտիր՝ զերթ ամպոտ երկինքն երկնի մը անամպ՝*
*Նկարումին աշխարհի.— խորհուրդներ խոր ու անշող,*

*Կհաշտվեմ ձեզ ահա, ձեզ կորոճամ օրնիրուն,*
*Կծծեմ հյութը ձերին և երակներս ամբողջ,·*
*Այժմ պակասած արյունն, կըլլան ձեզմով լեփլեցուն,·*
*Ձեզմով հարուստ կըզգամ զիս, նույնիսկ ձեզմով ալ առողջ։*

*Դո՛ւք, խորհուրդներ ծերության, այնպես դյութիչ եք երբեմն,*
*Որ նոր կյանքի մը կարծես ուժը իմ մեջ կզտնեմ*
*Եվ կցանկամ ձեզ փորել ու պրպտել ձեզ անվերջ...։*

*Եվ զի գիտեմ, թե շատով պետք է մեկնիլ՝ կես թողած*
*Ամեն շարժում ու մղում, ես կուզեի, որ աստված*
*Ինծի թույլ տար, ձեզ տանիլ հետս՝ ապագա կյանքիս մեջ։*

## ԱՆՈՐՈՇ, ԱՆԾԱՆՈԹ

Անորո՛շ, անծանո՛թ, դուն գիտեմ թե կայրիս
Ու գիտեմ թե կրնաս մեզ բաժնող խավարեն
Ելլել դուրս, մոտենալ, գտնվիլ, գտնել զիս
Եվ սիրվիլ, գեթ սիրվի՜լ, հեզորեն, քաղցրորեն...

Անորո՛շ, անծանո՛թ, կսպասեմ միշտ քեզի
Ու միայն սպասումն այս կուտա քիչ մը համ՝
Իմ անհամ օրերուս, խոհերուս ձանձրալի,
Եվ քեզմով քիչ մը գեթ իմ ապրիլս ես կզգամ...։

Անծանո՛թ, սիրելի՛, դուն նոր բույր, նոր շնորհ
Աշխարհի, որ անցար անպատճառ այսօր ալ
Շատ մոտեն իմ ճամփուս, կամ մեջեն իսկ անոր.

Լսե ինձ, պետք է ա՛լ իրարու դիմաց գալ,
Զի երկիրն ինձ համար շատ արագ կդառնա
Եվ աչքի խավարում, գլխու պտո՜ւյտ ինձ կուտա...»։

## ԽԱՂԻ ՀԱՄԱՐ

*Խաղի համար թող ըլլար, բայց անգամ մը գոնէ*
*Ինծի նայէր ու ժպտէր ու ըսէր մէկն անոնցմէ,*
*Զոր սիրեցի ես անձայն՝ թէ կսիրէ ինքն ալ զիս...*

*Շահու համար թող ըլլար, սակայն թող պահ մը այնպէս*
*Հաւատացնէր մէկն ինծի, թէ կայծ մը, թուած իմ սրտէս,*
*Զինք վառած է ու կուզէ մարիլ վրան իմ կուրծքիս...*

*Թող զիս հեգնէր ու ծաղրէր ու չարչարէր ան վերջէն,*
*Պիտի ըլլար կեանքս իրմով, հոգ չէ թէ քիչ մը ատեն,*
*Նման ուրիշ կեանքերու, խռով ու գոհ ու անդորր...*

*Եւ բախտը թող հաւիտեան ինծի նորէն չժպտէր,*
*Վերջին պահուն տեսնէի սիրտի քեզ դէմըս, ո՛վ սէր,*
*Զարութենէդ մերկացած ու ընող մահն իսկ աղւոր...։*

# ԻՄ ՍԻՐՈ ՏԵՆՉՍ

*Իմ սիրո տենչս է նման թափառական թռչունի*
*Որ կդիմե ճյուղե ճյուղ, քարե ի քար, քիվե քիվ,*
*Ու չի կրնար ոչ մեկ տեղ շինել իր բույնն, ուր հանգչի,*
*Որ իր կոտրած թևերուն կփորե վերքը հեշտիվ...։*

*Իմ սիրո տենչս է նման երկինքներուն անսահման,*
*Որոնց անցա ներքևեն, երկինքներուն անձրևող,*
*Փայլատակող անընդհատ, որոնք վրաս միշտ փըլան ,*
*Որոնք իզուր հուսացի արևափառ, աստղաշող...։*

*Հետո իմ տենչս է նման ծարավահյուծ կենդանյաց,*
*Որոնք կերթան բարձունքեն գահավեժի մը ժեռուտ,*
*Վարի փրփրուն գետակին խոխոջունեն մոլեգնած...։*

*Եվ տենչս, տե՜նչս սիրո, կնմանի լուռ ու մութ*
*Քարանձավի մը անծայր, որուն ճամփան կլեցու*
*Կմախքներովն անհամար գառնուկներու, ուլերու...։*

## ՏԵՆՉԱՆՔԸ

Հավերժաբար նոր ու խոր՝
Ունինք տենչանքը միայն,
Հանկարծածին խուլ ժխոր՝
Հառնող միջեն լռության։

Ուղեղին մեջ բղղացող,
Հոգվույն, մարմնույն բովանդակ՝
Տվող նոր ուժ ու նոր դող,
Խոլարշավող խենթ բանակ...

Կենդանային, մարդկային,
Իդեալով շպարված՝
Ան զզվանք է ու հարված...

Թռիչ ու անկում հոգիին,
Ձայն սպանող անուշ թույն՝
Տենչանքն է միշտ նորություն...։

## ԱՅՍ ՄԻԱԿ ՃՅՈՒՂԸ ԿԱՆԱՉ

Պետք է կտրել ու նետել այս միակ ճյուղը կանաչ
Այս ծառի սև բունին վրա, որ անտառն մըն է հին.
Կամ պարտեզին պալատի մ'ուր լոկ պատեր կերևին
Եվ կամ բակեն մատուռի մ'ուր կոտրած է ամեն խաչ...։

Այս միակ ճյուղը կանաչ պետք է կտրե՜լ վերջապես.
Ան հեղնության մ'է նման քույր մեռած բաներուն,
Եվ տերևները անոր երբ կողջունեն լույսն առտուն՝
Իրենք իրենց կամչնան ու կսոսկան ալ կարծես...։

Այս կանաչ ճյուղը, ո՜վ տեր, որ գոսացած այս բունեն
Իր հույզը դեռ կքաղե և կփորձե հասցընել
Անպարագիծ կապույտին սին շաքիլները իրենց,

Հիմա գիտե՜, թե այլևս թռչուններ հեզ ու ընտել
Պիտի վրան չթառին և կսպասե ա՛լ հիմա,
Որ զինքը կամ չորցընե՛ս և կամ կտրե՛ս անխնա...։

## ԿԻՆ ՄԸ, ԿՀԱՎԱՏԱՄ

*Կին մը, կհավատամ, թե կին մը նորեն*
*Կրնա հասկընալ ու մեղքընալ զիս,*
*Երբ ամեն, ամեն բան լսեմ իրեն,*
*Երբ որ մատներով շոշափե հոգիս…*

*Քիչ մ'իրեն նման ըլլալուս համար*
*Իրմե հեռացած ըլլալով հանդերձ,*
*Գտնելուն համար զիս հիվանդ, տկար,*
*Հյուծած ծարավե՝ աղբյուրին ի մերձ։*

*Ո՛չ, երբեք չըսե պիտի ան. ինչպե՞ս…*
*Կամ ինչո՞ւ, ինչո՞ւ, կամ՝ գեշ ըրեր ես,*
*Այլ՝ պիտի հծծե, դժբախտ… և նայի*

*Աչքիս մեջ այնպես, ինչպես վիրավոր*
*Եղբոր մը վերքին, տառապած եղբոր,*
*Ու միայն բուժել զիս ուզե պիտի…։*

## Ո՞Ր ՄԵԿՆ ԱՆՈՆՑՄԵ...

Ո՞ր մեկն անոնցմե, որոնց նայեցա
Գորովով մ'անհուն, ունեի գաղտնիքներ,
        Զոր իբրև ընծա
Օր մ'ինձի հանձնել պիտի փափագեր...

Եվ պիտի ուզեր, որ ի փոխարեն
Ծանրածանր, խորունկ խորհուրդը կյանքիս
        Ես բանամ իրեն,
Որպեսզի անկե թեթևցընե զիս...

Գեթ մեկը, անշուշտ, այսքան տարվան մեջ,
Անոնցմե, որոնց ըղձացի ես նույն
        Ըղձանքով անշեջ,
Կուզեր, որ դիմե հոգիս իր հոգվույն...

Եվ ան ալ հիմա, չսիրված, մինա՛կ,
Այս բազմության մեջ ինձի պես գուցե
        Իր անհիշատակ
Անսեր օրերուն վերջը կսպասե...։

## ԹԵԹԵՎ ԶՐՈՒՅՑ

Բազուկներո՞վ, ո՛չ, բռնել կուզեմ այսօր քեզ մտքով,
Քե՛զ, ամենեն խուսափուկ ու փափուկ իրն աշխարհի,
Քե՛զ, զինակից կին-մարմին և թշնամի կին-հոգի,
Գարնան արև կենարար և ամառվան խանձող հով...։

Ինչպե՞ս էակ մ'որ թռած ելած ըլլար Հրատեն.
Թողած իր զույգը այնտեղ, փնտրելով նոր մը հոս՝
Դուն երբեք չես խաղաղիր, գոհանար ո՛չ մեկ ատեն,
Դուն ծարավին ես հավետ՝ անձրևին տակ հորդահոս...։

Կուզեմ բռնել քեզ մտքով և պատասխան հարցումիս
Հավիրժական հարցումին, զոր կուղղե մարդը կնոջ,
Գտնել աչքիդ, բիբնիդ մեջ ու անդորրել իմ հոգիս...։

Ինչպե՞ս բռնել քեզ սակայն.— նույնիսկ թևերը դողդոջ
Կհաջողին ավելի, քան ուժեղ միտքը, ավա՜ղ,
Եվ քան թե սիրտը անշուշտ, որ է՝ քեզմո՞վ միշտ նվաղ...։

## Օ՜Հ, ԴԵՌ ԼԵՑՈՒՆ ԵՆ ԱՉՔԵՐՍ...

*Օ՜հ, դեռ լեցուն են աչքերս այդ հրափայլ տեսիլքով,*
*Ան, ողողեց ան զանոնք ինչպես հեղեղ, ինչպես ծով*
*Եվ երջանիկ են աչքերս երբ այս գիշեր վերստին*
*Այդ ձևավոր անհունին վրա մեղմիվ կդոցվին։*

*Ինչպես ծաղիկ մը շքեղ՝ ան բողբոջած էր այնպես,*
*Ան բացված էր քարերուն ամայության վրա, ու ես՝*
*Իմ հիացքիս, շլացքիս ու հուզումիս բոցերով*
*Ձայն կևրփնեի ու տակավ կհատնեի անոր քով։*

*Այդ տեսիլքեն կդողան դեռ հիմա միտքս ու հոգիս,*
*Այդ տեսիլքեն խենթեցած զգայարանքս բոլոր՝*
*Ձայն հեռուեն կշնչեն, կճաշակեն զայն այսօր...*

*Ինչպես ծաղիկը հովին՝ տենչանքիս մեջ կօրորվիս,*
*Կօրորվիս, ո՛վ մնրկություն, և իմ կարոտս անհուն*
*Քեզ կպահե բաց հավետ՝ նման բացված վարդերուն...։*

## ՔԵՐԹՎԱԾԸ

Քեզմե ծածուկ փառաբանված
Ու տենչացված կարոտագին
Շնորհներուդ անվերջ շարքին՝
Թող որ ձոնեմ մեկ նոր քերթված։

Քեզմե ծածուկ ծնած ամեն
Քերթվածներուս մեջեն ես զայն
Կնախընտրեմ, որուն անձայն
Վանկերն հոգվույս մեջ լոկ կերգեն։

Ինչպես սակայն ամեն քերթված,
Գրված և ոչ, հոժարակամ
Այն քերթվածին դեմ պիտի տամ,
Որ համբույրն է բերնիդ սիրված։

## ԲԱՂՁԱՆՔ

*Կուզեմ բռնել երկու ձեռքիս մեջ հոգիդ՝*
*Ինչպես այտերդ հիմա...*
*Ա՛հ, բարձրանար ան նայվածքիդ մեջ վճիտ*
*Ծաղիկ մ'ինչպես լիճին վրա։*

*Կուզեմ տեսնել՝ լուսնի գիշեր մը ինչպես*
*Մութ հորիզոնը հեռուն՝*
*Թարթիչներուդ մաղած լույսին մեջ այնպես*
*Հոգվույդ աշխույժը անհուն։*

*Աերանցը մեջ ճամփա մըն են խորհուրդներդ,*
*Ուր կմտնեմ շատ անգամ*
*Եվ մոլորած ու հոգնած ետ կդառնամ...*

*Աչքերուդ մեջ, ա՜հ, քու հոգիդ թերթ առ թերթ*
*Լուսնածաղկեր ու բացվեր,*
*Տայի՜ անոր ես գերբնային համբույրներ։*

## ՍԵՐԸ
## ՏԱՍՆՎԵՑ, ԵՐԵՍՈՒՆ ԵՎ ՎԱԹՍՈՒՆ ՏԱՐԵԿԱՆԻՆ

### Ա

### ԱՂԲՅՈՒՐԸ

*Աղբյուրը նոր է բխեր, ժայթքեր խորշե մը անտես*
*Եվ արշալույսն անոր մեջ, իր հեռուի լեռներով*
*Եվ ծառերով իր մոտի, կցոլանա գաղտնապես*
*Ու հովն հազիվ թե զանի կխռովե, անուշ հով։*

*Կերթա աղբյուրն ու կուզե մամուռներուն ու ծաղկանց*
*Ներքև պահվիլ ավելի, քան թե շողալ արևուն,*
*Պզտիկ արևն, որ կիյնա երբեմն իր մեջ, կըլլա գանձ,*
*Գանձ, զոր ծածկել կփորձե խիճի մը տակ սրսփուն...*

*Մե՞կը արդյոք ճամփուն վրա գլորեց բունծ մը հողի,*
*Թե՞ լեռան մութ ծոցին մեջ, ուր կյանքն իրեն կծնի՝*
*Անցավ պարիկ մը պզտիկ ու լվաց պորտն իր այնտեղ.*

*Աղբյուրը այժմ ինքնիրեն հանկարծակի կուռենա,*
*Ալիք-ալիք կդիզվի, կբարձրանա ինքն իր վրա,*
*Եվ կցանկա շուքին տեղ գրկել բարդին սա շքեղ։*

Բ

## ԾՈՎԸ

Ծովը խաղաղ կըծփա... Ծովն առավոտ-երեկո
Ափունքն իրեն կողողե ու կերթա ետ վերստին...
Ծովն իր գետերը ունի և իր ակերը ներգո,
Որոնք անվերջ կլընուն, ինչ որ կուտա արևին...։

Անդունդներուն իր նման՝ իր հորիզոնն է անհուն,
Իր միշտ հղի հորիզոնն, ուր կըծնին, կմեծնան,
Ու դեպի ափ կդիմեն նավեր, որոնց կայմերուն
Վրա՝ վերեն վար կթրթռան դրոշակներ տոնական...

Երբեմն երկինքը անոր կքստմնի ու սեփ-սև
Այդ բարձունքեն կապարներ կուգան ընել զինք ծակ-ծակ
Ու կայծակներ կխրին իր մեջ նիզակ առ նիզակ...

Բայց փոթորկեն ետք նորեն կշողա լույսն իր վերև.
Կթափանցե լույսն իր մեջ. ու ծովը, ծովն անսահման
Ճաճանչներով բյուրավոր կուտա լույսին պատասխան...։

Դ

## ՃԱՀԻՃԸ

*Գորտեր, լուսնակ գիշերին, կկըռկան սեզերուն*
*Մեջեն ու մերթ բարձրացած քարե բարձի մը վրա...*
*Գորտեր կուրցող աչքերով, կոգեն երկինքը հեռուն,*
*Որ ջուր զրկե ճահիճին, ուր միայն տիղմ կա հիմա...։*

*Ճահիճն իզուր կցանկա շարժիլ. իզուր կուզե ան*
*Հանիլ ծառին եղերքի ու տարածվիլ ոտքն անոր...*
*Հույսը՝ հազիվ թե ծագած՝ կըլլա պատճառ տրտմության,*
*Կըլլա տենչանքը իր մեջ, տենչանք մը խոր ու անզոր...*

*Եվ ճահիճն, ա՜հ, կհիշե թե եղավ ալ մ'ատենոք...*
*Ու եղավ ծով մը վերջեն, որ քաշվեցավ, ցամքեցավ,*
*Թողլով ընդմիշտ զինք այսպես թանձր ու անշարժ ճահիճ լոկ։*

*Կան դեռ որդեր խլրտող իր խավերուն մեջ խոնավ.*
*Կան դեռ գորտեր, որ կուրցած աչք ու ձայնով միշտ կերգեն.*
*Եվ կան ամպեր, որ կանցնին ու կծաղրեն զինք վերեն...։*

## ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

*Կեցի՛ր իմ քովըս այսպես, այս քերթվածին վրա հակած,*
*Զոր քեզ համար կգրեմ.*
*Մտածումիս կլուսնա կարծես երկինքն ամպամած՝*
*Երբ քեզ ունիմ աչքիս դեմ...*

*Կեցի՛ր անշարժ ու անխոս ու չխոսիմ ես քեզի,*
*Բայց միայն ա՛յս տողերով.*
*Ինչպես աղբյուր մը ահա քերթվածն հոսիլ կսկսի.*
*Դուն ձեռքըդ դի՛ր ձեռքիս քով...։*

*Մտիկ կընեմ սրտիս մեջ շեշտը ձայնիդ բարեկամ,*
*Որ երգիս մեջ կդողա.*
*Մոտեցուր դեմքդ ալ դեմքիս և մազերուդ թո՛ղ զգամ*
*Փափուկ շոյանքն այտիս վրա...։*

*Բայց նորաբուխ, երբ աղբյուր, որ կորոնե իր ճամփան՝*
*Քերթվածս իր դեմ կգտնե*
*Մարմինիդ ծառը ծաղկած... ու նվիրմամբ մ՚անսահման*
*Ան կսպառի հուզումե...։*

## ՈՍԿԵՄԱՐՏԸ

(Ողբերգություն վեց օրով)

Ա.

*Երկիրը երգ է ամբողջ՝ իր հովերով, ծովերով.*
*Կխաղա լույս մը անմեղ՝ երեսն հողին ու ջուրին.*
*Երջանկությունն իբրև ուլ մը կոստոստե Մարդոց քով...*
*Ոսկի է սիրտը Մարդուն, ան գտած չէ դեռ Ոսկին։*

Բ

*Երկիրն երգել կուզե միշտ ու կխաղա Լույսը դեռ,*
*Երբ կպահի Մարդուն մեջ խռովք ու տենդ մը գաղտնի...*
*Կփնտռե այժմ ան միշտ, կքրքրե դաշտ ու լեռ*
*Ու կգտնե վերջապես հոն պահված կույտը Ոսկի։*

Գ

*Ոսկին ժպտուն, պաղպուն՝ հիմա կերթա ձեռքե ձեռք,*
*Հացի, կյանքի փոխարեն կուտա ու ետ կառնե զայն...*
*Կըլլա վայելքը հյուծում և ցանկությունը իր՝ վերք,*
*Եվ կսկըսի Ոսկեմարտն՝ անագորույն և ունայն...*

Դ

Ո՞ւր գնաց կույսը անմեղ. երկիրն ինչո՞ւ ալ չերգեր,
Ի՞նչ փոթորիկ ծառերուն կնետե վար տերևներն
Ու վեր՝ ջուրերը ծովին։— Մարդ մը աչքերն իր փակեր,
Կռվեն հեռու, կհևա՝ երկրի սուգով ծանրաբեռն...։

Ե

Ատելավառ խառնուրդին ու ժխորին վրա մթին՝
Ահա հանկարծ կպայթի կշռավոր ճիչ մ'անսահման...
Շանթի նման կնետվի Քերթողը խորը կռվին,
Կխըլե կույտը Ոսկի, զայն կուտա ետ բնության...

Զ

Ի՞նչ փույթ արյունն առվակող Քերթողին լայն ճակատեն՝
Կխաղաղի քիչ առ քիչ մարդոց գուպարը ահեղ...
Ի՞նչ փույթ ավերն ու զոհերն, որ զայն ամբողջ կծածկեն,
Կերգե երկիրը դարձյալ ու կպարե լույսն անմեղ։

## ՈՍԿԻՆ

Ոսկին փախավ՝ սրդողած։ Նկուղներու մեջ հիմա,
Նման ու մոտ հանքերուն՝ ուրկե տակավ բարձրացեր,
Նավանքով վեր էր ելեր ու սփռվեր երկրի վրա,
Նկուղներու մութին մեջ՝ հիմա ոսկին կքնանա։

Աշխարհ այրի է անկե։ Աշխարհ՝ որ զայն կանիծեր,
Կորուսած լույսը անոր՝ հիմա կուրցեր է կարծես,
Ոսկին մաքուր էր ու զուտ, ոսկին մանուկ էր ու ծեր.
Գեղեցկություն էր ոսկին, ոսկին ժպիտ էր ու սեր։

Ջրի բարիք մըն էր ան՝ հեռուներու աստղին պես.
Ինքզինք անհուն մասերու բաժնած աստղի էր նման,
Որ մութ գիշեր մը մարդոց ինքն ընծայվեր գաղտնապես.
Խորհրդավոր իր խաղին աշխարհն ըրեր էր կրկես...։

Երկաթներու շղյունին և աղմուկին որոտման՝
Ոսկին վախցած հեռացավ...։ Արվեստից մայրն էր ոսկին,
Աղախին-մայրը անոնց, և արվեստներն արդ կողբան
Շիջումն անոր հրահրած քուրաներուն սրբազան։

Ոսկին՝ մաքուր ու մաքրող՝ խտացած հուրն էր հողին։

## ՄԱՐԴ ԵՎ ԵՐԿԻՆՔ

*Կմտածեմ՝ աստղերում, Ծիր-Կաթինին մեջ որքա՜ն*
*Աղի արցունք կան հարկավ, և՛ հառաչներ, և՛ հեծքեր…*
*Կարելի չէ այլապես, Մարդը Բնության է նման*
*Եվ տիեզերքն է անոր իր բնությունը տվեր…։*

*Դուրսեն՝ խաղաղ ու ժպտուն և զարդարուն շատ անգամ.*
*Ամենեն խեղճն ու տգեղն իսկ բեղմնավոր, գեղեցիկ*
*Իր մեկ կողմովը անհայտ. և է՛ն հզորը անկամ.*
*Եվ է՛ն շքեղը՝ փտած ներսեն, որդե մը պղտիկ։*

*Եվ հավիտյա՜ն, այն օրեն, ուր խտացած աստղ ու ամպ,*
*Երկինք ու ծով միացած, ժայռ ու քամի գիրկընդխառն,*
*Երևցավ Մարդը այստեղ՝ ան սկըսավ քաղցր ու դառն*

*Ուղղել խոհեր, խնդրանքներ դեպի Երկինք, որ հուզմամբ*
*Թվեցավ զինք մերթ լսել և զինք կոտրեց, ճզմեց մերթ,*
*Ըսել կարծես ուզելով՝ ունիմ ճիշտ քո քըմայքներդ։*

# ՄԱՐԴ, ԴՈ՛Ւ

Ցորեն պետք է ուտես քանի՜ հազար դրիվ,
Որ հասուննաս, գերեզմանին ըլլաս կեր,
Պետք է մղես ո՜րքան դաժան, բուռն կռիվ,
Որ հողը հուսկ հանգստացնե սիրտըդ ծեր...։

Ոսկի, արծաթ պետք է խլես դուն ո՜րքան
Քու նմանեդ, զայն ճզմելով անդադար,
Որպեսզի օր մը կարենաս ձեռնունայն
Երթալ պառկիլ է՛ն աղքատին հավասար...։

Եվ վերջապես, Մա՛րդ դու, ո՜րքան պետք է դեռ
Զքեզ այրե տենչանք ու սեր ու նախանձ,
Մինչև որ հուրքդ՝ անցընեն բյուր որդեր։

Մերթ ալ ո՜րքան, կիրքով մը մեծ ու անանց,
Պետք է թաղես դուն գիտություն աշխարհես,
Ու միայն զայն հետդ տանի՜ս ու թաղե՜ս...

## ԱՐՀԱՄԱՐՀԱՆՔ

*Ան՝ տկար մարդուն և հաղթըվածին*
*Ջրահն է փտուկ և զենքը անզոր.*
*Դիմակն է պահող երկչոտին հոգին*
*Եվ եսասերին՝ ծածկող սիրտը չոր...։*

*Որչա՜փ ավելի կսիրեմ մարդն, որ*
*Տիրելով այլոց և տեր իր անձին՝*
*Կդիտե դիպվածն ու դեմքերն անոր*
*Եվ կգրկե կյանքն, ամբողջ, առանձին։*

*Այդպես կուզեի անցնիլ աշխարհեն,*
*Միշտ հետաքրքիր, սիրտս միշտ խռով՝*
*Մերթ ատելությամբ և մերթ ալ սիրով...*

*Մինչև այն վայրկյանն, ուր ա՛լ կնիրհեն*
*Օրնիբուն կռված ռազմիկներն հպարտ,*
*Հանգիստ հոգիով և դեմքով-հանդարտ...։*

## ՍՈՒԼԹԱՆՈՒՀԻ

*Սուլթանուհի՛, որ կապրեիր Վոսփորի*
*Վրա կանգուն ու ջրամույն սպիտակ*
*Այն պալատին մեջը պահված, ես բերի*
*Շա՜տ գիշերներ, աստեղազարդ երկնից տակ.*

*Իմ տղու նոր երազս ու տենչըս քեզի.*
*Վտանգներու մեջեն կուտակ առ կուտակ*
*Դեմս դիզված, ուրկե հազի՜վ կրնայի*
*Փրկել ու տալ քեզի հոգիս բովանդակ...*

*Սուլթանուհի՛, գուցե այն կինն ես հիմա,*
*Զոր Մեթրոյին առջև այսօր ես տեսա.*
*Հագնած ու ծեր, հին չարշաֆով մը պատած...*

*Սուլթանուհի՛, դուն անպատճառ այն կինն ես,*
*Ու մենք այսօր իրար տեսա՜նք վերջապես,*
*Դուն՝ պալատեդ, ես երազես ազատած...:*

# ԾԱՂԿԱՁՈՐԵՆ ԾՈՎԿԱՍԱՐ

*Ծաղկաձորեն Ծովկասար ամբողջ տաժանք է ճամփան՝*
*Մուռիկ-մուռիկ, փուշերով ու քարերով լեփ-լեցուն.*
*Ծաղկաձորին վրա մարդիկ օր մ՚աչքերնին կբանան,*
*Ծովկասարին չհասած զանոնք մութով կլընուն...։*

*Ծաղկաձորեն՝ շատ կանուխ, արշալույսին կմեկնին,*
*Շտապելով, վազելով, որ շուտ հասնին Ծովկասար.*
*Անվերադարձ ճամփուն վրա՝ նոր կխորհին ցերեկին,*
*Թե Ծաղկաձորն էր աղվոր իր շուքերովը երկար...։*

*Ծովկասարին՝ կհուսան — թեև ոչ ոք զայն տեսավ —*
*Վայելել զով աղբյուրներն, հովը ալատ, լույսն առատ*
*Եվ երկնքի և երկրի մեջտեղ նիրհել քուն մը լավ...*

*Կիջնան ամենքն ալ ճամփան, կամ վիրավոր, կամ վհատ,*
*Ծաղկաձորեն գգվելով քանի մի փոքր հիշատակ,*
*Ծովկասարի ապատրանքին լեռնանման ճնշման տակ...*

## ՇՈՃԻՆ

Ցավըդ հինեն կսկսի, լիբանանյան ո՛վ շոճի,
Գետնեն հազիվ բարձրացած՝ կորսնցուցեր ես ահա
Առաջին ճյուղդ, որուն դեռ հետքը վրադ կերևա,
Զորցած, ցցված դեպի վեր՝ հետքը կտրած բազուկի։

Հետո քանի՜ քանիներ, հաջորդաբար, անոր պես,
Մինչև որ բունդ ալ մնացած նկատելով բավական՝
Թույլ են տվեր, որ վերի ոստերդ աճին, հաստընան,
Եվ վարսերով լուսավոր շքավորեն անոնք քեզ։

Եվ անոնց վրա ալ որքա՜ն սղոցումի հետքեր նոր՝
Վաղամեռիկ քու թոռներ-թոռնուհիներըդ բոլոր,
Որոնց եղեր ես այսպես դուն մահարձանը ինքնին։

Բայց երբեք չես ներշնչվեր, ո՛վ լեռնային կանաչ ծառ,
Այդքան զոհի հուշերով ոչ մեկ սուգի գաղափար.
Միշտ նոր ծիլեր կծընիս ու կօրրիս մեջն երկնքին...։

## ԽՈՍՏՈՒՄ

*Աղջիկ, տղա, պարմանի, պարմանուհի,— բառերուն*
*Մեջեն մեղմիվ կհառնեք՝ թուփերու պես ծաղկազարդ,*
*Սղնիկներու պես ճապուկ, կծփաք պահ մը հեռուն,*
*Կմոտենաք և ձեզի կժպտի սիրտս հանդարտ...։*

*Կակուղ կավին մանկության՝ ավելնալով, փչվելով*
*Տակավ ի կուժ, ի կարաս փոփոխումի ճամփուն վրա՝*
*Դուք սափորներ եք լեցուն գինիներով քաղցր ու զով,*
*Ուրկե աստվածը սիրո պիտի ըմպե, արբենա...։*

*Ա՛հ, ձեր հոգի՞ն մարմինին, թե՞ ձեր մարմինը հոգվույն*
*Ձևերն ունի նրբողորկ, նրբասըլաց, նրբօրոր,*
*Ունի գույներն երազի՝ փափկանշույլ, փափկասուն...*

*Պարմանուհի, պարմանի, կխոստանամ ես այսօր*
*Ձեզ իրարու, օ՜հ, հիմա առանց տենչի, նախանձի,*
*Աչքիս, ձեռքիս մեջ պահած միայն ձեր շուքը ինձի...։*

## ՊԱՏԱՍԽԱՆ ՏՂՈՒ ՄԸ

*Դուն խենթ հոգի՛, խենթ տղա՛, ո՞վ խենթեցուց քեզ, ի՞նչպես...*
*Երեկ խելոք ու խաղաղ առվակն էիր գյուղակին,*
*Ո՞վ այդ հեղեղը պղտոր հանկարծակի խառնեց քեզ,*
*Առվակը գետ մը ըրավ և ջրվեժնե՞ր ահագին։*

*Թումբերդ ամեն կքանդես, ափունքդ ամբողջ կողողես*
*Մինչ ջուրերուդ մեջ փրփրոտ, որ հողին գույնը ունին*
*Ու գույնին հալած աչքերու, կնշմարեմ ահա ես*
*Նավաբեկյալ քու սերերդ ու հավատքներդ, հույսերդ հին...*

*Կհանդարտի՞ս բայց դուն ալ կամ կհորդի՛ս առավել.*
*Քու հին հունիդ մեջ նորեն կպարփակե քեզ սաստված,*
*Եվ կամ հեղեղդ կերթա դաշտերուն մեջ կորսված...*

*Իսկ այն հոգին, զոր վարքիդ մեջ կդառնա ողջունել,*
*Խելոքցածի իմ հոգիս, որին հոգիդ կբանաս՝*
*Քու քաոսից քիչ մը լույս կմաղթե միշտ, ո՛վ տղաս...։*

## ՏՂԱՆ

Պզտիկ տղան,— երբ կանցներ էլ Սրիշի-ընդմեջեն
Մեր կառախումբը դանդաղ,— տղան պատին կռթընած,
Տղան աղվոր ու տխուր՝ կվերհիշեմ ես նորեն…։

Ան միշտ կեցած է այնտեղ՝ կարծես կյանքին իր դիմաց,
Իր գյուղական տարազով, իր տրտմությամբը միայն.
Ու վերջալույսը շքեղ միշտ կողողե, կերփնե զայն։

Պզտիկ տղան կմեծնա այս բոպեին իսկ արդեն,
Սակայն մնա պիտի ան,— մտածեցի ես հանկարծ,—
Ինձի համար նույնը միշտ, ապրող միայն այս բոպեն։

Ջերթ վանդակե մը ոսկի, գտնելով դուռն անոր բաց,
Ժամանակին մեջ կարծես թռավ թռչուն այդ տղան
Ու զայն իմ միտքըս բռնեց ու ապրեցուց հավիտյան…։

## ՍԻՐՈ ԿՈՉ

Եվ հեռաձայնը անթել
Ինձ լուր բերավ, թե հեռուն՝
Ամազոնի ափերում,
Կին մը կուզե զիս սիրել...

Լուրը բերող ալիքներն
Ես գգվեցի հուզումով.
«Իրա՞վ, եղա՞ք խոսն քով,
Ի՞նչ մույնք ու աչք ան ուներ...»։

Բայց ալիքները չըսին
Ուրիշ ոչինչ, ո՛չ մեկ բառ...
Ու չեմ գիտեր ես խապառ

Ծակատագիրն էակին,
Որ խեղճ, մենակ էր այնքան՝
Զիս կանչելու սատիճան...։

## ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

*Սիրտս այս գիշեր կկանչե իր մեռելները բոլոր...*
*Մեռելապահ քնացած, Հիշողությո՛ւն, բահդ առ*
*Եվ բա՛ց ամեն դամբաններն։ Ես հանդարտ եմ, զորավոր,*
*Ու ժանտագույն տեսիլն ալ զիս վախցնել չի կրնար։*

*Գիտես, չկա՛ն ա՛լ հիմա ան հոգիները աղվոր,*
*Որ իմ հոգիս էին հոս, և մարմինները պայծառ,*
*Որոնց համար կուտայի իմ կյանքս ես՝ օ՜հ, այսօր*
*Իրենք իրենց մեջ լուծված, գերեզմանված են իսպառ...։*

*Հիշողությո՛ւն, քեզ ի՞նչ փույթ, եթե զանոնք մի առ մի*
*Գիրկս կառնեմ այս գիշեր, կհամբուրեմ, կգգվեմ*
*Ու խենթի պես, ուժգնորեն, ես կսեղմեմ կուրծքիս դեմ։*

*Հիմա՛ր ծերուկ, դուն կուլաս անոնց շնորհն երբեմնի.*
*Ու չես գիտեր՝ թե կուզեմ ես հանձնվիլ այս սոսկման,*
*Նախընտրելով զայն վախին ամայության, լռության...։*

## ՀԱԶԱՐՆԵՐՈՒ ՄԷՋԷՆ

Հազարներու մէջէն մէկն, եղար այն մէկը այսօր,
Զոր զգացի թէ սիրել անհունօրէն կըրնայի,
Նայվածքդ այնքա՜ն էր անուշ, ժպիտդ այնքա՜ն էր աղվոր,
Որ բխեցավ հանկարծ հույսն հոգիիս մէջ ամայի...

Մազերդ էին ծոծրակիդ վրա ոսկիէ կարված,
Ինչպես մազերն Սփինքսին, և դեմքդ գույնը ուներ
Հախճապակիի մը ազնիվ, ու թարթիչներդ աղվաբաց
Կհանէին այտերուդ վրա լուսնի ճաճանչներ...։

Ոտքի ելար ու հանկարծ սիրտս թռավ կուրծքիս տակ,
Հասակդ ինչքա՜ն էր ճկուն, ինչքա՜ն փափուկ ու հարուստ,
Կիրթ էր քայլվածքդ ալ՝ ինչպես կուստ երազ մը փախուստ...

Ու հեռացար, շա՛տ անուշ, շա՜տ գեղեցիկ, շա՜տ հստակ.
Մթընցնելով, պարպելով սրտիս ամբողջ քեզի հետ,
Շնորհներուդ բազմությամբ լեցընելով զիս հավետ...։

## ՊԵԳԱՍ

*Օր մը հանկարծ զիս առիր գավակիդ վրա ու տարիր,*
*Քանի մը քայլ, հազիվհազ…։ Մինչ սահելով ինկա վար՝*
*Մնաց տղու սրտիս մեջ, այդ արշավեն ցավագար,*
*Տենչը իրոք սուրալու քեզ հետ դաշտաց մեջ անծիր…։*

*Եվ թեև միշտ ավելի վարանումով ու խոհեմ՝*
*Ես մերթ ընդ մերթ մոտեցա քեզի նորեն, ցատկեցի*
*Վրադ մեղմիվ, և ամեն անգամ տվիր դուն ինձի*
*Քեզմե տարված ըլլալու հրճվանքն ու դողը վսեմ…։*

*Եղա՛ն, եղան իսկ օրեր, պատրանք, ցնորք էր գուցե,*
*Ուր հավատացի զիս քեզ տեր կամ նույնացած քեզի հետ,*
*Այնքան քու վազքդ ու իմ հեքս ուներին ճիշտ չափը նույն…*

*Այսպես անցանք միասին ոլորտներե լուսավետ,*
*Սառած լեռներ ու ծովեր մեր ոտքին տակ, ո՛վ Պեգաս,*
*Մինչ կխեղդե զիս ավաղն և դուն հիմա ա՛լ չկաս…։*

## ՀԱՅՍԼԻՆ

Կնայէի երբ որ քու մէջէ հին ատեն
Փողկապիս էր ամենեն շատ ու մազիս...
Մեկուն՝ հազիվ աչք մը այլևս ու մյուսեն
Ինչ որ մնաց՝ ա՛լ չի փորձեր հիմա գլխս...

Կուզեմ անցնիլ արագորեն առջևեդ՝
Քեզ մերժելով, չտեսնելով իսկ հաճախ,
Թեև գիտեմ, թե դուն կեցած ես հավետ
Դարանակալ, որպեսզի տաս ինձի վախ...։

Կուզեմ անցնիլ, բայց կանգ կառնեմ շատ անգամ...
Քենե սոսկա՞մ.— ոչ, չկարծե՞ս ատիկա...
Ու դարձած քեզ՝ կուլլի հրավեր կկարդամ։

Երեսս ուղիղ քու երեսիդ դեմ կուգա,
Ի՞նչ ցույց կուտաս, նոր հնությու՞ն մը ինձի,
Հո՞գս, անով կըլլամ հարո՞ւստ ավելի...։

## ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

*Հպարտությո՛ւն, առաջին*
*Եղար դուն ձևն հոգիիս,*
*Եղիր իր դիրքն ալ վերջին*
*Եվ կարծրացո՛ւր, պրկե՛ զիս...*

*Կրծումին մեջ օրերուն*
*Տարրերուն դեմ չարակամ,*
*Մնալ ամբողջ և կանգուն*
*Քեզմով միայն դեռ կրնամ...*

*Մինակ՝ ծառի մը նման,*
*Մինակ՝ շենքի մը պես նեղ,*
*Երբ հասնի ժամըս անցման*

*Հանկարծական ու ահեղ,*
*Խոնարհումով մը կուզեմ*
*Համբուրել հողը վսեմ...*

## ԳԻՇԵՐԻՆ

*Ինձ կթըվի, ո՜վ Գիշեր, որ լռությանդ ու մութիդ*
*Կեցած կեդրոնը հիմա՝ ես կողջունեմ անկե վեր*
*Տարածափյուռ, խաղաղիկ, անվախճան Այգը վճիտ*
*Եվ թե արդեն կլընուն զիս դրախտի զեփյուռներ...։*

*Ինձ կթըվի թե միակ և առաջին ու վերջին*
*Մարդ արարածն եմ երկրի վրա ապրած, ես Մարդն եմ,*
*Որ խաղալե ետք մինչև հուսկ տեսարանն իր դերին,*
*Դեպ հեղինակն է դարձած ու կանգնած է անոր դեմ...։*

*Նախ՝ ժխորն եմ թողած, հուզումն ու տենդը համակ,*
*Զոր տվի ես աշխարհին և որոնցմե դուրս, տակավ,*
*Հանեցի ես վերստին, օրենքին խոսքը հստակ...։*

*Խաղաղությանդ ու խորհուրդդ ու խորությանդ ալ անքավ*
*Ինձ կթըվի, ո՜վ Գիշեր, թե ա՛լ եղած են տարրերս*
*Ու կմտնեմ քայլ առ քայլ Բացարձակեն հիմա ներս...*

## ԿԵՐԱԶԵԻ ԵՍ ԵՐԿԱՐ

*Կերազեի ես երկար,*
*Քեզ հուսալով, հիշելով...*
*Հիմա ա՛լ սիրտըս է խռով,*
*Ու երազել չեմ կրնար...*

*Կազմորնայիր, օհ, ո՜րքան*
*Արևին մեջ հոգիիս,*
*Հիմա ցուրտ է, կմքսիս*
*Խորն հոգիիս մթության։*

*Բայց ի՜նչ ցավ է, ի՜նչ մեծ ցավ,*
*Քեզ հավատացած միշտ ըլլալ*
*Ընտրյալ, օծյալ ու օրհնյալ.*

*Ու գիտնալ թե ա՛լ բընավ*
*Պիտի նորեն չքանաս*
*Անհունությունդ վրաս...։*

# ՎԱՐԴԱՆԱՆՑ

(Նախերգանք)

*Պատերազմ էր հավատքի և հայրենյաց փրկության…*
*Կիջներ վերջին իրիկունն, ու արյունները վաղվան*
*Հորիզոնին վրա կարծես էին կանխավ ցոլացած*
*Փայլատակող, եռացող և բարձրացող ու աստված...։*

*Դաշտը ամբողջ կդողար՝ իր խոր անունն՝ Ավարա՜յր*
*Արձագանքված լսելով ժամանակին մեջ անծայր…*
*Գետը Տղմուտ կհոսեր՝ պղտոր անունը իրեն*
*Ազամանդի պես բարձած, պսպղալեն, թրթռալեն…*

*Հոն գագաթին Մասիսի, հոն աստվածները Հայոց*
*Կհակեին համախումբ՝ արձակելով ծուխ ու բոց*
*Նոր աստուծույն դեմ քինոտ, բայց սրտեռանդ, անհամբեր...։*

*Եվ դիմացին, քաղցրանիստ Արարածին ի վերև*
*Քրիստոս իջած, պահվըտած ճերմակ ամպի մը հետև,*
*Ինչպես գիշերն իր վերջին՝ բազկատարած կաղոթեր...։*

## ԻՆՔՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

*Ըսե՛ անոնց, մեղմորեն, թե իրենց պես էիր դուն,*
*Ոչ շատ առաջ տակավին, թե կրնայիր իրենց պես*
*Վազել, ցատկել ու խնդալ. էիր ճկուն ու սիրուն,*
*Ապրող ներկան միմիայն. ճիշտ իրենց պես, վերջապես...*

*Ըսե՛ թե շուտ իրենք ալ... բայց չէ՛, ոչինչ մի՛ ըսեր,*
*Թեև ըսես ալ եթե՝ պիտի լսեն քեզ հազիվ*
*Եվ գթալով քու վրադ պիտի խորհին «ծեր է, ծեր»,*
*Ու քեզ լքած փնտըրեն պիտի նոր խաղ, նոր կռիվ...*

*Խաղի կռիվ՝ դեռ հիմա... կռիվ սիրո՝ քիչ հետո,*
*Ինչպես որ դուն կընեիր և ինչպես չես ըներ ա՛լ*
*Եվ չընելու խոնջենքեն կուզես հանգչիլ, քնանալ...*

*Օ՜, թո՛ղ երթան, թո՛ղ երթան, ու խաղի մեջ և սիրո*
*Թող մխըրճին գլխովին այսօր և վաղն, ընդերկար,*
*Զի լավագույնն ասոնցմե կյանքը ոչինչ մեզ չի տար...*

## ՈՒՐԵՄՆ ԱՅՍՊԵՍ

*Ուրեմն այսպես, ես այլևս մուրացկանին պես հետին,*
*Պիտի խնդրեմ աշխարհեն սիրո սնունդս օրական,*
*Եվ չգտած ոչ մեկ տեղ, պիտի երթամ աղբյուսին՝*
*Ավելցուկներ ժողվելու անոթությանըս դարման։*

*Եվ զի հարուստ ու հպարտ եղա երբեմն երազով՝*
*Պիտի ուզել չկրնամ նույնիսկ բարի հոգիեն,*
*Որ կանգ կառներ դիպվածով զիս անցորդ հուրիս քով,*
*Ումպ մը գորով, շիթ մը սեր իր սափորեն լուսեղեն։*

*Ողբերգությունն այս անհուն պիտի տանեմ ա՛լ այսպես,*
*Ու պիտի զայն չլսե ու չտեսնե ոչ մեկ անձ,*
*Ու իմ մութիս մեջ տակավ պիտի մարիմ, հատնիմ ես։*

*Մայրս անգամ չգիտցավ ու չհարցուց օր մ'օրանց,*
*Թե կապրեի ես ի՛նչպես, ի՞նչ սնունդով հոգիի.*
*— Ոչ ոք ինձ չափ կրեց անգթությունը երկնի։*

## ԽԵՂՃ ՄԱՐԴԸ

### Ա

*Խեղճ մարդ մըն էր անիկա, որ չէր կրնար և ոչ իսկ*
*Իր խեղճությունը պատմել, գիտնալով թե իր վրա*
*Պիտի խնդան շատ շատեր՝ ինչ որ վտանգ մ'է պզտիկ,*
*Եվ թե ոչ ոք — ցավն այս է — պիտի իր ցավն հասկընա...*

*Խեղճ մարդ մըն էր, որ սակայն կզգար ինքզինք շատ հարուստ,*
*Բայց կըմբռներ նույն ատեն, թե անսահման իր գանձով*
*Կրնար ոչինչ ստանալ, թե ան ծովուն ներքև բուստ,*
*Ծառին մեջ խունկ էր միայն, ինքն էր այդ ծառըն ու ծով...*

*Անոնց, որոնց ընծայել ուզեց ամբողջ իր հոգին*
*Հին, հին ատեն, չկրցավ մինչև անգամ մատնանիշ*
*Ընել իր սերը անհուն և սպասեց անձկագին...։*

*Այնպես որ երբ զինք կանչեն օր մ'աշխարհե մը ուրիշ,*
*Ու մոտենա մահն իրեն, պիտի կրնա դժվարավ*
*Տանիլ խեղճ մարդն, որ երբեք սիրտը պարպել չկըրցավ...։*

## Բ

Խեղճ մարդն անգամ մը միայն, և այդ ծովու մը եզերք,
Հուսաց, խենթի պես հուսաց, և հույսը պահ մ՚իր վրա,
Խտացած հույսը իրեն, տեղաց իբրև մանանա,
Եղավ ծունկին քովը ծունկ, եղավ ձեռքին ներքև ձեռք...

Օ՜հ, ա՜յն կապույտը ջուրին, անոր ծփանքն, ավազին
Հյուլեացած նվիրումն իրենց ոտքին, մարմնույն տակ,
Ու հրավերն երկնքին մեջ ամպերուն սպիտակ,
Ու իրենց մոտ՝ պահապան ժայռերուն սև հովանին...

Խեղճ մարդն, եղած ինքզինքեն, թափեց իր գանձը անհուն՝
Նախ վախնալով, դողալով, միայն քիչ-քիչ, ամեն օր,
Ամբողջովին օր մըն ալ՝ լուռ նայվածքին տակ անոր...

Բայց սիրելին՝ վարժված մակընթացմանը ծովուն,
Այս հորդումեն խրտչեցավ ու քաշվեցավ հանկարծ ետ,
Ու ծովը, ծո՜վն, ամեն բան առավ-տարավ իրեն հետ...:

Գ

*Խեղճ մարդն անկե ի վեր ճիշտ — եղավ տարի մը հիմա —*
*Կանդրադառնա այդ դեպքին. կզգա ինքզինք մերթ դատարկ*
*Եվ մերթ նույնքան դեռ լեցուն. երբեմն խիստ կվախնա*
*Հիշատակեն. կխմե երբեմն անոր հյութը բարկ...*

*Երկար օրեր՝ կմոռնա...։ Տեսնելով հին սիրելին՝*
*Կըսե՝ այս էր ու կերթա՝ խաղաղությունն իր գտած,*
*Սուրբի մը պես, զոր տարրերն հավաքաբար փորձեցին*
*Եղան նախ լույս ու շնորհ ու հետո բոց ու հարված...*

*Եվ կօրորվի ներկային ալիքներուն անձնատուր.*
*Թ'ողած մեռելն իր ետին...։ Սակայն որքան գիշերներ*
*Մեռելն իր դեմ կցատկե ու մինչդեռ ինք անհամբեր,*

*Կերկարե ձեռքը անոր, ան, ժպտալով մը տխուր*
*Կանհետանա վերստին, ու կխորհի ինք՝ խեղճ մարդ,*
*Թե իրեն պետք է այլևս ըլլալ մահվան չափ հանդարտ...։*

# ՊԱՏԻԺԸ

Պզտիկ ու ջինջ, ջինջ տղան ինչպես մեծցե՞ր է հիմա,
Փախեր գացեր է առաջ ու զարնըված ժայռերու,
Դարձեր է հո, աղտոտած, ու դեմս ուղիղ կկենա
Անխոս, անշարժ, անհլու...։

Կմոռնեմ. ծնոտիս գլուխն հազիվ կհասնի,
Ալեծածան իր մազերն ունին ոսկիէ մութ ցոլքեր.
Կբարձրանա անոնցմե բուրում մը բարկ մեխակի,
Զոր, ո՛չ, շնչել չեմ ուզեր...։

Եվ զայրացած կդիտեմ ես վերեն վար այս տղան,
Բայց և տակավ կկարդամ զինքը գիրքի մը պես բաց...
Հետո մեջեն տողերուն, անոնց ներքեն ու վրան՝
Գիրքն իմ կյանքիս մոռցըված...։

Իր մեջը զի՛ս կտեսնեմ այս տարիքին, երբ նույնպես
Իմ գաղտնի կյանքս ունեի, մղումներով իր գաղտնի...
Բայց դեռ փոքր է, ու տարբե՞ր կկարծեի զինքը ես...
Ո՛չ, պետք է ան պատժըվի...։

Կը ծռիմ քիչ մ'ալ վրան ու խոպոպ մ'իր մազերեն
Ճիշտ երեսիս կքավի... Ծե՞ծ թե խրատ իրեն տալ,
Ուսը ափիս մեջ կառնեմ ու կսեղմեմ ուժգնորեն,
Ուսը և թեն, արմունկն ալ...

Եվ մինչ կուզեմ զայն պատժել՝ վրան ողորկ իր ճակտին
Կիյնան շրթունքըս բացվող... Տղուն հասակը հանկարծ
Ճյուղի մը պես կսարսի, տաք կաթիլներ կգլորին
Երեսներեն բռնկած...։

«Հայրի՜կ, հայրի՜կ», կգոչե՝ հեւքին, հեծքին մեջ անվերջ
Հիմա ինձի փաթթված, համբուրելով ինքն ալ զիս...
— Երեկ գիշեր ես այսպե՜ս մեղքը առի քընիս մեջ
Իմ չունեցած զավակիս...։

## Ո՛Վ ԵՐԱԶՈՒՆ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ...

*Ո՛վ երազուն մանկություն, որ մանկությունս եղար,*
*Կփափագիմ, ոչ այլևս զքեզ ապրիլ վերստին,*
*Այլ հանդիպիլ նմանիդ ու զայն դիտել գաղտնաբար*
*Եվ սերերուն վրա հսկել, որոնք մեղմիվ կբացվին...*

*Բայց դուն, խրտչոտ մանկություն, մանկություն լուռ և խոհուն,*
*Ամեն բանե զգացվող, ուրախացող ու լացող,*
*Ինչո՞ւ դուն չես երևար խորն այս տղոց աչքերուն,*
*Ուր կան բոցեր այգաշող, բայց աստըվան չկա ցող...։*

*Ժամանակով, օ՜հ, երկար ժամանակով, և հոգվով*
*Դուն հեռացած մանկություն, ուրեմն ոչ իսկ հնա՞ր*
*Պիտի ըլլա քու շուքիդ պատահիլ հոս շուքիս քով...։*

*Եվ ա՛լ բնավ չտեսնե՞ պիտի ծառն այս շանթահար՝*
*Սաղարթագեղ թուփ մ՚հեռուն, ուր թռչունները կերգեն,*
*Նույն թռչունները, որ փախան իր անտերև ճյուղերեն...։*

## ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆ

*Եկած է օրն ուր կըսեմ ահա մարդոց.— ես ան չեմ,*
*Զոր կկարծեք. ես տկար, շատ տկար մարդ մըն եմ լոկ,*
*Վստահ ոչ մեկ խորհուրդի, լի կասկածով — մտահոգ՝*
*Շարժումներուս ճշտության, գացող մութին մեջ դժխեմ...։*

*Հետո կըսեմ դեռ անոնց.— զիս ոչ մեկ տենչ բավական*
*Տաքցուց որպեսզի անով ես տարածվիմ, ըլլամ ուժ.*
*Իմ մառանիս մեջ չունիմ ոչ մեկ կարաս, ոչ մեկ կուժ՝*
*Լեցուն գինիով հրավառ՝ ուրկե մարդիկ արբենան...*

*Եվ ի վերջո.— ե՞ս խելոք. ոչ, խենթության անկարող՝*
*Իմաստո՞ւն. ոչ, զի երբեք չկրցավ միտքս հաղթել*
*Բնազդներուս, որ ըրին զիս ինձի փոս մը անել...*

*Եվ երբ այսպես թեթևնամ ծանրութենեն զիս ընկճող՝*
*Պիտի դառնամ աստուծո և պիտի փառք տամ իրեն,*
*Որ չընելով զիս ուզածս՝ ըրավ եղածըս նորեն...*

## ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ ԿՅԱՆՔԻՆ...

Ողբերգությունը կյանքին զոր ամեն մարդ կխաղա
Իրեն համար մեկ անգամ. զոր չեն տեսներ ուրիշներ,
Կտեսնեն՝ չեն հասկընար, որ մութ բեմի մը վրա
Կանցնի անձայն մեծ շափով, որ միմիայն մեկ պատկեր՝

Վերջինն ունի լուսավոր, պոռոտ լույսովը մահվան՝
Շուտ մը մարող, մոսցըվող... ողբերգությո՛ւնն այդ պզտիկ
Մեզի համար ալ արդեն կմոտենա իր լուծման,
Որմե հետո ա՛լ կրնանք երթալ պառկիլ հանդարտիկ...

Ո՛վ դուն, սակայն, իմ հոգի՛ս, ո՛վ դուն, երթաս պիտի ո՞ւր,
Երբ ես ըլլամ հողին տակ։ Կա՞ս թե չկաս դուն, հոգի՛ս,
Չե՞ս դուն միայն դարշ մարմնույն մեկ ծածկանունը մաքուր...

Իսկ պատահի որ եթե մահես հետո դուն անցնիս
Տեղ մը, հեռուն, մշուշի և կամ լույսի մեջ պայծառ,
Հոգի՛ս, անոր հոգիին խորունկ համբույր մը դուն առ...։

## ԿԸՍԵՄ ՄԵՐԹ ԱԼ ԻՆՔԶԻՆՔԻՍ

Կըսեմ մերթ ալ ինքզինքիս. «Բավական է, բավական,
Ինչո՞ւ միայն դարձդարձել ժամանակին մեջ անցյալ,
Ու չթռիլ անկե դուրս. չէ՞ որ քուկդ է և՛ ներկան,
Եվ ապագան ու կրնաս անոնցմով ալ արբենալ...

Ուրվականի տեղ կրնաս բռնել, գրկել առարկան,
Որ ձեռքիդ տակ է հիմա, և արշավել ու սուրալ
Անհունության մեջ վաղվան, որ է նույնքան իրական,
Որքան երեկը գոնե և ավելի հյուրընկալ։

Կըսեմ երբեմն ինքզինքիս, ու պատասխան կառնեմ մերթ,
— «Խաղաղությո՛ւն ճամփորդին, որ կուգա խոնջ ու խոցված,
Անապատի ճամփայեն, ուր զինք լքած էր աստված...

Անապատին մեջ սակայն ան կգտներ յուրակերտ
Այնքան շքեղ պալատներ ու պարտեզներ ու լիճեր,
Որ բաժնըվիլ անոնցմե ա՛լ չի կրնար ու չուզեր...»։

## ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄ

*Ձմեռն ահա, տունը՝ ցուրտ, ու ես մինակ անոր մեջ…*
*Ուր չկրցեց հոն ըլլալ, հրավիրված կամ ինքնեկ,*
*Ան որ պիտի փարատեր իմ նկուղի օդը գեջ,*
*Պիտի ըներ կամ ըլլար իմ վառարանն ատրաշեկ…*

*Անցավ ամառն ու աշնան ալ վերջին օրն էր երեկ…*
*Ունեի հոն սնարիս մոտը կանթեղ մը անշեջ*
*Որուն ա՛լ յուղն է հատեր, ու ես հոգնած, հուսաբեկ,*
*Կնախընտրեմ վերահաս մութը լույսեն սնամեջ…*

*Բայց այս ցուրտին, խավարին մեջտեղ ուրկե՞ է հիմա*
*Ուշ մնացած որոնումն անոր, որ օր մը գոնե*
*Ներս չմտավ իմ տունես ու չուզեցի որ մտնե…։*

*Կանթեղին հուսկ պլպլուքն ինձի հանկարծ ցույց կուտա*
*Ձեղունն ի վար, պատին դեմ, օրորտըկվող համբուրեն,*
*Ստվեր էակ մ'որուն լուռ ձևերը զիս կկանչեն…։*

## ՕՀ, ԵԹԵ ՍԵՐԸ ՉԸԼԼԱՐ...

*Օհ, եթե սերը չըլլար՝ ի՛նչպես հաճույքն, որ հաճախ*
*Կդառնար շուրջս ու երբեմն ալ կարծես ինձ կսպասեր,*
*Պիտի կյանքիս մեջ մտներ, դայն ըներ գոհ ու խաղաղ...*
*Միայն թե սերը չըլլա՛ր, վախկոտ ու մութ, հիվանդ սեր...*

*...Անցյալին մեջ մի առ մի մարած ջահերը ահա,*
*Որ կրնային ինձ լույս տալ և որոնց դեմ նետեցի*
*Ես մառախուղը սիրույս ու չգիտցա, չգիտցա՝*
*Թե բարեկամ էր հաճույքն, թշնամի՝ սերը ինձի...*

*Աչքերուս դեմ ծաղիկներ, կարմիր, կապույտ ու դեղին,*
*Բույրումներով զգլխիչ կբացվեին շարունակ...*
*Ու կուզեին, որ ճզմեմ զիրենք բերնիս, կուրծքիս տակ...*

*...Կշարժի դեզը անոնց հիմա հովեն կարոտին,*
*Ու կթափի իմ վրաս, ու ես ստվերն եմ միայն,*
*Իմ ձեռքերուս ու գրկիս, որ միշտ պարապ կմնան...*

## ՍԵՐԸ

*Սերը փրկեր պիտի զիս ամեն բանե, իր կեղծեն,*
*Իր որդերեն մակաբույծ, որոնք միտքիս ու սրտիս*
*Աստվածությանը ներքո ընդերքներեն կծծեն*
*Եվ որով դուն, ո՛վ վատնում, ծիծաղաձայն կլեցվիս։*

*Ծուլությենեն՝ հաջորդող իմ եռանդիս խոլական,*
*Եվ տրտմության թույներեն ու ծարավեն բորբոքիչ,*
*Պիտի փրկեր սերը զիս, գոտի ու լաստ փրկության,*
*Դժոխք գետեն զիս հանող երկինքի ծովը փրկիչ,*

*Գինի և հաց լիության՝ ան էր երբեմն սակայն,*
*Զիս լեցուցած էր կրքով, լուսավորած, սնուցած*
*Եվ դեռ մեղքի բաժակիս տակ կգտնեմ հիմա զայն...*

*Իմ արյունիս մեջ սիրո շիթ մը դրած էր աստված,*
*Եվ զայն տիղմով շաղվեցի, ու կջանամ, ա՛լ իզուր,*
*Պղծությենե անջատել իր իսկությունը մաքուր։*

## ՍԹԱՓՈՒՄ

Այնպե՜ս անուշ է հուսալ՝ չհուսալով միասին
Ու սթափումը հետո, այնպե՜ս դաժան է ու տխուր…
Կըսես թերևս կրնա անոր բարի, ջինջ հոգին
Դեմդ բացվիլ, ընծայվիլ քու ծարավիդ իբրև ջուր։

Եվ ա՛հ, հանկարծ կգիտնաս՝ այդ հույսի մեկ ճաճանչեն
Աստղերու պես բորբոքած, հավատայրած քո պահուդ՝
Թե ո՛չ բնավ, ո՛չ երբեք, հավիտյան ո՛չ, ո՛չ արդեն…
Ու կիյնաս վար՝ հոգիիդ մեջ ավելի հիմա մութ…

Հուսա՜լ… Ի՜նչպես հուսացիր՝ կհարցընես ինքզինքիդ
Եվ հրճվանքներդ երեկի կընես աղբյուր հեծության,
Կծեծես սիրտդ, որ եղավ այնքան անմիտ, միամիտ…

Մեռնիլ, մեռնիլ կուզես ա՛լ… Եվ թո՛ղ մարդիկ չգիտնան
Կըսես՝ պատճառը մահվանդ, ու միայն ան գիտնա թող՝
Թե եղավ մեկը այստեղ քաղցրությենեն իր մեռնող…։

## ՔԵԶՄԵ ՈՉԻ՛ՆՉ

*Քեզմե ոչինչ, ինձմե՝ ամեն բան, ամեն.*
*Քեզմե միայն խաղաղություն, լռություն,*
*Մինչ իմ սրտիս մեջ ժպիտներ կիսարթուն՝*
*Դատապարտված, նորեն մահվան կսպասեն...։*

*Դուն չես գիտեր, ինչպե՞ս գիտնալ դուն կրնաս,*
*Թե ինձ համար շատ ավելին ես քեզմե,*
*Իմ կարոտս ես, որ զիս մեղմիվ կափոփե,*
*Իմ մթությունս, որ իբրև լույս կիջնե վրաս...։*

*— Ո՞վ սերըդ իմ, մինակ, առանց վայելքի,*
*Եվ փոքրագույն առանց հույսի մը անգամ,*
*Մահվան արև, որ հոգույս դեմ կծագի...*

*Ի՞նչ փույթ. նորեն ես ընդառաջ քեզ կուգամ*
*Ու կխնդրեմ, ես կխնդրեմ այս միայն,*
*Որ իմ սրտիս միշտ ցանկալի պահես զայն...։*

## ԵՐԱԶ ՄԸՆ ԱԼ

*Երազ մըն ալ, օհ, պզտիկ աղւոր երազ մը միայն*
*Կէս գիշերէն վերջ հիմա, սանդուղներէն պանդոկիս*
*Հանեցի վեր ու բերի թիկնաթոռին վրայ երկայն*
*Նստեցընել ու դիտել իր ձեռքերուն մէջ հոգիս։*

*Քանզի երազն այս ունի ձեռքեր ու աչք ու մարմին՝*
*Ինծի կարծես ընտանի, կարծես շունչով մը ինծմէ,*
*Ու կնայիմ, կնայիմ երեսն ի վեր անձկագին*
*Սպասելով, որ ինքն ալ ժպիտ մը գէթ ինծ ուղղէ...*

*Բայց չի խօսիր ան բնաւ, ոչ ալ ինծի կնայի,*
*Ու ես նորէն իր դիմաց, ինչպէս այնքան անգամներ*
*Նմաններուն հետ իրեն, արձանի պէս անտարբեր,*

*Կընեմ հոգիս կէսվլակէս, կպահեմ կէսը ինծի,*
*Կ՚անձնեմ մյուս կէսն իրեն, և կստանամ հարցումիս*
*Այն պատասխանը ճշտիւ, որ երջանիկ կընէ զիս։*

## ԻՄ ՎԵՐՋԻՆ ՍԵՐՍ...

*Իմ վերջին սերս, օ՜, այնքան առաջինիս դեռ նման,*
*Սիրտս դեռ տաք է քեզմով ու կտանիմ քեզ հիմա*
*Զգուշաքայլ, երկյուղած՝ մոխրի մը պես սրբազան*
*Ուրկե փյունիկ մը հանել ու դեռ տանջել զիս կրնա...*

*Իմ վերջին սերս, օ՜, Թուշուն չորս օր տարած, չորս գիշեր,*
*Իմ և անոր աչքերուն, շարժումներուն ալ միջև,*
*Եվ մատնված տանջանքի, երբ դեռ հազիվ կբխեր*
*Երգին աղբյուրը կուրծքեն, հազի՛վ բացած էր ան թև...*

*Ի՜նչպես անուշ եղար դուն և ան ի՜նչպես կրցավ քեզ*
*Խոցել բառով մը միակ, երբ մոտեցար քիչ մ'իրեն,*
*Ինք որ տեսած էր զքեզ, քեզի ժպտած հեռուեն...*

*Եվ դուն ի՜նչպես, վերջին սեր, եղար խոնարհ, եղար հեզ,*
*Ի՜նչպես անձայն, անպաշտպան ծռեցիր վիզդ ու ինկար,*
*Ի՜նչպես մնաց սրտիս մեջ քու մահու ճիչդ երկար...։*

## ՀՈՒՅՍ ՄԸ...

*Հույս մը տալե հետո ինձի,*
*Հունտ որ ծաղիկ բացավ արդեն,*
*Զոր գինովցած ես շնչեցի,*
*Աչքերդ ինչո՞ւ զայն կխլեն...*

*Ինչո՞ւ, ո՛վ դուն, անուշ հոգի,*
*Ետ կհրես զիս մեղմորեն,*
*Հազիվ անցած, եկած քեզի*
*Մտերմության ծածուկ դուռնեն...*

*Ի՞նչ բան, ըսե՛, իմ պատկերիս*
*Վրա շուք ձգեց քու մտքիդ մեջ*
*Ու չճանչցար այլևս զիս...*

*Անուշ է լույսը և անվերջ*
*Քու հասակիդ ու աչքերուդ,*
*Եվ միայն սիրտս է հիմա մութ...*

# ՏԵՍՔԴ Ա՛Լ ՉԻ ԽՈՍԻՐ ԻՆՁԻ

*Տեսքդ ա՛լ չի խոսիր ինծի,*
*Բայց չեմ կրնար սիրած չըլլալ*
*Քեզ, որուն քիչ մնաց տայի*
*Սրտես հետո օր մը կյանքս ալ...։*

*Գեղեցկությո՞ւն. չունեիր դուն,*
*Բայց քաղցրությունդ էր անսահման*
*Ա՛յնքան որ իսկ դացած հողուն՝*
*Դեռ դյութանքներ ինձի կուգան...։*

*Անուշ ձևր, անուշ ժպիտ,*
*Անուշ խոստում մ՚ալ դուն եղար,*
*Զոր մարելեն ետքն իսկ երկա՜ր*

*Ես պահեցի,— մինչ նայվածքիդ*
*Լույսն, որ ամբողջ կպատեր զիս՝*
*Նվա՛զ պատա՜նքն իմ երազիս...*

## ԵՍ ԱԼ...

*Ես ալ՝ ատեն մը քարեն*
*Ջուր հանեցի. բայց հիմա*
*Կուզեմ, որ ջուրը կենա,*
*Ու կարծրանա, քար ըլլա...*

*Կուզեմ ամեն ու ամեն*
*Սահող, փախչող իրերուն*
*Վրա իյնալ սարսուռին,*
*Օրըս չեղած իրիկուն։*

*Ո՜չ, երազ չեմ ուզեր ա՛լ*
*Քաղել երկրի իրերեն,*
*Այլ երազիս մարմին տալ...*

*Օրն իրիկուն է արդեն...*
*Զանցած այն դուռը անել*
*Կուզեմ հոս սյուն մը կանգնել....*

## ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԲՆՈՒԹՅՈՒՆ

*Աստվածային բնությունն՝ կըսեն թե սերը ունի.*
*Սիրահարները գոնե այդպես կըսեն, տերտերն ալ՝*
*Երբ իր աչքին ու խաչին ներքև այդ բոցը դաղանի*
*Կուգա թեքիլ, կամ կուգան երբ պայն իրմե առանալ...։*

*Աստվածային բնությո՞ւն.— Թողեք խնդամ կուշտ ու կուռ...*
*Երբ խարկանք ու ցնորք է լոկ աստված՝ օ՜հ, այո.*
*Երբ այնչափ տևական, այնչափ լուրջ է և ամուր*
*Իր հավիտյանին ալ՝ որչափ հավիտյանները սիրո.*

*Երբ երկինք նայելով ճահիճին մեջ քիչ առ քիչ*
*Մինչև կոկորդ մխրճումն է սրբությունն ալ անոր,*
*Երբ աստված այնքան չար, այնքան վայրագ, վատ է, որ*

*Պահ մը առաջ պղծվածին համար ունի լոկ քրքիջ.*
*Երբ անոր ալ անցած տեղն է ավեր ու արյուն...։*
*Այո՛, այո՛, սերն ունի աստվածային բնություն...։*

## ՍԱՓՓՈՎ ԿԵՐՊԸ

*Ո՛վ իմ Տենչանքս, եղար տակավ երգերուս*
*Ներշնչարանը միակ,*
*Ձայնս անվարժ, ինչպես քնարս ալ թերուս*
*Դուն խեղդեցիր ձեռքիդ տակ։*

*Ո՛հ գիտեմ թե՝ եղար երբեմն հուշարար*
*Նվագներու ներդաշնակ,*
*Բայց բանտեցիր զիս պատերու մեջ խավար*
*Ու լքեցիր զիս մենակ...։*

*Ինչպես զոհը իր դահիճին առօրյա՝*
*Ա՛լ վարժված եմ քեզի,*
*Ու կվազեմ իմ արյունիս հետքին վրա՝*
*Ինչպես ցուլ մը կրկեսի...։*

*Ջանքըս հիմա՝ ա՛լ փախչիլ չէ քու ձեռքեդ,*
*Այլ շատ հաճախ ու երկար*
*Քեզի բանալ հոգիիս գիրկն ախտաժետ*
*Ու գտնել բաց գիրկ մը հար։*

*Օդակառույց դղյակներու հաջորդել*
*Տուր խրճիթ մը, անուշ*
*Ըլլա սիրել, ուր հյուսվեր կյանքս ոսկեթել՝*
*Պարկայե մը փաղաքուշ...։*

*Ով իմ Տենչանքս, երբեմըն գեթ մարմին տուր*
*Երազներուս պատկերին,*
*Եվ ալ ների, որ կոխելով առաթուր*
*Կասկածներուս վրա հետին,*

*Ամոթահար երկյուղներուն ու տանջող*
*Խղճի խայթին՝ համբարեմ*
*Երիտասարդ ներկային հունձքը հաջող*
*Ծերության մեծ Սյունին դեմ...։*

## ՋՈՒՐԵՐՈՒՆ ՏԱԿ

Ջուրերուն տակ, ջուրերուն տակ, ջուրերուն տակ
Օվկիանին՝ կապույտ, կանաչ ու սև հետո,
Կըսեն կայրի կույս մ'ալիտակ, մանկահասակ,
Սիրտը վախով միայն լեցուն, փոխան սիրո...։

Վախը անդունդ վիշապներուն, որոնք կանցնին
Իր վրայեն, քովեն՝ առանց զինք տեսնելու.
Վախը վերեն ինկած, սուզված շոգենավին
Եվ անոր մեջ բանտարկըված հոգվույն աղու...։

Գեղին է ինքն ալ անտառի մը կենդանի,
Ու անոր հետ, կծփա միշտ, կտատանի
Ահեղավազ, սառըօվկյա հոսանքներեն...

Հազար միլիոն տակառաչափ ջուրի ներքև
Ու սոսկումին մեջը սակայն սիրտն է թեթև
Այդ աղջըկան, քան սիրտն անոնց, որ կսիրեն...։

## ԲԱՐԵՎԱԳԻՐ

Տղա՛, նամակդ ստացա։— Ամեն բան հուսախաբ
Ես քիչ մը դեռ կհավատամ սիրո ուժին, բարիքին...
Հորձանքին մեջ, որ նետեց հոգիս, մարմինս ափե ափ,
Այդ խարխուլին կդիմեմ ու կկապվիմ սրտագին...։

Սակայն տալե հետո շատ — Թե ո՞րքան շատ՝ ես գիտեմ —
Եվ ընդունայն — օհ, միայն իմ հանցանքովս հաճախ —
Եթե կառնեմ քիչ մը արդ՝ պիտի չըլլամ անխոհեմ,
Ոլորտներու մեջ հեռու պիտի չընեմ երկար ճախր...։

Ո՛չ, բավական է հիմա, որ ինձ ղրկես ծովերեն
Աստղին բարևը սրտիդ ու քեզ ոգեմ ես այստեղ՝
Ամբողջ փափագը սրտիս լրիվ լցված է արդեն...

Ինչպես ծագող արևին փայլը և բոցը շքեղ
Լուռ ստվերներ կշարժե փլատակաց գետնին վրա՝
Քու սիրո գիրըդ այնպես կենդանություն ինձ կուտա...։

## ԵՍ ԿՍԻՐԵՄ

*Ես կսիրեմ տղոց դեմքերն, որոնց վրա,*
*Որոնց դեռ նոր գետնեն բխած թարմության,*
*Պայծառության վրա մերթ շուք մը կիյնա,*
*Երկրի խորհո՛ւրդն, երկնի նրավն անսահման...։*

*Տղու հոգին, տղու աչքին մեջ փայլող,*
*Ինձ կթըվի տիեզերքի ճիգը նոր՝*
*Իր իսկ քաոսն իր հոգիով նորաշող*
*Թափանցելու, փարատելու օրե օր...։*

*Քիչ մը տըխուր, քիչ մը վախցած այդ հոգին,*
*Որ կարծես մերկ՝ կյանքին դիմացն էր կեցած,*
*Ես կդիտեմ դորովագին, վշտագին...։*

*Ու միշտ կըսեմ, աղոթքի պես երկյուղած.*
*— Ո՛վ տեր, գիտեմ թե կխաբես զանոնք դուն,*
*Սակայն խաբե գոնե ընդմիշտ, կյանքն ի բուն...։*

## Ն.-ԻՆ

*Քեզի չափ՝ ո՛չ մեկ էակ*
*Պահ մը եղավ դեղեցիկ,*
*Կամ ինձ համար էր մինակ,*
*Իմ աչքերուս հիացիկ,*

*Որ դուն այդպես երեցար... ·*
*Ավելի լավ, կըսեի*
*Եթե այդ լույսը պայծառ*
*Միայն իմ վրաս կծագի.*

*Բայց հիմա որ ես լեռան*
*Մեկ կողմըն եմ, դուն մյուս կողմ,*
*Եվ երկուքս ալ մեր վրան*
*Կզգանք իր բեռն անողորմ՝*

*Կփնտրեմ շուրջըս մերթ*
*Մեկն, որ ինձի պես հեռվանց*
*Քու ջինջ մարմինդ ու աչքերդ*
*Ըլլար հոգվոլն իր ծածկած,*

*Մեկն, որ պաշտած ըլլար քեզ*
*Եվ միասին ես ու ինք,*
*Մեր մեծ սիրույն հրակեզ*
*Մոխրակույտը խառնեինք...։*

## ԵՐԿՈՒ ՊԵՐՃ ԷԱԿ

Երկու պերճ էակ՝ օհ, տարիներով
Իրարմե հեռու, բայց իմ սրտիս մեջ
Մոտեցած հիմա, եկած քովե քով,
Մնացած միշտ թարմ, ղիս կանչող անվերջ...

Երկու պերճ էակ, ավելի քան ինչ
Որ մտածեցի, ափսո՜ս, այն ատեն
— Ու չըսի երբեք — իրենց քաղցր ու ջինջ
Դեմքին ու աչքին, իրենց հոյաշեն

Ճապուկ հասակին և երկուքին ալ
Սիրաղեղ, սիրող հոգիին համար...
Երկու պերճ էակ... և ինչպե՞ս մոռնալ

Թե սիրտըս առնել իրենցմե կրնար
Այնքան սեր, գորով ու քարիք՝ որքան
Մերթ անապատին ամպերը կուտան...

## ՁՅՈՒՆԸ

*Օ՜հ, հանդիպո՜ւմըս քեզի, ձյունին ներքև, այն գիշեր,*
*Թեթև ու լուռ՝ երկինքներն իջնող ձյունին, հարսի պես...*
*Տարի մ'ամբողջ ես փախեր էի քեզմե, քեզ սիրեր,*
*Ու միայն ձյունը հիմա զիս կմղեր դեպի քեզ...*

*Որքա՜ն զորով, ըմայլանք, արգահատանք ու անձկանք*
*Քեզի համար տակավին հոգիիս մեջ ունեի.*
*Որքան հրճվանք խաբուսիկ և կրակյան տառապանք՝*
*Արթնության մեջ ու քընի քեզմե եկած էր ինձի...։*

*Եվ հիմա դո՞ւն էիր, դո՞ւն, որ ձյունին տակ, ինձի հետ*
*Կխոսեիր շունչ շունչի, ու կուտայիր ինձ վաղվան*
*Հույսը գարուն երկինքին, պարտեզներուն ծաղկավետ...։*

*Եվ դողալով գացի տուն...։ Բայց իրոք դո՞ւն էիր ան.*
*Ձայնդ ու խոստո՜ւմըդ ինչպես զքեզ տարբեր կընեին.*
*Ստուգության մեջ ի՞նչպես կորոնեի հույսս հին...։*

## ԵՐԵԿԸ...

«Երեկը չի կրնար վաղն ըլլար նորեն», ըսիր դուն,
Թերևս ողջմամբ մը պզտիկ, դուն որ երեկ խոլ սիրույս
Ամբողջական ժայթքումին առջև տվեր էիր խույս՝
Թույն ընելով վայելած հույսի հրճվանքըս անհուն։

Հիմա վաղն է ու արդեն երեկն ինծի կթըվի
Քիչ մը օտար, հեռավոր... Ես զիս այնտեղ կգտնեմ
Ուրիշ նայվածք՝ նայվածքիդ, ուրիշ ականջ՝ ձայնիդ դեմ,
Եվ քեզ պատկեր մը իբրև անհետացած երազի...

Փոթորիկեն վերջ երբ ծռած կմնար տունկը մատաղ,
Դուն մեղմիվ վեր առիր զայն, դրիր նեցուկ մը անոր
Եվ ցույցուցիր ապագան արևներովը իր նոր։

Բայց անցյալի հեղեղեն՝ կպահե սիրտս խաղաղ
Ողողումին հուշն անուշ։ Ու կխորհիմ թե ի՛նչպես
Յոժարակամ անոր մեջ խեղդըվեի պիտի ես...։

## ՔԵԶ ՎԵՐՋԱՊԵՍ...

Քեզ վերջապես այս գիշեր անցյալին մեջ կթաղեմ։
Տարի մ՚առաջ այս ատեն այսպես չէիր տակավին։
Երբ քիչ առաջ գինովածով հանկարծ եկանք դեմառդեմ՝
Կսիրեի դեռ զքեզ, կսիրեի սերս հին...։

Բայց հուզվեցանք երկուստեք ու կարծես դուն՝ ավելի,
Եվ այդ վայրկյանը հիմա զիս կթողու երազուն...
Անցյալին մեջ սիրողն ալ, հուզվողն ալ միշտ ես էի.
Կրնա՞ ըլլալ որ հիմա լայն հիշելով ցավիս դուն...

Որչափ փոխված ես սակայն։ Հիմա ոչինչ ալ քեզմե
Վեր ցատկելու համար միշտ, հոգիիս խորը կիջնե,
Ոչ քաղցրությունը դեմքիդ, ոչ ձայնդ թավ ու վճիտ...

Քեզ տեսնելով թաղեցի վերջապես սերս այս գիշեր...
Բայց կուզեի, որ ինծի դուն կամ թե մեկը ըսեր՝
Թե հին սերը սիրույս լուսավորեց քու հոգիդ...։

## ԱՆՁԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ

*Անձկության հետ ու ցավին*
*Այնպես ուժով այս գիշեր*
*Զարնըվեցա վերստին՝*
*Ինչպես չէի ալ հիշեր...*

*Գիշերն ամբողջ, մինչև լույս,*
*Ես անոնց հետ հեծեցի.*
*Իջան անոնք խորն հոգույս,*
*Զերթ ատամներ սղոցի։*

*Ա՜հ, չար բախտին, որ պահված*
*Վայրկյանին մեջ՝ հեռուեն*
*Կուգար վրաս, բիրտ հարված...*

*Ել այս առտու, ես արդեն*
*Անկողնիս մեջ կես մեռել՝*
*Կուզեմ ինքզինքս թաղել,*

*Պահել նույնիսկ արևեն...։*

## ՉԵ՞Ս ԿՐՆԱՐ...

*Չե՞ս կրնար, քա՛ղցր անցյալ,*
*Թե ուզեմ, հոգվույս մեջ*
*Հին պարտեզն ինձ բանալ։*

*Ըլլալ դեռ ու անվերջ՝*
*Պատնի հոգվո՛ւյն ծիլ առ ծիլ*
*Վարդերով լուսառէջ.*

*Եվ գետնին վրա հյուսվին*
*Իբրև որթ տերևուտ,*
*Իբրև նուրբ խավարծիլ...*

*Մութն այսօր է անդութ.*
*Ո՛վ անցյալ, չե՞ս կրնար*
*Զիս տանիլ քաղցրաբար*

*Քու բարի շողերուդ...*

## ԿՁՅՈՒՆԵ

*Կձյունե հոգիս, կձյունե վրադ,*
*Կձյունե անվերջ սպիտակ, հատ-հատ՝*
*Օրնիբուն ինկող ամեն խոսքերեն*
*Եվ նայվածքներեն, խոսքերեն ամեն...*

*Արևը կարծես մարեր է, մեռեր...*
*Ճառագայթներու պես փափուկ ձեռքեր*
*Եվ աչքեր՝ գգվող ձեռքերու նման,*
*Հոգիս, մեզ համար ալ չկա՛ն, չկա՜ն...*

*Օհ, նայե ինչպես ամենեն խոնարհ*
*Ու սիրահոժար էակն իսկ հիմա*
*Կարծես չուզելով քեզ կմոտենա...*

*Քեզի ալ, այո, զի դուն չես կրնար*
*Տեսնըվիլ մինակ, ով միշտ թարմ հոգիս,*
*Եվ այս ծեր մարմնույն հիմա կզոհվիս...։*

## ՎԵՐՋԻՆ ՄՐՄՈՒՆՋՔ

*Հիշատակներ գունդագունդ կխուժեն վրաս այս գիշեր…*
*Ինչ որ եղավ ու չեղավ կանցնի մտքիս առջևեն՝*
*Արևահար, սովահար աղոց նման լուսեղեն,*
*Որոնց ես մահը տեսա ու կլսեմ ճիչը ես…։*

*Իմ ամբողջ կյանքս այս գիշեր, իր հույսերով, հուշերով.*
*Իր վարդերուն հույսերով, իր հուշերով փուշերուն,*
*Կգրավե սիրտս անսեր, կողողե աչքս անքուն,*
*Մինչև կոկորդս ան կելլե իբրև աղի, լեղի ծով…։*

*Ա՜հ, լավագույն էր չըլլալ և լավագույն է հիմա*
*Դադրիլ այլևս ըլլալե ու երթալ հոն, ուր չկա*
*Ո՛չ տառապում, ո՛չ պատրանք, ո՛չ անցյալ, ո՛չ ապագա…։*

*Ա՛լ հիմա պետք է, հոգի՛ս, պատրաստըվիլ լռության.*
*Զավալելով, չորնալով, և մոռնալով հավիտյան*
*Գալարատանջ երգելու այս սփոփանքն ալ ունայն…։*

# ՑԱՎԻ ԾՈՎԸ

*Ցավերուս մեջ միօրինակ ու մոլորիկ,*
*Ուրիշ ցավեր, անթիվ ցավերը շատերուն,*
*Իմիններուս ցավերը բյուր երբ կհառնուն*
*Վիշապաձև, ինձ կթըվի թե քիչ առ քիչ*

*Կպզտիկնա հպարտությունս տառապողի...*
*Ամպոտ նայվածքս անծանոթի մ՚ինչպես վրա,*
*Հոգիիս մեջ, կյանքիս վրա կհամենա,*
*Ու զարմանքով, ու վախով նախ, գաղտագողի*

*Զիս կդիտե, կքննե զիս, անպատասխան*
*Զիս կլըքե իմ փոքրության հետ առանձին...*
*Նայվածքս անդին, հեռուներուն մեջ ողբական*

*Կսևեռվի, հիմա թրջած անհուն լացին*
*Աղբյուրներով...։ Ու կտեսնեմ ես պահ մը վերջ,*
*Իմ ցավս ու զիս հորձանավար՝ այդ ծովին մեջ...։*

## L'ARME'NIE A' LA RUSSIE

Russie sainte vraiment,
Rêvant, recueillie, dans les steppes
Et luttant, furieuse, dans les villes;

Russie, qui peinais dur sur les labours
Pour en faire sortir le grain nécessaire à tous,
Et essuyais ton front avec un pan de ciel;

Toi qui martelas avec la même vigueur,
En les retirant étincelants de la fournaise,
Le métal et la pensée;

Toi qui, comme un vaste mur, t'ébranlas d'abord
Et comme une immense forêt te mis en marche ensuite,
Pour embrocher tes assaillants.

Regarde, ô Russie! A tes propres enfants qui te défendent,
Se mêlent, fraternels, d'autres que tu as défendu
Et qui, maintenant, se défendent en toi...

Regarde donc! La vieille Arménie ayant, grâce à toi,
Retrouvé sa force et son génie,
Au plus fort du combat qu'elle mène à tes côtés
Se tourne vers toi, ô Russie,
Et, de près comme de loin, te crie: merci!

## ՀԱՅԱՍՏԱՆԸ — ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

*Ճշմարտապես սրբազա՛ն Ռուսաստան,*
*Դո՛ւ, որ, ինքնամփոփ, երազում էիր տափաստանների մեջ*
*Քաղաքներ կառուցել և կատաղի կռվում էիր ոսոխների հետ,*

*Դո՛ւ, որ հերկերի մեջ դատում էիր տաժանքով՝*
*Դուրս բերելու համար ամենքին անհրաժեշտ ցորենը,*
*Եվ ճակատդ սրբում երկնքի մի պատառով,*

*Դո՛ւ, որ միևնույն ուժգնությամբ մրճահարեցիր*
*Թշնամիներիդ ու հրացայտ հնոցից դուրս քաշեցիր*
*Թե՛ մետաղը և թե՛ մտածումը,*

*Դո՛ւ, որ իբրև ընդարձակ պատ՝ նախ խախտվեցիր,*
*Եվ հետո, իբրև անսահման անտառ՝ ճամփա ելար*
*Ճամփրելու հարձակիչներիդ,*

*Նայի՛ր, ո՜վ Ռուսաստան, զավակներիդ, որ պաշտպանում են*
*քեզ—*
*Այն եղբայրաշունչ ազգերի հետ, որոնց դու պաշտպանեցիր,*
*Եվ որոնք քեզանով այսօր իրենք իրենց են պաշտպանում.*

*Նայի՛ր հինավուրց Հայաստանին, որ քո շնորհիվ*
*Վերագտել է իր ուժն ու հանճարը՝*
*Մարտերի մեջ, որ քեզ հետ մղում է նա*
*Եվ մարտի տաք րոպեին նայում է քեզ, ո՜վ Ռուսաստան,*
*Եվ մոտից ու հեռվից ասում,— շնորհակալությո՛ւն։*

*12 հուլիսի 1944*
*Կահիրե*

## ԵՐԵՔ ԹՌՉՈՒՆ

*Երեք թռչուն թող իր ճամփուն մէջ անոր*
*Ընկերանան · շարունակ,*
*Թող մէկն ըլլա դրախտահաւ մը աղւոր,*
*Ինչպէս որ ինքն է հիմակ:*

*Եւ թող երկրորդն ըլլա սոխակ մը պզտիկ*
*Կապույտ ու գորշ իր երգով,*
*Մտիկ ընէ թող լայն հոգւով հիացիկ,*
*Սիրտն ըլլա միշտ հեշտախառով:*

*Երրորդն ըլլա թող իր բազկին վրա թառած*
*Բազէ մը ժիր, սրաշիլ,*
*Որ իր ուսին վրա անվարան, անկասկած*
*Ծիրանաբա՞ց կնետւի:*

# ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՎԻԼՅԱՄ ՇԵՔՍՊԻՐ

# ՍՈՆԵՏՆԵՐ

*Ի՞նչպես կրնա ամլանալ մուսաս՝ քանի կապրիս դուն,*
*Դո՛ւն տաղերուս մեջ սփռող քու մտածումըդ անուշ,*
*Այնքան չքնաղ, որ իրոք թուղթի այս թերթը փտտում*
*Պիտի երբեք չըկրնա զանի կնքել քաղցրահուշ:*

*Շնորհակալ պետք է քեզ ըլլալ, եթե պատահմամբ*
*Գտնես այստեղ դուն տողեր՝ կարդացվելու արժանի.*
*Եվ ո՞վ կրնա մնալ համր, երբ որ դուն ինքըդ անձամբ*
*Կհայթայթես նյութ մ՚այնքան ճաճանչումով, փառքով լի:*

*Եղիր մուսան տասներորդ, ավելի թանկ տասն անգամ*
*Քան ինը ծեր մուսաներն և թող քենե ներշնչյալն*
*Հավերժակյաց տաղերու կարենա ինքն ալ կյանք տալ:*

*Եվ եթե, ա՜հ, հավնըվիլ ապագայեն կարենամ*
*Թող ատոր մեջ միմիայն վաստակը իմըս ըլլա*
*Եվ ըլլա քուկըդ պատիվն ամբողջական ու անմահ:*

***

*Կշտամբեցի մանուշակն.— որմէ՞ կրցար, անուշ գո՛ղ,*
*Բացի շունչեն սիրելույս, այդ անուշ բույրը գողնալ,*
*Խլել ուրկե՞ դուն կրցար դեմքիդ հպարտ կապույտն ալ,*
*Եթե ոչ միշտ սիրելույս երակներեն երկնաշող։*

*Մեղադրեցի շուշանին, թե ձեռքերուդ կաթնորակ*
*Գույն կեղծել ակլոռին՝ անել բան մը մազերեդ,*
*Գողացին վարդերն ալ փշադունդին իրենց հետ*
*Մին՝ ամոթե կարմրած, մյուսը՝ վախեն ճեփ-ճերմակ...*

*Վարդ մը ուրիշ՝ կողոպտած էր այդ երկուքն ալ վրան.*
*Կողոպուտին իր քու շունչըդ ավելցուց որդ մը, բայց*
*Իր փառքին մեջ զայն պատժած էր մինչև սիրտն իր կրծած...*

*Ուրիշ դեռ շատ ծաղիկներ շուրջըս դիտա և սակայն*
*Չտեսա հատ մը գոնե, որ գույնը կամ բույրն իրեն*
*Քու հմայքեդ անպատճառ գողցած չըլլար հայտնօրեն...։*

⁂

Սիրտս ու աչքերս իրարու հետ կկռվին անընդհատ՝
Թե ով է որ ավելի աղեկ կրնա տեսնել քեզ.
Կուզեն աչքերըս խլել այդ իրավունքը սրտես,
Սիրտս աչքերուս կհայտնե՝ թե կարող չեն ընել այդ։

Սրտիս փաստն է՝ թե արդեն կգտնվիս դուն իր մեջ,
Խորշ անթափանց, ուր ոչ մեկ բյուրեղ նայվածք կհասնի.
Սակայն աչքերըս կառնեն ահա դերը պաշտպանի՝
Հաստատելով թե իրենք միայն տերն են տեսքիդ պերճ։

Եվ լուծելու համար վեճն, երդվյալները՝ իմ խոհերս,
Որ են ծորտերը սրտին, արդարորեն կվճռեն
Բաժինն հստակ նայվածքին տեղըդ՝ քնքուշ սրտես ներս,

— Կը պատկանի աչքերուս շահը տեսքիդ մարմնեղեն,
Եվ իրավունքը սրտիս ուրիշ բան չէ, բայց միայն
Նրանասփյուռ քու սրտիդ մտերիմ սերն անսահման։

***

Աշխատանքէն պարտասած ես կը փութամ անկողին,
Որ քաղցր անդորր մը կուտայ իր արշալէն խոնջ մարմնին,
Բայց կսկծի այն ատեն ճամփորդութիւնը գլխուս —
Եվ կգործե միտքըս, երբ որ մարմինս հանգչած է ալ հուսկ։

Խոհերս ամբողջ առնեն դուրս կուգան ուխտի դեպի քեզ
Բարեպաշտիկ թափորով, պահանջելով աչքերս,
Որ չգոցվին ու մնան մութի ծովին վրա բաց,
Ծովին անհուն, որ կույրերն է հավիտյան շուրջպատած։

Բայց այն ատեն կըներն իմ հոգիս կույր աչքիս դեմ
Կախել պատկերդ, որ ըլլար կարծես շողակ մը փայլուն,
Ննորդն ու աղվոր կընեն գիշերը դժխեմ։

Ահա վիճակըս ուրեմն. մարմինս՝ մեջն արևուն,
Հոգիս՝ գիշերն, հարվածված ինձմե, քեզմե փոխնիփոխ,
Կըրկին հանգիստեն սիրտն ու մարմինը զրկող։

***

Պե՞տք է որ քեզ բաղդատեմ աղվոր օրվան մը ամռան.
Ո՛չ, ավելի քաղցր ես դուն և ավելի հաճելի —
Վայրագ հովերն սասանած բողբոջներուն ջարդ կուտան,
Ամառը շատ կարճատև պայմանաժամ մը կապրի։

Ունին աչքերն երկնքի երբեմն հուր մը շատ վառ,
Եվ կաղոտի, կսևնա, երբեմն իր գույնն ոսկեթուխ,
Կկորսնցնե ամեն գեղ վաղ կամ ուշ գեղն իր պայծառ,
Արկածի մեջ կամ բնության փոփոխավար ընթացքով։

Ոչինչ եղծել բայց կրնա հավերժական քու ամառդ,
Գեղըդ չանցնիր ու պիտի չպարծենա մահն երբեք.
Թե կտեսնե իր շուքին մեջ քու շրջիկդ հոգնաբեկ։

Այնքան ատեն, որ սրտին տրոփելն զգա այստեղ մարդ,
Որ տեսնող աչք մ՚ըլլա հոս, պիտի տաղերն այս ապրին
Ու դարե դար անցընեն պիտի ըզքեզ հավերժին։

***

*Ի՜նչ ըմպելիք խմեցի՝ արցունքներով ծովամարց*
*Դժոխքի չափ չարաշուք թորանոցի մեջ թորված,*
*Հույսերուս վախը խառնելով և խառնելով վախին հույս*
*Եվ կորուստներ տալով միշտ՝ շահիլ կարծած իսկ պահուս...*

*Սիրտըս գործեց, աստված իմ, ի՜նչ ողբալի սխալներ,*
*Երբ ավելի երջանիկ ան դեռ երբեք եղած չէր,*
*Ինչպե՜ս աչքերս ալ իրենց դրախտեն հեռու հածեցան՝*
*Մոլորելով այս ահեղին անպարագիծ խենթության։*

*Չարիքն ունի իր բարիքն. ան լավագույն կընե լավին,*
*Ու քանդված սերն երբ որ կկառուցվի վերստին,*
*Կըլլա աղվոր ավելի, ուժեղ ու մեծ՝ քան թե հինն.*

*Ու պատժված կդառնամ՝ ես նսեհիս իմ անբավ*
*Եվ հանցանքի շնորհիվ՝ երեք անգամ ավելի*
*Կվաստըկիմ ես հիմա, քան այն ինչ որ կորուսի...*

Պիտի ապրիմ կարծելով, վերթ ամուսին մը խաբված,
Հավատարիմ զքեզ միշտ, ու պիտի դեմքը սիրո
Սիրով լեցուն դեռ ինձի թվի, ըլլա իսկ փոխված,
Նայվածքդ գա պիտի հետս, եթե սիրտդ այլուր տա գրոհ։

Աչքերուդ մեջ չի կրնար ատելությունը շողալ.
Անոնք չըսեն պիտի ինձ, թե դուն փոխված ես ինձ դեմ.
Կկարդացվի անհաստատ սրտի մը վեպը հուզյալ
Ակնարկներու, ձևերու, ծամածռության մեջ դժխեմ։

Սակայն երկինք երբ քեզ ծնավ, ուզեց որ դեմքըդ միայն
Սերը շնչող երևա, հանցանքներդ ինչ ալ ըլլան՝
Անուշություն միմիայն կկարդացվի աչքիդ մեջ։

Գեղեցկությունդ ինչքան նման է Եվայի խնձորին —
Քանի որ չի բնակիր քու պատկերիդ ալ ետին,
Անմեղություն մը անուշ՝ արժող անոր տեսքը պերճ...

***

*Ջերթ դերասան մը միջակ, որ կը մոռնա բեմին վրա
Վախէն՝ իր դերը խաղալ ինչպես գիտեր, կրնար զայն,
Կամ բարկացկոտ մը շարժող մոլեգնությամբ միմիայն
Զոր զայրույթը իր սաստիկ մերթ նվաղիլ իսկ կուտա։*

*Ես, անվստահ իմ վրաս, կթերանամ շատ անգամ
Կրկնել ծեսերը սիրո մինչև վերջին կետն իրենց,
Եվ կթվիմ կորուսած ըլլալ սիրույս ուժը մեծ՝
Այնքան անոր զորության տակ ընկճված զիս կզգամ։*

*Ա՜հ, թող գիրքերս, այն ատեն, ըլլան համր այլ պերճախոս
Իմ թարգմաններս ու սրտիս դատն ալ ուղեն պաշտպանել
Վարձքը իրենց՝ ավելի լավ, քան բերանս ըրավ հոս։*

*Սորվե կարդալ ինչ որ սերն այստեղ գրեց գաղտնորեն,
Սերդ այնքան նուրբ, այնքան լի է բնազդով ապահով,
Որ ան կրնա, այնպես չէ՞, լսել մինչև իսկ աչքով։*

***

Ոմանք իրենց ծագումով կպարծին, այլք՝ տաղանդով,
Հարստությամբը՝ ասոնք և զորությամբը՝ անոնք,
Կան որ հագուստն իրենց նոր՝ թեև տգեղ, կընե սոնք,
Ոմանց բազեն, գահն ու ձին կկազմեն փառքն ապահով։

Անձնյուրն ունի իր հաճույքը, զոր կընտրե այլոց դեմ,
Սակայն ոչ մեկը անոնց ինձ համար է հորինված
Եվ կըմբոշխնեմ ես վայելք մը ամենեն գերազանց,
Երբ բարիքներն այդ բոլոր մեկ հատի մեջ կգտնեմ։

Ինձի համար քու սերդ է բարձր՝ ծնունդեն բարձրագույն,
Ավելի ճոխ քան բոլոր ճոխություններն միատեղ
Եվ կպարծիմ թե քեզմով տեր եմ փառքին գերագույն։

Եվ լոկ թշվառ եմ՝ քանզի կրնաս բախտն այս հորդազեղ
Հանկարծակի օր մ'ինձմե ամբողջապես առնել ետ
Եվ ամենեն թշվառեն թշվառ ընել զիս հավետ։

***

Ինչո՞ւ այնքան աղվոր օր մ՚ինծ խոստացար ու ճամփա
Զիս հանեցիր անվերնոց, եթե ոխերի ամպերուն
Թույլ տայիր, որ զիս հանկարծ շրջապատեն և մնա
Քու հրապույրդ անոնց խոնավ ծուխին տակ թաքուն։

Բավ չէ հիմա, որ ճեղքես մշուշն, որպեսզի վրան
Մրրկահար իմ դեմքիս չորնան դաժան անձրևներն.
Ինչի՞ս է պետք մխիթարիչ վերքը բուժող բալասանն,
Երբ որ պատճառը անոր ան չի բառնար նույն ատեն։

Քու ամչնալդ ալ երբեք դարման մը չէ իմ ցավիս.
Զղջաս դուն, բայց կորուստս անով չի պզտիկնար.
Հարվածողին վիշտը երբ հարվածին է նվաղ ծանր։

Բայց արցունքներն, որոնցմով դուն իմ վրաս կհոսիս,
Մարգարիտներ են սիրո այնքան հարուստ, որ ամեն
Նախատինք, վերք ու հարված անդարձորեն կսրբեն։

***

Ընդդեմ օրվան ուր դուցե պիտի խոժոռ Նայիս վրաս՝
Իմ թերությանցըս համար և ուր քու սիրտըդ դարձած
Ըլլալով ռիշտ ու խոհեմ, պիտի բաշխած ինձ ըլլաս
Սիրո նվերդ վերջին ու ինձ գոցած սիրտըդ բաց։

Ընդդեմ օրվան ուր դուցե անցնիս երթաս առջևես
Իբր օտարի մ'առջևեն բարևելով զիս հազիվ
Այն աչքերով, որ եղած էին իմ վառ արևներս
Քու ոչ-սիրույդ հիմ ընող շատ մը խելոք, լուրջ հաշիվ։

Այդ օրվան դեմ՝ ես կանխավ կզորանամ սորվելով
Իմ քիչ արժեքս ու արդեն զինելով ձեռքս ինձի դեմ,
Որպեսզի դուն միշտ արդար, ու անիրավ ես ըլլամ։

Որ մեղքցվի՜մ ես, բայց դուն մնաս անմեղ, անխռով,
Քանի որ, ա՜հ, չեմ կրնար ամենափոքր փաստը տալ,
Թե սիրվելու արժանի էր իմ սիրտըս սիրահալ...

***

Դուն կտեսնես իմ վրաս տարվան այն պահն, ուր դեղին
Տերևք կամ ոչ մեկ տերև և կամ քիչեր կկախվին
Ցրտատարուն թուփերին՝ երգչախումբեր քայքայված,
Ուր դեռ երեկ կլսվեր ձայնը թռչնոց դաշնասաց:

Իմ վրաս դուն կտեսնես իրկունն օրվա մը մնացող
Հորիզոնին վրա, արփույն մայրամուտեն ետք անշող,
Երբ կառնե քիչ առ քիչ գիշերը սև, քույր մահվան,
Որ ա՛լ կուզե, որ հանգչի իր ծոցին մեջ ամեն բան:

Կտեսնես դուն իմ վրաս վերջին ճաճանչն ալ հուրի,
Որ կփայլի մոխրին վրա իր թարմության երբեմնի
Եվ կմեռնի այն շունչեն իսկ, որ ապրիլ զինք կուտար:

Տեսած բաներդ այս ամեն թող ամրացնեն սերդ հիմա
Եվ ընծայեն քու աչքերդ ա՛լ ավելի սիրելի
Ինչ որ շուտով, շատ շուտով պիտի քեզմե բաժնվի:

***

Ժամացույցին վրա պատի երբ կհամրեմ ես ժամերն,
Ու կդիտեմ մերկ լույսին անկումը ժանտ ցայգին մեջ.
Երբ կտեսնեմ մանիշակն՝ հիմա հալած հողմաբեռն
Ու ճերմակով արծաթված սև խոպոպները այն պերճ,

Այրիացած երբ իրենց տերևներեն կտեսնեմ
Այն մեծ ծառերն, որ էին հովանի մեծ հոտերուն,
Եվ կանաչ բերքը ամռան երբ կգտնեմ աչքիս դեմ
Որա կապված ու դագաղ դրված դեմքով դեղնագույն։

Կմտածեմ այն ատեն գեղեցկությանդ բախտին,
Որ պիտի ինքն ալ անցնի ինչպես ամեն աղվոր բան,
Որք կմեռնին՝ մինչ ուրիշ բաներ կյանքի նոր կուգան,

Ոչինչ կրնա արգիլել ժամանակի գերանդին
Դպելու քեզ ալ, բացի քու սերունդեդ հարազատ,
Որ անոր դեմ պիտ ելլե, երբ հարձակի ան վրադ։

***

*Իմ հայելիս պիտի զիս չհամոզե թե ծեր եմ*
*Այնքան ատեն, որ դուն միշտ պիտի ըլլաս ծաղկատի.*
*Բայց երբ վրադ տարիքին տեսնեմ հետքերը դժխեմ՝*
*Պիտի խորհեմ, որ կրնա մոտենալ մահն ալ ինծի։*

*Զի քեզ պատող այդ ամբողջ գեղեցկությունն է այլ ինչ,*
*Բայց եթե ոչ արժանի լուսահանդերձն իմ սրտիս,*
*Որ քու կուրծքիդ մեջ կապրի, քուկդ իմինիս մեջն է մինչ,*
*Ի՞նչպես ուրեմն կրնամ քեզմե տարեց գտնել զիս։*

*Ուստի, հոգի՛ս, հոգ տար քեզ՝ ինչպես որ ես ինձ կընեմ*
*Ոչ թե ինծի՝ քեզ համար, ես որ քու սիրտըդ ունիմ*
*Եվ մանուկի մը պես զայն կպաշտպանեմ բախտին դեմ։*

*Եվ մի՛ կարծեր թե երբեք պիտի կրնաս, ո՜վ սերդ իմ,*
*Սիրտըդ գտնել վերստին, երբ որ մեռած ըլլամ ես.*
*Ես չառնելու պայմանով դուն զայն ինծի տված ես։*

***

Երբ ոսկորներըս փոշով ծածկած ըլլա մահը բիրտ.
Ու երջանիկ կյանքես վերջ եթե երկար ապրիս դուն
Ու պատահմամբ դեռ կարդաս խենթ տաղերը սիրողիդ,
Դիր զանոնք դեմն այդ օրվան գեղեցկագույն տաղերուն.

Ու եթե վար իսկ գտնես նման ուրիշ շատերեն՝
Պահե իրենց մեջ պահված անհուն սիրույս պատճառավ,
Ու ոչ երբեք արժեքին՝ որմե շատ բարձր հարկավ
Քերթողներու վրա նոր պիտի քու միտքըդ դտնե։

Խորհե սիրով այն ատեն. «Եթե մուսան իր մեծցած
Ըլլար մեծցող դարուս հետ. բարեկամիս սերը ծներ
Գեղեցկագույն զավակներ՝ է՛ն ազվորին հավասար.

Բայց քանի որ ան մեռած և իրեն են հաջորդած
Ուրիշ նոր-նոր քերթողներ՝ պիտի կարդամ լավագույն
Իրենց ոճին պատճառավ զանոնք և զինք իր սիրույն»։

Երբ կտեսնեմ սրբըված ձեռքով անգութ ատենին
Անցյալ ամբողջ դարերում ճոխությունները հպարտ,
Աշտարակները գոռող ինկած հողին վրա արդ
Եվ պղինձն իսկ պղծված անձրևներին մոլեգին,

Երբ կտեսնեմ օվկիանն, որ վերթ գազան սովահար
Իր ափերում պետության կլափե հողը տակավ,
Եվ կամ՝ ցամաքն, որ քիչ-քիչ կընկրկեցնե ծովն անբավ,
Այսպես կորուստը մեկում մյուսին շահին եղած հար,

Երբ կտեսնեմ ուժերու ես փոխանցումը այսպես
Կամ սպառումը անոնց,— այդքան ավեր ինձ կըսեն
Թե իմ սերս ալ պիտի օր մը ամփոփվի ատենեն.

Ու մտածումն այս վրաս կծանրանա մահուն պես
Ու ան կրնա արտասվել միայն, ավա՜ղ, զի ունի
Գանձ մ'ու անոր կորստյան վախը ամեն րոպեի։

***

Ըրե՛ կրցածդ ինծմե խուսափելու համար ա՛լ,
Գիտեմ թե քեզ ունենամ պիտի ամբողջ կյանքիս մեջ.
Ճիշումին հետ քու սիրույդ կյանքըս գտնե պիտի վերջ,
Քանզի այդ սերը միայն կրնա անոր սնունդ տալ։

Ուրեմն ես չեմ վախնար տառապանքեն մեծագույն,
Քանի որ կյանքըս պիտի փոքրագույնին հետ դադրի.
Ու չէ իմ բախտըս այնքան անգթորեն վշտալի,
Զի կապված չէ ան այստեղ քու քմայքիդ խաղերուն։

Դուն չես կրնար զիս տանջել զիս լքելով, զի վախճանն
Ըլլար պիտի ան կյանքիս. երջանիկ եմ հավիտյան
Սիրույդ համար և հետո՝ իր պատճառավ մեռնելուս։

Բայց ո՞ր նսեհը փայլուն զերծ է բոլոր բիծերեն,
Չէ՞ որ կրնաս ուրիշին տված ըլլալ սիրտդ արդեն,
Ու ես կրնամ դեռ սիրույդ վրա չունենալ տարակույս։

***

Ո՞վ անուշ սեր, նորոգվե՛։ Մի՛ թողուր քեզ բթանալ
Իբր ախորժակ մը անհագ, որ հագեցումը այսօր
Կընե մեռած գրեթե և որ միշտ նոր ու աղվոր՝
Վերադառնե սլխոի վաղն իր ամբողջ ուժը դարձյալ։

Կամ՝ ավելի. եղա՛ր միշտ նույնը եթե իսկ, ո՛վ սեր,
Սոված աչքերըդ այսօր կուրնալու չափ լեցուցիր.
Ջանա՛ վաղն ալ անոնցմով տեսնել անուշ դեմքը իր
Եվ ծուլության մեջը մի՛ սիրո հոգին սպաներ.

Թո՛ղ այս դադարը տխուր ըլլա ինչպես օվկիանն,
Որ կբաժնե երկու ափ, ուր երկու նոր սիրահար
Երջանկությամբ հարաճուն կուգան հուսալ միշտ վրար։

Եվ կամ, ձմեռն ըլլա թող, որուն դաժան տրտմության
Մեջէն մեզի կերևա երեք անգամ ավելի
Թանկագին դարձը գարնան և ավելի ցանկալի։

***

*Համայնակեր ժամանա՛կ, կրծե ճանկերն առյուծին.*
*Ստիպե հողն որ լափե իր զավակները բոլոր.*
*Վայրագ վագրին ալ խլե դուն ժանիքները հզոր*
*Եվ իր արյան մեջ անմահ փյունիկն այրե վերստին։*

*Եղանակներն՝ անցքիդ վրա ըրե զվարթ կամ մռայլ,*
*Ո՛վ փութաջան ժամանակ. ըրե երկրին մեր հսկա.*
*Գեղեցկությանցն իր ամեն՝ ինչ որ հաճո քեզ կուգա,*
*Բայց սա ոճիրն ահռելի թող քեզ ըլլա արգիլյալ.*

*Ո՛չ, մի՛ նշեր քո ժամերդ ազվոր ճակտին վրա սիրույս,*
*Մի՛ փորեր հոն ոչ մեկ գիծ, և թույլ տուր, որ ապագան*
*Տեսնե տիպար մ՚իր վրա գեղեցկության, քաղցրության։*

*Սակայն եթե հոռեգույնն ալ գործելով դուն տաս խույս՝*
*Իմ սիրականըս մնա պիտի, ո՛վ ծեր ժամանակ,*
*Տաղերուս մեջ թարմ հավետ, ավերներուդ հակառակ...։*

* * *

Երբ ես մեռնիմ, լա՛ց վրաս այնքան ատեն միմիայն,
Որքան լսես զողանջյունն այն զանգակին ողբաձայն՝
Ծանուցանող ամենուն թե ցած աշխարհն այս թողած
Կերթամ բնակիլ որդերուն հետ ավելի ևս ցած։

Ո՛չ իսկ հիշե՝ այս տողերն եթե աչքիդ տակ իյնան,
Ձեռքն որ զանոնք դրոշմեց, զի կսիրեմ քեզ այնքան,
Որ հոժար եմ մեռնելու խոյանքիդ մեջ իսկ անուշ,
Եթե իմ հուշըս մտքիդ համար ըլլա պիտի փուշ։

Երբ դուն կարդաս այս քերթվածն ու ես դարձած ըլլամ հող,
Բերնեդ չելլե թող բնավ իմ խեղճ անունըս և թող
Քու սերըդ ալ կորսըվի իմ կյանքիս հետ կորսըվող։

Զի կվախնամ, կվախնամ, որ այս աշխարհն իմաստուն
Մահես հետո կծաղրե ինձի հետ քեզ ալ, երբ դուն
Չկրնաս ցավըդ զսպել ու զայն ցույց տաս ամենուն։

***

Սակայն վախ մի՛ ունենար, երբ որ վճիռն անհեղլի
Հեռացուցած զիս ըլլա այս աշխարհեն. մաս մը դեռ
Կյանքես մնա պիտի հոս՝ տաղերուս մեջը անմեռ,
Զոր դուն պահես պիտի միշտ՝ իբր հուշաձոն մը ինձի։

Ու երբ կարդաս դուն զանոնք՝ պիտի գտնես հոն ինչ որ
Տված էի քեզ կյանքես. հողը կրնա առնել ետ
Իր իրավունքն՝ հողը լոկ, քու իրավունքդ է հավետ
Լավագույն մասն էությանս՝ հոգիս ու միտքըս բոլոր։

Այսպես, մարմինն երբ մեռնի՝ կորսնցուցած պիտ ըլլաս
Մրուրը լոկ, ճճյաց կերն ու զոհը վատ դաշույնին,
Շատ չնչին բան, որպեսզի դեռ մտածես իմ վրաս։

Իրենց միջի նյութերովն անոթները կհիշվին.
Պարունակեց անցավոր կյանքըս սիրող իմ հոգիս
Եվ այդ հոգին կմընա, զայն դուն ամբողջ հոս ունիս։

***

Ոչ մարմարներն ու ոչ ալ իշխաններու ոսկեզօծ
Հուշարձանները ապրին պիտի այնքան, որքան այս
Տաղերս ուժեղ. որոնցմով է որ պիտի դուն շողաս
Լավ քան քարերն, որոնց տվավ ատենը բյուր կեղտ ու բոց։

Պատերազմներն երբ շրջած ըլլան շքեղ արձաններն
Ու հիմն ի վեր տապալած ամեն պարիսպ Արեսի,
Ոչ սուր և ոչ սրավազ իր կրակները պիտի
Կրնան սրբել աշխարհես գոյությանդ հուշը անծիր…։

Պիտի անվախ դուն դիմացն ելլես մահվան մոռացման,
Ու պիտի գովքըդ հնչե սերունդներու ականջին
Ցկատարումն աշխարհի և ցարարածըն վերջին.

Եվ այսպես է որ մինչև արթընցընել պիտի դան
Դատաստանի շեփորներն՝ ապրիս պիտի անվթար
Իմ տաղերուս և աչքին մեջ զույգերու սիրահար…։

ՊԻԵՌ ԴԸ ՌՈՆՍԱՐ

## ՀՆՉՅԱԿ ՀԵԼԵՆԱՅԻ ՀԱՄԱՐ

Ահա ամիսը ապրիլ, ուր սքանչելիքն այն ծնավ,
Որ վկան է երկրի վրա գեղեցկությանն երկնքի,
Պայծառ արև աչքերուս, անմեղության հայելի,
Ու զերթ փյունիկ մը կապրի, չունի նմանն իր բնավ:

Ան մեխակներ, շուշաններ, ինչպես և վարդն հրադեղ
Իրեն օրրոց ունեցավ՝ այս ամսըվան մեջ սիրուն,
Ծնունդն անոր դիտեցին աստվածք և նոր բնությունն
Ու կերակրեց սերը զայն մեղրով մը քաղցր ու զորեղ:

Մուսայք ամեն, Ապողոն և Շնորհներն էին հոն
Շուրջը մահճին, սփռելով բուռ-բուռ ծաղիկ ու կոկոն
Վրան փոքրիկ հրեշտակին: Ա՛հ, այս ամիսը ինծմե

Կպահանջե, որ կանգնեմ խորան մը, որ սուրբ ընե
Օգնությունովը սերին՝ ապրիլի օրն իններորդ,
Հարյուր հեղ թանկ ավելի՝ քան, ո՛վ իմ կյանքս, քու օրդ:

## ԱՐԵՎՆ ՈՒ ԵՐԿԻՐԸ

Ձմեռ ատեն կուլա երկիրն.
Արևը մեղմ, դժգույն ու պաղ,
Ուշ կհասնի՝ գեշ ժամագիր,
Ու գեշ սիրող՝ կմեկնի վաղ։

Սերը անոնց տխուր է շատ.
— Արև, սիրենք իրար։— Փորձե՛նք,
Երկի՛ր, ո՞ւր են վարդերդ առատ.
— Աստղ, ո՞ւր են քո շողերդ աննենգ։

Ան պատրվակ մը կփնտրե,—
Կարկուտ կամ հով, թեթև մեկ ամպ.
Եվ ըսելով՝ ալ գիշեր է.
Ձայն կստեղծե իր հեռացմամբ։

Ձերթ սիրահար մը, որ օրե օր
Կաղատե սիրտն իր օղակեն
Եվ զի չունի ա՛լ խոսք մը նոր՝
Կհեռանա արագորեն։

## ՇԱՐԼ ԲՈԴԼԵՐ

# ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆԸ

Մահկանացո՛ւք, գեղեցիկ եմ զերթ երազ մը կճյա.
Եվ կուրծքս, որուն փոխնիփոխ զարնըվելով վերք առիք,
Ստեղծված է որպեսզի բանաստեղծն ունենա
Սեր մը նյութին պես անանց և անոր պես ալ լռիկ։

Կապույտին մեջ ես կիշխեմ իբրև սփինքս մ՚անըղած.
Ես՝ կարապի պես ճերմակ, սիրտ մ՚ունիմ պաղ ձյունի պես.
Կատեմ շարժումն, որ խախտել կուտա գիծերն հաստատված,
Եվ երբեք չեմ արտասվեր ու երբեք չեմ խնդար ես։

Բանաստեղծներն, հմայված իմ ձևերես վեհազդու,
Որոնց տիպար կթվին խրոխտագույն արձաններն,
Իրենց օրերն սպառեն պիտի ուսմամբ խստամբեր.

Զի դյութելու համար այս տարփավորներս հլու՝
Հայելիներ ունիմ ջինջ, գեղեցկացնող ամեն բան,
Աչքերըս, լայն իմ աչքերս, արևափայլ հավիտյան։

## ԿՈՒՏԱՄ ՔԵԶԻ

*Կուտամ քեզի այս տողերն, որպեսզի օր մը եթե*
*Նավ բարեբախտ զոր վարեց հյուսիսի հով մը աղվոր՝*
*Անունս հասնի անվըրդով մինչև դարերն հեռավոր*
*Եվ իրիկուն մ՚երազել մարդոց միտքերը մղե,*

*Քու հիշատակդ, անորոշ հեքիաթներու հանգունակ,*
*Հոգնեցընե ընթերցողն իր թրթռումովը տաղի,*
*Եվ հանգերես կախվածի նման մնա ու ճոճի*
*Որպես թե զինքը անոնց կցեր միսթիկ մեկ օղակ.*

*Դո՛ւն, ո՛վ էակ անիծյալ, որուն ոչինչ, անդունդեն*
*Մինչև երկինք, ինձմե զատ, կուտա երբեք պատասխան,*
*— Ո՛վ դուն, որ շուք մը ինչպես, քայլահետով պատրակյան.*

*Բարձրահայաց, թեթևոտն՝ կկոխոտես համբորեն*
*Տխմար մարդերն ու քեզ կդատեն դառըն հիմա,*
*Արձան աչքով կարծրակուռ, հրեշտակ ճակատով պղնձյա։*

# ՎԻՀԸ

Պասկալ իր վիհը ուներ, որ կքալեր իրեն հետ,
—Ավա՜ղ, ամեն ինչ վիհ է,—գործ, խոսք, տենչանք, երազանք,
Եվ մազերուս վրա, որոնք կտնկվին շիփ-շիտակ,
Կզգամ անցնիլը հաճախ վախի հովուն չարաղետ։

Վերը, վարը, ամեն տեղ կա խորություն, ավազափ
Եվ լռություն և միջոց ահատեսիլ, ահաթով...
Գիշերներուս հատակին վրա աստված իր մատով
Կգծագրե մղձավանջ մը բազմաձև ու անչափ։

Քնեն այնպես կ'երկնչիմ ինչպես ծակե մը, որ լի
Է սոսկումով մ'անորոշ և կերթա տեղ մ'անծանոթ,
Աչքըս ամեն լուսանցքե կհանդիպի անհունի.

Ու միտքըս միշտ բռնված պտուտախտե, միշտ անձկոտ,
Կնախանձի անզգած անգործության ունայնին,
— Էակներեն, թիվերեն, ա՜հ, դուրս չելլել բնավին։

# ԿԱՓԱՐԻՉԸ

Ուր և որ կողմն ալ երթա, երկրի վրա թե ծովու,
Գտնե հոն սառ արեգակ կամ կլիմա հրահոս,
Ըլլա ծառա Հիսուսի կամ Աստղիկի խնկարկու,
Սևամորթ մուրացիկ կամ ոսկեպատ Կրեսոս.

Հաստատակյաց՝ Թափառիկ, քաղաքացի՝ շինական,
Իր փոքր ուղեղն ըլլա ժիր և կամ ըլլա համրաճոճ,
Կենթարկվի մարդն ամեն տեղ խորհուրդին պակուցման,
Ու կնայի դեպի վեր միայն աչքով մը դողդոջ։

Վերը՝ երկինք, զինք խեղդող այդ դամբանի պատը լուռ
Ձեղուն՝ փառված ծաղրախառն երգախաղի մը համար,
Ու կկոխեն հոգիներն արյունաղանգ հող մը հար,

Անտառակին՝ վախը հուսկ, ճգնավորին՝ հույսը կուռ,
Երկինքը՝ սև կափարիչ հսկայական պտուկի
Ուր աննշմար ու անթիվ մարդկությունն է որ կեփի։

## ԱՆՑՈՐԴ ԿՆՈՋ ՄԸ

*Խլացուցիչ փողոցին ժխորը շուրջս կոռնար,*
*Երկար ու նուրբ, սգավոր,— սուգ խորունկ, վիշտ վեհատիպ,*
*Կին մը անցավ, վեր առած և օրրելով մեղմաբար*
*Ծայրը ձեռքին պերճասեր՝ փոթ, դրրասանդ ու խծիպ.*

*Թեթևաշարժ, բարձրաշուք, արձանելի սրունքով,*
*Ես հիմարի մը նման կծկըվելով կըմպեի*
*Իր աչքին մեջ՝ մթամած երկինք հղի մրրիկով,*
*Շլացուցիչ քաղցրությունն ու հաճույքը թունալի։*

*Փայլակ մը լոկ... և գիշեր։— Ո՛վ գեղեցիկ անցորդ սեգ,*
*Որուն նայվածքը հանկարծ վերապրեցուց իմ հոգիս,*
*Հավիտենի՞ց մեջ ինձի պիտի նորեն հանդիպիս.*

*Այլուր, հոսկե շատ հեռու. շատ ուշ, գուցե ալ երբեք,*
*Զի փոխադարձ չենք գիտեր թե ո՛ւր կերթանք տարագիր,*
*Դուն, զոր պիտի սիրեի, ո՛վ դուն, որ զայն գիտեիր։*

## ԱԼՊԱԹՐՈՍԸ

*Նաւաստիները հաճախ իբր զբօսանք կբռնեն*
*Ալպաթրոսներ՝ ծովերու թռչունն այս մեծ ու շքեղ,*
*Որոնք կուգան, ուղեկից ընկերներու պես մեկտեղ*
*Շոգենաւին հետ սահող դառն անդունդոց վրայէն։*

*Սակայն հազիւ թէ դրուած տախտակներուն վրայ դեանի,*
*Այդ կապույտի արքաներն՝ ամօթահար, անճարակ՝*
*Խեղճուկ մը վար կձգեն թեւերնին լայն ու ճերմակ,*
*Զերթ քովերնին քաշքշուող, ջուրը աւլող զոյգ մը թի։*

*Այս ուղեւորն օդաչու ի՜նչ ձախլիկ է ու անկամ.*
*Ան քիչ մ՚առաջ այնքան վեհ, ի՜նչպես տգեղ է հիմա.*
*Մին ծխամորճ մը խրել կտուցին մեջ կչանա,*
*Կկաղա մյուսն հեղին պես, ու կթռե՞ր հարաժամ։*

*Կնմանի բանաստեղծն այս իշխանին ամպերու,*
*Որ փոթորիկին մեջ կերթա և է նետին անտարբեր,*
*Աքսորական հողին վրա, ուրկէ կելլեն հայհուչներ՝*
*Անոր թևերն հսկայի զինք կարգիլեն քալելու։*

## ՕՐՀՆԵՐԳ

Սիրելագույն, գեղեցկագույն
Կնոջ, որ փայլ սրտիս կուտա,
Հրեշտակի՛ն, կուռքին անմահ՝
Անմահության մեջը՝ ողջո՜ւյն։

Կատարածվի կյանքիս մեջ ան՝
Աղով զեղուն օդի մը պես,
Եվ իմ անհագ հոգիես ներս
Կհեղու համն հավերժության։

Բյուրապարկի՛կ միշտ թարմ՝ խնկող
Օդը խուցի մը սիրելի,
Բուրվառ լքված ի գիշերի,
Որ կմնա գաղտ ու անշող։

Ի՜նչպես կրնամ քեզ, սե՛ր անեղծ,
Նկարագրել ճշմարտապես,
Քեզ, մուշկի հա՛տ, զոր ձեռք մ՚անտես
Հավերժորեն մեջս թաղեց...

Ազնվագույն, գեղեցկագույն
Կնոջ, որ ինձ կյանք, խինդ կուտա,
Հրեշտակի՛ն, կուռքին անմահ՝
Անմահության մեջը՝ ողջո՜ւյն։

## ԿԱՏՈՒՆ

Եկո՛ւր, աղվոր իմ կատո՛ւս, սրտիս վրա խանդակաթ՝
Պահե ճանկերը թաթիդ
Եվ թույլ տուր, որ ընկղմիմ այդ աչքերուդ մեջ վճիտ,
Ուր մետաղ կա և ակաթ։

Երբ որ մատներս ընդերկար կփայփայեն, կշոյեն
Գլուխդ ու կռնակդ առաձիգ
Ու երբ որ ձեռքս կզգա գինովություն մը քաղցրիկ
Թրթռուն մարմնույդ շփումեն,

Կտեսնեմ կի՛նս զիմացս։ Անոր նայվածքն ալ, հանգույն
Քուկինիդ, ջաղջի անասո՛ւն,
Խորունկ ու պաղ, կկտրե և կճեղքե, ղերթ դաշույն...

Եվ հով մը նուրբ, բույր մ' ուժգին
Ոտքեն գլուխը մինչև ալեծածան կօրօրվի
Շուրջը իր թուխ մարմինին։

## ՍԱՏԱՓԵՐԱՆԳ...

*Սատափերանգ, ծփծփուն հանդերձանքումը իրեն՝*
*Քալած ատենն իսկ կարծեք թե կպարե անիկա,*
*Նման երկայն օձերուն, զոր համաչափ կշարժեն*
*Մխակատար աճպարարք իրենց բարակ ցուպին վրա։*

*Ինչպես ավազն ու ինչպես անապատին վրա երկինք՝*
*Տառապանաց մարդկային հանդարտորեն անզգած,*
*Եվ պերճ ծովուն ծփանքին ցանցերն երկար, լայնաձիգ*
*Կծավալլի անիկա անփութությամբ մը լքված։*

*Հղկուն աչքերն իր շինված են քարերե սիրավանդ,*
*Եվ խորը իր տարօրեն խորհրդակիր բնության,*
*Ուր կերևի կույս հրեշտակն՝ հին սփինքսին հետը խառն,*

*Ուր ամեն ինչ է ոսկի, պողպատ ու լույս, ադամանդ,*
*Անվերջորեն կշողա, աստղի մը պես անօգուտ,*
*Ամուլ կնոջ բովանդակ վեհաճաճանչ փառքը ցուրտ։*

# ԿՈՒՅՐԵՐԸ

Դիտե՛ զանոնք, հոգի՛դ իմ, քստմնելի են իրապես.
Խամաճիկներ հիշեցնող, տարտամորեն ծաղրելի.
Ահազդեցիկ, տարօրեն՝ զերթ շրջիկները քնի,
Ուղղած մթին բիբերնին հեռուն, կետի մը անտես։

Իրենց աչքերն, որոնցմե աստծո կայծն է թռեր,
Իբր թե հեռուն նայելին՝ կմնան միշտ բարձրացած
Դեպի երկինք. չես տեսներ որ մայթերուն վրա ցած
Անոնք կախեն երազկոտ ու ծանրաքարշ գլուխներ։

Այսպես անոնք կկտրեն կանցնին խավարն անհատակ,
Որ եղբայրն է լռության մշտնջենի։ Ո՜վ քաղաք,
Մինչդեռ կերգես, կխնդաս, կբառաչես չորս կողմեն

Դուն՝ հաճույքի անձնատուր մինչև տանջանքը հիմար,
Կքաշկըռտվիմ, տե՛ս, ես ալ, բայց քան անոնք ապշահար՝
Կըսեմ. արդյոք երկնից մեջ կույրերն այս ի՞նչ կ'որոնեն։

## ԱՂՔԱՏՆԵՐՈՒՆ ՄԱՀԸ

*Մահն է որ մեզ կսփոփե, ավա՜ղ, և մեզ կապրեցնե,*
*Ան նպատակն է կյանքին, ու միմիակ հույսն է ան,*
*Որ դյութաջուր մը ինչպես, կոգևորե, կարբեցնե*
*Եվ սիրտ կուտա քալելու մինչև իրիկունը օրվան:*

*Քողին տակեն փոթորկին ու սառույցին ու ձյունին,*
*Ան նշույլն է թրթռացող հորիզոնին վրա մռայլ,*
*Ուղեգետքին ցույց տված օթևանն է անվանին,*
*Ուր կարենանք պիտի մենք ուտել, հանգչիլ, քնանալ:*

*Հրեշտակ մ'է ան, որ բարակ մատներուն մեջ հմայիչ*
*Կպահե քունն ու շնորհն երազներու երկնաթռիչ,*
*Եվ կշտկե անկողինն աղքատ ու մերկ բազմության:*

*Աստվածներու փառքն է ան, շտեմարանն է միսթիք,*
*Չքավորին քսակն է և հնամյա հայրենիքն.*
*Ան դուռն է մեզ անծանոթ երկինքներու վրա բաց:*

## ԹՇՆԱՄԻՆ

*Իմ թարմ տարիքըս եղավ մութ փոթորիկ մը միայն,*
*Ուրկե անցան մերթ ընդ մերթ լուսաճաճանչ արևներ,*
*Շանթ ու անձրևը այնքան հոն գործեցին բուռն ավեր,*
*Որ պարտեզիս մեջ շատ քիչ փայլուն միրգեր կմնան։*

*Ահա՝ հասեր եմ արդեն գաղափարաց աշունին*
*Ու պետք է բահն ու արմուղն հիմա շարժեմ անդադրում,*
*Նորեն ի մի բերելու համար հողերը խխում,*
*Ուր դամբանի չափ խորունկ փոսեր փորված կերևին։*

*Եվ ո՞վ գիտե թե այն նոր ծաղիկներն իմ երազիս,*
*Պիտի կրնան, ավազի պես լվացված այս հողեն,*
*Քաղել իրենց ուժ և գեղ տվող սնունդն ոգեղեն։*

*Ո՜վ ցավ, ո՜վ ցավ։ Ժամանակը կուտե կյանքը և զիս,*
*Եվ մեր սրտերը կրծող այդ թշնամին հնօրյա,*
*Մեր կորսված արյունով միայն կաճի, կուռճանա։*

## ԻՆՔՆԱՄՓՈՓՈՒՄ

*Խելոք կեցիր, ո՛վ իմ ցավս, և ամփոփվե՛, հանդարտվե՛,*
*Կոչասեիր իրիկվան, ահա կիջնե թևաբաց.*
*Խավարահյուս մթնոլորտ մ'ոստանը տես կպատե՝*
*Ոմանց անդորր և այլոց բերելով հոգ ու կասկած։*

*Մահկանացվաց մինչ կերթա անարգ ամբոխն այս հլու,*
*Մտրակին տակ հաճույքին՝ անագորույն դահճապետ,*
*Ստրկական կացուրդեն խղճի խայթեր քաղելու,*
*Ձեռքդ ինձի տուր, ո՛վ իմ ցավս, եկո՛ւր այս կողմ, ինձի հետ։*

*Հեռո՜ւ, հեռո՜ւ անոնցմե։ Տե՛ս տարիներն հոգեսպառ,*
*Պատշգամին վրա երկնի, շրջազգեստյուք հնաձև.*
*Ժպտուն կարոտը հառնող մութ ջուրերուն ի վերև.*

*Մեծ կամարի մը ներքև ննջող արևն ոգեվար,*
*Եվ ւերթ պատանք մը երկայն քաշքըշվելով իր ետին՝*
*Լսե՛, լսե՛, սիրելիս, քալելն անուշ գիշերին։*

## ԴՈՒՆ ԱՅՍ ԳԻՇԵՐ

*Դուն այս գիշեր ի՜նչ ըսես պիտի, հոգի՛ մենավոր,*
*Սի՛րտ, ի՜նչ ըսես պիտի դուն, սիրտս էր ներսեմըն թաղնած —*
*Այն էակին շատ բարի, շատ սիրելի, շատ աղվոր,*
*Որուն նայվածքն երկնային քեզ ծաղկեցուց հեղակարծ։*

*— Պիտի հպարտ ըլլանք մենք երգելով գեղն իր համբույր—*
*Ոչինչ անուշ է այնքան որքան իր կամքը իշխող.*
*Հողեծածանչ իր մարմինն հրեշտակաց ունի բույրն*
*Ու կպատե մեզ աչքն իր հանդերձանքով լուսաշող։*

*Ըլլա մութին գիշերվան, առանձնության ալ մեջտեղ,*
*Եվ կամ ըլլա փողոցին ու բազմության մեջ ահեղ,*
*Իր լույս սավերն օդին մեջ կերթա վերթ ջահ մը բացել։*

*Մերթ կխոսի ու կըսե. «Գեղեցիկ եմ, ու հրաման*
*Կընեմ ձեզի, որ սիրեք գեղեցկությունը միայն.*
*Ես պահապան հրեշտակն եմ ու սիրամայրն ու մուսան»։*

# ԿԵՆԴԱՆԻ ՋԱՀԸ

*Կերթան անոնք առջևէս, այդ աչքերը լուսառատ,*
*Զոր բազմագէտ հրեշտակ մը մագնիսեց անպատճառ.*
*Կերթան ինձ հետ, երկնային այդ եղբայրներն ինձ եղբայր,*
*Աչքերուս մեջ թոթվելով իրենց կայծերն ադամանդ։*

*Զիս փրկելով անդունդեն ամեն ցավի և մեղքի՝*
*Դեմըս անոնք կբանան գեղեցիկին ռահը գոց.*
*Իմ ծառաներս են անոնք և ես ստրուկն եմ անոնց,*
*Իմ ամբողջ անձս հնազանդ է այդ ջահին կենդանի։*

*Աղվոր աչքե՛ր, կփայլիք դուք շողյունովն այն միսթիք,*
*Որ մոմերունն է այրող օր ցերեկով, չի մարիր,*
*Կկարմըրի արևին տակ անոնց բոցն ուրվածիր...*

*Կտոնեն մահը անոնք, մինչ դուք զարթումն երգեցիք.*
*Դուք կընթանաք երգելու վերազարթումը հոգվույս.*
*Աստղե՛ր, որոնց ոչ մեկ արփի կրնա նվծել բոցը կույս։*

## ԸՆՏԱՆԻ ԵՐԱԶՍ

*Երազն այս միշտ կտեսնեմ՝ հոգնթափանց, տարօրեն,*
*Կնոջ մ՚ ինձի անծանոթ, ինձմե սիրված, սիրող զիս,*
*Որ ամեն հեղ ոչ նույնն է, ոչ ալ տարբեր հիմնորեն,*
*Որ սակայն զիս կսիրե և կըմբռնե իմ հոգիս։*

*Զի կըմբռնե ան հոգիս, որ լուսավոր բայց միայն*
*Իրեն համար կդադրի մութ առեղծված մ՚ ըլլալե,*
*Իրեն միայն, ու ամույն իմ ճակատիս ջերմության՝*
*Միմիայն ինք զովություն, արտասվելով, կցողե։*

*Թո՞ւխ է արդյոք, թե խարտյաշ, թե շիկահեր.— չեմ գիտեր.*
*Անո՞ւնն անոր.— կհիշեմ թե հնչեղ է, քաղցր ու հին՝*
*Ինչպես կյանքեն աքսորված սիրյալներու անունները։*

*Կնմանի իր նայվածքն արձաններու նայվածքին,*
*Եվ ձայնը լուրջ, հեռավոր, խաղաղավետ, ունի շեշտն*
*Այն ձայներուն սիրելի, որ լռեցին առհավետ։*

# Ա՜Հ, ՔԱՂՑՐՈՒԹՅՈՒՆ...

*Ա՜հ, քաղցրությո՛ւն, քաղցրությո՛ւն ու վերստին*
*քաղցրություն...*
*Հանդարտեցուր հուզումներն այդ ջղաձիգ քիչ մ'այլես...*
*Մինչև իսկ խորն հաճույքին՝ սիրուհին պետք է, գիտես,*
*Երբեմըն ցույց տա քրոջ մ'անդորրավետ ձևը հեզ...*

*Եղիր լքուն, հեշտասուն, գգվանքըդ ըրե քնաբեր,*
*Եվ հավասար՝ հառաչներդ ու նայվածքներդ օրորիչ.*
*Տե՛ս, սիրախանձ այդ սեղմումն և հուսկ ցնցումն ալ լկիչ,*
*Չեն արժեր լուռ ու երկար համբույրն եթե իսկ խաբեր...*

*Բայց դուն, աղվորս, ինձ կըսես թե քու սիրտիդ մեջ ոսկե,*
*Հնչեցնելով փողն իր միշտ կսուրա կիրքը կարմիր,*
*Զգե ազատ այդ պոռնիկն, որ ուզածին պես փչե...*

*Դիր ճակտիս վրա ճակատդ ու ձեռիս մեջ ձեռքըդ դիր,*
*Եվ երդումներ ըրե ինձ, զոր պիտի վաղը մոռնաս,*
*Եվ մինչև լույս արտասվենք, ո՛վ իմ պզտիկ անառակս...։*

ԱԼԲԵՌ ՍԱՄԵՆ

## ՑՆՈՐՔԸ

*Ցնորքն անցավ քաղաքէն, ուր ամէն ինչ կննջէ.*
*Եվ իր մահճէն մարդը դուրս ցատկեց հանկարծ սարսռագին,*
*Ձեռնելու համար շիկ քայլով ազվոր հրեշին,*
*Որ սուտ երկինք մը ունի լայն աչքերուն մեջ ոսկե։*

*Ծեր, կին, տղա,— կքալե անոնց մարմնույն վրայեն.*
*Կերթա առաջ դժողըհի, սեւաւրիր, անըզգած...*
*Իրիկուն է...։ Եկավ ան, ու հազիվ սեմը անցած*
*Սայթաքեցան ղանդերու վրա ոտքերը իրեն։*

*Հրեշն այնժամ հանկարծուստ որսին վրա կնետվի,*
*Եվ ծառացած, ահռելի, ու հրճվանքեն ոռնալով՝*
*Զայն կխածնե՝ կհերկե իր ճանկերովն երկաթի։*

*Բայց մարդն, որուն կհոսի արյունն առատ ալխերով՝*
*Ունայն միշտ երկնային աչքերուն մեջ ցնորքին*
*Եվ կմեռնի լանջահերձ ու ժպտելով տակավին...։*

## ԿՍԻՐԵՄ ԱՅԳԸ...

*Կսիրեմ այգը բոկոտն իր թյումավարդ վարսերով.*
*Բլրակները մանիշակ՝ տժգույն շողով մ'ոսկեզօծ*
*Եվ աղմուկով մը թնդուն հանկարծարաց փեղկը դոց,*
*Որ կխըմե պարտեզին այգաթրթիռ սուգը ծով,*

*Կիրակնալույս առտըվան մը մեծ փողոցը գյուղին.*
*Կուժն՝ առվակին մեջ ծռած, զոր արշալույսն է երփներ—*
*Աղջիկը ձութ ակռայով, տերևը թաց ցողով դեռ*
*Եվ մանկական աչքերուն հստակ բյուրեղն երկնային։*

*Կնախընտրեմ բայց հոգի մ'ըստվերին մեջ ծնրադիր.*
*Աշնանադեղ անտառներն ու իրենց բույրը թրջած*
*Եվ ճամփան ուր, խրխնջան, կանցնի կառք մը համրընթաց,*

*Հետո լուսինը ցաթած պատուհանեն քողակիր,*
*Ձեռք մը տժգույն, համրաբար և քաղցրորեն փայփայուն,*
*Տրտում հուրքով մը լեցուն երկու մեծ աչք, ամենուն*

*Վրա ձայն մ'որ հեծկլտալ կուզե... բայց չի հանդգնիր։*

## ՀԱՆՐԻ ԴԸ ՌԵՆԻԵ

### ԳՐԻՍԻԼԼԱ

*Մինչև բերանը լեցուն բաժակին ժամն երբ հասնի,*
*Աստվածուհի՛, անարխ քով ինձ տեսնել թույլ մի՛ տար*
*Հետամնաց ժամանակն, որ առանց ճիչ ու ցավի,*
*Երկար կյանքի մը կուգա կտրել անողոք թելն երկար...*

*Կնախընտրեմ զինք սերն։ Ավա՜ղ, առեց ան զիս միշտ,*
*Եվ ես գիտեմ շատ աղեկ թե այդ անդութը արդեն*
*Կփափագի աղեղին հուսկ հարվածովը իր ճիշտ*
*Կարմիր հողին վրա թափել սրտիս արյունը ամեն...*

*Ո՛չ, իրիկվան մոտ կուզեմ, որ երևնա աչքիս դեմ*
*Իմ մանկությունս՝ գեղեցիկ, անձայն ու մերկ, ժպտադեմ.*
*Վարդ մ՚ունենա ձեռքին մեջ և լայն փետատև ջուրին վրա...*

*Մտիկ կընեմ ջուրերուն լացած ողջույնը վերջին.*
*Եվ բնավ պետք չըթողլով մահվան նետին, մանգաղին՝*
*Աչքըս գոցած կմտնեմ գիշերին մեջ ընդերկրյա...*

ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼՏ

## ՀՆՁՅԱԿ

Ո՛չ, տեր, ո՛չ այսպես: Գարնան մեջ շուշաններն սպիտակ,
Ձիթենյաց մխուր պուրակներն կամ արծաթալանջ աղավնին
Ինձի ավելի հստակ կխոսին քու կյանքիդ ու սիրույդ մասին,
Քան այս կարմիր բոցերն ու ամպերու որոտումներն համակ...

Ծիրանաշող այգիները քու անուշ հուշերըդ ինձի կբերեն.
Թռչուն մը որ իրիկվան մեջ կթռչի դեպի իր բույնն՝
Ինձի կպատմե հանգիստի տեղ մը չունեցող կյանքը մեկուն.
Ինձ կթվի թե ճնճղուկները քու մասիդ կերգեն...

Եկո՛ւր մանավանդ, երբ հետմիջօրե մըն է աշնան.
Երբ տերևները կարմիր ու գորշ կփայլփլան,
Երբ դաշտերն արձագանք կուտան հասկաքաղի երգերուն...

Եկո՛ւր, երբ լուսինն իր լրման մեջ է շքեղ
Ու կնայի վար հասկերուն ոսկեդույն.
Եվ ա՛լ հնձե քու հունձքդ: Մենք շատ սպասեցինք այստեղ...:

## ԽՄԲԱԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

*Ներկա հրատարակությունը, որ կոչվում է «Երկեր», կազմված է Վահան Թեքեյանի հրատարակած բոլոր գրքերը նկատի ունենալով, բացի «Տաղարան»-ից։ Բանաստեղծությունների ժամանակագրական կարգը թողնված է այնպես, ինչպես վարվել է հեղինակը. մենք պահպանել ենք բանաստեղծի լեզվա-քերականական առանձնահատկությունները, առանձին բառերի հնչումները, կետադրությունը, ուղղելով միայն բառավերջի և բառամիջի «ը» երը, որոնք չեն խախտում հանգը, և որոշ բանաստեղծությունների մեջ, հատկապես պարբերության վերջում, հանված են անհարկի բազմակետերը։ Կատարված են կետադրական և ուղղագրական մասնակի փոփոխություններ։*

*«Երկեր»-ը կազմված է հետևյալ գրքերի հիման վրա.*

### «ՀՈԳԵՐ»

*Թեքեյանի երախայրիքն է՝ առաջին գիրքը, որ լույս է տեսել 1901 թ. Փարիզում, ընդգրկելով 1893—1901 տարիները, բաղկացած չափածո լիրիկական նախափորձերից, Պոլ Վեռլենի և Հանրի Բեյլի երկուսական թարգմանությունից և ինքնուրույն արձակ բանաստեղծություններից։ Այս գրքից ընտրված են լիրիկական բանաստեղծություններից առավել հաջողները՝ գաղափար տալու նրա սկզբնական շրջանի ստեղծագործությունների մասին։*

### «ՀՐԱՇԱԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ»

*Այս հատորը լույս է տեսել 1914 թ. Կ. Պոլսում և համարյա ամբողջությամբ մտել է «Երկեր»-ի մեջ, բացառությամբ այն գործերի, որոնք հայրենասիրական բնույթ ունենալով, հեղինակը հետագայում ամփոփել է իր «Հայերգություն» (1943 թ.) խորագրով գրքի մեջ, որ այս հատորում կազմում է առանձին բաժին։*

## «ԿԵՍ ԳԻՇԵՐԵՆ ՄԻՆՉԵՎ ԱՐՇԱԼՈՒՅՍ»

Լույս է տեսել առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմից հետո, 1919 թ. Փարիզում։ Հատորն ունի երկու հիմնական բաժին՝ «Կես գիշերեն մինչև արշալույս» և «Աստղեր ու ամպեր»։

Երկրորդ բաժնի տիտղոսը չի պահպանված «Երկեր»-ում։ Այս գրքից վերցված են միայն լիրիկական բանաստեղծությունների մի մասը. հայրենասիրականները զետեղված են հատորիս «Հայերգություն» բաժնում։

## «ՍԵՐ»

Այս հատորը լույս է տեսել 1933 թ. Փարիզում և ընդգրկում է շուրջ քսան տարվա ժամանակաշրջան (1913—1931)։

Բաժնի վերջում մեր կողմից ավելացված է «Ձմեռ՝ հիմա իր ցուրտով» բանաստեղծությունը», վերցված նրա «Տաղարան» (1914 թ.) գրքից։ Հայրենասիրական բնույթի բանաստեղծությունները զետեղված են «Հայերգություն» բաժնում։

## «ՀԱՅԵՐԳՈՒԹՅՈՒՆ»

1943 թ. հրատարակված այս հատորը կազմված է տպագրված և անտիպ հայրենաշունչ բանաստեղծություններից, որոնք վեր են հանում հայ պատմական անցյալի հերոսական դրվագները, Սփյուռքը իր բազմազան խոհերով, հույզերով ու ապրումներով, և գովերգներ՝ նվիրված «Նաիրյա Հայաստան»-ին — Սովետական Հայաստանին։

Թեքեյանը գրքի առաջաբանում գրում է.

«Այդ կյանքը ունեցած է, հեղինակին գրած ժամանակին մեջ, չորս որոշ շրջան. Առաջին՝ 1900—1908, բռնապետության դեմ մաքառումի և հույսի շրջան. Երկրորդ՝ 1908-էն 1915, հարաբերական խաղաղության, բայց և վրդովումի և վերհիշումի շրջան. Երրորդ՝ 1915-էն 1922 և ավելի վերջը, քայքայման և անզոր մոլուցքի շրջան. ու Չորրորդ՝ 1923-էն առաջ սկսած և մինչև այսօր շարունակվող, տրտմության զուգահեռ՝ խանդավառության շրջան»։

## «ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԵՐԿԵՐ»-ԻՑ

Թեքեյանի մահից հետո (1945) Կահիրեում կազմված «Թեքեյան ֆոնդի հանձնախումբ»-ը ձեռնարկել է հրատարակել բանաստեղծի «Ամբողջական երկերը» 15 հատորով։ «Երկեր»-ում մտել են նրա երրորդ և չորրորդ հատորները համարյա ամբողջությամբ, որոնց մեծ մասը հեղինակը ժամանակին չի մտցրել իր ժողովածուների մեջ։

## L'ARMENIE A LA RUSSIE

(Հայաստանը Ռուսաստանին)

*Բանաստեղծը գրել և կարդացել է ՍՍՌՄ Կահիրեի դեսպանատանը, Հայրենական Մեծ պատերազմում Սովետական Բանակի տարած հաղթանակների նախօրեին: Դրվում է նոր թարգմանությամբ:*

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Թեքեյանը իր երկարամյա գրական գործունեության ընթացքում կատարել է բազմաթիվ թարգմանություններ, հատկապես ֆրանսիական գրականությունից: Հեղինակի թարգմանչական արվեստի մասին գաղափար տալու համար հատորում զետեղում ենք մի քանի նմուշներ: Թարգմանությունները վերցված են Կահիրեում հրատարակված նրա «Ամբողջական երկեր»-ի հինգերորդ հատորից:*

# ԲԱՌԱՐԱՆ

## Ա

Ազազուն — *չորացած, հյութազուրկ*

Ալեփառ — *փառահեղ մազերով*

Ալպաթրոս — *ծովային թռչուն*

Ալք — *ալիքներ, խորք*

Ախտամետ — *հիվանդոտ, ցավոտ*

Ակնաճեռ — *ակնաշար. ակնախիտ*

Աղբյուս — *աղբ*

Աղու—*գուրեկան, գուրալի, անուշ*

Աղուաբաց—*գուրեկանորեն բացված*

Աճպարար — *ձեռնածու, ֆոկուսնիկ*

Ամբավ (անբավ) — *անչափ, անհատնում*

Ամբրոսիա — *ամբրոս, նեկտար*

Արմենավանդ — *հայավանդ*

Անզայտ — *նոսր, ցրված, տարածուն*

Անզիղջ — *համառ, չզղջացող*

Անըմբեր — *անհամբեր, շտապող*

Անձկանոք — *տենչանքով, կարոտով*

Անձնյուր— *իր անձը, ամեն մեկը, ամեն ոք*

Անհեղլի — *անփոփոխ, անխափան*

Անճառ — *անասելի*

Աննիգ — *անփակ, փականք չունեցող*

Անոքիկ — *մեն-մենակ*

Անպարագիծ - *անծիր, անսահման*

Անտիական — *պատանի, երիտասարդ*

Անվկանդ — *անպարտելի*

Անցընել — *հանգցնել, մարել*

Անքույթ — *հանգիստ, անվրդով*

Առապուր — *ոտքի տակ, ոտքի կոխան*

Առհավական — *պապենական, հնեկ, ժառանգական*

Ասպնջական — *հյուրընկալ*

Անսվաղ — *սոված, ծոմ*

Ավիշ — *կենսահյութ*

Ատեն, ատենով — *ժամանակ, ժամանակով*

Ատոք — *լի, տռուզ, հատիկավոր*

Ատրաշեկ — *հրաշեկ*

Արբշիռ — *հարբած*

Արյունազանգ — *արնաթաթախ, արյունլվա*

Արփի — *արև, արփի*

Արքենի — *գեղեցիկ, շքեղ*

## Բ

Բարե՛ — *ավա՛ղ*

Բարակ — *որսի շուն*

Բարձրահոն — *հպարտ, գոռոզ*

Բոցածախ — *հրո ճարակ*

Բունձ — *հողի կոշտ, դունձ*

Բուստ — *մարջան*

### Գ

Գալարասանք — *գալարմելով տանջվել*

Գայըգ — (*Թուրքերեն*) *նավակ, մակույկ*

Գեղ — *գեղեցիկ*

Գեղոն — *գանձ, ձոն, նաև բալլադ՝ ըստ արեւմտահայերի*

Գիրգ — *փափուկ, փափկասուն*

Գուպար — *մարտնչում, պայքար, կռիվ*

Գրիվ — *չափ ընդեղենի, հատիկի*

### Դ

Դանդայուն — *դողդողուն, կամաց-կամաց քայլող*

Դաշնասաց — *ներդաշնակ երգված*

Դերբուկ — *խորդուբորդ*

Դըրդըռչյուն — *խոխոջ*

Դժպատեհ — *անպատեհ, նաև՝ խոժոռ*

Դիք — *աստվածներ*

Դյուր — *դյուրին, հեշտ*

Դրասանգ — *դռան վրա կախված տոնական ծաղկյա զարդ*

### Ե

Եղերամայր — *եղերամայրեր.— հնում մեռելի վրա լացող կանայք*

Եղեսպար — *բույսի անուն*

Երազամույն — *երազի մեջ սուզված*

Երկոտին — *երկուսով*

Երփնել — *գունազարդել, գունավորել*

Եբենաբույլ — *արծվափայլ*

### Զ

Զանանդական — *թափառող մշտաշարժ*

Զգլխիչ, զգլխել — *արբեցնող, խենթացնող, արբեցնել, խենթացնել*

Զենել, զենուլ — *մորթել, զոհել*

### Ը

Ընդփույթ — *շտապ, արագորեն*

### Թ

Թայթլում — *թավալում, թալուկնալ, թուլանալ*

Թիրտ (դիրտ) — *նստվածք, մրուր*

Թյում — *ծաղիկ և խոտ*

Թորանոց — *թորելու տեղ*

### Ժ

Ժանտատոն — *ժայռահոն, ժանտադեմ*

### Ի

Իրարախառն — *խառնակ ժամանակ, քաոս*

## Լ

Լընօւլ — լցնել
Լուսաննեղ — լուսանորդ

## Խ

Խամանիկ — խրտվիլակ
Խամսին — անապատի ավազախառն տաք հողմ՝ Եգիպտոսում
Խարակ — ազատված
Խեննե — գույն. անպատկառ
Խխում — կակուղ, փափուկ
Խծիղ — սուր, ամրացած ոլորանք
Խնկունի — ծաղկի անուն
Խոզակ — թիթեռի բոժոժ
Խորել — այսինքն՝ խորովելու իմաստով
Խուխ — թուք
Խոստամբեր — խիստ

## Ծ

Ծյուրել — հալվել, մաշվել, դալկանալ
Ծովամարդ — ծովամայրերի
Ծովամույն — ծովասույզ, ծովի մեջ

## Կ

Կաղանդ — նոր տարի
Կնյա — մարմարյա
Կողկողել — ցավային լալ
Կորացուցիկ — կուռնչը կախ
Կուճս — ներթափ, մաղաթափ գլուխ, ճաղատ
Կրկնոց — թիկնոց, վերարկու, պլաշչ

## Հ

Համայնածախ — ամեն ինչ լափող, ոչնչացնող
Համբուն — միասին, ամբողջությամբ
Համբուրասով — համբույրի սոված, անհագ կարոտ
Համրանայլ (յամրանայլ) — դանդաղայլ
Համր (յամր) — հաճախ գործածվում է դանդաղի իմաստով
Հայնույս — սպառնալից, անարգական բացականչություն
Հանգույն — նման
Հանգրվան — հանգստատեղ
Հանուրց — հանրություն, ընդհանրություն
Հասսուն — հասունություններ առած
Հասպիս — մի տեսակ գորշ-կարմիր կամ դեղին-կանաչ քար
Հարալեզ — առասպելական շներ, որ լիզելով մեռելի վերքերը կենդանացնում էին
Հարսնուկ — ծաղկի անուն
Հարց — հայրերի
Հափափում — հափշտակություն
Հեգել — լանկերով կարդալ, կրկնել
Հեղակարծ — հանկարծ, անակնկալ
Հեզգ — խեղճ, ողորմելի, անմեղ
Հեստ — ըմբոստ, անհնազանդ
Հեց — հենած, կռթնած
Հիս (յիս) — իմ մեջ, ինձ մոտ

Հնչյակ — *սանձա*
Հող — *այգանց*
Հորձանավար — *ջրի հորձանքով վարվող, ընթանալ հորձանքի հետ*
Հոռեգույն — *վատագույն, վատթար*
Հորմենենտե (յորմենենտե) — *որից հետո, դրանից հետո*
Հուլյարար (յուլյարար)— *ծուլորեն, մեղկորեն, դանդաղորեն*
Հունավոր — *չափավոր (գավառաբարբառով)*
Հուսկ — *ի վերջո. ամենավերջը*
Հրայրք — *սրտի հուր, ցանկություն, տռփանք*
Հրատ — *Մարս մոլորակը*

## Ձ

Ձեղուն — *առաստաղ*
Ձենն — *ձեզանից*
Ձորձ — *հնոտի, ցնցոտի, քուրջ*

## Ճ

Ճայթուկ — *ճկուն, դյուրաթեք*
Ճըպյոտ (ճպյոտ) — *ճիպոտ*

## Մ

Մախանք — *նախանձ*
Մենեն — *մեզանից*
Միլեոն — *միլիոն*
Մոլեխինդ — *թունավոր բույս*
Մորու (մորի) — *խորթ մայր*
Մույնք — *վայելչանք, վայելուչ*
Մուրիկ — *մուրացիկ*
Մսել — *մրսել*
Մսկոտ — *մրսկան*

## Յ

Յայլը — *ամառանոց—թուրքերեն յայլա բառը*

## Ն

Նախահարց — *նախահայրերի, պապերի*
Նաշին — *մաքուր աղբյուր*
Ներգո — *խորքում գոյություն ունեցող*
Նոթի — *անոթի, սոված*
Նոթություն — *անոթություն, սովածություն*
Նսեմ — *թախտ, վիճակ, ճակատագիր*

## Շ

Շառավ — *ճառագայթ, լույս*
Շագալ — *շնագայլ, չախկալ*
Շավիղ—*շառավիղ, ճյուղ, ընձյուղ*

## Ո

Ոգել — *ոգի տալ, արտասանել*
Ոգորել — *կռվել, պայքարել*
Ուղխ — *ջրի հոսանք, առատ ջուր*
Որա — *խուրձ, փունջ*

## Ձ

Ձավաղել — չափսոսալ

## Պ

Պազել — համբուրել
Պակուցում — զարմացնելով վախեցնել
Պարիկ — ալի
Պարկա — առասպելական այն երեք քույրերը՝ պարիկուհիները, որոնք մանում և կտրում էին կյանքի թելը
Պարմանի — պատանի
Պոռոտ — պոռոտախոս, բացբերան
Պվետ — պոետ, բանաստեղծ

## Ջ

Ջամբել — կերակրել
Ջոկ — փոքրիկ խումբ
Ջրամույն — ջրասույզ, ջրամեջ
Ջրեղել — ջրմխել, կոփել

## Ռ

Ռահ — ճանապարհ
Ռխոտ — կծծի, ագահ
Ռնգունք — քթածակեր, ռունգներ

## Ս

Սան — մեծ կաթսա
Սատան — սատանա, չարք
Սկիհ — եկեղեցական սրբանոթ, հաղորդության անոթ
Սոնք — գլխուկ, հաստ, ծանրաշարժ
Սուսերամոն — սրի պես հոնքերով, ժանտադեմ
Սրդողել — նեղանալ, բարկանալ, խռովել

## Վ

Վաղնջական — վաղուցվա, նախնական
Վաղորդայն — վաղ առավոտ

## Տ

Տախտապարող — տապալող, փռող
Տակավ — դեռևս, արդեն, կամաց-կամաց
Տմույն — դժգույն, գունատ
Տարածափյուռ — աշխարհով մեկ ցրված
Տարփավառ — տենչավառ, սիրավառ
Տկլոր — խնկածաղիկ, մայոբան
Տյառն — տեր, տիրոջ
Տվայտանք — տառապանք, տանջանք
Տվնջյան — ցերեկային
Տրմուղ — դժվարասանձ, անվարժ կենդանի

## Ց

Ցայգալույս — վաղ առավոտվա լուսացումն
Ցարդ — մինչև այժմ

## Փ

Փնտնկտել — պտտատտատվել

Փյունիկ — առասպելական այն թռչունը, որ մոխրանում է և նորից հարություն առնում իր մոխրից

Փոթոթել — փոթ-փոթ լինել, ծրա-մալվել

Փոստալ — կայծոտիկ

Փառ, փառել — փշուր, ջարդվել, փշրվել

Փտուկ — փտած

Փտտուն — փտելի

Փցուն — անբովանդակ, դատարկ, սին

## Ք

Քակել — քանդել, արձակել

Քենի — քեռնից

Քումայր — խարտյաշ, շիկավարս

## Օ

Օնաւրուս — ջղու՝ թևերի մասին

Օշխնդր — թունավոր բույս

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Էջ

Վահան Թեքեյան—Վ. Նորենց, Ս. Տարոնցի . . . 3

## ՀՈԳԵՐ

Աստղներ . . . . . . . . 13
Կանթեղ . . . . . . . . 14
Ավազին մեջ . . . . . . . 15
Ուխտ մը . . . . . . . . 16
Երազ . . . . . . . . 17
Ժամադրությունը . . . . . . . 18
Կարավանը . . . . . . . . 19
Օգնելու համար . . . . . . . 20
Մութին մեջ . . . . . . . 21
Անցավ գնաց . . . . . . . 22

## ՀՐԱՇԱԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Կանչրեե, տղա՛ս . . . . . . . 25
Գայլը . . . . . . . . 26
Ողբ (Հոգիիս մեջ մինչ այս կույրին հետամնաց...) . . 28
Ողջու՞յն . . . . . . . . 29
Է՞ր երբեմըն . . . . . . . 30
Քու հիշատակդ այս գիշեր . . . . . 31
Օրհներգ ճանապարհին . . . . . 32
Արեր . . . . . . . . 34
Տարիքը . . . . . . . . 35
Անհավատին կուզեի . . . . . . . 36

Գաղտնիք . . . . . . . . 37
Սոնեթները I—II . . . . . . 38—39
Կոլրեկ . . . . . . . . 40
Փոթորիկ . . . . . . . . 41
Տաղ առ արցունքներ . . . . . . 42
Եղերերգ . . . . . . . . 44
Կարապները համալսարանի լճին մեջ . . . . 45
Խավարի տաղեր I—XII . . . . . 46—58
Հանքմը . . . . . . . . 59
Խամսին . . . . . . . . 60
Հոկտեմբեր . . . . . . . . 61
Որբևայրի մնա . . . . . . . 62
Այնչափ եաքը . . . . . . . 63
Մտածում . . . . . . . . 64
Հրաժեշտ . . . . . . . . 65
Դեկտեմբեր . . . . . . . 66
Իրիկվան աղոթք . . . . . . . 67
Հուսախաբություն . . . . . . . 68
Մաքուր սիրո ձայնը . . . . . . 69
Ապրիլ . . . . . . . . 70
Գեղջկական . . . . . . . . 71
Կերգեի . . . . . . . . 73
Անցյալը անչափ հեռացավ . . . . . 74
Ներկան անապատ է . . . . . . 75
Պաթյուղևալ մանք . . . . . . 76
Սեր մը պաղանի . . . . . . . 77
Ես գինը կարծեմ . . . . . . . 78
Աղվորները . . . . . . . . 79
Չէի կարծեր քեզ սիրել . . . . . . 80
Անունդ . . . . . . . . 81
Հոգիդ . . . . . . . . 82
Ժպտուն աչքերդ . . . . . . . 83
Չորցավ աղբյուրը սրտիս . . . . . 84
Հայրենի գարնան հիշատակը . . . . . 85
Եվ նորեն խոնջ են շրթունքներս . . . . 87
Հոգնած ճամփորդին . . . . . . 88
Խաբեություն . . . . . . . 89
Դուն չգիտցար . . . . . . . 90
Տող մը . . . . . . . . 91
Աղբյուրներ չորցան . . . . . . 92
Նորեն, ո՛վ սեր . . . . . . . 93

Տե՛ր, ի վերջո . . . . . . . 94
Երջանկություն . . . . . . . 95
Հեծեծանք . . . . . . . . 96
Անհուսություն . . . . . . . 97
Մեկնողի մը . . . . . . . 98
Երազներ . . . . . . . . 99—101
Վերադարձ . . . . . . . . 102
Սպիտակ ձեռքդ . . . . . . . 103
Ամառն անցավ . . . . . . . 104
Վիշտ մը . . . . . . . . 105
Գանձատունը . . . . . . . 106
Աշտարակը . . . . . . . . 107
Երեսնամյակ . . . . . . . 108
Կասկածը . . . . . . . . 110
Անտառին մեջ . . . . . . . 111
Գարնան հույսը . . . . . . . 112
Լոնդոն . . . . . . . . 114
Տաղ առ Պոլսեռ . . . . . . . 115
Վիշտի մը . . . . . . . . 116
Երաժշտությունը . . . . . . . 117
Աշուն . . . . . . . . 119

## Հրայրքի պահեր

I Գազանը . . . . . . . . 120
II Մատուցում . . . . . . . 121
III Գոհացում . . . . . . . 122
IV Կենդանի քերթվածը . . . . . . 123
V Հրավեր . . . . . . . . 124
VI Գգվանքները . . . . . . . 125
VII Կրնայի . . . . . . . . 126
VIII Գինովություն . . . . . . . 127
IX Խնջույքը . . . . . . . . 128
X Խոստում . . . . . . . . 129
XI Դիպվածը . . . . . . . . 130
XII Վայրկյանը . . . . . . . 131
Ծերություն . . . . . . . . 132
Անկարեկիր քնարը . . . . . . . 134
Ինձ կթվի թե ապրած եմ . . . . . . 135

## Մանկան տաղեր


| | |
|---|---|
| *I Երկու մանկերը* | 137 |
| *II Վարժութեան մանկան* | 138 |
| *III Առ մահ* | 139 |
| *IV Մահ և արև* | 140 |
| *V Վերացում* | 141 |
| *Իրիկվան խորհուրդներ* | 142 |
| *Գայլին հսկումը* | 144 |
| *Քաղցրութիւն* | 145 |
| *Կաղի երթ* | 146 |
| *Առաւօտ* | 148 |
| *Մեծ հաշտութիւնը* | 149 |
| *Զմայլում (Ոսկեղի գրկեց մեզ ու անրջանքեր...)* | 150 |
| *Ցող ու մաքրութիւն* | 151 |
| *Վրէժի գինին* | 152 |
| *Ցող ու փարթամութիւն* | 153 |
| *Համաստեղութիւնը — Ա. Բ. Գ.* | 154–156 |


## ԿԵՍ ԳԻՇԵՐԵՆ ՄԻՆՉԵՎ ԱՐՇԱԼՈՒՅՍ


| | |
|---|---|
| *Ես սիրեցի* | 159 |
| *Փարոս* | 161 |
| *Այս իրիկուան վերստին* | 162 |
| *Գիշեր* | 163 |
| *Ես երազիս սիրեցի* | 164 |
| *Վերջին հանգրվան* | 165 |
| *Զմայլում (Զմայլէի մը շնորհն անզգամ...)* | 166 |


## Հինգ զգայարանները


| | |
|---|---|
| *Նախերգան* | 167 |
| *Տեսանելիք* | 168 |
| *Լսելիք* | 169 |
| *Հոտոտելիք* | 170 |
| *Ճաշակելիք* | 171 |
| *Շօշափելիք* | 172 |
| *Վերջաբան* | 173 |


## ՍԵՐ


| | |
|---|---|
| *Հայ այգին* | 177 |
| *Ընթերցողին* | 178 |

Երեք կոչերը . . . . . . . 179
Խառնուրդ . . . . . . . 180
Տխրութիւն . . . . . . . 181
Հուր ստեղծիչ . . . . . . . 182
Խաւարում . . . . . . . 183

Բեթհովէնի սոնատի վրա

Ա. Հրաժեշտ . . . . . . . 184
Բ. Բացակայութիւն . . . . . . 185
Գ. Վերադարձ . . . . . . . 186
Դուն հեռաւոր մանկութիւն . . . . 187
Զաւակս (Բայց դուն, անհուն դալկի սեր...) . . . 188
Ես այս գիշեր . . . . . . . 189
Մեկ հատիկս . . . . . . . 190
Ապաստան . . . . . . . . 192
Գիրքեր . . . . . . . . 193
Աղոթք վաղուան սեմին առջև . . . . 196
Ծիծաղ . . . . . . . . 198
Նեղոս . . . . . . . . 199
«Հոգիս» . . . . . . . . 201
Երբ կխորհիմ . . . . . . . 202
Գաղափարաց գետինը . . . . . . 203
Երազին ծնունդը . . . . . . 204
Մուսեան Աթենքի . . . . . . 205
Բաց ծովուն մեջ . . . . . . 206
Քառասնամյակ—Ա. Բ. Գ. . . . . . 207–209
Նոր սենյակ . . . . . . . 210
Անկարելին . . . . . . . 211
Գոլին . . . . . . . . 213
Աղոթք հիվանդ տղու մը համար . . . . 214
Հաշվեհարդար . . . . . . . 215
Երեկ գիշեր . . . . . . . 216
Այս երազը . . . . . . . 217
Ասոնք . . . . . . . . 218
Ոչ ոք . . . . . . . . 219
Մենութիւն . . . . . . . 220
Առենոք . . . . . . . . 221
Հիմարի պես . . . . . . . 222
Հաճույք . . . . . . . . 223
Եղիպտուհի . . . . . . . 224

Իմ գյուղս . . . . . . . . 225
Սառի ծաղիկներ . . . . . . . 226
Հինամյակ . . . . . . . 227
Ջուրերուն վրա ստվերներ . . . . . 228
Թիթեռնիկ . . . . . . . 229
Մոմակ . . . . . . . . 230
Շվարում—Ա. Բ. Գ. . . . . . 231—233
Պարող գերմիշները . . . . . . 234
Մանկության լիզձ մը . . . . . . 235
Ի՞նչ կընես, քերթո՛ղ . . . . . . 236
Տաղ գինույ . . . . . . . 237
*** Ձմեռ հիմա իր ցուրտով . . . . . 238
Մոռնալ . . . . . . . . 239
Տաղ արևին . . . . . . . . 240
Տաղ եռ ուրախության . . . . . . 241
Կայմեր . . . . . . . . 242

## ՀԱՅԵՐԳՈՒԹՅՈՒՆ

### Ա Շրջան. 1901—1908

Հայաստանին . . . . . . . 245
Սուրբ բարկությունը . . . . . . 247

### Հայրենի զրույցներով

Ա. Արշակ Ա-ի կոթողը . . . . . . 248
Բ. Տրդատ Ա-ի կառքը . . . . . . 249
Գ. Արտաշես Բ-ի գերեզմանը . . . . . 250
Դ. Արտավազդ Բ . . . . . . . 251
Ե. Վարագդատ . . . . . . . 252
Զ. Չարալեզները . . . . . . . 253
Է. Գողթան երգիչներ . . . . . . 255
Ը. Գեղոն սոսյաց անտառին . . . . . 257
Թ. Գեղոն Վանա տառեխին և Կախեթի գինիին . . . 259
Վերադարձ . . . . . . . . 261

### Բ Շրջան. 1909—1915

Տաղ հայերեն լեզվին . . . . . . 264

## Արարատյան դաշտին մեջ


Ա. Մասիսին . . . . . . . 265
Բ. Ավերակները . . . . . . . 266
Գ. Լուսավորչի կանթեղը . . . . . 267
Դ. Հրազդան . . . . . . . 268
Ե. Զվարթնոց տաճարին մեջ . . . . 270
Դուն մերինն ես . . . . . . . 271
Վազը . . . . . . . . 272
Գարնան գիշեր . . . . . . . 274
Միջնորդություն . . . . . . . 275


## Գ շրջան. 1915—1920


Պատերազմ . . . . . . . . 276
Մարտադաշտին վրա . . . . . . 277
Քեզ չտեսա . . . . . . . . 278
Սուետիա . . . . . . . . 279
Աղամամութ . . . . . . . 280
Ողբ (Ո՞ր խորունկ ողբը երբեք...) . . . . 281
Խնդանք, եղբայրներ . . . . . . 282
Եվ նորեն միշտ . . . . . . . 283
Ահավոր բան մը այնտեղ . . . . . 284
Տարագրություն . . . . . . . 285
Հույլը . . . . . . . . 286
Պիտի ըսենք աստուծո . . . . . . 287
Երազ . . . . . . . . 288
Պիտի մոռնանք . . . . . . . 289
Տարակույս . . . . . . . . 290
Հպարտություն . . . . . . . 291
Հարության շունչն է ահա . . . . . 292
Ըմբոստություն սրբազան . . . . . 294


## Դ շրջան. 1921 և հետո


Մութ ժամեր Ա—Թ . . . . . . 297—305
Ցեղին հայ որդին . . . . . . . 307
Որբերուն ձեռքերը . . . . . . 309
Սուրիա . . . . . . . . 310
Սփյուռք . . . . . . . . 311
Փոշի-ամպ . . . . . . . . 312

Խոսք մեռելոց . . . . . . . . 313
Կամուրջ . . . . . . . . 315
Դառն աղոթք . . . . . . . . 317
Եփրատ . . . . . . . . 318
Ներկա Հայաստանին — Ա. Ի. Գ. . . . . 319—321
Րաֆֆի . . . . . . . . 322
Կոմիտաս վարդապետ . . . . . . 323
Եղիա Տեմիրճիպաշյան . . . . . . 324
Հայ հոգին . . . . . . . 325
Ազնվաթուղթ . . . . . . . 326
Լեզուն, որով գրեցի . . . . . . 327

## ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԵՐԿԵՐԻՑ

«Բանաստեղծ» . . . . . . . 331
Միացե՛ք, տղերք . . . . . . . 332
Տղա մ'ինծի կըրե . . . . . . . 333
Գիտեմ զայրանիք մ'անմար . . . . . 334
Հավերժական ցավին տակ . . . . . 335
Աշխարհաքաղաքունդ . . . . . . 336
Երբ օրը գա վերջանալու . . . . . 337
Արդյոք ծանո՞ր է . . . . . . . 338
Մանկության նահատակաց . . . . . 339
Հույսեր, մեծ հույսեր . . . . . . 340
Հին հեռուն, ահա . . . . . . . 341
Սիրտս . . . . . . . . 342
Միտք իմ . . . . . . . . 343
Ծաղի՞կ թե ոչ, երազել . . . . . . 344
Փառքը . . . . . . . . 345
Արմատախիլ . . . . . . . 347
Ի՞նչպես այս մը կրնամ . . . . . 348
Անտունի . . . . . . . . 349
Ներքին մինակ . . . . . . . 350
Խորհուրդ . . . . . . . . 351
Հին փափագ . . . . . . . 352
Քանի մ'անգամ . . . . . . . 353
Ծերության խորհուրդներ . . . . . 354
Անարգ, անծանոթ . . . . . . 355
Խաղի համար . . . . . . . 356
Իմ սիրո անհուն . . . . . . . 357
Տենչանքը . . . . . . . . 358

Այս միակ ճյուղը կանաչ . . . . . . . 359
Կին մը, կնախատամ . . . . . . . 360
Ո՞ր մէկն ասոնցմէ . . . . . . . 361
Թեթեւ զրոյց . . . . . . . 362
Օ՜հ, դեռ լեցուն են աչքերս . . . . . . . 363
Քերթուածը . . . . . . . 364
Բաղձանք . . . . . . . 365

## Սէրը տասնվեց, երեսուն և վաթսուն տարեկանին

Ա. Աղբիւրը . . . . . . . 366
Բ. Ծովը . . . . . . . 367
Գ. Ճահիճը . . . . . . . 368
Խոստացութիւն . . . . . . . 369
Ոսկեմազը . . . . . . . 370
Ոսկին . . . . . . . 372
Մարդ եւ երկինք . . . . . . . 373
Մարդ, դու՛ . . . . . . . 374
Արհամարհանք . . . . . . . 375
Սայթանուհի . . . . . . . 376
Ծաղկաձորեն Ծովկատար . . . . . . . 377
Տանին . . . . . . . 378
Խոստում . . . . . . . 379
Պատասխան տղու մը . . . . . . . 380
Տղան . . . . . . . 381
Սիրո կոչ . . . . . . . 382
Հիշողութիւն . . . . . . . 383
Հազարներու մէջեն . . . . . . . 384
Պեգաս . . . . . . . 385
Հայելին . . . . . . . 386
Հպարտութիւն . . . . . . . 387
Գիշերին . . . . . . . 388
Կերպարեի ես երկար . . . . . . . 389
Վարդանանց . . . . . . . 390
Ինքնախոստութիւն . . . . . . . 391
Ուրեմն այսպես . . . . . . . 392
Խեղճ մարդը — Ա. Բ. Գ. . . . . . . 393—395
Պատիժը . . . . . . . 396
Ո՛վ երազուն մանկութիւն . . . . . . . 398
Խոնարհութիւն . . . . . . . 399

Ողբերգությունը կյանքին . . . . . . 400
Կրնամ մերթ ալ ինքզինքես . . . . . 401
Անդրադարձում . . . . . . . 402
Օհ, եթե սերը չըլլար . . . . . . 403
Սերը . . . . . . . . 404
Սթափում . . . . . . . 405
Քեզմե ոչինչ . . . . . . . 406
Նրաց մըն ալ . . . . . . 407
Իմ վերջին սերս . . . . . . 408
Հույս մը . . . . . . . 409
Տեսքդ ա՛լ չի խոսիր ինձի . . . . . 410
Ես ալ . . . . . . . 411
Աստվածային բնություն . . . . . . 412
Սափիոյ կերպե . . . . . . . 413
Ջուրերուն տակ . . . . . . . 415
Բարեադիր . . . . . . . . 416
Ես կսիրեմ . . . . . . . . 417
Ն.-ին . . . . . . . . 418
Երկու սերձ էակ . . . . . . 419
Ձյունը . . . . . . . . 420
Երեկը . . . . . . . . 421
Քեզ վերջապես . . . . . . . 422
Անձկության հետ . . . . . . . 423
Ձե՞ս կրնար . . . . . . . 424
Կձյունե . . . . . . . . 425
Վերջին մրմունջը . . . . . . . 426
Ծափի ծովը . . . . . . . . 427
L' Apmenie a la Russie . . . . . . 428
Հայաստանը—Ռուսաստանին . . . . . 429
Երեք թռչուն . . . . . . . 430

## Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

### Վիլյամ Շեքսպիր

Սոնետներ . . . . . . . . 433

### Պիեռ դը Ռոնսար

Հնչյակ Հելենայի համար . . . . . 455

### Վիկտոր Հյուգո

Արևն ու երկիրը . . . . . . . 456

Շառլ Բոդլեր

Գեղեցկությունը . . . . . . . 457
Կուտամ քեզի . . . . . . . 458
Վինը . . . . . . . . 459
Կափարիչը . . . . . . . . 460
Անցորդ կնոջ մը . . . . . . . 461
Ալպաթրոսը . . . . . . . 462
Օրհներգ . . . . . . . . 463
Կատուն . . . . . . . . 464
Սատափերանգ . . . . . . . 465
Կույրերը . . . . . . . . 466
Աղքատներուն մահը . . . . . . 467
Թշնամին . . . . . . . . 468
Ինքնամփոփում . . . . . . . 469
Դուն այս գիշեր . . . . . . . 470
Կենդանի ջահը . . . . . . . 471

Պոլ Վեռլեն

Ընտանի երազս . . . . . . . 472
Ա՜հ, քաղցրություն . . . . . . 473

Ալբեռ Սամեն

Ցնորքը . . . . . . . . 474
Կսիրեմ այգը . . . . . . . 475

Հանրի Դը Ռենիե

Գրիսիլլա . . . . . . . . 476

Օսկար Ուայլդ

Հնչյակ . . . . . . . . 477
Խմբագրողների կողմից . . . . . 478
Բառարան . . . . . . . 481

Գեղ. խմբագիր՝ Ան. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Վ. ԳԱԼՍՏՅԱՆ
Վերստուգող սրբագրիչ՝ Շ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎՖ 01615։ Պատվեր 211։ Տիրաժ 10000։

Հանձնված է արտադրության 19/XII 1957 թ.։
Ստորագրված է տպագրության 26/II 1958 թ.։
Թուղթ՝ $84 \times 108^{1}/_{22}$, տպագր. 31,25 մամ.+1 ներդիր=25,6 պայմ. մամ., հրատ. 12,3 մամ.։
Գինը կազմով՝ 5 ռ. 75 կ.։

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության հրատարակչությունների և պոլիգրաֆ արդյունաբերության գլխավոր վարչության
№ 6 տպարան, Երևան, Լենինի պողոտա № 51։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220027957

А II / 27957